Նախամետրոպոլիտանի շրջանի Հայաստանում եղել է գյուրոց և մատենագրություն: Այդ անվանի է Փավստոս վկայում է, որ ներսես Մեծը (353—373 թթ.) գյուրոցներ էր բաց անում Հայաստանում, որ դասավանդում էին հունարեն և ասորերեն (Տավանական է՝ հունարեն և ասորերեն տառանիշերով): «Կարգչն էր տեղիս տեղիս գյուրոցս յունարէն և ասորերէն գաւառս Հայոցս»³⁰:

Մեր ընդդիմախոսներից ոմանք իրենց աշխատությունների մեջ անարդարացի քննադատել են մեզ, որ իբրև թե մենք խոսելով նախամատենական մատենագրության մասին, սակ էնք, որ այն շատ վարդաշատ է եղել: Իրականում, մեր գնահատականը նախամատենական մատենագրության մասին եղել է շափաղի: Ավելորդ չենք համարում բերել տարիներ առաջ մեր աված գնահատականը «Նախամետրոպոլիտանի հայկական գրականության հարցը» հոդվածից, որը համախալի հղում են մեր քննադատները: «Համարձակ կարելի է պնդել, որ Հայաստանում 5-րդ դարից շատ առաջ գոյություն է ունեցել հայերեն գրականություն: Այդ գրականությունը մեհենյանի մեջ թաղվեց: Նա քրիստոնեության մեծ դեմքից մեկն է»³¹: Այսանոց, ինչպես կարելի է տեսնել, ոչ մի խոսք չկա հեմենական մատենագրությանը շատ զարգացած լինելու մասին:

Փնտաղախոսելով այն մարդկանց, որոնք հայոց վաղ շրջանի մատենագրության բացակայությունը բացատրում են հաճախ կրկնվող պատերազմներով և նշանագրերի բացակայությամբ, հորեննայցին համարում է այդ անարդարացիք, քանի որ «...գտանին և միջոցք լեւո պատերազմացն, և գիր Գարեից և Յունաց, որովք այժմ գիրդից և գաւառաց, ևս և իւրբանշիւր տանց առանձնականութեանց, և հանուր հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցած մասեանք, մանաւանդ որ ի սեպհական աղաւտութեան պաշապատութեան»³²: Խորենացին, ինչպես տեսնում ենք, նշում է ոչ թե որոշ մատյանների, այլ «անթիւ գրուցած մատենների» մասին:

³⁰ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Քիֆիւս, 1912, էջ 110:
³¹ Ա. Գ. Աբրահամյան, Նախամատենական հայկական գրականության հարցը (ու՛ս Մատենագրանի Եփրատակ նյութի ժողովածու», № 3, Երևան, 1941, էջ 52):
³² Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 11: Պատմահայր Եգիբոս բարձր սովորաբար գործ է ածում սեմանագիրս իմաստով, իսկ «գրությունը»՝ եզրույթական:

Դիոդորոս Սիկիլիացին (I դար մ. թ. ա.) հայտնում է, որ Հայաստանի թագավոր Երանգը (Յրանեսը) եվմենիս ուղարկած նամակը գրած է եղել ասորերեն³³:

Այս տեսակետից ուշադրով է հունատա հայերեն մի գրություն, որ պահպանվել է Երուսաղեմի պատրիարքարանի ճամնագրանի № 1297 ձեռագրում: Այս բնագրում հայոց լեզվի հնչյունական արժեքներին համապատասխանող այնպիսի տառեր են ստեղծվել, ինչպիսիք չկան հունարենում: Բերում ենք այդ բնագիրը մեր վերծանությամբ:

ՕՐ ՉՎԱՐԻՆՑ ԳԳՕՈՎԵ ԱՏԱԿՎԻԻՆՈ
ՈՐ ԶԲԱՐԻՆՍ ԳԳՈՒԵ ԱՏԱԿԲԼԻՆԷ

ՕՐ ՈՏՕՒԵՐՄԱՆԵ ՇՅՄՆԿԵՐԱԿՐԵ
ՈՐ ՐԾՈՎ ՍԵՐՄԱՆԷ ԶԶՎՈՒՆՍԿԵՐԱԿԻԵ

ԱՐԵԳԱԿՆ ԿՈՒՐԱՓՕՂԾԱԳԵ ԵՎ ՕՂՄՏԱՆԵ
ԱՐԵԳԱԿՆ ԿՈՒՐԱՑ ՈՂԾԱԳԵ ԵՎ ՈՂՄՏԱՆԷ

Այս գրությունը, որի մասին հանգամանորեն խոսելու ենք ներկա աշխատության «Մտածկարություն» գլխում, առիթ է տալիս մտածելու, թե արդյո՞ք այն նախամատենական շրջանում հունարեն տառերի գործածության ավանդույթ է, որ հանդես է գալիս հետագայում՝ մատենական գրերի ստեղծումից հետո: Մեզ հայտնի է նաև երգ կաթողիկոսի թողած արձանագրության մեջ հայկական տառերի հետ միասին հունարեն տառերի գործածությունը, ինչպես և Սամուել Անեցու ինքնագիր ձեռագրում, որը գտնվում է Ջմմաի ձեռագրական հավաքածուում, հունատա հայերեն գրությունները և այլն: Ավելորդ չենք համարում այսանոց բերել Երուսաղեմի պատրիարքարանի մի ձեռագրի հունատա հայերեն շիշատակագրությունը, որը գրված է 1281 թվականին³⁴:

Ζ C T E Φ A N Ω C M E Γ A Π A P T H X E Z E K
Ω U S E Φ Ա Ն Ա Ս Մ Ե Ղ Ա Պ Ա Ր Տ Ի Ե Ն Տ Է Կ

Այսանոց ուշադրով է այն, որ հայկական «Ղ» տառը հունարեն արված է գամմայով, «ուս» հայկական «Օ» նշանակությամբ գործածված տառանիշը արված է ոչ թե օմիկրոնով, այլ՝ օմեգայով: Եվ, վերջապես, հայերեն «Տ» տառը արված է հունական դեռտա տառի մի ասորերենով:

Սխախնի Այունի վանքի 6—7-րդ դարերի հայկական արձանագրություններից մեկի վրա հունատա հայերեն փորագրված է հետևյալ արձանագրությունը.

ԵՇ ԳՐԵԳՕՐ ԳՐԵՑԻՊ

Այն վերծանվում է. ԵՄ ԳՐԵԳՕՐ ԳՐԵՑԻ

³³ Տե՛ս «Дюдор Сицилийский», т. I, XIX, 29:
³⁴ «Տեղացի ձեռագրի Երուսաղեմ», 5, 9, էջ 469:
³⁵ Կրիվան հայ վիճագրության, Գրակ II, Գործի, Սխախնի և Ղափանի շրջաններ, Կողմոց Ա. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 88:

Բոլոր տառերն էլ հունարեն են, բացառությամբ *բժն* տառից, որը բացառկալում է հունարենում: Եթե հունական ազդեցությունից շատ հեռու Մյունխեն լեռնաշխարհում գտնվում էին մարդիկ, որոնք իրենց հայերեն խոսքը դրել էին առնում հունարեն տառերով, ապա այդ ավելի սովորական պետք է լինե՞ր Հայաստանի այն երկրամասերում, ուր ներառվել էր հունական ազդեցությունը:

Խորենացու սեպեկությունից հայտնի է, որ Արշակի ձերբակալությունից հետո, երբ պարսից զորքը մտավ Հայաստան, Մերութանը հրամայեց վառել Հայաստանում եղած հունարեն ձեռագրերը, որոնք, նրա կարծիքով, հայերին կսպառնային հույների հետ: Եվ զորս միանգամ զիրս դատելը՝ այլևր, և հրաման տալը մի՛ սասանել զղարություն յանարեն, այլ զպարսիկ, և մի՛ ոք իշխեսցէ յոչն խոսել կամ Բարզմանել. այնպիսի ինչ պատճառաւ, զի ամենեկն մի՛ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւնս և հաղորդութիւնս⁶⁴:

Այսպիսով, եթե մենք հանրագումարի բերելու լինենք վերը հիշված վաստակները, ապա կարող ենք ասել, որ Ծ-րոց զարի հույկական հարուստ մատենագրությունն ունայի անդատանում չի սեպեղծվել, այլ հիմնված է եղել հին հայերեն մշակված դրական լեզվի և անշլայի հարուստ մշակութային ժառանգության վրա: Հեթանոսական Հայաստանում գոյություն է ունեցել հույկական մեհենական գիր և գրականություն, իսկ քրիստոնեությունը Հայաստանում նախաշվելուց հետո մի դար շարունակ դարձ են ածել հունարեն և ասորերեն տառանիշերը:

⁶⁴ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 301:

II. ԱՅԼ, ՆՇԱՆԱԳՐԵՐՈՎ, ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐՎԱԾ ՆՈՒՇԱՐՉՈՒՆՆԵՐ՝

Հնունական գիրն ինչպես բոլոր երկրներում, այնպես և Հայաստանում, մեկն է հանդես չի եկել. այն ունեցել է իր նախագույակ շրջանը: Մարդն իր առարյա կյանքի և գրադեմքի կարևոր իրադարձությունները սովորություն է ունեցել պատկերների ձևով գրշտել ըստ ժամանակների վրա:

Վաղնջական ժամանակներից մեզ հասած ժառանգատկերները հին մշակութային մանկավարժը նմուշներ լինելուց բացի, մարդու առաջին պարզունակ գրուումներն են: նրանք, իհարկե, դեռ գրեր չեն ներկա հասկացողությամբ, բայց, ստորաբաժան, սովյալ ժամանակաշրջանի բնաշխարհի իրական պատկերումներն են՝ նախնական պատկերագիր վավերագրությունը¹:

Ժառանգատկերների հազարավոր նմուշներ են հայտնաբերված հյուսիսային Աֆրիկայում, Սկանդինավյան երկրներում, Սիրիայում, Միջին Ասիայում, Կովկասում և այլուր: Ժառանգատկերները գիտության մեջ հայտնի են պիկտագրումներ կամ պիտոգրիֆներ անուններով²:

Ժառանգատկերների գործածությունը Հայաստանում, ինչպես պարզված է, սկսվել է շատ վաղուց. համոտական է՝ նախնադարյան համայնական շրջանում, երբ անասությունն իշխող ձևերն էին որսորդությունը և անասնապահությունը: Հնաագայում, սակայն, ժառանգությունը շարունակվում է գործածվել դասակարգային հասարակության մեջ ևս: Հնագիտներից ու գրչության պատմաբաններից ասանք ժառանգատկերների գործածությունը վերագրում են Նեոլիթյան ժամանակաշրջանին: Ի. Մ. Գյակունովի կարծիքով՝ «նախադասակարգային հասարակության ժամանակ, անգամ «գրագետ» քաղաքակրթության հարևանության մեջ, հնարավոր է միայն պրիմիտիվ գրության առկայությունը՝ մոզա-

¹ Հայաստանում ժառանգատկերներ են հայտնաբերված Արագածի, Գեղամա լեռների և պատմական Մյունիքի ժայռերի վրա: Մեր լեռնաշխարհի քարածայրեր փաստորեն գտնվել են յուրատեսակ քարե ժայռաներ, որոնք ինամբով պահպանել են հազարավոր տարիներ առաջ արագ մարդու առարյա պատկերացումները: Նրանց մեջ կարելի է տեսնել որսորդական տեսարաններ, կենդանի պատկերացումներ, բնանի և վայրի բազմաթիվ կենդանիներ, զաշտայն գործիքներ, զենքեր և այլն: Ժառանգատկերների մեջ մեծ թիվ են կազմում մասնագրագետ այնքան կամ այծանման կենդանիները, որոնք, բառ երևույթին, իրեն ստան պաշտվել են, ժողովուրդը ժառանգատկերներին «այծապեր» (իծաղիք) անուն է տալիս:

² Պրիտոգրում են կոչվում բացառապես պատկերագրերը, իսկ պետրոգլիֆները՝ երբ պատկերագրեր հնա միտնի գործ են ածվում նաև երկրաչափական և այլ տեսակի գծագրական ձևեր (սե՛ս Լանկոսկա, Գրի դարգացումը, Նրեան, 1955, էջ 2 (հմմ. В. А. Истрин, Развитие пиктама, М., 1961, էջ 25—26, 43—73):

կան, հարավոր է նաև հասարակ անտեսական նպատակների համար օգտագործելու³;

Միզանում ժայռագրությունների ուսումնասիրությունը զբաղվել են մի շարք գիտնականներ՝ Ա. Քալանթար, Խ. Սամուելյան, Ս. Բարխուդարյան, Ս. Սարգսյան, Հ. Մարտիրոսյան, Գր. Կարախանյան և ուրիշներ: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակությունը վերջերս լույս տեսավ մի սովոր հատոր⁴, ժայռագրու-



Մի նմուշ ժայռագրություններից:

կները վերջերս հատուկ ուսումնասիրության խնդիր են հանդիսացել պատմական գիտությունների ղեկավար Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից⁵:

Առաջին խնամավորված գրությունը պատմական Հայաստանի տարածքում գործ են անել հեթանոսները (խեթերը) և ուրարտացիները: Խոսելով հաշիտական գրության մասին, հասկանալի է, ի՞նչ կարելի չլրջանցել պետական-էթնիկական այդ նախույն կազմավորումների գործածած գրությունները:

Հեթանոսները, ինչպես հայտնի է, իրենց պետականությունը ստեղծել են պատմական Հայաստանի արևմտյան մասում՝ Գալլ գետից արևմուտք և արևելքը ընկած տարածության վրա (մոտավորապես XX դար. մ. թ. ա. և շարունակել


³ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, стр. 80 (14-րդ մանրագրությունը):

⁴ ՏԷ՝ Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռագրությունները, Երևան, 1970:

⁵ А. А. Мартиросян, Первобытные иероглифы Армении и их урарто-армянские двойники («Լրտերը հատարակական գիտությունների», 1971, № 9, էջ 64—74):

իրենց գրությունը մինչև XII դարը մ. թ. ա.): Հեթանոսական պետությունը Հին Արևելքի հողաբաշխման պետություններից մեկն է հանդիսացել, այնքան հզոր, որ մրցություն մեղ է բռնվել Հին Արևելքի այնպիսի խոշոր պետությունների հետ, ինչպիսիք են Եգիպտոսը, Բաբելոնը և Ասորեստանը⁶:

Հեթանոսներն իրենց գրության ավելի քան ութ հարյուր տարիների ընթացքում գործ են անել զաղափարագիր և սեպագիր գրատեսակներ: Բավական մեծ թվով հեթանոսական բնագրեր գտնվել են Բողազ-Քոյում (պատմական Խատուշադ քաղաքի մոտ) և Թեղ-Ամարնայում (Եգիպտոսում՝ Նեղոս գետի վրա): 1906—1907 թվականներին գերմանացի հնագետ Հ. Վիեկելերը գտավ հեթանոսական թագավորների արխիվը՝ հազարավոր թրծադրու սալիկների վրա:



Մի նմուշ հեթանոսական գրություններից:

Վերծանման արժույթն առանձնապես մեծ վստասկ ունի լիսի գիտնական, հեթանոսագետ Բենզեդերի Հրոզնին⁷: Վերծանությունից պարզվեց, որ թրծադրուների այդ սալիկների գրությունները պարունակում են ծիսական կանոններ, հրահանգներ, պայմանագրեր և այլ նյութեր՝ հիմնականում սեպագրերով: Այդ սեպագրությունները միաժամանակ բացառիկ արժեք ունեն Հայաստանի նախա-բնիկների և Մերձավոր Արևելքի մյուս մոզոպոլիսների պատմության համար: Հեթանոսական զաղափարագրերը բաղկացած են կրկու տեսակի նշանագրերից. մի մասն արտահայտում է ամբողջական բառեր, իսկ մյուսները՝ վանկեր կամ ստանձնի հնչյուններ: Ամբողջական բառեր արտահայտող նշանագրերից, որպես նմուշ, կարելի է բերել հետևյալները.

⁶ Համագրատագրական գրականության մասնագետությունը տե՛ս В. В. Иранов, Хеттский язык, М., 1963, էջ 219—221:

⁷ ՏԷ՝ И. Фридрих, Дешифровка забытых письменностей и языков, М., 1961, էջ 82—91:

⁸ «Հեթանոս» (խեթ) տարիներ քան կիրառում է սեպագիր և վերաբերում է ոչ միայն բուն հեթանոսներին (տե՛ս Д. Дирингер, Алфавит, М., 1963, էջ 113, թան. 1):

| | | | |
|-----------------|---|--------------------------|---|
| Մայր աստվածուհի | Ս | Հաթի Լրկիր | Ս |
| Աստված | Մ | Կարկենմիշ | Ս |
| Քաղաք | Մ | Մեծ | Ս |
| Իշխան | Մ | Հզոր | Ս |
| Տեր | Մ | Գուրզում կամ Մարգաշ | Ս |
| Փառանայապետ | Մ | Մի թաղավորի անուն | Ս |
| Մատ | Մ | Արտանիա անուն | Ս |
| Որդի, ժառանգ | Մ | Քաղավորի այլ գաղափարազիր | Ս |
| Երկիր | Մ | | |

Վանկ կամ տառ արտահայտող գաղափարանիշերից կարելի է բերել հետևյալները.

| | | | |
|---|-----------|-----|-------|
| ↑ | Ա, Օ | ՕԿ | Տի |
| ∩ | Ե, Ե | ՎԻԻ | Քի |
| ⊕ | Կ, կա, ակ | Ս | ար |
| ⊞ | թ | ՍԶ | շա |
| ⊟ | չ, նի | Ղ | թար |
| ⊠ | Մ | ՄԿ | ԲԼ ԲԿ |
| ⊡ | փ | Ս | 2 |

Պատմական Հայաստանի սահմաններում գտնված առավել ասրածուն գրությունն ուրարտականն է։ Ուրարտուի պետությունն ընդգրկել է պատմական Հայաստանի միջին մասի՝ Վանի, Սևանի, Ուրմիայի լճերի միջև ընկած ասրածուությունը։ Նրա քաղաքական կազմավորումը տեղի է ունեցել Պ-րդ դարում մ. թ. ա.։ Այդ ժամանակից էլ ուրարտացիներն սկսել են գործածել սեպագիր գրությունը. վերջերս են այն ասորականից և որոշ ձևափոխություններով համարները ուրարտերենի պահպանելով, Ուրարտուն քաղաքական բուռն վերելքի շրջան ապրել ու՛րարտից դարում, մասնավորապես Արգիշտի Ա-ի թագավո-

րության տարիներին (786—764), որը և էրերունի (Երևանի) հիմնադիրը հանդիսացավ⁹։

Ուրարտուում, անշուշտ, գործ են ածվել տարբեր տեսակի գրություններ, սակայն մեզ են հասել միայն քարերի և աղյուսասալիկների վրա գրածները։ Մեկ-մեկ պատահում են նաև ուրարտական սեպագիր արձանագրություններ երկաթե իրերի ու առարկաների վրա։ Մեզ հասած ուրարտական արձանագրությունների թիվը անցնում է շուրջ հարյուրից¹⁰։ Նրանց մեծ մասը արգեն դրամականորեն վերծանված է։ Հիմնականում մեծում են միայն շրջաման կարող առանձին սեպագիրներ ու բառ-արտահայտություններ։ Հրապարակի վրա կա անգամ ուրարտերենի համարաբարձր¹¹։

Ի դեպ, ուրարտական սեպագիր արձանագրությունների մասին առաջին անգամ հայ մատենագրության մեջ խոսել է պատմահայր Մովսես Խորենացին։ Նա հիշում է Վանի քարածաշուի վրա եղած արձանագրությունը և սխալմամբ վերագրում ասորական Շամիրամ թագուհուն, որը, ինչպես պատմահայրն է ասում, Վանի քարածաշուի երեսը ... իրրև գրչու զմոմ հարթեալ՝ բազում դիրս ի նմա գրեաց, որոշ հայեցուածն միայն զամենայն որ ի զարմանա ածէ¹²։

Ուրարտական արձանագրության անդրանիկ հայտնաբերողը գերմանացի արևելագետ Յ. Ծուլցն էր, որը 1828—1829 թվականներին ընդգրծնակել է Վանի և նրա շրջակա վայրերի սեպագիր արձանագրությունները և ուղարկել Փարիզ, որը և հրատարակվել է 1840 թ.։ Հետագայում ուրարտական արձանագրությունների հավաքման և հրատարակության գործում մեծ աշխատանք են կատարել Լեման-Նաուպոլը, Քելկը, Մեյրոպ կոփսիոպոս Սմբատյանը և այլ անձինք։

Սովետական Հայաստանի հնագիտները, Երևանի Արխեոլոգ կոլեկտիվում կատարած պեղումների ժամանակ, հայտնաբերեցին շինարարական բնույթի ուրարտական մի արձանագրություն, որից պարզվեց, որ Երևան քաղաքը հիմնադրվել է ուրարտական Արգիշտի թագավորի կողմից 782-ին մ. թ. ա.։ Հայ ժողովուրդը մեծ հանդիսավորությամբ 1968 թ. նշեց իր սիրելի քաղաքի 2750-ամյա հոբելյանը։ Անհրաժեշտ ենք համարում բերել այդ կարևոր արձանագրությունը և առկա գիտական տառադարձության թարգմանությունը¹³։

⁹ Փաղաքի կառուցման շարժառիթների քննությունը տե՛ս Ս. Տեմչյան, Էրեբունի երեսը միջազգային մայրուղու վրա (Երևան, 1969 թ., № 12, էջ 16—25)։

¹⁰ Նրանց համահավաք հրատ. տե՛ս Գ. Ա. Меликшвили, Урартские клинообразные надписи, М., 1960 և Н. М. Дьяконова, Урартские письма и документы, М.-Л., 1963։

¹¹ Տե՛ս В. А. Гвахария, Словарь-симфония урартского языка, М., 1963։

¹² Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, էջ 54։

¹³ Տե՛ս Մ. Ա. Բաղմիսյան, Էրեբունի Երևան (տե՛ս Երևան, 1962 թ., № 10, էջ 26—27), ՀՃԳ. К. Оганесян, Арин-берд, Ереван, 1961, էջ 9։



Արգիշտի երկրակի բազալի կառուցման արձանագրությունը

Արձանագրությունը վերծանվում է.

Խալդյան մեծուքյամբ Արգիշտի Մենուայուրդին այս բերդը կառուցեց: Գեղեցի երկրակի անուներ, Բիայնա եկրնների փառքի (7), քչնամիններին և արտափեցնելու (7) համար:

Արգիշտին ասում է, հողն ամայի էր (7) կատարեցի հզոր ձեռնարկություններ այնտեղ:

Խալդյան մեծուքյամբ Արգիշտի Մենուայուրդին քազավոր (է) հզոր, քազատոր՝ Բիայնացոց, աներ՝ Տալչպա քաղաքի:

Անպիտացի նշանավոր արևելացիտ Ա. Մելիսին է պատկանում ուրարտական արձանագրությունների կապակցված վերծանության պատիվը (1882 թ.), իսկ Հնտադայում ուրարտական արձանագրությունների վերծանման և ճշտման ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել ուսու և Հայ արևելագիտներ՝ Մ. Նիկոլյակին, Ք. Պատկանյանը, Ն. Մառը, Ի. Մեշլանինովը, Հ. Օրբելին, Գ. Ղափանցյանը և ուրիշներ:

Ուրարտագիտության ասպարեզում մեծ վաստակ ունեն հատկապես ակադ. Ք. Պիտարովսկին, Գ. Մելիքիշվիլին և Ի. Գյուկանովը: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ Ք. Պիտարովսկին երկրի բնօրրից լույս աշխարհ հանեց ուրարտական մշակույթի բազմամիավ ցուցանյութեր և զրալի շնորհիվ բնորոշակեց պատմագիտության տեսադաշտը Ուրարտոսի մասին¹⁴:

Ուրարտական սեպագիր արձանագրությունները ունեն խոտը նշանադրե-

¹⁴ Ուրարտական արձանագրությունների վերծանությամբ և նրանց էջուման աշխատանքներով մեզ մոտ մեծ շանտարությամբ աշխատում են Ն. Հարությունյանը, Մ. Իսրայելյանը և Հ. Ղարապետյանը:

բից բազիլացից ցրտի վան համակարգ, որոնցից մի մասը մի բուն է արտահայտում, իսկ մյուս մասը՝ մի վանկ կամ մի տառ:

Ամբողջական բառեր արտահայտող սեպագրեր.

| | | | |
|---|--------|-----|-------------|
| ≡ | աուն | ≡ | լուդ |
| ≡ | աունար | | դևա |
| < | աուաշ | < | զորք |
| ≡ | որդի | < | կառավարիչ |
| ≡ | լևա | < | պարտություն |
| ≡ | աստված | < | հզ |
| ≡ | անել | ≡ | ճանապարհ |
| | շուր | > | տեր |
| < | կով | > | անիծել |
| ≡ | զնալ | ≡ | սարակ |
| > | երկաթ | ≡ | մեծ |
| | որդի | ≡ | մաս |
| ≡ | լինել | >>> | ձախ |

Առանձին վանկեր կամ հնչյուններ արտահայտող սեպագրեր.

| | | | |
|----|------|----|-------------------|
| >< | բև | << | ման |
| ≡ | բիր | ≡ | մար ¹⁵ |
| ≡ | բու | | մե |
| ≡ | բուր | ≡ | նա |
| ≡ | զան | < | պի |
| < | զին | < | լի |
| > | կուր | << | զու |
| ≡ | ար | ≡ | աս |
| ≡ | ակ | << | բա |
| ≡ | ալ | >> | բալ |
| ≡ | ամ | | |

Ուշուկս արևելի մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանում գործածության մեջ է դրվել արամեական գրությունը: Գտնվել են Հայոց Արտաշես I թագավորի (189—160 մ. թ. ա.) արամեական վեց արձանագրությունը Սևանի ավազանում, Սիսիանում, Գառնիում¹⁵ և:

¹⁵ Պիտի լինի երկու ուղղահայաց սեպ:

¹⁶ Վերջերս գտնվեցին արամեական այլ արձանագրություններ ևս, մեկը Սիսիանում՝ գան:



Արտաշես Բագավորի արամեական արձանագրությունը

Ակազ. Հ. Օրբելիյն գտնում էր, որ նշված արձանագրությունները¹⁶ պատկանում են Հայոց Արտաշես Բագավորին, որը 189 թ. մ. թ. ա. ապագամերից Մեղեկյաններից և Մեծ Հայքի Բագավորը զարձավ՝ միավորելով Հայկական բազարական մանրազված միավորումները: Հ. Օրբելիյն առաջ քաշեց այն կարծիքը, որ արամեական այդ արձանագրությունները կարող են լինել սասմանային այն քարերը, որոնց մասին տեղեկություն է ապիս պատմաճաշար Մովսես Խորենացին:

Հետագայում այդ արձանագրությունների վերծանությանը զբաղվեց էրմիտաժի աշխատակից պրոֆ. Ա. Բորիսովը, որն իր ուսումնասիրությունը հրատարակեց «Вестник древней истории» ամսագրում¹⁷: Նա գիտականորեն ապացուցեց, որ այժայ արձանագրություններն իրոք պատկանում են Հայոց Արտաշես Առաջին Բագավորին և գրված են մ. թ. ա. երկրորդ դարում:

Արամեական արձանագրություններից համեմատաբար ընդարձակը՝ Մյուների արձանագրությունն է, որը գտնվել է Սիսիանից Գորիս տանող ճանապարհի վրա՝ Բշխանասար լեռան ստորոտում¹⁸: Վերջինիս լեզվա-սեական ուսումնասիրությունը Ա. Փերիխանյանին բերել է խիստ ուշադրավ եզրակացությունների:

Օտար գրություններից Հայաստանում ամենից տարածուն է եղել հունարենը: Այդպիսիք գտնվել են Արմավիրում, Տիգրանակերտում, Բաշ Արարանում, Էջմիածնում, Գանձիում և այլ վայրերում:

Այդ արձանագրությունների մեծ մասը թվագրվում է երրորդ դարով մեր թվականությունից առաջ և շարունակվում մինչև մեր թվականության չորրորդ դարը: Նրանք գրված են հունարեն լեզվով և տասանիչերով:

Տարբեր ժամանակներում հունարեն մեծ թվով արձանագրություններ են գտնվել Արմավիրում (յոթ արձանագրություն), որ վերծանել և հրատարակել է Ա. Ի. Բոլտուցովան¹⁹: Նույն արձանագրությունները, որոշ ճշտումներով և մեկնորանություններով, հրատարակել է նաև ակազ. Հ. Մանանդյանը²⁰: Հիշյալ արձանագրությունները թվագրվում են երկրորդ և առաջին դարերով մ. թ. ա.: Նրանք հետաքրքիր են այն տեսակետից, որ ունեն բարոյախոսական բովանդակություն: Նրանցից մեկը, օրինակ, պարունակում է համալսմանը Հնսիրոզաի «Աշխատանքներ և օրեր» աշխատությունից: Մեկ ուրիշ արձանագրության մեջ հիշված է Երվանդյան հարստության վերջին ներկայացուցչի անունը՝ Նովանդի, մի փաստ, որ զայն է հաստատելու Խորենացու՝ Երվանդյանների մասին

և արձանագրության վրա, իսկ նրիտը՝ Գիլյանից Եղևն տանող ճանապարհի վրա՝ Բեզուտ գյուղի մոտ (Վերջին երկու արձանագրությունների մասին տե՛ս Գ. Գաբաշյանյանի հազարամյակ «Արամեական նորահայտ երկու արձանագրություններ» ազգագրած ԳՐԷ-ի 1971 թ. Ց մ-ում, էջ 274—276):

¹⁶ Տե՛ս «Известия», որսիկերի, 1941 թ. 31 հունվար, № 25:

¹⁷ Տե՛ս Ա. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении ВДН, 1946, № 2, էջ 97—107: Նույն արձանագրություններին հետազոտում անցադարակել էն նաև Ի. Գյակնոսովը, Ստորիզովան, Գ. Տիրցյանը և այլք:

¹⁸ Տե՛ս А. Г. Перихания, Арамейская надпись из Загезура (տե՛ս ԳՐԷ, 1965, № 4, էջ 107—128):

¹⁹ А. И. Болтунова, Греческие надписи Армавира (տե՛ս «Сեղեկագիրք ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի», 1942 թ., № 1—2, էջ 35—61):

²⁰ Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսարևությամբ, Երևան, 1940:



Փանկի հուշարձան արձանագրությունը

Նախորդած տեղեկությունների հավաստիությունը, որը տարիներ առաջ կասկածելի էր համարվում²¹։

Հայաստանում գտնված հունական արձանագրությունների շարքում բացառիկ արժեք է ներկայացնում Պատնիսում գտնվածը, որը, ինչպես պարզվել է պատկանում է Տրդատ Առաջինին (298—330)²²։ Այս արձանագրությունն առաջին անգամ վերձանել է Շրտառարակի է պրոֆ. Ս. Կոսիցյանը, Այնուհետև նրա վերձանությանը զրաղվել են Շ. Մանանդյանը²³, Ա. Գ. Աբրահամյանը²⁴, Կ. Վ. Տրեքերը²⁵։ Արձանագրության անգրադարձել են նաև Գ. Սարգսյանը, Ս. Գյարկյաչարյանը, Շ. Բարթիկյանը և ուրիշներ։ Անհրաժեշտ ենք համարում բերել այդ արձանագրության լուսանկարը (տե՛ս էջ 36)։



Վեդիի արձանագրություններից մի հատված։

Հայաստանում արձանագրություններ են գտնվել նաև լատիներեն լեզվով։ Առ այժմ հայտնի են նրանցից ութը՝ երեքը հարբերդում, երկուսը՝ Վազարշապատում, մեկը՝ Արտաշատի կամուրջի զիմաց²⁶ և երկուսը վերջերս հայտնաբերվեցին Փոքր Վեդիի մոտ՝ պատմական Արտաշատ քաղաքի հյուսիսարևելյան սահմանում²⁷։

Խարբերդի արձանագրությունները զբլում են առաջին զարում ռազմական մի կարևոր իրադարձությունից հետո, երբ ներոն կայսեր զորահրամանատար Պետտի զլիավորած հռոմեական բանակը 62 թ. Հանդայում խայտառակ

²¹ Պրոֆ. Գ. Պոյանի կարծիքով, այդ արձանագրություններից մեկը պորտուգալացի է, Հայոց Արտաշատից մագազորի մեջ շտառած պոմեի հատվածները։

²² «Մովսեսական Հայաստան», օրաթերթ, 1945 թ. սեպտ. 23։

²³ Շ. Մանանդյան, Փանկի հուշարձան արձանագրությունը և Պանկի Նեմեսոսական տաճարի հուշարձանի մասնակեր, Արևած., 1946։

²⁴ Ա. Գ. Աբրահամյան, Փանկի հուշարձան արձանագրությունը, տե՛ս «Էջմիածին», 1947 թ. 3—4, էջ 62—72։

²⁵ К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953, стр. 174—211։

²⁶ Տե՛ս К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 222—223։

²⁷ Տե՛ս Բ. Ն. Կասիկյան, Կասիկյան արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից (ԳՔԷ, 1967, № 4, էջ 302—311)։

պարտություն կրեց հայ-պարսկական միացյալ ուժերի կողմից և հարկադրված եղավ կապիտուլացիայի ենթարկվել ու կրել սազմական ամրաբարեր խայտառակություն՝ անցնել հաղթողների «լծի տակից»։ Ենթադրվում է, որ արձանագրությունները գրված լինեն այդ զեպքից երկու տարի հետո, երբ Հայաստանի ազգական գործողությունները զլիալիբրելու համար հասնական զորքերի հրամանատար նշանակվեց Կորբուլանը, որին և շնորհվեց «պրոպրետորի» կոչում, և նա, գալիսական լեզունով, շարժվեց զեպի Հայաստան։ Արձանագրությունները գրվել են ինչ-որ կառույցների կապակցությամբ, ամենայն հավանականությամբ, Արածանիի վրա կամուրջի կառուցման կապակցությամբ։

Երևարարական բնույթ ունեն նաև Փարբ Վեդիում գտնված երկու, Արտաշատի կամուրջի դիմացի՝ մեկ և Վաղարշապատի՝ երկու արձանագրությունները։

Լատիներեն արձանագրություններից ստանձնապես ուշագրավ է Վաղարշապատի 185 թվականին գրված արձանագրությունը, որն ունի հետևյալ բովանդակությունը (բերում ենք Ալիշանի թարգմանությամբ)։

«ԻՐՈՇԱԿԻՐՔ ԱՊՈՒՆԱՐԵԱՆ ԼԵԳՆՈՆԻ ԺԵ (15) ՈՐՈՑ
 ԷՐՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՌԻՐԱԿԻ ԿԵԼԻՈՍ ԿԱԼՈՒՆՈՍ,
 ՏՐԻՐՈՒՆ ԶՐԴԱՅ՝ ԼԻԿԻՆՈՍ ՍԱՏՈՒՌՆՈՒՆՈՍ, ԵՒ ՀԱ-
 ՐԻՐԱՊՈՆ ԱՐԻՆԼԻՈՍ ԼԱՐՐԱՋ, ԿԱՆԳՆԵՆ ԶՅԵԱՏԱՐՆ
 ԿԱՅՍԵՐ Մ, ԱՐԻՆ (ԿՈՄՈՒՅ) ԵՌՈՒՆՍ ՏԻՐԱՊՈՆԻ, ԶՈ-
 ՐԵՍ ՀԻՊԱՏԻ ԵՒ ԶՐ ՀԱՅՐԱՆԵԱՅՑ»²⁵։

Արձանագրության նախալեռքին ստորում մի բառ շնջված է։ Ենթադրում են, որ այդ շնջված բառը լինի Կոմոզոս կայսեր անունը, որը հետագայում անաբժան հանալվեց և սենատի կողմից որոշում ընդունվեց՝ նրա անունը շնչել արձանագրությունների վրայից։ Ենթադրություններ են եղել նաև, որ շնջված այդ բառը կարող է եղած լինել «Armeniacus» («Հայկական»), քանի որ այդ կոչումը զորք է անել Մարկոս Ավրելիոս Վիրտուս (161—180 թթ.) Վաղարշապատը վերցնելուց հետո, իսկ հայ հայրենասերները, չհաշտվելով արձանագրության մեջ հռոմեական կայսեր «Հայկական» հորդորումի հետ, շնչել են նրա անունը։

Հայաստանում արձանագրություններ են գտնվել ուշ զարբերում նաև արաբերեն, վրացերեն, ուլդուրերեն և այլ լեզուներով։

Ստարալեզու գրությունների գոյությունը Հայաստանում պատահական չէ։ Հայաստանը տնտեսական և քաղաքական իր կյանքով մեկուսացված չի եղել իր շրջապատից, նա անընդմեջ գտնվել է արևելքի և արևմուտքի մշակույթների իրաչառման կենտրոնում (հին արևելյան, հելլենիստական, պարսկա-արաբական և այլն)։ Հայ մարզը, իր մայրենի լեզվից բացի, կարիք է ունեցել գիտենալու իր հարևանների լեզուները։

²⁵ Ղ. Ալիշան, Այբրաթա, Վենետիկ, 1880, էջ 206։

III. ՀԱՅՈՑ ԳՐԻ ՍՏԵՎՈՒՄԸ

Հայկական գրերի ստեղծման մասին մենք ունենք երեք պատմական սկզբնաղբյուր՝ Կորյունի «Վարբ Մաշտոցի», Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» և Վաղար Փարպեցու «Պատմություն Հայոց» աշխատությունները։ Հետագա դարերի հայ պատմիչների հազորգած տեղեկությունները, հիմնականում, այս հեղինակների կրկնություններ են։

Պատմիչներից ամենից ստուգախոսը Կորյունն է։ Եվ զա հասկանալի է, նա եղել է Մաշտոցի աշակերտը, լավատեղյակ է իր ուսուցիչ գործունեությանը և զործուն մասնակցություն է ունեցել հայկական գրերի ստեղծման գործում։ Սակայն այդ հիմք չի տալիս թերահավատելու մյուս պատմիչների տեղեկությունները, ինչպես վարվում են որոշ գիտնականներ։ Արդարացի չեն նաև այն ուսումնասիրողները, որոնք թերահավատությամբ են վերաբերվում Կորյունի տեղեկություններին և առաջնությունը տալիս են Վաղար Փարպեցուն։ Եվ զա երեք պատմիչների տեղեկությունների քննական և բաղմանողմանի ուսումնասիրության հիման վրա հետաքննարկելով իրենում կազմել հայոց գրերի ստեղծման բովանակին մտաբանման պատմությունը։

Հայկական ներկա գրերի պատմությունը անմիջականորեն կապված է Մաշտոցի՝ անվան հետ, ուստի և անհրաժեշտ ենք համարում նախ համաստեղծել ծանոթացնել Մաշտոցի կյանքին և գործունեությանը։

Մաշտոցը ծնվել է Տարոնի գավառի Հացեկաց գյուղում։ Հոր անունն է Վարդան։ Այս մասին Կորյունը հետևյալն է գրում։ «Ընդ, զոր ի նախակարգ բանին նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարոնական գաւառէն, ի Հացեկաց գեղչէ (ընդգծումը մերն է — Ա. Ա.), որդի ասն երանելոյ Վարդան կոչեցելոյ»²⁶։

¹ Մաշտոց անունը ձևազերծում հանդիպում է տարբեր գրություններում՝ «Մաշտոց», «Մաշտոց»։ Որոշ հեղինակներ (Խորենացի, «Պատմություն սրբոյն ներսեյի Պարթև Հայոց հայրապետի, Երևակացի և ուրիշներ) Մաշտոցին հիշում են Մեսրոպ անունով, իսկ «Պատմություն սրբոյն Մահալայ Չարբեկ» հին վրացական թարգմանության մեջ հիշվում է երկու անուններով էլ։ «Մահալե իրրի կաթողիկոսական աթոռի պահապան նրանց ավեց երանելի Մաշտոցին, որ Մեսրոպ էր կոչում»։ Արքեմ՝ աղբյուրներում «Մաշտոց» կամ «Մեսրոպ» հիշատակվելը որևէ հավաստյան չունի։

² Կորյուն, Վարբ Մաշտոցի, հրատարակություն պրոֆ. Մ. Արեղյանի, Երևան, 1941, էջ 36։

Մ. Հմմեր և Հ. Գաթրեճյանը, հիմնվելով Մաշտոցի հոր Վարդան անվան, ինչպես և Մաշտոցի ծննդավայրը Տարոնը հանդիսանալու փաստերի վրա, ազնվական ծագում են վերագրել նրան՝ սերած համարելով Մամիկոնյանների⁵։ Մակայն այս կարծիքը պատմական աղբյուրներով չի հաստատվում։ Ընդհանուր է, Երևանցու մոտ կա մի անորոշ ակնարկ այն մասին, որ իբր Մաշտոցը էր «յազատ տանէ»⁶, սակայն այդ՝ ավատական պաշտոնական մատենագրության սովորական ձգտումն է՝ ազնվականական ծագում վերագրել հայ մատենագրության ասպարեզում աշխատող աչքի ընկնող բոլոր դեմքերին։

Անհիմն է նաև հայագիտության մեջ արտահայտված մյուս տեսակետը, որ իբր Մաշտոցը հորս գյուղացու որդի է եղել։ Տվյալ եզրակացության համար հիմք է ծառայել Փավստոս Բուզանդի մի վկայությունը, ուր Հացեկաց գյուղը «կարճագատ» գյուղ է անվանում⁷։ Բայց Փավստոսի մոտ «կարճագատ» բառը ունի ոչ թե «ճորտական» գյուղ, այլ «սահմանափակ աղատություն ունեցող» գյուղ իմաստը, որից հույց կարելի լինի ենթադրել, որ այն ֆեոդալական կախվածության մեջ ընկած գյուղ է եղել։

Բոլոր դեպքերում, վերևում բերված երկու կարծիքներն էլ ծայրահեղություններ են, սկզբնաղբյուրների հիման վրա կարող ենք միայն հաստատապես ասել, որ Մաշտոցը եղել է աշխատավոր գյուղացու որդի։

Կարյունի տեղեկությունից երևում է, որ Մաշտոցը մանուկ հասակում հունական կրթության է ստացել՝ «մի մանկութեան տիսն վարժեալ հելլենական զպրութեամբ»⁸, եթե հավատարու լինենք «Պատմութիւն սրբոյն ներսիսի» անվավերական մի գրության տեղեկության, Մաշտոցը սովորել է ներսես Մեծի մոտ⁹։ Մակայն, ինչպես իրավացի նկատել են Հմմեր¹⁰ և Հ. Մանեղյանը¹¹, այդ տեղեկությունը ստույգ չէ, որովհետև անհնար է, որ այդ մասին լուր Մաշտոցի կենսագրիչը Ավելի հավանական է ն. Աղոնցի ենթադրությունը¹², որ Մաշտոցը սովորել է Անտիոքի հունական նշանավոր դպրոցում։ Այս դպրոցի ուսուցիչ էր եղել վաղ օրիստոնենության աչքի ընկնող գործիչներ՝ Հովհան Ոսկերեանը, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Քեղոզորս Մոպսուեստացին, Ղևոնդիոս Հայկազեն (որը հետագայում Աթենքի համալսարանի ու-

սուցյալան էր) և ուրիշներ։ Մաշտոցի՝ Անտիոքի դպրոցում սովորելու օգտին է խոսում Քեղոզորս Մոպսուեստացու մատիոլոլյունը Մաշտոցին, որը մոզակրոնության մասին հատուկ աշխատություն է գրել Մաշտոցի համար։

Բունասեր Հ. Գաթրեճյանը Մաշտոցի ծննդյան թվականն է համարում 361-ը. «ՄԵՆԱՐԱԿ... Ծնեալ յամի 361»¹³։ Նույն տեսակետն է պաշտպանում ն. Ավինյանը¹⁴։ Հ. Աճառյանը ենթադրում է, որ Մաշտոցը ծնված պիտի լինի 360 թվականին¹⁵։

Մաշտոցի ծննդյան կոնկրետ տարեթիվ մասին թեպետ հաստատուն տրված չլինի լինում, սակայն տմարական որոշ հաշիվներ հիմք են առնելու ենթադրելու, որ նշված զինանակների հաշվումները մոտավորապես ճիշտ են. Մաշտոցը ծնված պետք է լինի 361—364 թվականներին (այս մասին խոսք կլինի ստորև)։

Հացեկացցի երիտասարդը, տեղում կրթություն ստանալուց հետո, գալիս է Վաղարշապատ և ծառայության մտնում Խոսրով Երրորդի (383/4—388/9 թթ.) արքունիքում իբրև ղրվանադպիր՝ Առավանի հազարապետության օրբր։

Մաշտոցի իր ժամանակի կրթված աննմալորություններից մեկն է եղել։ Այն փաստը, որ նա կարողացել է դպրի պաշտոնով աշխատանքի ընդունվել արքունիքում, վկայում է նրա պարաստիլածության մասին։ Սկզբնաղբյուրներում եղած անհարկներից կարելի է ենթադրել, որ Մաշտոցը արքունիքում որոշ ժամանակ ղրվանադպիր պաշտոնում ծառայելուց հետո անցնում է ղինվորական ծառայության։ Բայց շուտով թողնում է իր պաշտոնը և հոգևոր կույում ընդունում՝ միաբանելով Գողթնի ճգնաբաններից մեկում։

Մ. Արևիլյանը ենթադրում է, որ նա զգնած պետք է լինի Երեզակ դավաթի Մեսրոպավանք կամ Մեսրոպավանիս, Մեսրոպանիս գյուղում¹⁶։ Ըստ Կարյունի, Մաշտոցի ղինվորական ծառայությունը թողնելը և հոգևոր կույում ընդունելը տեղի է ունեցել Վոսմ Դ Կրմանի շուրթորդ տարին, այսինքն՝ 391/2 թվականին (Վոսմ Դ-ն զա՛ է բարձրացել 388/389 թվականներին)։

Չոզոռական զոանալուց հետո Մաշտոցը գրազվում է շրջիկ քարղզույթյամբ։ Պետք է նկատի ունենալ, որ այդ ժամանակ հիմնանությունը դեռ բավականաչափ անուր էր Հայաստանի լեռնային շրջաններում, և նման քարղզական աշխատանքի կարիքը խիստ զգացվում էր։ Ենթադրվում է, որ Քեղոզորս Մոպսուեստացին 391/2 թվականին է գրել մոզակրոնության մասին իր

⁵ ՏՃ՝ Ն. Օ. Յուն, Исследования и статьи, Москва, 1896, էջ 206։ Հ. Գաթրեճյան, Տիեզերական պատմութիւն, Վիեննա, հ. Բ, 1852, էջ 252։

⁶ ՏՃ՝ Ն. Արամյան, Անտիա Երևանցու Մատենագրությունը, Երևան, 1944, էջ 339։

⁷ ՏՃ՝ Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1833, գլ. ԺԹ, էջ 111։

⁸ Կարյուն, Կարթ Մաշտոցի, էջ 36։

⁹ ՏՃ՝ Ն. Արամյան, Փնտրական տեսություն հայ մոզակրոն պատմության, էջ 250։

¹⁰ ՏՃ՝ Ն. Օ. Յուն, Исследования и статьи, էջ 206։

¹¹ ՏՃ՝ Հ. Մանեղյան, Փնտրական տեսություն հայ մոզակրոն պատմության, էջ 250։

¹² ՏՃ՝ Ն. Արզն, Անտիոքի էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից՝ ըստ ասոր պաշտպանների («Հանգուլ ամսօրեայ», 1925, էջ 195)։

¹³ Հ. Գաթրեճյան, Տիեզերական պատմութիւն, հ. Բ, էջ 523։

¹⁴ Ն. Ավինյան, Մ. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 26։

¹⁵ Հ. Աճառյան, Մեսրոպ Մաշտոցը («Էջմիածին», 1954 թ., № 11, էջ 30)։ Գիտականը հետագայում վերանայել է իր կարծիքը և Մաշտոցի ծննդյան թվականն է համարել 364 թ. (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 84)։

¹⁶ Մ. Արևիլյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի և գրականության սկիզբը (տե՛ս Վավերական գրականություն, 1941 թ., № 1, էջ 48)։ Արտատպությունը տե՛ս Վերսիպ Մաշտոցը Նոզվածուկի մոզակրոն, Երևան, 1902, էջ 242—305։

աշխատութիւնը Մաշտոցի (Մատուրիոսի) համար, իսկ հիշյալ աշխատութեան վերնագրում Մաշտոցն անվանված է «բորեպիսողոտա» (χρυσόπαιστός), իսկ ինքը՝ Քեղզորոսը՝ «երեց» (πρεσβύτερος)¹⁵։ Հայտնի է, որ Քեղզորոսը երկրորդական աստիճանում մնացել է 383-ից մինչև 392 թվականը, իսկ ահռահեռակ՝ Մուպուտեոսի (Մամուտասայի) եպիսկոպոս, հետևապես, Մաշտոցը բորեպիսկոպոսն կոչում է ստացել 391/2 թվականներին¹⁶։

Այստեղ՝ Գողթնում, Մաշտոցը մտախիչը շփում է ժողովրդի հետ, տեսնում, թե ինչպես հունական և ասորական արժեքները մտնում են նրանց դպրութիւնները ծանրանում են ուսումնասիրող հայրերինների վրա։

Նա խոր վիշտ է զգում. «...յարածամ տրամէր երանելի այրն Մաշտոց, տեսանելով դժնժ քանն և դատաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թռչակօք և հեռականց ճանապարհօք և բազմածամանակնայ զեղբրմամբք մաշէին զաւուրս իրեանց ի դպրոցս ասորի գիտութեանս»¹⁷։ Նա համոզվում է, որ հունարեն և ասորերեն լեզուների զերիշխող այդ վիճակը չի նպաստում նոր հովասի ամրագնդմանը, իսկ հեթանոսութիւնն դեմ կալվելու լավագոյն միջոցը՝ սեփական գիր և գրականութիւն ստեղծելն է։

Մաշտոցը Գողթնից վերադառնալուց հետո լինում է կաթողիկոս Սահակ Պարթևի մոտ և պատմում ժողովրդի ծանր վիճակի մասին ու հայտնում իր մտահոգութիւնը։ Սահակ կաթողիկոսը, Մաշտոցի հետ միասին, գիտում է Վոսմշապուհ՝ թագավորին։ Վերջինս հավանութիւն է տալիս նրանց մտադրութեանը և հայտնում, թե ինքը տեղեկութեան ունի, որ Աղձնիքի Արզն քաղաքի Գանիկը եպիսկոպոսն ունի հայերեն գրեր։ Արտշվում է բերել ապ այդ գրերը։ Գանիկից գրեր բերելու համար ուղարկում են Վահրճ անունով մեկին, որը գնում է Գանիկի բարեկամ Հարել քահանայի մոտ և վերջինին միջոցով բերել տալիս Գանիկյան գրերը։ Այս տեղի է ունեցել, ըստ վարքագրի տեղեկութեան, Վոսմշապուհի գահակալութեան երեզնեւոր տարին¹⁸, այսինքն՝ 403—404 թվականներին¹⁹։

Մաշտոցը դարձ է բաց անում, աշակերտներ հավաքում և սկսում պարսպիկ գանիկյան այս գրերով։ Սակայն որոշ ժամանակ այդ տառերով պարսպիկուց հետո տեսնում են, որ նրանք մեծ թերութիւններ ունեն և չեն արտահայտում հայոց լեզվի հնչյունական առանձնահատկութիւնները²⁰։

Այրուրենի այս պահասը լրացնելու նպատակով, Մաշտոցը Սահակի հանձնարարութիւնով, մի խումբ աշակերտների ուղեկցութեամբ մեկնում է Միշաղեան՝ հայկական համապատասխան այրուրենի ստեղծումն այնտեղ հոգալու նպատակով²¹։ Լինում է Ամիգ և Եղեսիա քաղաքներում։ Նա արտակարգ լավ թեղանկերութիւն է գտնում այդ վայրերի հույն և ասորի մտադրականների կողմից։ Իր հետ տարած աշակերտներին Մաշտոցը բաժանում է երկու խմբի՝ մի մասին հանձնարարում է հունարեն սովորել, իսկ մյուսին՝ ասորերեն, իսկ ինքը, տեղացի գիտականների աջակցութեամբ, զբաղվում է այրուրենի ձևավորումով։ Գրերը ձևավորել է ապիս Սամոսատ քաղաքում (Եփրատի վրա) Հափանոս (Rufinus) անունով մի գիտաբանի։

Հայկական այրուրենն ստեղծելու աշխատանքն ավարտելուց հետո, Մաշտոցն իր երկու աշակերտներին՝ Հովսեփ Պաղնացու և Հովհան Եղեղեցացու օգնութեամբ ներատեղծ նշանագրերով հայերեն է թարգմանում Սողոմոնի առակները, որոնք մանր խրատական ասացվածքներ են պարտնակում և հարմար էին նորակաթիկ երեխաներին զատախարակելու համար²², ու վերադառնում Հայաստան։

Այրուրենի տեղեկութիւններից երկուսն է, որ գրերի ստեղծմանը բացառիկ մեծ նշանակութիւն են արվել Հայաստանում. Վաղարշապատ վերադառնալուց Մեւրոպիէն զիմադրելու են զուրս գալիս թագավորն ու կաթողիկոսը՝ իրենց հետ վերցրած «...գամեանայ նախարարուցնդ ապագանայն ամբոխս»։ Գրի ստեղծումը այնքան կարևոր իրադարձութիւն է համարվել հայ իրականութեան մեջ, որ այդ առթիվ, ինչպես վկայում է Այրուրենը, հատուկ տոնախմբութիւն է տեղի ունեցել։

¹⁵ S^h Migne, Patrologia Graeca, t. 103, col. 291, (Քեղզորի ու թարգմանութեանը ան՝ ս. Աղոնց, Մաշտոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների, «Մեւրոպ Մաշտոց», ժողովածու 2002 ՎՎ, էջ 201—230)։

¹⁶ Հմմ. Հ. Անտոյան, Մեւրոպ Մաշտոց (ան՝ ս. «Էշմաճին», 1954 թ., № 11, էջ 26)։ Պրոֆ. Բ. Տեր-Մինասյանը չի ընդունում Մատուրիոսի և Մաշտոցի նույնանունութեանը և յորով էլ բացատրում Մաշտոցի կյանքի ժամանակագրութիւնը (ան՝ ս. Տեր-Մինասյան, Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1964 թ., Ա 7, էջ 25—47)։

¹⁷ Վազա Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 13։

¹⁸ Տե՛ս Արշուն, Վարք Մաշտոցի, էջ 44։

¹⁹ Վոսմշապուհի գահակալութեան վերաբերյալ աղբյուրները խիստ հակասական են. ոմանք ընդունում են 388 թ. (Օրմանյան, Մտեղեղյան, Լևո), մյուսները՝ 391 թ. (Մատուրյան), 398 թ. (Մարկվարտ, Քորոյան, Գ. Տեր-Մկրտչյան, Անիկյան, Ե. Տեր-Մինասյան)։

²⁰ Այրուրեն գործնական այդ ժամանակը սահմանում է սրբիկ ամս երկուս, ետրեանցին՝ «գամս սակաւս», (Սամոնկ Անցին՝ մեկ տարի (չլինս միոյ ամիս)։) Հայաբնակութեան մեջ եղել են զանազան կարծիքներ ու արդարութեան աստիճաններ (Հմմ. Հ. Անտոյան, Երկու ուղղով Սորյանի մեջ, «Տեղեկագիր Արմճանի», 1941 թ., № 1 (6), էջ 170)։ Սակայն ետրեանցու Պատմութեան համապատասխան մասի երկամասից պատասխնի վերանունութեանը ցույց տվեց, որ ետրեանցու և՛ Այրուրեն, և՛ ետրեանցու երկերում եղել է միանունայն այլ ընթերցում. աստուս ...աղայն գոմանս սակաւս, ինչպես պատասխնում (ան՝ ս. Փղպեղյան, Մովսէս ետրեանցու ետրեանցու երկամասից պատասխնի ու գանիկյան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը, «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958 թ., էջ 163—182)։

²¹ Միջոցներն այդ ժամանակ փայլում էր իր բարեկարգից դպրոցներով։ Այնտեղ էին գտնվում տեղեկագիր մի շարք գիտնականներ. Եղեսիայում այդ ժամանակ դրոժում էր պարսկական նշանագիր դպրոցը Իջուսի գիտաբանութեամբ, Ամիգի դպրոցը՝ Աղակիոսի գիտաբանութեամբ և այլն (Հ. Անտոյան, Մեւրոպ Մաշտոց, «Էշմաճին», 1954 թ., № 1, էջ 25)։

²² Տե՛ս Արշուն, Վարք Մաշտոցի, էջ 54։ Պատմանների թնտեսութեան ան՝ ս. Ա. Անտոյանյան, Թե ինչը՝ Մաշտոցը թարգմանեց Սողոմոնի առակները («Բանբեր Մատենադարանի», № 7, 1964 թ., էջ 113—122)։

Հայկական նշանագրերը Միջազգային բերելուց հետո Մաշտոցը և Սահակը բաց են անում դպրոցներ և դրազվում գաստիարակությանը:

Մաշտոցը նաև կարգավորում է մաշտաբազարում՝ Վազարչապատում, վարդապետարան հիմնելու գործերը և ապա մեկնում է Գողթն, Եյառաջին դաստակերտին իր: Այստեղ նա, առիթ իշխան Եարաթի աջակցությամբ, հավաքում է երեխաներ և կրթարաններ հիմնում: Ապա մեկնում է Սյունիք, նույնը կատարում նաև այնտեղ՝ Վասակ Սյունեցու աջակցությամբ: Այնուհետև նա շրջում է Արեւելյան Հայաստանի մյուս շրջանները և ամենուրեք նոր դպրոցներ բաց անում:

Արեւելյան Հայաստանում նորասանդ գիրը գործածության մեջ դնելուց հետո անհրաժեշտ էր այն գործածության մեջ դնել նաև Արեւմտյան Հայաստանում՝ մյուս Ե. կեն ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հռոմեոց²³: Մաշտոցի այդ ուղղությամբ կատարած առաջին փորձն անհաջողությամբ է վերջանում, սեղանի իշխանության ներկայացուցիչները թույլ չեն տալիս նրան դպրոցներ բաց անել: Մաշտոցը հարկադրված է լինում իր հետ տարած աշակերտներին թողնել Մելիտոսի (Արեւմտյան Արևիկոս) մաս և մեկնել Բյուզանդիոն՝ Փետրոս Բ կայսեր (408—450 թթ.) թուլությունը ստանալու:

Բյուզանդական կայսրության քաղաքական վիճակն այդ ժամանակ այնպիսին էր, որ նա հայերի նկատմամբ սրղեկներ էր սիրաշահելու քաղաքականությամբ, ուստի կայսրն ընդառայում է Մաշտոցի խնդրանքին և անգամ հանձնար է անում դպրոցների ծախսերը վերցնել արքունիքի վրա: Մաշտոցն իր աշակերտներով շրջում է Արեւմտյան Հայաստանում և մի շարք վայրերում դպրոցներ բացում:

Մաշտոցի այս առաքելությունն ու դպրոցներ բացելու փաստը տեղի պետք է ունեցած լինի ոչ շուտ, քան 419/420 թվականներին (որովհետև Ավակիոսը Մելիտոսի եպիսկոպոս է կարգվել այդ թվականներին) և ոչ ուշ քան 425 թվականին (որովհետև Մաշտոցը Կոստանդնուպոլսում հանդիպում է ունեցել Աստիգոս պատրիարքի հետ, իսկ վերջինս մահացել է 425 թվականի հոկտեմբերի 10-ին):

Սակայն Մաշտոցը միայն կրթարաններ բաց անելով չէ, որ դրազվում է, նա Սահակ Փարթևի և իր աշակերտների հետ միասին ձեռնարկում է թարգմանական խոշոր աշխատանք. թարգմանում են ինչպես ասորերենից, այնպես էլ հունարենից: Թարգմանիչների շարքում են գտնվել հայ երկու ականավոր մասնագիտիկներ՝ եղնիկ Կողբացին և Կորյունը:

Երբ է տեղի ունեցել հայկական գրերի ստեղծումը, Այս հարցի մասին հայադիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել:

Բանասեր Գալուստ Տեր-Միքայելյանը (Միաբան), ուսումնասիրելով սկզբը-

նադրյունները²⁴, եկել է այն եզրակացության, որ գանձիլյան գրերի ստեղծումը տեղի է ունեցել 405 թվականին, իսկ ժողովրդի գյուտի և կատարելագործության ժամանակ համարել է 412—416 թվականները²⁵:

Պրոֆ. Ն. Ազոնցը հիմնվելով այն փաստի վրա, որ Քնդոքոս Մուպուսեուսացին աշխատություն է գրել Մուսուրիոս—Մաշտոցի համար և վերջինս քահանա է եղել 383—392 թվականներին, ենթադրում է, որ Մաշտոցը հայկական այրուքներ ստեղծած պետք է լինի Քնդոքոս Մուպուսեուսացու օգնությամբ եղբայրացու: Միաժամանակ նա գիտում է, թե «Հայ գրերի ծագումը մոթ է և ոչ ոք հանկարծակի չպիտի դա մեր ենթադրության համար»²⁶:

Ակադ. Հ. Մանանդյանը անվերապահ ընդունում է պրոֆ. Ն. Ազոնցի այս կարծիքը՝ փորձել ուղղումով, կոնկրետ թվական ընդունելով Քնդոքոս Մուպուսեուսացու կյանքի վերջին տարին՝ 391/392 թվականը²⁷:

Ն. Ակիլյանը հայկական գրերի ստեղծման ժամանակ համարում է 406—407 թվականները և գտնում, որ հայերեն նոր գրերը Միջազգային Հայաստան են բերվել 407—408 թվականներին²⁸: Մասնակի սրբագրումով՝ 405/6 այդ կարծիքն ընդունում է և Ն. Տեր-Միքայելյանը²⁹:

Մեր կարծիքով, ամենից հավանական տեսակետը վերջինն է, և այս էլ պետք է ընդունել հետևյալ նկատառումով³⁰:

1. Կորյունի աշխատության վերջաբանում ասված է, որ հայկական գրերը ստեղծվել են Մաշտոցի մահվանից 35 տարի առաջ՝ «ի դրուսթենն Հայոց մինչև ցվախճան Սրբոյն (այսինքն՝ Մաշտոցի—Ա. Ա.)՝ ամբ կրեսուն և հինգը»: Տոմարական անվիճելի հարվեկներով պարզված է, որ Մաշտոցը մահացել է 440 թվականի փետրվարի 17-ին. եթե գրերը ստեղծվել են Մաշտոցի մահվանից 35 տարի առաջ, այս և հայկական գրերի ստեղծումը տեղի պետք է ունեցած լինի 405/406 թվականներին:

2. Կորյունը, նույն վերջաբանում, գրերի ստեղծման թվականը հիշում է նաև Հազկերտ Առաջինի թագավորության ութերորդ տարին: Հազկերտը գահ է

²⁴ Ն. Տեր-Միքայելյան, Հայ գրերի 1500-ամյակի ասիով («Արարատ», 1912, էջ 499—514; Վերահրատարակությունը տե՛ս «Մեծ դպրոց Մաշտոց», հոգովածների ժողովածու 2ՍՄԷ ԳԱ-ի, էջ 181—196):

²⁵ Ն. Տեր-Միքայելյանի տեսակետը ժամանակին պաշտոնապես ընդունելություն է գտել հայագիտության մեջ, և 1912 թվականին (հոկտեմբերի 12—13-ին) Երվանդանում և Օրշահանում նշվել է հայկական գրերի ստեղծման 1500-ամյա հոբելյանը:

²⁶ Ն. Ազոնց, Անտոնով էէք Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից («Հեղուկ աստված», 1925, էջ 439):

²⁷ Տե՛ս Я. А. Манандян, Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самостоятельность, Ереван, 1941, № 26; նաև «Հայ գրերի գյուտի և տարբերի հարցի շուրջը», «Տեղեկագիրք», 1952 թ., № 7, № 41—57; Վերահրատարակությունը տե՛ս «Մեծ դպրոց Մաշտոց ժողովածու», էջ 25—116:

²⁸ Տե՛ս Ն. Ակիլյան, Ս. Մաշտոց վարդապետ, էջ 108:

²⁹ Տե՛ս Ն. Տեր-Միքայելյան, Եղված աշխատությունը, էջ 45:

³⁰ Մեր կարծիքը գրի ստեղծման թվականի վերաբերյալ հանգամանորեն շարադրված է «Հայ գրի ստեղծման թվականը հոգովածում (տե՛ս «Մեծ դպրոց Մաշտոց», հոգովածների ժողովածու Երևանի համալսարանի, էջ 101—132):

²³ Նույն տեղում, էջ 64:

բարձրացել 399 թվականին. նրա ութերորդ տարին դարձյալ համապատասխանում է 406/7 թվականին:

3. Կորյունի աշխատությունից հայտնի է, որ Մաշտոցը Միջագետքում գտնված ժամանակ հանդիպում է Ակադիոս և Բարբլոս Լեփսիդոսյաններին. Ակադիոսը Ամիրզում Լեփսիդոսյանի ամուսին է գտնվել 400—409 թվականներին, իսկ Բարբլոս անունը ենթադրվում է, որ աղավաղված է և պետք է եղած լինի Պակիրոս³¹, ինչպես առաջարկել է Ն. Ակինյանը, իսկ Պակիրոսը (նույնն է՝ Բարբլոսը) Նղեսիայի Լեփսիդոսու է եղել 398—409 թվականներին. Անս այս պատահերը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ հայկական գրերի ստեղծման հավանական թվականը պետք է համարել 406—407 թվականները:

Մաշտոցը մահացել է 440 թվականի մեհեկան ամսի 13-ին, շաբաթ օրը, որը ներկա ամսաթվով (հաշվելով շարժական օրերի բանակը) փետրվարի 17-ն է, և քաղվել է Օշական գյուղում: Մահվանից երեք տարի հետո Վանան Ամատունին նրա շիրիմի վրա կանգնեցրել է «խորան տաշածոյ փնօթը»³²:

Հայոց գրերի պատմության հետ կապված մյուս կարևոր հարցը՝ նրանց սկզբնաղբյուրի խնդիրն է, այսինքն՝ այն այբուբենի հարցը, որի տառաձևերը և սխեմանը օգտագործվել են հայկական գրության ստեղծման ժամանակ: Կենդանի մասին հայագիտության մեջ առարկող կարծիքներ են հայտնվել: Կանգ առնենք նրանցից կարևորների վրա:

Մ. Չամչյանի կարծիքով Մաշտոցը ոչ մի այբուբենից չի օգտվել և բոլոր տառանիշերն էլ ինքն է ստեղծել: Նա գտնում է, որ մի մարդ, որը կարող էր հարևան վրացիների և աղվանների համար ինքնուրույն գիր ստեղծել, ղեկավար չէր իր ժողովրդի համար տառանիշեր ստեղծել՝ առանց ուրիշից օգտվելու³³:

2. Հյուբշմանը ենթադրում է, որ Մաշտոցի՝ Գանիելից վերցրած գրերը, թվով 22, հունական են եղել, իսկ մնացած 14 նշանադրեր ինքն է ստեղծել³⁴:

Ի. Հարությունյանի կարծիքով, հայկական այբուբենի 22 տառանիշեր փյունիկեցիներից է վերցրված, 2 տառանիշ՝ հունարենից, իսկ մնացած 12 տառանիշերն ինքն է ստեղծել³⁵:

Բ. Սարգսյանը ենթադրում է, որ հայկական այբուբենը երեք տարբեր այբուբենների խառնուրդ է՝ ասորերենի, պարսկերենի և հունարենի. ասորերենից վերցրել է 2 տառանիշ, պարսկերենից՝ 12 տառանիշ և հունարենից՝ 22 տառանիշ³⁶:

Հայացեա Մյուլլերը, որը հայկական գրի առաջին մասին խոսել է իր երեք հոդվածներում, գտնում է, որ գանիելյան 22 տառերը, որոնք օգտագործվել է Մաշտոցը, ասորական ծագում են ունեցել (վերցրվել են պամիրականից) և 7 ձայնավոր ու 7 բաղաձայն տառեր վերցրվել են զենդական այբուբենից³⁷:

Պրոֆ. Հ. Աճառյանը, որ ամենից հանգամանորեն քննել է հայ գրերի սկզբնավորության հարցը, եկել է այն եզրակացության, որ հայկական այբուբենի 20 տառերը հունարենից են վերցրված, 4—6-ը՝ հայկական են, իսկ մնացածը իրանական կամ ասորական ծագում ունեն³⁸:

Ն. Ակինյանը ենթադրում է, որ հայկական 36 տառերից 33-ը հունարենից են վերցրված, իսկ երեքը՝ ասորերենից, Ասորերենից, նրա կարծիքով, Մաշտոցը վերցրել է «է», «Մ» և «հ» տառաձևերը³⁹:

Կ. Բասմաշյանը հայկական այբուբենի տառանիշեր է նիստում պարսկական սեպագրության մեջ: Նա սեպերն ուղիղ զոմեր վրա ածելով է անշատ սեղերն իրար միացնելով, նրանք բունաձիգ համեմատում է հայկականի հետ և մատնացույց է անում հայկական 19 տառանիշ, որոնք, իրեն թե, իրենց ծայրերն ունեն սեպագրության մեջ⁴⁰:

Հայկական գրի առաջին սուսմեասիրությանը պատկեր է հայացեա Հ. Մարկիարացի: Հայկական այբուբենը համեմատության մեջ դնելով հունական, ասորական և պահլավական այբուբենների հետ, նա եկել է այն հետևության, որ հայկական 36 տառանիշերից 15-ը ծագել են պահլավերենից, 7-ը՝ հունարենից, երեքը ստեղծել է Մեսրոպը, իսկ հինգի մասին ղեկավարացել է կարծիք հայտնել⁴¹:

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանի առթիվ լույս տեսած հայ գրի ծագմանը նվիրված մի քանի աշխատություններ, որոնցից ուշագրավ է մասնագիտացան պրոֆ. Է. Աղաջանի «Մեսրոպյան այբուբենը և ուղղագրությունը» հոդվածը, ուր նա հանգամանորեն քննության է առել Աճառյանի և սողերիս հեղինակի հայտնած կարծիքները հայկական տառանիշերի նախապայման մասին և աշխատել որոշ ճշգրտումներ կատարել: Նա անգաղաքան է նաև տարիներ առաջ իր հայտնած կարծիքին և աշխատել հիմնավորել այն: Նա գտնում է, որ «Հունարենում, պահլավերենում կամ ասորերենում չեղած տառերը Մեսրոպը հորինել է մյուս տառերի ձևափոխությամբ և զեանդել է մեր այբուբենի այն տառերից հետո, որոնց նմանությամբ հորինել է այդ չեղյալ տառերը»⁴²:

Հայկական, վրացական և աղվանական գրերի աղբյուրության և նրանց ծագումնաբանական հարցերին նվիրված ուշագրավ հոդվածով վերջերս հանդես եկավ Ա. Գ. Փերիխայանը: Նա մի շարք օրինակների հիման վրա աշխատեց ցույց տալ, որ հայկական, վրացական և աղվանական տառանիշերը սերտ անջուրկյան մեջ են գտնվում հյուսիսմիջագետքյան արամեական գրերի հետ⁴³:

եվ վերջապես, հայկական գրի առաջին անդրադարձել է նաև սողերիս պրոֆ. Է. Աղաջանը, որ Մաշտոցը հայկական այբուբենի

³¹ Տե՛ս Կորյուն, *Վարք Մաշտոցի* («Հանդես ամսորեայ», 1935, էջ 512):
³² Կորյուն, *Վարք Մաշտոցի*: էջ 94:
³³ Տե՛ս Մ. Չամչյան, *Պատմություն Հայոց*, Վենետիկ, 1784, հ. Ա, էջ 760—761:
³⁴ Տե՛ս H. Hübschman, *Über Aussprache und Umschreibung der Alfarmentischen* (ZDMG, 1870, էջ 63):
³⁵ Տե՛ս Ի. Հարությունյան, *Հայոց գրեր*, էջ 309—314:
³⁶ Տե՛ս «Բաղաձայն», 1899, էջ 34—35:
³⁷ Մյուլլերի հոդվածների թարգմանությունները տե՛ս «Հանդես ամսորեայ», 1899, էջ 86—87, 1891, էջ 68—70, 1894, էջ 244—246:

³⁸ Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց գրերը*, էջ 271:
³⁹ Տե՛ս Ն. Ակինյան, *Ս. Մաշտոց վարպետ*, Վրենա, 1949, էջ 253—270:
⁴⁰ Տե՛ս «Բաղաձայն», 1898, էջ 534:
⁴¹ Հ. Մարկիարացի, *Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը* (տե՛ս «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու 2002 թվ. էջ 165—176):
⁴² «Մեսրոպ Մաշտոց, հոդվածների ժողովածու Համալսարանի, էջ 76:
⁴³ А. Г. Перихаян, К вопросу о происхождении армянской письменности (տե՛ս «Переднеазнатский сборник», II, М., 1966, էջ 103—133):

համար ելակետ է ընդունել հիմնականում իր ժամանակի ամենից զարգացած գրատեսակը՝ հունարենը⁶⁴։

Հայկական գրի ծագումը պարզելու համար անհրաժեշտ է նախ անդրադառնալ հայկական այբուրենի հորիզվածքային առանձնահատկություններին և տառակերտման սկզբունքներին։

Այդ տեսանկյունից, առաջին հարցը, որ ծառայում է մեր առջև, այդ հայկական գրի ինքնատիպության խնդիրն է։ Մաշտոցն արդյոք օգտվել է որևէ գրատեսակից, թե՛ հայկական այբուրենի կազմել է յուրովի, այսինքն՝ հայոց լեզվին հատուկ հնչյունների համար նշանադրեր է ստեղծել առանց ուրիշի դիմելու, ինչպես կարծել է Մ. Չամչյանը։

Գրի պատմությունից հայտնի է, որ այբուրենները մտացածին ձևով, անդրալական շեն ստեղծվում։ Կրթության մեծ կամ փոքր փոփոխություններով կազմվում են իրար հետ, մեկը՝ սկիզբ է առնում մյուսից⁶⁵։ Այսպես, հայտնի է, որ փյունիկյան գրից սկիզբ է առել հունականը, հունականից՝ լատինականը, լատինականից՝ եվրոպական ժողովուրդներինը և այլն։ Մաշտոցն արդյոք ծանոթ է եղել գրատեղծման այս սկզբունքին։

Հնագրական ուսումնասիրություններն անվիճելի պարզել են, որ Մաշտոցը ծանոթ է եղել և առաջնորդվել է հնյց այդ սկզբունքով։ Այս հարցն այլևս վիճարկության խնդիր չէ, ուստի չենք ուզում ծանրանալ նրա վրա։

Հայագիտության մեջ տարակարծությունների տեղիք է տվել հայկական այբուրենի տառանիշերի թվաբանակը։ Չնայած պատմիչները այդ մասին ուրշակի տեղեկություններ են հաղորդում, որ մաշտոցյան այբուրենն ունեցել է 36 տառանիշ, սակայն գտնվել են ուսումնասիրողներ, որոնք կասկածանքի տակ են ստել այդ տեղեկությունները և պնդել, որ որոշ տառանիշեր հայկական այբուրենի վրա ավելացվել են ուշ դարերում։ (Խոսքը 13-րդ դարում ավելացված հանրահայտ «և», «օ», «ֆ» տառերի մասին չէ)։ Այսպես, Ղ. Աղայանի կարծիքով, հայկական այբուրենի վրա հետագա դարերում են ավելացված և, վ, ի, յ տառերը⁶⁶։

Պետք է ասել, որ այս կարծիքը միանգամայն անհիմն է, քանի որ 7-րդ դարից մեզ հասած Գավթակ Քերթոզի աղվանից Զիվանշիր թագավորի մատնագրի անագրությունները շարադրված են հայկական այբուրենի տառանիշերով՝ հարցդրականություններով, իսկ այնտեղ կան բոլոր 36 տառերը։

Գծարանում ենք նաև համաձայնվել Լ. Մելիքեան-Բեկի հայտնած այն կարծիքին հետ, որ հայկական այբուրենի և առող ստեղծվել է 7-րդ դարում⁶⁷։ Հայկական տառանիշերից թվանշանների տաճորդական սիստեմ կազմելու սկզբունքը (չորս իննյակներով) քաջատու է է-ի քաջակալությունը այբուրենում։

Հայկական այբուրենի առաջին հարցն ուսումնասիրող գիտնականների ուշադրությունն առաջին հերթին դարձվել է դանիելյան կոչվող գրերի վրա։ Կոր-

⁶⁴ Ա. Պ. Կրամարյան, Հայ գրի և գրչության պատմություն, էջ 56—65 (այդ մասին խոսել ենք նաև մեր մի շարք հոդվածներում)։

⁶⁵ Տե՛ս Վ. Ա. Իսրյան, Развитие письма, М., 1961, էջ 223։

⁶⁶ Տե՛ս Վ. Ա. Իսրյան, ամսագիր, 1890 թ., էջ 1557—1559։

⁶⁷ Վ. Մ. Մելիքե-Բեկ, О генеалогии армянского, грузинского и абхазского алфавитов (սե՛ս «Материалы по истории Азербайджана» ժողովածու, հ. 1, էջ 45—46)։

յունի, նորենացու և այլ պատմիչների տեղեկություններից մեզ հայտնի է, որ վրամշարուհ թագավորի խորհուրդով Գանիելի մոտից բերվել են նրա գրերը և որոշ ժամանակ փորձել օգտագործել, բայց հետո, երբ համոզվել են, որ այդ այբուրենի տառանիշերը չեն համապատասխանում հայոց լեզվի հնչյուններին, Մաշտոցը ձեռնամուխ է եղել սեփական գիր ստեղծելու գործին։ Հայր է առաջանում, Մաշտոցն օգտագործել է դանիելյան գրերը, թե ոչ։ Պատմիչները, գծարտաբար, մեզ հասակ տեղեկություններ չեն հաղորդում, ուստի ուսումնասիրողները հարկադրված են լինում խնդրի լուծմանը մոտենալ տրամաբանության հիման վրա։ Այս հարցում տարբեր հայագետների հայտնած կարծիքները հանդամանորեն շարադրված են Աճառյանի նշված աշխատության մեջ, ուստի չենք ուզում կրկնել։ Մենք պաշտպանում ենք այն կարծիքը, որ Մաշտոցն օգտագործել է դանիելյան գրերը⁶⁷։

Հայկական գրի առաջին ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների մեծ մասը հայկական տառանիշերի մայրեր են տեսնում հունական այբուրենում (Գարդհանուցեն, Ակիելյան, Աճառյան և ուրիշներ)։ Հնագրական մեր ուսումնասիրությունները կս մեզ րերել են այն կարծիքի, որ հայկական 36 տառերից քսանի մայրերը վերցված են հունականից (տե՛ս կից աղյուսակը)։ Ըստ որում, հայկական 18 տառանիշերը նմանվում են հունականին իրենց և՛ ձևով, և՛ հնչյուններով, իսկ երկուսը՝ թայն ձևով։

Պարզվում է, որ հունականից մայր Մաշտոցը երբեք տառի մայրեր է վերցրել չյուսիսամիջագետքյան արամեական գրությունից՝ «ա», «ե» և «ն» (տե՛ս կից սախտակը)։ Բացի այդ, նա մեկ տառ՝ «ծ»-ն, վերցրել է ասորականից։

Ամբողջածառ է ստեղծել նշել, որ հունական, արամեական և ասորական տառանիշերը Մաշտոցը տառացի չի պատճենահանել, այլ զրանք ենթարկել է հիմնական ձևափոխությունների։ Այդ ձևափոխությունն այնքան մեծ է, որ որոշ տառերի մայրերը մինչև այժմ զգվար է լինում դյուրությունը որոշել։ Մաշտոցը որոշակի սկզբունք է ստեղծել։ չվերցնել այլ այբուրենից ու մի տառ, երևի այն չի ենթարկվում ձևափոխությունների։ Այդ նպատակին հասնելու համար նա կատարել է հետևյալ ձևափոխությունները. ա) բաց է արել նախատիպ տառերի շրջագծերը, բ) տառերի մեծ մասի աջ կողմից վայրահակ թևեր է ստեղծել, գ) շեղ և կիրարարող գծերին ուղղորդել հարթ գծերի մեծ է տվել, ի) այլուստգծերն իրար և իրենց թևիկներին է միացրել կոր գծիկներով։

Մաշտոցն այդպես է վարվել, սակայն, միայն այն տառանիշերի հետ, որոնց հնչյունները կային այլ այբուրեններում և կարելի էր օգտագործել նրանց գծարանական ձևերը, բայց միանգամայն այլ մտացում է ունեցել այն տառանիշերի նկատմամբ, որոնք հայոց լեզվին հատուկ հնչյունների տառանիշերն են. դրանց համար նա տառանիշեր է ստեղծել հայկական առկա տառերի հիման վրա և մեծ մասամբ արևելյան տառի կողքին⁶⁸, որից նա ստեղծել է նշված աղյուսակում կարելի է տեսնել Գ-ն զրված է Գ-ի մտա, Թ-ն՝ Թ-ի, է-ն՝ է-ի, ն-ն՝ Ն-ի, Օ-ն՝ Օ-ի, Ս-ն՝ Ս-ի։ Բացառություն են կազմում Ի-ից ստացու-

⁶⁷ Ա. Պ. Կրամարյան, Նախամաշտոցյան Հայ մատենագրությունը և դանիելյան գրերը, ԿՊԸ, 1963, № 4, էջ 131—144։

⁶⁸ Տե՛ս այս մասին Հ. Աճառյանի հոդվածը՝ «Երբ հարց մարտական այբուրենի շարքը» («Երիտմիտն»), 1946 թ., № 1, էջ 48—50)։

| | | | |
|----------|----------|-----------|----------|
| Հայկական | Հունական | Արամեական | Հայկական |
| Կ | | Ս | |
| Բ | Β | | |
| Գ | Γ | | |
| | | | ԳԴ |
| Դ | Δ | | |
| Ե | Ε | | |
| Զ | Ζ | | |
| Է | | | ԷԸ |
| Ը | | | |
| Թ | Θ | | ԹԺ |
| Փ | | | |
| Բ | | Վ | |
| Լ | Λ | Լ | |
| Ն | | | ՆԽ |
| Օ | | Յ | |
| Կ | | Կ | |
| Հ | | | ՀԿ |

Ձեռն-ի բուրակը բաց է արված և կամ արամեականի ա-ն աչքի բերված:

Յճա-ի բուրակները բաց է արված և վարձահանի թև ստեղծված:

Դճա-ի սյունագծի վրա օղ է ավելացված:

Հայկական Գ-ից:

Հունական առաջ ձեռն-ից ստեղծված է ձ-ն:

Է փուն-ի վերին կտուցը կտրված է:

Հճա-ի վրա օղ է ավելացված:

Դճա-ից՝ Հայկական Ը-ի ազդեցությամբ տակ:

Հայկական Է-ից:

Թճա-ից բաց անելով բուրակ:

Հայկական Թ-ից:

Դճա-ից՝ աչքի վարձահանի թև ավելացնելով և կամ արամեականից՝ շուռ տալով:

Նճա-ից՝ շուռ է տված և կամ արամեականից՝ անփոփոխ:

Հայկական Ի-ից:

Ասորականից՝ աննշան փոփոխությամբ:

Արամեականից՝ կտրելով ներքին սյունիկը:

Հայկական Կ-ից:

| | | | |
|---|---|---|----|
| Ձ | | | ՁՁ |
| Ղ | | | ՂՂ |
| Ճ | Ճ | | |
| Մ | Մ | | |
| Յ | Յ | | |
| Ն | | Ն | |
| Շ | | | ՇՇ |
| Ո | Ո | | |
| Ղ | | | ՈՂ |
| Պ | Պ | | |
| Ջ | Ջ | | |
| Դ | | | ԴԴ |
| Ս | Ս | | |
| Վ | | | ՎՎ |
| Տ | Տ | | |
| Ր | Ր | | |
| Ց | | | ՑՑ |
| Դ | Վ | | |
| Փ | Փ | | |
| Բ | Ք | | |

Հայկական Ձ-ից՝ բաց անելով գլխիկը և ներքևում սյունիկը:

Հայկական Ղ-ից՝ վրան կտուց ավելացնելով:

Ձեռն-ից՝ վերին վարձահանի թևի ստեղծելով:

Մ-ից՝ շուռ տալով և աչքի վրա փոխադրելով ձախ՝ վերինից:

Օ քնչ-ն նստեցվել է:

Արամեականից՝ ներքին գծիկը վեր բարձրացնելով:

Հայկական Ն-ից:

Օ քնչ-ի ներքին կտրել է:

Հայկական Ո-ից՝ ձախ սյունագծի կտրնացնելու և աչքից թևը գիծ ավելացնելով:

Պ-ի ձախից վարձահանի նոր թև է ավելացվել:

Ցղադրված է Հունական շոքա տառանից՝ 900-ի համար օգտագործվող:

Կրկնակի Ր տառն իրար միացված:

Տղա-ն նստեցվել է:

Հայկական Վ-ից՝ սյուն ավելացնելով:

Վ-ի վերին ձախ թևը կտրվել և միացվել է աչքից:

Ր-ի գլխիկը բաց է արվել:

Հայկական Ց-ից՝ վերին կիսաբուրակ միացնելով կտր ստեղծելով:

Փնչ-ի աչքից վրա կտրվել է:

Փ-ի տափակ գլխիկը կտրվել է:

Ք-ի սյունագիծը կանգնեցվել է և թևերը կտրվել:

ցած ն-ն, և-ից առաջացած Ղ-ն և Բ-ից առաջացած Ռ-ն, որոնք հետագայում ևս իրարից՝ նույնահնչյուն տառանիշերը չշփոթելու համար:

Մաշտոցի ստեղծած գրերի սկզբունքը հիշտ պատկերացնելու և արժեքավորելու համար անհրաժեշտ է փորք-ինչ ծանոթանալ նրա գրակիրության և դասակարգման սկզբունքի հետ, Գրա համար անհրաժեշտ է մեզ հայկական այբուբենը համեմատության մեջ դնել իր ժամանակի գործածական մյուս այբուբենների հետ:

Մաշտոցի ժամանակ գործածվող այբուբենները գրվում էին երեք ուղղություններով՝ աջից ղեպի ձախ (ինչպես սեմական այբուբենները), ձախից ղեպի աջ (ինչպես հունական և նրան հետևող այբուբենները) և վերից վար (ինչպես լինական և նրան հետևող այբուբենները): Այս այբուբեններից ամենից դարգացածը, գրության համար դուրսիքը համարվում է ձախից աջ գրվող այբուբենը, որին և հետևել է Մաշտոցը:

Մաշտոցի ժամանակ գործածվող այբուբենների տառանիշերն ունեին անջատական ձև՝ ինչպես հունականն է ու նրան հետևող գրատեսակները, և կցական ձև՝ ինչպես սեմական այբուբենները: Գրության վերջին ձևի ժամանակ հաճախ միենույն տառանիշը տարբեր տառերի կապակցությունների մեջ մի քանի ձևափոխություններ է ստանում: Կցողական նման համակարգում որոշ դժվարություններ են ստեղծվում և հաճախ ազավազումների տեղիք տալիս: Մաշտոցը հրաժարվել է կցողական այբուբենի սկզբունքից և հետևել անջատականին:

Մաշտոցի ժամանակ գործածական որոշ այբուբեններում (օրինակ՝ ասորականում) հաճախ չէին գրվում ձայնավորները, որը և տեղիք կարող էր տալ բազմատեսակ աղճատումների. ձայնավորի բացակայությունը հնարավորություն էր տալիս բառերի տարատեսակ վերծանությունների: Մաշտոցը որոշակի սկզբունք է ունեցել՝ իրարմեք արտացոլել ձայնավոր տառերը:

Մաշտոցի ժամանակ գործածական այբուբենների մեջ որոշ տառանիշեր տարբեր պայմաններում տարբեր հնչույթ ունեին և կամ միենույն հնչյունի համար գործ էր անվում տարբեր տառանիշեր: Այդ պակասությունից ազատ չէր նաև հունականը: Մաշտոցը որոշակի սկզբունք է ունեցել՝ մի հնչյունի համար ստեղծել միայն մի տառ (բացառություն է կազմում միայն Ռ՝ տառը, որը գրվում է երկու տառանիշով):

Մաշտոցը հրաժարվել է տառանիշերի վերից կամ ներքևից դժանշաններ դնելուց, որը փոխում է ավելալ տառանիշի հնչույթը: Այդ թևորությունից ազատ չէր նաև հունականը: Մաշտոցը հայոց այբուբենում տեղ չի տվել դժանշաններին:

Միանգամայն ինքնատիպ է Մաշտոցի ստեղծած այբուբենի նպատակահարմարությունը տառերի ունեցած թվական նշանակության տեսանկյունից: Հունական այբուբենը, որը բաղկացած էր 24 տառանիշներից, երեք այլ նշանների հավելումով, հնարավորություն էր տալիս հասնել մինչև հարյուրավոր թվի հաշվարկման (կարելի էր գրել միավորներ, տասնավորներ և հարյուրավորներ), իսկ Մաշտոցը հայկական այբուբենի տառանիշերի թիվը հասցնելով 36-ի, հնարավորություն է ստացել հայկական թվանշանային մեծությունը հասցնել մինչև տասը հազարի (միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների):



Հին հայկական ժողովրդական գրի մի նմուշ:

Ահա այս ամենն է, որ Մաշտոցի սակզմած այբուբենը բարձրացնում է իր ժամանակ գոյություն ունեցող լավագույն այբուբենների մակարդակին և ինքնաբերականորեն տալիս նրան:

Ներգրայն, մի հարց է, որն է հայոց դիր սակզմման նշանակությունը: Չորրորդ դարում, ինչպես հայտնի է, Հայաստանում վերջնականապես հաստատվում էին Ֆեոդալական սոցիալ-անտեսական հարաբերությունները: Քրիստոնեական եկեղեցին, որը գործուն մասնակցություն ունեցավ ավաստական գաղափարախոսության սակզմմանը, շրջադարձ դարձնում էր հարձ գնում նոր գաղափարախոսության տարածման և ամրացման ուղղությամբ: Փայտափայտի սակզմմանը, որին, սակայն, մենք գիտենք, որ ներսև Մեծը, ի թիվս այլ հաստատությունների, բաց է անում գործընդերս և զբաղվում նոր վարդապետության արմատավորմամբ: Ուստի պատահական չէ, որ հայոց դիր սակզմման հարցով զբաղվում են բաղաբանական և հոգևոր երկու խոշոր պետերը՝ Վասմազյան և Մանուկ Պարթևը:

Գրի սակզմման անհրաժեշտությունն ավելի կենսական հարց դարձավ շարրորդ դարի վերջերին և հինգերորդ դարի սկզբներին, երբ մեր ժողովուրդը կանգնեց ձուլման սպառնալիքի առջև: Ակադ. Հ. Մանանդյանը իրավացիորեն գտնում է, որ մեր թվականության IV դարի վերջը և V դարի հայ ժողովրդի կյանքի ամենամանր և բախտորոշող շրջաններից մեկն է հանդիսանցի⁵⁰:

Հայաստանի 387 թվականին, ինչպես հայտնի է, բաժանվեց մրցակից Մասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև: Այդ բաժանումից հետո նա ընկավ քաղաքական ու տնտեսական կախվածության մեջ: Եվստիանոսի աշխատանքում էին վերջ գնել Հայաստանի ներքին անկախությունը և ձուլման ենթարկել ժողովրդին: Ընդ որում, այդ քաղաքականությունը պատահական բեռնով չուներ, այլ բխում էր Հայաստանում նրանց ամրանալու գաղափար ձգտումից: Արևելքի և Արևմուտքի մրցակցության հանդուցում գտնվող Հայաստանի անարտոնական կարևորությունը դիտակցում էին և պարսկական թագավորները, և բյուզանդական կայսրերը: Միաժամանակ մրցակից կողմերից ոչ մեկի համար ցանկալի չէր Հայաստանում ունենալ թշնամաբար արամազաված մի հատված, որը պատահելով իր զիջումից հետո Պարսկաստանը և Բյուզանդիան բացահայտ կամ զազանի, բռնություններ, թե խաղաղ ճանաչարձով, բայց հաստատ հետևողականությամբ շարունակում էին ձուլման իրենց ծրարված քաղաքականությունը: Սորիկ կայսր խոսքերով սասծ. «Այդ մի խոստոր և անհնազանդ են, սակ, կան ի միջի մերում և պտորենի, Բայց են՝ սակ, ևս զինս ժողովում և ի Թրակի դումարեն. և դու զբոյ ժողովի և հրամայել լինեալս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն, և մեր կեցցուք խաղաղությամբ»⁵¹:

Հայաստանի բաժանումից հետո, ճիշտ է, ժամանակավորապես դադարեցին Մասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև սկսված արշավանա պատերազմները, որից առաջին հերթին, ոտնակոխ էր լինում, ավերվում Հայաստանը: Սակայն այժմ նախկին մրցակից երկրները Հայաստանի նկատմամբ կիրառեցին ավելի վատագույնը՝ հայ ժողովրդին ձուլելու քաղաքականություն:

⁵⁰ Տե՛ս: Я. А. Манандян, Месроп Маштоц, էջ 5:
⁵¹ Արևու, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 75:

Բյուզանդիան և Պարսկաստանը սկսեցին ետանդուն ջանքեր գործադրել՝ վերջ գնելու նաև հայ ժողովրդի մշակութային ինքնուրույնությունը: Պարսկաստանն այդ քաղաքականությունը Հայաստանում արդյունավորելու համար շեշտը դնում էր զբաղաշատական կրոնի վրա:

Մի այլ վտանգ հայ ժողովրդին սպառնում էր հարավից և արևմուտքից: Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո Հայաստանը սղողվել էր ասորի և հույն քաղաքիչներով, որոնք իրենց հետ բերում էին ո՛չ միայն քրիստոնեության գաղափարներ, այլև իրենց մայրենի լեզուն, իրենց մշակույթը, որը պահպան վտանգավոր չէր Հայաստանի համար:

Աղղալյան գիրն ու գրչությունը մի գեներ էր՝ կոպիլու պարսկական և բյուզանդական ձուլողական քաղաքականության դեմ և երաշխավոր միջոց՝ քաղաքականապես շատված, թուլացած Հայաստանի երկու մասերն իրար կապելու: Ահա թե ինչու հայրենասեր և հետաքնն մտավորականները, Մաշտոցի գլխավորությամբ, այնքան հետևողականորեն նախանձախոնդ էին հայոց ինքնուրույն գրի ու գրականության սակզմմանը:

Սակայն արգաբացի չէր լինի անտեսել մի կարևոր պարագա էս. շուրջ մեկ հարյուրամյակ պաշտոնական կրոն ճանաչված քրիստոնեությունը տակավին երկրում էր, որովհետև մայրենի գրի ու գրչության բացակայության հետևանքով զժմլոր էր համակողմանի քարոզչություն ձավալել: Անհրաժեշտ էր նոր վարդապետության հիմնական ձևերով, զոնև նոր կտակարանը հայերենի թարգմանել և գրանով իսկ գրելը հայ քարոզիչներին: Ի տարբերություն հեթանոսության, քրիստոնեությունը գրավոր վարդապետություն էր և հրամայաբար պահանջում էր գրի և գրականության սակզում: Իրար չէ, որ Աբրահամ Լեղբաճանցուն երրորդ թղթում, այն բարձատիքներին անգրագիտանալիս, վկայախոչվում է, թե «... և զգրոց ծանաթութիւն ի պնդութիւն հաստաց»⁵²:

Հայոց գրերի սակզման հարցը տառադրել է կյանքը, իսկ Մաշտոցը, նրա գործակիցներն ու աշակերտները մեծ նմություններ իրագործել են այն: Բացարիկ մեծ է Մաշտոցի և իր աշակերտների ջանքերով սակզված գրի նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ: Նոր հորինված ինքնուրույն գրերով և մայրենի լեզվով ստեղծվեց հսկայական մի մատենագրություն, որն իր պատմավոր տեղը զբաղեց համամարդկային մշակույթի պատմության մեջ:

Սակայն ավելի խոշոր է գեներ սակզման քաղաքական նշանակությունը: Նա անչափ մեծ դեր կատարեց հայ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում և պաշտպանող վաճան գարծավ՝ օտարերկրացիների կործանարար քաղաքականության հանդեպ:

Գերմանացի հայագետ Հ. Մարկվարտը, խոսելով Մաշտոցի և նրա զինակիցների հայ մատենագրության ասպարեզում ունեցած դերի մասին, Մաշտոցին և իր աշակերտներին համեմատում է Պեպինի և Վինֆրիդի հետ և գտնում, որ եթե մենք նկատի ունենանք քաղաքական այն ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ զարթեցնել ազգային գիտակցությունը, ապա «Պիպինը և նրա զինակից Վինֆրիդը սղորմելի թղուկներ են երևում մաքի այդ երկու հակառակի հանդեպ»⁵³:

⁵¹ «Գրեր թղթոց», էջ 180, ՀՄԺ, Ս. Մ. Мурадян, К критике текста III послания Католикоса Абраама, „Вестник общ. наук“, 1968, № 11, стр. 41—49.
⁵² Հ. Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը, Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի «Մերոպ Մաշտոց», ժողովածու, մ., 1962, էջ 125:

10. Նշանագիր—զագափարագրերը, Ազաթանգեղոսի ժամանակից²։
Հայկական գրերի տեսակավորման հարցով զբաղվել է նաև Ն. Քարամ-
յանցը։ Նա իր ցուցակի մեջ նշում է հայկական յոթ տեսակ գրեր և տալիս նը-
րանց գրչության հետևյալ ժամանակը.

1. Մեսրոպյան երկաթագիր—5—12-րդ դդ.։
2. Միջակ գիր—8—10-րդ դդ.։
3. Փոքր երկաթագիր—9—12-րդ դդ.։
4. Բուրգգիր (Rundschrift)—12—14-րդ դդ.։ (Նկեղեցական ձևագրերը մինչև 13-րդ դդ.)
5. Նոտրգիր—13—18-րդ դդ.։
6. Շղագիր—18—19-րդ դդ.։
7. Նոր շղագիր—19-րդ դարից հետո³։

Հայկական գրերի տեսակավորման նոր փորձ է արել Հ. Տաշյանն իր «Այ-
նարկ մը հայ հնագրության վրա» աշխատության մեջ, որը և անփոփոխ ըն-
դունել է Հ. Աճառյանը։ Հ. Տաշյանը, բացի գրերի հիմնական տեսակներից, ըն-
դունում է նաև անցման գրերը։ Հայոց գրերը նա տեսակավորում է յոթ խմբի
մեջ.

1. Քլիտագիր երկաթագիր։
2. Միջին մեսրոպյան երկաթագիր։
3. Փոքր երկաթագիր։
4. Անցման գիր։
5. Բուրգգիր։
6. Նոտրգիր։
7. Շղագիր։

Նրա կարծիքով, երկաթագիրը գործածվող գրի հիմնական տեսակ է հան-
դիտացել 5-րդից մինչև 11-րդ դարը, բուրգգիրն իշխող գրի տեսակ է դարձել
12-րդ դարից, իսկ նոտրգիրը գործածվել է սկսել 13—14-րդ դարերից⁴։

Հ. Տաշյանը, ի տարբերություն մյուս ուսումնասիրողների, առաջին ան-
գամ առաջ քաշեց այն վարկածը, որ միջին մեսրոպյան կոչվող գրերը ոչ թե
առաջացել են բուրգգրի երկաթագրից ուշ դարերում, այլ վաղ ժառանգում ունեն.
նրանք ստեղծվել են Մաշտոցի կողմից ոչ կանոնավոր գրականության մեջ ոչ-
ապարձակու համար։ Այդ ենթադրությունը համար հիմք են ծառայել 5-րդ դո-
րում գործածվող ասորական գրի երկու տեսակը՝ նստրանգեղան և հակորթիկը։
Գրանգին վարդապետ Հովսեփյանի կարծիքով, «Հայ գրի տեսակները
չորսի կարելի է բաժանել. երկաթագիր, բուրգգիր, նոտրգիր և շղագիր՝ յուրա-
քանչյուրն իր ստորաբաժանումներով և անցման շրջաններով»⁵։

Ավելի նոր ժամանակներում Գ. Հովսեփյանը նորից է անգրադարձել հայ-
կական գրատեսակների խմբավորմանը՝ Անձևացոց Ասոմ իշխանի 837—
892 թթ. հիշատակարանի հրատարակության կապակցությամբ։ Նա դրսևում է,

² Տե՛ս Ղ. Թեկեցյան, Հնարանոթին աշխարհագրական Հայաստանայն աշխարհ, 5. Գ, էջ 77—79։

³ Տե՛ս N. Karamianz, Verzeichniss armenischen Handschriften der Koniglichen Bibliothek zu Berlin, Berlin, 1886, էջ 85։

⁴ Տե՛ս Հ. Տաշյան, Այնարկ մը հայ հնագրության վրա, էջ 34—39։

⁵ Գուեղին վրդ. Հովսեփյան, Հայոց գրի պատմությունը (ԵՏարագ, 1912 թ., N 10, էջ 168—172)։

IV. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄՈՏԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԽՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տասնհինգ երկարածից դարերի ընթացքում հայոց գրերը ենթարկվել են զգալի փոփոխությունների։ Չկա մի տառ, որ հինգերորդ դարի համեմատու-
թյամբ ենթարկված չլինի որևէ ձևափոխության։ Տառեր կան, որոնք փոփոխու-
թյան են ենթարկվել մի քանի անգամ։ Աղբյուրազգես ժամանակները, տա-
ռերի տարերի ժամանակներում կատարված ահա այս փոփոխությունները
նկատի առնելով, հայոց գրերը խմբավորում են բոս առանձին գրատեսակ-
ների և որոշում նրանց գործածության մոտավոր ժամանակը։ Համեմատական
այս մեթոդը ժամանակագրական կարեոր բանալի է. կթև մեզ հայտնի է ա-
ռանձին գրատեսակների գործածության կոնկրետ զարաշրջանը, ապա դժվար
լի է որոշել թվական շունեցող գրությունների մոտավոր ժամանակը։

Հայկական տառատեսակները խմբավորել և նրանց անուններ են տվել մի-
ջին դարերում։ Չեռագրերում հանդիպում են հետևյալ գրատեսակների անուն-
ները՝ երկարագիր, տախտակագիր, աղիտակ գիր (ուղղագրի երկաթագիր նը-
շանակությամբ), բուրգգիր (բուրգագիր, բուրգակ գիր, ձևերով), լինագիր
և բամագիր (տպագիր նշանակությամբ)։

Հայոց գրերի խմբավորման առաջին փորձը հայ գիտական հնագրության
մեջ կատարել է Ղ. Բնժիճյանը և կազմել առանձին գրատեսակների գործածու-
թյան հետևյալ ժամանակագրությունը՝ համարաշարք մտցնելով նաև ժաման-
ակի գործածության մեջ դրված գրերի մյուս տեսակները.

1. Երկաթագիր—Մաշտոցի ձևավորած գրերը՝ 5—9 դդ.։
2. Միջակագիր—բուրգգրին անցնող երկաթգրի մասը տեսակը՝ 10—11-րդ
դդ.
3. Բուրգգիր՝ 11—13 դդ.։
4. Նոտրգիր—նոտարների գիր՝ 14—15-րդ դդ.։
5. Գրամագիր—Ռուրիկյանց գործածած գրամների վրա դրոշմված գրերը։
6. Կոնդակագիր—կոնդակների համար գործածվող գրերը։
7. Փոռագիր—ձաղկագրերը, թռչնագրերը և մյուս զարգացրերը։
8. Փակագիր—կաղզգիրը՝ զլխավորապես վիմագրության մեջ։
9. Վարազագիր—մատանու և կնիքների վրա փորագրված գրերը։

¹ «Տառակ ձևագրոց Վիեննայի», էջ 46; «Տառակ ձևագրոց Երուսաղեմի», 5. Գ, էջ 230—231։

որ ճիշտ չէ բազմաբացիություն ստացած այն կարծիքը, որ հայ գրի ծագումն ու զարգացումը իբրև թե ընթացել է հետևյալ աստիճանակարգությամբ՝ մետալայան գրեր, բուրբոցի և նոսրգիր: Մի շարք օրինակներով նա ցույց է տալիս, որ երկաթագրի բոլոր տեսակները՝ մեծ, միջակ և փոքր, գծագրական երանց ձևերով՝ բուրբոցն, ուղղագիծ և թևք, միաժամանակ օգտագործված են հին ձևազարդում, հետևապես նրանք բուրբոց հին ծագում ունեն: Խոսելով բուրբոցի մասին նա այն կարծիքն է հայտնում, որ «բուրբոցը բառ ձևազարդերի նույն-բան հին է, որչափ երկաթագիրը»: Ըստ որում, բուրբոցը բաժանում է երկու խմբի՝ «արևելյան» և «հիլիկյան»⁹: Ուշ դարերում հիլիկյան բուրբոցին անցնում է արևելք և իշխող դառնում այնտեղ, իսկ հետագայում հիմք է ծառայում հին հայկական տպագրությանը՝ նա գրի բոլոր տեսակներն էլ հին է համարում, բայց նոսրգրից:

Գրերի դիտական տեսակախորման փորձ է արել նաև պրոֆ. Կ. Պաֆագարյանը: Խմբավորման հիմք համարելով գծագրական առանձնահատկությունները, նա գրերի հետևյալ հինգ տեսակներն է բնորոշում.

1. Բուրբոցն երկաթագիր:
2. Ուղղագիծ երկաթագիր:
3. Բուրբոցի:
4. Շղագիր:
5. Նոսրգիր:

Կ. Պաֆագարյանը գրերի տեսակներից ուշ մեկը ժամանակի մեջ չի սահմանազմում: Նա գտնում է, որ գրերի գրեթե բոլոր տեսակները (բացի շղագրից) ստեղծվել են Մեսրոպի ձևերով և դրոձ են ամփել բոլոր ժամանակներում:

Ծիշո համարելով Կ. Պաֆագարյանի կատարած գրերի տեսակախորման սկզբունքը՝ բառ գրերի գծագրական առանձնահատկությունների, ինչպես բնորոշված է նաև այլալեզու հնագրությունների մեջ, չի կարելի համաձայնել նրա հայտնած այն կարծիքի հետ, թե հայկական գրերի բոլոր տեսակները 5-րդ դարում են ստեղծվել: Այդ կարծիքը չի հաստատվում մեզ հասած գրության հնագույն նմուշներով: Գրերի որոշ տեսակներ կարող են ավելի հին լինել, քան ենթադրվում է, բայց որ հայկական բոլոր գրատեսակները, ինչպես մյուս ժողովուրդների գրերն են, մեկն են ստեղծվել և ունեցել են իրենց զարգացումն ու փոփոխությունը՝ կասկածից դուրս է:

Կ. Պաֆագարյանի վարկածի համար հիմք է ծառայել Կորյունի այն տեղեկությունը, որ Հասիանոսը «գերբազումն, զհարճն և զերկայնն, գառանձինն ու զկրկնատունն, միանգամայն յօրինեալ և յանկուղեալ...» նրա կարծիքով, «Կորյունի հիշյալ հինգ բաները ցույց են տալիս ոչ թե միևնույն այրուբնի ներքին շարքերը (գրերի բարձրության աստիճանները), այլ այդ բաներից յուրաքանչյուրը գրչության մի նոր տեսակի անուն է»¹⁰: Ըստ այդմ էլ՝ «Կրկնատուն»-ը՝ «իսկազգիրն է, «երբազում»-ը՝ նոսրգիրը, «հարճ»-ը՝ ուղղագիծ երկաթագիրը, «երկայն»-ը՝ բուրբոցն երկաթագիրը:

Իրականում, Կորյունն այստեղ խոսում է ոչ թե առանձին ներքին շարքի

⁹ Կ. Հովսեփյան, Իններորդ դարի մտազրական մի հասակագործ և Առաջ Անկախաց Նշանակումն (Երևան), 1946 թ., № 8-10, էջ 53-54):
¹⁰ Տե՛ս Կ. Պաֆագարյան, Հայկական գրերի սկզբնական տեսակները, և., 1929, էջ 35-36:
¹¹ Կ. Պաֆագարյան, Նշված աշխատությունը, էջ 35:

կամ գրչության տեսակների, այլ առանձին հնչյունական առանձնահատկությունների մասին: Այդ պարզ կարևոր է տեսնել Գրեմանորայն Փրակացու «Փրակացու-նովյան» մեջ և նրա հայ մեկնիչների մոտ, ուր այդ նույն բաները բերված են իրենց բացատրություններով:

Փրակացին երկայն սանելով նկատի ունի երկար հնչվող երկու տառերը՝ «Ե»-ն և «Ծ»-ն («Եւ ձայնատարացն երկայնք են երկու՝ է, օ») (վերջինս գրվել է «աւ» ձևով) «Τὸν δὲ φωνῆντων μακρὰ μὲν ἔσσι 596, ἢ καὶ 600»:

Կարճ-ը՝ կարճ հնչվող «Ե», «Ծ», «Է» տառերն են. («Եւ սուղը» («Էարճ», բառ Ստեփանոս Սյունեցու թարգմանչության) «<Ե> երև է. ու, ւ» «Βραχέα 596 է καὶ 600»):

Կրկնավորն այն տառերն են, որոնք երկու տառի հնչյուն ունեն («Եւ կրկնակը են ի սացանէ ութ. գ, ւ, խ, շ, շ, շ, ու, ց») ¹¹:

Առանձինը չկրկնվող յոթը բաղաձայններն են՝ ր, գ, դ, ձ, դ, ե, ժ: Նոսր-ը հետևյալ տառ տառերն են՝ «պ», «կ», «ա», «զ», «ն», «ծ», «շ», «մ», «ս», «ր», «Ն» զերի տասն», գրում է հեղինակը և թվարկում է վերև բերված տառ տառերը ¹²:

Եվ վերջապես, հայկական գրատեսակների խմբավորման հարցը վերջինս բնութիւն է առել պատմական գիտությունների թեկնածու Ս. Փղաճեյանը՝ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոռումն բնձայութեան» երկի Մատենադարանի պատարհիկների հրատարակության կապակցությամբ: Համաձայնվելով Հովսեփյանի հետ, որ «ճիշտ չէ, թե միջին մեսրոպյան ուղղագիծ և փոքր երկաթագիր աստատեսակները ծագել են բուրբոցի երկաթագրից ուղ գարեբում, նա գտնում է, որ երկաթագիր բոլոր տեսակի տառերը ստեղծվել են միաժամանակ Մաշտոցի կողմից և գործածության մեջ գրվել, նրանցից խոշոր բուրբոցն զրեք օգտագործվել են կանոնական գրականության մեջ, իսկ մյուսները պատմա-գրական և մյուս տեսակի բնագրերում:

Այսպիսով ծագումնաբանական կարծիքը տեսակների ժամանակակից լինելու հարցը, Քյուրեղյանն այնուհետև անդրադառնում է գրի տարբեր տեսակների անվանումներին: Սխալ համարելով բուն մեսրոպյան երկաթագիրն «բուրբոցի երկաթագիր» և ստիչին մեսրոպյան երկաթագիրը կամ «ուղագիծ երկաթագիր» անվանումները, առաջարկում է նրանք փոխել՝ առաջինն անվանել մեսրոպյան բուրբոցի երկաթագիր, իսկ երկրորդը՝ մեսրոպյան ուղղագիծ երկաթագիր ¹³:

Հայոց գրերը, մեր կարծիքով, պետք է բաժանել վեց հիմնական տեսակների. մեսրոպյան բուրբոցի երկաթագիր, միջին և մանր մեսրոպյան երկաթագիր, ուղղագիծ երկաթագիր, բուրբոցի, նոսրգիր և շղագիր: Գոյություն ունեն նաև անցյալի շրջանի երկու տեսակ գրեր՝ երկաթագրից բուրբոցի անցնող (անցյալի երկաթագիր), բուրբոցից նոսրգրին (անցյալի բուրբոցի):

⁹ Տե՛ս Ս. Առուս, Двоиенни Фракийскни и армянские толкователи, Петроград, 1915, էջ 5:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 5:
¹¹ Նույն տեղում, էջ 8:
¹² Նույն տեղում, էջ 6:
¹³ Ս. Փղաճեյան, Նորահայտ պատարհիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Ք դարի մի գրագրի (տե՛ս «Քարերի Մատենադարան», № 5, 1960 թ., էջ 231-236):

Բոլորգիծ երկաթագիրը Հայոց գրերի մյուս տեսակների համեմատությամբ ունի հետևյալ առանձնահատկությունները.

Ա. Բոլորգիծ երկաթագրի առանձինը համեմատաբար ավելի խոշոր են:

Բ. Բոլորգիծ երկաթագրով գրված բնագրերը բառանշատում չունեն. երեք, շատ և երբեմն ավելի բառեր գրվում են միացած: Բառանշատում կատարվում է նոր պարբերության ղեկգրում, զլխավորապես կետերից հետո:

Գ. Երկաթագիրը բնագրերում զքն չի գործածվում միացյալ «և», կլոր «օ» և «ֆ» առանքը. «և»-ը գրվում է բաժան «ևի» ձևով, կլոր «օ»-ն՝ «ԱՅ» ձևով, իսկ հետագալի «ֆ»-ի փոխարեն օգտագործվում է «Փ»-ն:

Դ. Բոլորգիծ երկաթագրի բնագրերը նոր առդից սկսելիս սկզբի առաջին տառը, իր մեծության կեսի շահով, առաջին դիցից զուրբ է գրվում, փոխանակ փոքր-ինչ ներսից սկսելու, ինչպես վարվում ենք այժմ:

Ե. Բոլորգիծ երկաթագրին ունի մասամբ կլոր ձև. տառատեղանքը միացնող դեկրը կամարածն են:

Զ. Բոլորգիծ երկաթագրով գրված բնագրերը միջակետից բացի ուրիշ կետատրական նշաններ չունեն: Ըստ որում, միջակետը քառակուսի ձև է ունենում և այն գրվում է առդի վերին և կամ միջին մասում:

Է. Բոլորգիծ բնագրերում համեմատաբար քիչ են պատահում հապտվումները. հապտվում են զլխավորապես տերունական բառերը:

Ը. Բոլորգիծ երկաթագրի առանձինը տարբերվում են մեր ներկայումս գործածած տառանիշերից:

Թ. Բոլորգիծ երկաթագիրը բնագրերը չունեն մեծատառի և փոքրատառի տարբերություն. գրվում են բոլորն էլ մի տառատեսակով՝ ներկայիս մեր նախած մեծատառերով:


Փ. Ի տարբերություն մյուս տառատեսակների, բոլորգիծ երկաթագրի տառերն ունեն հավասար բարձրություն. նրանց մեջ չկան վերնական և ստորնական տառանիշեր: Պատահում է միայն, երբ զլխակարգության սկզբի առաջին տառը խոշոր է գրվում կամ զարգագիր: (Բոլորգիծ երկաթագրի այդ առանձնահատկություններից մի քանիսը հատուկ է նաև վաղ շրջանի այլ գրատեսակներին):

Նախքան տառանից գրատեսակների մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ կենտրոնացած պետականության բացակայության պայմաններում որևէ գրատեսակի գործածություն համատարած միասնական ձևով մեկանում գրվել չի նդել: Գրերի այս կամ այն տեսակի քննությունը կախված է նդել զլխավորապես գրություն առանձին զդրոցների նախափրությունից: Ավելին. հաճախ տարբեր գրաձևերով են գրված ոչ միայն իրար մոտիկ գտնված գրություն առանձին զդրոցների զրչագրեր, այլև նույն գրչության զդրոցում գրված ձևագիր ժողովածուների առանձին մասեր:

Բնության առնենք Հայոց գրատեսակների առանձին-առանձին և փորձենք որոշել նրանց յուրաքանչյուրի գործածության մտավոր ժամանակը:

Բ. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԲՈՒՐԳԻՍ, ՄԻՋԻՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՎ ՈՒՂԱԳԻՍ ԵՐԿԱՓԱԳԻՆԸ

Հայկական գրատեսակներից հենրը երկուսն են՝ բոլորգիծ երկաթգիրը և միջին մետրոպյան երկաթգիրը: Փաստ է, որ մինչև 10-րդ դարը մեղ հասած ձևադրերը և վիժական արձանագրությունները հիմնականում գրված են այդ գրերով, ինչ կան բացառություններ: Ուղղագիծ երկաթագրով գրվել են մեծ մասամբ պաշտամունքային, կանոնական բովանդակությամբ աշխատություն-



Մետրոպյան բոլորգիծ Մանասարյան Անագրից (ՄԱՄ, Աճ. N 7735):

սինները XIII դարից հետո եկող հեղինակներ են՝ Եսայի Նշեցի, Ամիրդովյաթ, Գրիգոր Տաթևացի և այլք։ Իսկ սակա հնագույն գրչագրերը, սակավ բացառությամբ, պարունակում են կրոնական արտոգրական-գավանաբանական կանոնական բովանդակություն ունեցող տեսություններ։

Մեզ են հասել առանց թվականի բազմաթիվ հին ձևագիր պատարկներ և պահպանակներ, որոնց զրբերը հաճախ շատ ավելի հին են, քան թվագիր տեղատերը, բայց որովհետև թվական չունեն՝ որոշ վերագահությամբ ենք մտանում նրանց։

Հաստատուն ժամանակի հետ կապված հին հայկական բնագրեր գլխավորապես վիճագրերն են և, բնական է, որ նրանք պիտի օժանդակեն հարյուրավոր անթվագիր գրությունների ժամանակը որոշելուն։ Սակայն, երբ ուշագիր համեմատում ենք նույն շրջանի վիճագիր գրերը գրչագրերի հետ, ապա տարբերություններն ակնբայն են դառնում. ընդգրկնակողզները ավելի աղաս են շարժել իրենց գրիչը, քան այդ կարողացել են անել կարծր բարի վրա փորագրող բանդակագործները։

Մեսրոպյան բուրգիծ երկաթագիր նմուշներից երևում է, որ հայկական գրչությունը 5—10-րդ դարերի ընթացքում բիշ է փոփոխվել։ Սակայն հաշվի առնելով մի շարք հանգամանքներ՝ տառերի գծագրական ձևերը, գրանյութի հնությունը, ուղղագրությունը, կետագրությունը և այլն, կարելի է մտավոր նշանովյամբ որոշել հին բնագրերի ժամանակը դարերով։

Պրոֆ. Զ. Աճառյանը մեսրոպյան բուրգիծ գրերից հնագույնն է համարում այն գրերը, որոնք չեն ենթարկված վայրահակության օրենքին, այսինքն՝ տառերի պոչերը, թևերը և գլուխները չեն թերվում ներքև, այլ ուղիղ ձև ունեն¹⁶։ Իրոք, եթե նայելու լինենք 5—7-րդ դարերի արձանագրությունների գրերին, ապա նրանք գրվում են առանց վայրահակության։ Սակայն այդ անխախտ օրենք չէ, մեկ-մեկ պատահում են հին տեքստեր, որոնք ենթարկվել են վայրահակության։ Այսպես է, օրինակ, Զ. Աճառյանի մատնացույց արած մանասարյան վարժարանի ձեռագրում որոշ տառեր վայր են հակված, նման տառեր կան նաև Հոփոխիմեի արձանագրության մեջ և հին այլ բնագրերում։

Ձեռագրի հնությունը խնդրում կարևոր է տառերի համեմատական խոշորությունը, որբան տառերը մեծ են, մեծ մասամբ այնքան ավելի հին են նրանք¹⁷։


Հայագիտներից ումանք ձեռագրի գրության հնությունը որոշելու կարևոր ցուցանիշ են համարում մազաղաթի խունացած լինելը. եթե մազաղաթը դեղնած է, հնություն կնիք ունի, հետևապես վաղ շրջանում է գրված, իսկ եթե մազաղաթը սպիտակ է՝ գրությունը նոր է։ Որոշ չափով այն ճիշտ է, բայց նորից որոշիչ համարել չի կարելի, որովհետև դրանույթի խունացումը կապված է գլխավորապես պահպանության հետ, եթե ձեռագիրը չի ընկել ջրի մեջ կամ կաթիլի տակ, պահվել է չոր տեղում, սակավ է խունանում, Պատահում է նաև հակառակը. շատ ավելի նոր ձեռագիր, եթե պահպանությունը լավ չի եղել, արագ խունացել է։ Կան այնպիսի պահպանակներ, որոնց մի երեսը

¹⁶ Տե՛ս Զ. Աճառյան, Հայոց զիրբ, էջ 352.
¹⁷ Մենք եկատի ունենք կանոնական բովանդակություն ունեցող ձեռագրերի գրությունները։ Սակայն այդ եւ ունիների պայման չէ, պատահում է, որ ուշ շրջանում եւ ձեռագրերը գրում են պահպանելով ետևիկն բնագրի տառերի խոշորությունը։

խունացել է՝ տառերն անձանաշելի դառնալու աստիճան, իսկ մյուս երեսը սպիտակ ու մաքուր է։

Գրչության հնությունը որոշելու հիմնական միջոցը տառերի գծագրական առանձնահատկությունն է։ Անհրաժեշտ են համարում բնության առնել երկաթագիր տառերն առանձին-առանձին։

Ա.—Սրկու այլունադծերը միանում են ներքևի կամարավոր գծիկով։ Աջ կողմից աստի ներսից սկսում է բարակ մի դիծ, որը մահիկի ձևով իջնում է մինչև սյան ծայրը, մեղքում, դուրս է գալիս և հունական ալֆաբի նման վեր



Միջին երկաթագիր XI դ. (ՄՄՄ ձև. N 974).

բարձրանում։ Հետագա դարերում այդ գծիկը, վայրահակության օրենքով, սկսում է թեքվել ներքև։ Ուղղագիծ երկաթագրում երկրորդ այլունագիծը բաժանվում է երկու մասի և միանում մազագծով։

Բ.—Գլխիկի բոլոր ձև ունի։ Տառանիշը որբան հին է, այնքան թևը գլխիկի համեմատությամբ փոքր է, իսկ հետագայում երկարում է և կախ ընկնում ներքև։ Ուղղագիծ երկաթագրում կլոր գլուխը անկուսավոր ձև է ստանում։

Գ.—Գլխիկը փոքր է և կլոր, մեծությունը հավասար է աստի մեկ երրորդին։ Աջ թևը սկսում է ներքևի աղեղի ուղղությունից բիշ վերև։ Յոթերորդ դարից թևը սկսում է ներքև կախվել, Ուղղագիծ երկաթագրի ժամանակ կլոր գլխիկը բառանկուն ձև է ստանում։

Գ—Ճիշտ թԳձ-ի նմանութիւն ունի, միայն զլիւիկը բացված է: Տառի հետագա զարգացումը բնթանում է նախորդ տառի ձևով:

Ե—Սյունագործն ուղիղ իջնում է մինչև տողը և կետվելով կազմում զլիւիկը: Հին տառանկերում զկայի աչ երկարող թեր համեմատարար կարճ է ե ուղիղ, իսկ հետագայում երկարում է և ներքև կախվում: Պատահում են հին տառանկերը, երբ թեև սկսում է ոչ թե սյունագործի կերպ, այլ վերին ծայրից: Ուղղագործ երկաթագրում կտր զլիւիկը անկյունների է փոխվում:

Զ—Հին անբառերում ձվաձև մեծ կտր է, իսկ ներքևից միանում է հորիզոնական մի գիծ, կտր օղակը նստում է անմիջապէս գծի վրա՝ առանց վղիկի: Հետագա դարերում կտր օղն սկսում է փոքրանալ, և առաջանում է վղիկը, որը դնայով երկարում և հորիզոնական գծի երկու ծայրերում կունենը է ստեղծում: Ուշ դարերում աչ կունը շեղվում է, և թե է գոյանում:

է—Հնագույն տառանկերը պարզ ձև ունի. սյունագործն միանում են երկու թևեր՝ մեկը սյունագործի ներքևից, իսկ մյուսը՝ միջին մասից, որոնք սկզբում թիչ թերթիկներն ունեն, իսկ հետագայում զարգանում և կախվում են ներքև:

ը—Հնագույն ձևը պարզ է. վերին զլիւիկը հավասար կիսակտր է, իսկ ներքևի հորիզոնական գիծը՝ ուղիղ: Հետագա դարերում հորիզոնական այդ գիծը վահանաձև թերթում է ներքև, և ներքևից վայր իջնող փոքրիկ գծիկ ավելացվում:

թ—Բավականին տարբերվում է ներկա տառաձևից, աչ կողմի ուղորդ հավասար է սյունագործին: Հին տառաձևերում ուղորդից գուրս կնող գծիկը հորիզոնական ձև ունի, իսկ հետագա դարերում նա, վայրահակութիւն օրենքով, ներքև է կախվում: Մտաւորապէս 10-րդ դարից ուղորդ ուղղագործ երկաթագրում սկսում է բարձրանալ, իսկ հետագա դարերում վերին կտրը բացվում և անկյուններ է կազմում:


ժ—Հին ձևը փաստորեն թԳձ տառի ուղորդն է՝ գրկթն առանց փոփոխութիւն: Հին տառաձևի հորիզոնական գուրս կնող գծիկը ուղիղ է, իսկ հետագա դարերում սկսում է ներքև կախվել: Սյունագործի վերին ծայրում հին տառաձևերը պահել են թԳձ-ի ուղորդը սյունագործի հետ միացնող վերին կտր գիծը: Ուղղագործ երկաթագրում տառի բոլորակը բառանկյունի ձև է ստանում:

ի—Հին տառաձևերում սյունագործին միացող աչ թևը վահանաձև կորութիւն ունի, իսկ հետագա դարերում նա սկսում է ներքև կախվել և անկյուն տալ:

կ—Հին տառաձևերում տողաշարքի բարձրութիւնն ունի, իսկ ներքևի թևեր՝ ուղիղ, հորիզոնական: Հետագա դարերում նա սկսում է տողաշարքից ներքև իջնել՝ վահանաձև կորութիւնով:

կ—Նման է թԳձ տառի հնագույն ձևին, միայն նրա աչ թևի վրա զկայի վերև թերթված մի կուն է ավելանում: Հին տառաձևերում թևերը տարբեր բարձրութիւնով են միանում սյունագործին, ոմանք՝ միջից, իսկ ոմանք՝ փոքրինչ վերևից կամ ներքևից: Հետագա դարերում ուղղագործ երկաթագրում ծրուվող թևը անկյուններ է տալիս:

լ—Հին ձևը պարզ է, կտր գծիկը բոլորովում է և միանում մյուս ծայրի հետ և, խաչաձևվելով, մի ծայրը թևը դնում է աչ, իսկ մյուս ծայրը՝ ձախ: Հետագա դարերում ձախ ծայրը թերթվում է զկայի ներքև, իսկ աչը՝ վերին ըստ օրում, փոքրանում է նաև կտրը:



Միջին ուղղանկյուն երկաթագիր 973 թ. (ՄՄՄ Ան. X 2684, ք. 24և),

կ—Հին տառաձևերում առաջին սյունագործը երկարում է մինչև տողը, իսկ մյուս սյունագործը ստորակետի նմանութիւն ունի: Երկու սյունագործերը միանում են իրար բոլոր գծիկով: Հետագա դարերում ձախ սյունագործն սկսում է վերև բարձրանալ, իսկ աչը՝ ներքև կախվել: Ուղղագործ երկաթագրում սյունագործերը միացնող գծիկն անկյունների է առնում:

շ—Տառի ամենից հնագույն ձևը մեր ներկա տպագրութիւն մեջ օգտագործվող թԷձ տառի նման է, բայց առանց վերևի պլիւիկի. ձախից աչ թերթող չգծիկը պարզ վերջավորութիւն ունի: Յոթերորդ դարից սկսած այդ թևը գծիկ վրա փոքրիկ կուն է ավելանում, որը հետագա դարերում, զարգանալով, բավականին թերթված է ստանում, իսկ տառի նոսանկյունին ավելի է սրվում:

չ—Հին տառաձևերում ձախ թերթված աղեղը մեծ է, և վերին գծիկը շատ բիչ է թերթված զկայի ներքև, իսկ յոթերորդ դարից սկսած այդ գծիկը հետորհեան սկսում է կետվել, մինչև որ բոլորովին ձուսանում է ներքևի գծին: Ուղղագործ երկաթագրում Չ թվանշանի ձև ունի:

ղ—Հին տառաձևը շատ նման է ներկայումս գործածվող փոքրատառ թշ-ին և զրվում է տառաշարքի հավասար բարձրութիւնով, իսկ յոթերորդ դարից սկսած սյունագործը տողաշարքից ներքև է կախվում: Ուղղագործ երկաթագրի մեջ վերին զլիւիկի բոլոր գիծը անկյունների է վերածվում:

ձ—Հին ձևը հունական դիվանի է նման, միայն աչ և ձախ գծերն իրար հետ միանալուց հետո թևը ուղղութիւններով շարունակում են բարձրանալ: Տառի հորիզոնական գիծը զեռ ուղիղ է Ուշ դարերի բոլորգիծ երկաթագրում խաչաձև երկարող գծիկներից առաջինն սկսում է ներքև կնկվել, իսկ երկ-

բորոքը կունենի ընդունում, որ առաջներում գոյություն չունենի: Ուղղագրի տառաձևերում ներքին հորիզոնական ուղիղ գիծը մեջտեղից վաճանակե կորույթում վեր է բարձրանում:

Մ—Նրկու սյունագծերը իջնում են մինչև տառը և միանում կրթ բոլորով: Վերևում աչ սյունագծին վերին ծայրում միանում է փոքրիկ կուն, որը սկզբում ուղիղ է, իսկ հետագայում սկսում է կեռվել: Ուղղագրի երկաթագրում տառի ներքին բոլորը ուղղագրի ձև է ընդունում:

Յ—Տառի ձևը շատ է նմանվում ներկայումս գործածվող Յ Թվանշանին. երկու կիսաբոլորակներ զեպի ձախ ուղղված բացվածքներով նստած են իրար վրա: Որոշ բուրբոցի երկաթագրերում միջին ձախ թեքված գիծը երկարում է, քառանկյունի կետ է ընդունում իր վրա և, մտանշալով վերին և ներքին գծերին, արցանի ձև է ստանում:

Ն—Տառի հին ձևի մեջ վերին կետ կտուցը թույլ է, իսկ հետագայում, զնալով դարգանում է. մասամբ նմանվում է շուռ տված «շ» տառին: Ուղղագրի երկաթագրում տողի վրա նստած աղեղը անկյունների է վերածվում, իսկ վերին կտուցը տողաշարքից դուրս է գալիս զեպի վերև:

Շ—Հին ձևը կիսաբոլոր աչ բացվածքով տառ է՝ վերին վերջավորությամբ վրա բով ընդունած ձևով: Տառի բացված գիծը վերջանում է պարզ ձևով, առանց որևէ բարդության: Հետագա դարերում տառի պոչը երկարում է զեպի աչ, և վալրահանկության օրենքով ներքև թեքվող կուն ավելանում: Ժամանակի ընթացքում այդ ձևափոխվում է այնպես, որ դրանից առաջանում է բուրբոցի «շ»-ն:

Ո—Հին առաձևեր բուրբոց է և սյունագծերը փոքր-ինչ թեքություն ունեն: Ուղղագրի երկաթագրում վերին բուրբոցը անկյունների է վերածվում:

Չ—Հին ձևը խոշոր կիսաբոլոր է, թեքվում է զեպի ձախ և ներքինից բթաձև կուն է ընդունում իր վրա: Կտուցի վերին ծայրը պարզ է, առանց բարդացումների: 7—8-րդ դարերից հետո ներքին բով գիծը երկարում և վերին կտուցի վրա կտուց է ընդունում:

Պ—Ներքև իջնող երեք գծիկներից առաջինը բավականին կարճ է և բիշ բացված, երկրորդը տասաշարքի միջին երկարությունն ունի, իսկ երրորդը իջնում է մինչև տառը: Վերին միացող գիծը վաճանակե կիսաբոլոր է: 7—8-րդ դարերից հետո կտուցում է երկու մասի և դառնում երկու փոքրիկ ազգո, որոնցից առաջինն ավելի է ներքև հասնում: Ուղղագրի երկաթագրում վերին բուրբոց գծերը անկյունների են վերածվում:

Ղ—Հին տառաձևի զլուխը փոքր է, նեղ, թեք և երկար: Նրա զլխիկից երկարող բարակ ծայրը հասնում է քառակուսի մի կետով, որից սկիզբ է առնում ներքև իջնող մի գիծ, որը հետագա դարերում ավերակե կորույթում է ընդունում:

Ռ—Տառի հինական կմախքի բուրբոցաձև երկարագիր «Ռ» տառից է կազմվում, որի աչ սյունագծին միանում է մի փոքրիկ կուն: Որոշ տառերում այդ կունը հորիզոնական դիրքով փոքրիկ գիծ է, իսկ երբեմն վեր է ածվում ներքև թեքվող թևի: Ուղղագրի երկաթագրում տառի վերին բուրբոց անկյունների է վերածվում:

Ս—Ներքին սյունագծերը միացնող գիծը բուրբոց է, աղեղնաձև, իսկ ուղղագրի երկաթագրում ուղիղ ձև է ընդունում և անկյունների առիթ:

Վ—Տառի նախնական ձևը մեծաատա բուրբոցի «Ա»-ին է նմանվում, մի-

այն աչ կունը ներքին ուղիղ երկարում է զեպի աչ: Տառը հազիվ նկատելի վզիկ ունի: Տառի հարթ դարձացումը տեղի է ունենում հետևյալ կերպ. նախ պոչիկը հորիզոնական դիրքից ներքև է կախվում, հետագայում տառի վրա փոքրիկ կորույթամբ վզիկ է սկսում ավելանալ և ներքին պոչը տողաշարքից ցած իջնում: Հետագայում տառի առաջին սյունը սկսում է կարճանալ:

Տ—Նման է ներկայիս «Տ» տառին: Հանդիպում է երկու ձևով. մի դեպքում վերին զլխիկը ներքև կախված, իսկ մյուս դեպքում՝ հորիզոնական ուղիղ գծիկի ձև առած: Տառի հին ձևերում երկու կորույթուններ են բուրբոց են, իսկ ուղղագրի երկաթագրերում անկյունների են վերածվում:

Ր—Տառի սկզբնական ձևը շատ նման է հունական «Ր» (rho) տառին. Գլուխը կտուց է և փոքրիկ շեքով է միայն բաժանվում սյունագծիկից: Հետագա դարերում վերին գիծը սկսում է թեքվել զեպի ներքև, վերևում ստեղծելով անկյուն:

Ր—Հին ձևը իրար վրա ձախ դարձվածքով նստած կիսաբոլորներ են, որոնցից վերինը փոքր է, իսկ ներքինը՝ մեծ: Ուշ բուրբոցի և ուղղագրի երկաթագրերում վերին բուրբոցի բացված գծերը մտանում են իրար և միանում, իսկ երկրորդը՝ մնում է անփոփոխ:

Ի—Սկզբում տառն ունի շատ պարզ ձև. տասաշարքի բարձրությամբ մի սյունագիծ է աչ հիշող թևով: Տառի հին ձևերում այդ թևը հորիզոնական դիրքով կարճ գծիկ է, իսկ հետագայում սկսում է ածվում ներքև թեքվող թևի:

Փ—Հին տառաձևը պարզ է. մի սյունագիծ իջնում է վերից վար և ներքևում սուր ձև ընդունում: Սյունագիծը բավականին ապառժություն անցնում է սովորական տասաշարքից զեպի ներքև և պարզ մարզու կանթված թևերի նման թևեր ընդունում իր վրա:

Ք—Իր ձևով շատ նման է նախորդ տառին և կազմված է նրա սկզբունքով. վերից վար իջնում է մի սյունագիծ, կտուցով, անցնում է տասաշարքի սահմանը և սուր ծայրով ներքև կախվում: Վերևում, սյունագիծի աչ կողմում, միանում է մի փոքրիկ զլուխ, իսկ սյունագիծը միջին մասից թեք խալաձևումով անցնում է հորիզոնական ուղղություն ունեցող մի այլ գիծ, որը, 7—8-րդ դարերից հետո, կուններ է ընդգծում իր վրա:

Գտանելով մեղ հասած հնագույն գրագրերի բովանդակության ու գրչության ավանդներից, կարելի է այսպիսի օրինաչափության սահմանել. մեծաբույսն և միջին մեծաբույսն երկաթագրերը եկեղեցական կանոնական գրահանության մեջ հայկական գրի հիմնական տեսակներն են հանդիսանել հինից մինչև առանկորդ դարերում, իսկ ուղղագրի երկաթագիրը պատմագիտական գրահանության մեջ և ավետարանների համարաբարաններում գործածություն մեջ է գտնվել 5-ից մինչև 12-րդ դարերը:

Ուղղագրի երկաթագիր գրությունները հանդիպում են 8—9-րդ դարերից. բայց գործածական գրի տեսակ են դառնում 10—11-րդ դարերում. նրանց իրենց զծագրական տառաձևաչափություններով շատ նման են բուն մեծաբույսն բուրբոցի երկաթագրին, միայն թե առաձևերի նախկին կորույթունը փոխվում է ուղղագրի անկյունների, և տառերի մեծությունը քիչ փոքր է:

Ուղղագրի երկաթագրերից կարելի է մտանցույց անել Մովսես Խորենացու Պատմության զխոսանքի տառերը (ՄԱՄ № 1411 հատակոտորը), Տիմոթեոս Կողի «Հակահառույթին»-ը (ՄԱՄ ձև. № 1958)՝ 10-րդ դարից, էջ-միածին ճաշոցը (ՄԱՄ ձև. № 832)՝ 1154 թվականից, Հալապոստ գրի ձև-

ազգիրը (ՄԱՄ ձև. № 987)՝ 1211 թվականից, Իզնատիոս գրչի ձևազգիրը (ՄԱՄ ձև. № 1519)՝ 1232 թվականից և ուրիշներ:

Ուղղագրի երկաթագիր հին տեքստերում ևս բառանշատում չի կատարվում, այդպիսին երևան է զախո 11-րդ դարից սկսած՝ նույն շրջանում էլ սկսում են երևալ բոլորովին նոր տառաձևեր: Մասեննադարանի № 283 ձևազրի հիշատակարանում, որը գրված է 1033 թվականին, մեզ հանդիպում են միացյալ «ե», հաստամ «ա», կեռվոջ գծառայունով «յ» և փակված դիտով «ց» տառերը¹⁸:

Ինչ վերաբերում է անցման գրին, այսպ նրա մի բանի տեսակներ կան¹⁹, Բուրդրի երկաթագրից կամ ուղղագրի երկաթագրից բոլորգրին անցումը մեկին տեղի չի ունեցել, այլ կատարվել է աստիճանաբար, դարերի ընթացքում: Կան անցման գրի այնպիսի տեսակներ, որ քիչ են տարբերվում իրենց նախորդ մյուս գրատեսակների մայրերից և կան այնպիսիները, որոնք քիչ են տարբերվում սովորական արևելյան բոլորգրից: Հ. Տաշյանն իր կազմած ձևազրոց ցուցակում հրատարակել է երկու տեսակի անցման գիր ունեցող ձևազրի նմուշ²⁰, Մաշտոցի անվան մասեննադարանում նրանց թիվը շատ է:


Անցման գրի հնագույն նմուշներից մեկն է «Գահնամակի» գրությունը, որը հրատարակել է Ղ. Ալիշանը²¹, Այստեղ տառանիշերի մեծ մասը ուղղագրի երկաթագրով է, բայց նրանց մեջ արդեն մտադ է գործել երեք հնուղ ունեցող այլը, ուղիղ սյունագրի ընդունած չին, տառաշարքից սկսել է դուրս գալ «մ» տառի գլխիկը, «զ»-ի պուրջ տառաշարքից ներքև է կախվել և այլն: Մաշտոցի անվան մասեննադարանի ձևազրերից անցման գրի բնագրերից կարելի է մասնացույց տանլ 981 թ. բնագրի նկարագրումը Դուկաս գրչի թղթյա հնագույն ձևազրը (№ 2679), Սկեսայում գրված Գրիգոր Նարեկացու «Մատան օղբերգութեան»-ը, 1173 թ. գրված ձևազրերը (№ 1568), Գոշավանքում Գավիթ գրչի 1172 թ. բնագրի նկարագրի Պատմութեան ձևազրը (№ 1890) և այլն:

Անցման շրջանի հետաքրքիր գրություն ունի ակադ. Ն. Մուսի ուսումնասիրած Պիշպեթի գերեզմանատան մի տաղանաբարի 1323 թ. հայկական արձանագրությունը²², Այստեղ զվառագրի «Ա» տառը սկսել է փոխվել երեք հնուղ ունեցող «ա»-ի, բայց դեռ ամբողջապես չի ձևակերպվել և չի կորցրել երկաթագրի որոշ ձևերը:

Գ. ԲՈՒՆՈՐԳԻՐ

Տառաձևերի փոփոխությունը առանձնապես նկատելի է դառնում 12-րդ դարում, մեզ հասած ձևազրերի մեջ բավականին թիվ են կազմում ուղղագրի երկաթագրից բոլորգրին անցնող տեսակները: Ըստ որում, այստեղ ևս ձևազրերը որքան հին են, այնքան նրանց տառաձևերը խոշոր են շանդիզում:


¹⁸ ՏՃ՝ Գ. Հովսեփյան, Յիշատակարան, էջ 218.
¹⁹ ՏՃ՝ Է. Տաշյան, Ակնարկ մը հայ Շատրոսիան զրա, էջ 27.
²⁰ ՏՃ՝ Երևանի Ա, Ե՝ Վերջված 12-րդ դարի ձևազրից և տախանակ Բ, Գ՝ Վերջված 3 ձևազրից:
²¹ ՏՃ՝ Ա. Ալիշան, Արարատ (տառադի նմանահնարությունը դեղակված է 420—431 էջերի միջև):
²² Մ. Կ. Մարր, Надгробный камень из Семирачя с армянско-сирийской надписью 1323 г. (ԹԵ՝ «Записки Вост. отд. Имп. арм. об-ва» VIII, էջ 344—349).



Բոլորգրի 1118 թ. (ՄԱՄ ձև. № 1214):

են բոլորգրի այնպիսի տեսակներ, որոնք կրկնակի անգամ մեծ են սովորականից:

12-րդ դարում առաջանում է բոլորգրի երկու տեսակ—կիլիկյան բոլորգիր և արևելյան բոլորգիր: Բոլորգրի այս երկու տեսակների զանազանությունը նկատելի է Գ. Հովսեփյանը նա գրում է. «Կիլիկյան շրջանի հնագույն



Քուրդգիր 1269 թ. (ՄԱՄ ԱՆ. N 362).

ձևագրերներն էլ երկաթագիր են. հետո միայն մշակվում և տիրապետող է դառնում կիրիկյան բուրգրիբը, որը աարբեր է արեւելյան բուրգրիբից, որին ուրիշներն անցման երկաթագիր են կոչել²³:

Կիրիկյան բուրգրիբն ունի ճիշտ «կորպուս» կոչվող գրի ձևը, ինչ որ ներկայումս զործ է ածվում մեր տպագրության մեջ, իսկ արեւելյան բուրգրիբը՝ նրանից բիշ տարբերվում է առանձին խոշորությունը և մի բանի տառանկերով՝ «լ», «շ», «ձ», «ք», «բ» և այլն:

Արեւելյան բուրգրիբ լավագույն նմուշներից են՝ Կոստանդնուպոլսի Ազգային մատենադարանի N 68 ավետարանի գրությունը՝ 1253 թվականից, Մարտիրոս գրչի ընդօրինակած նարեկը՝ 1283 թվականից (ՄԱՄ ԱՆ. N 6764), Խոսրով Անձևացու ժամագրոց մեկնությունը՝ 1278 թվականից (ՄԱՄ ԱՆ. N 1328), Քոնստանդուպոլսի ընդօրինակած ավետարանը՝ 1315 թվականից (ՄԱՄ ԱՆ. N 2930) և ուրիշներ:

11—12-րդ դարերում հայ գրի պատմության մեջ նկատվում է մի նոր երևույթ. հանդես է գալիս շրագրությունը, որը տեղ խնայող և արագագիր գրության տեսակ է. Շրագրով են գրված ՄԱՄ-ի N 2877 և N 2684 ձևագրերի՝ հիշատակարանները, որոնցից առաջինը գրված է 11-րդ դարում Գրիգոր գրչի կողմից, իսկ երկրորդը՝ կազմարար Հովնանի կողմից, 1159 թվականին: Այս հիշատակարաններից առաջինի մասին խոսել է Գարնգին կաթողիկոս Հովսեփյանը իր կազմած «Հիշատակարանը ձևագրաց»-ի մեջ. ձևագրի գրչության առթիվ տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Այս փոքրիկ հիշատակարանը

²³ Գ. Հովսեփյան, Կոստանդնուպոլսի կաթողիկոս (տե՛ս Ենյուսի և Կոստանդնուպոլսի ձևագրեր, 1943, պրակ Բ, էջ 16):

գրված է շրագրով, որով և շատ հետաքրքրական է հնագրության համար²⁴: Մակայն շրագրությունը, ինչպես և 11—12-րդ դարերի մշակույթի առաջնիաց մի շարք այլ երևույթներ, իրենց բնականոս զարգացումը չունեցան, որովհետև հայ մոզովրդի գլխին պայթեց աննախըմբաց նոր փոթորիկ, երկիրը տակնուվրա եղավ: Այնուհետև հարկավոր եղավ սպասել մոտ վեց դար, որպեսզի նորից հանդես գա շրագրությունը և իշխող գրի տեսակ դառնա:


Ի Թ ի ս : շ ի : գ ր է ց ա -
 մ է կ ո - թ թ Կ ա Թ ո ղ է կ է ի ս .
 զ է ո - ա մ ք բ ա լ մ ա մ է շ և ս ո - ս
 ա ն ո - ն Կ ր ա ն ն ա - ո թ ի ջ ո հ ա ն
 ի ս ի ա շ չ է ր ի թ ր ւ ր ւ զ ի ի Թ ա ս
 տ ա ն ս որ Կ ո ղ է 'ա շ ք է ր ց ղ ա ն ս .
 Լ մ ա կ ա ն ս - ն զ ւ ա ճ որ լ ը շ Կ ո ղ
 ա շ է ա ս ր ք ո յ շ ա տ ա ն ն ս ո թ ի ց ո :
 ր ՝ մ ա ս ք է ա ո ղ - թ մ ա ս ք է ա ո ղ ա ն
 Լ ա ր ք ի ն ն ա կ ա ն մ շ ճ հ ո - է ա ո
 թ ի յ է ս ա ո . զ ար շ ն որ հ է ս ց է զ ւ
 ա մ է լ ւ ղ ը շ ք է ր ի յ ա յ է ա - ո - ր ո :
 Լ ւ թ ք ա շ ա շ է մ գ ա մ է շ ի ս է շ .
 ր ք հ ա ն ք է ս ք է ք ա յ ս մ մ ա տ է է
 ի ջ Թ ո ղ ո - թ թ ի ն ղ ր է շ ի ո Ւ ի լ

Արեւելյան բուրգրիբ 1291 թ. (Անիյան, Հայագրատուն, էջ 525):

Քուրդգրիբը հայ մատենագրության մեջ իշխող գրի տեսակ դարձավ սկսած 13-րդ դարից: Մեր խոսքն, իհարկե, համատարած գործածության մասին է, այլուպես այս գրի հին տեսակները մեք ունենք զեռ 10-րդ դարից: Նրա հին օրինակը Պոզուսի թղթերի մեկնությունն է՝ 999 թվականից²⁵: Այնուհետև, այս գրի հին օրինակներից է Մատենադարանի N 283 ձևագիր ավետարանը՝ 1033 թվականից, և այլ ձևագրեր:

²⁴ Գ. Հովսեփյան, Հիշատակարանը Առաքաղոց, էջ 375:

²⁵ Եմանահանությունը հրատարակված է Անիյանի «Հայագրատուն»-ում, էջ 498:



Գիւնիկան բոլորգիր 1319 (ՄԱՍ ձև. N 3589).

Մեզ հայանի չէ, թե ինչից է առաջացել գրի սրբորգիքն անունը: Նախևա՛յն նրա անվանը, թվում է, թե գրի այս տեսակն, իրոք, կլոր սխաի լինելը, բայց իրապես նա բոլորովին էլ կլոր չէ, այլ՝ անկլունավոր և հավասար նստում է

առջի վրա: Գուցէ նա այդ անունը ժառանգել է նախկին բոլորգիք երկաթագրից, որից նա առաջացել է: Համենայն զեպս, այժմ նրա անվան մասին որոշակի ոչինչ ասել չենք կարող²⁶:

Բոլորգիրը զգալիորեն ավելի փոքր է, քան բոլորգիք երկաթագիրը և, ի տարբերություն նրա, ոչ թե նկարվում է, այլ գրվում: Գրել մեկ-երկու դժու՛ մով ավարտվում է ավելոյ տաղը: Արագագրության հետևանքով գրերը փոքր-ինչ թեք ձև են ընդունում: Հեշտ գրելու պատճառով, որոշ գրեր պարզեցվում են և փոխվում նախկինի համեմատությամբ (տե՛ս բերված նմանահանութիւնները): Գրիթի բոլորովին փոխվում են ա, գ, ք, օ, ձ, մ, յ, շ, շ, շ, ո, ա, ց, յ, փ, ք տառերը:

Այս գրության մեջ հայկական այբուբենի վրա ավելանում են «ե», «օ», «չ» տառերը, որոնք առաջ չկային: Սակայն երբեմն հին գրագրերին ընդօրինակելիս, գրիչները հետևում են ավանդական սովորությանը՝ «ե»-ը գրում են անշատ «եւ» ձևով, «օ»-ն՝ «աւ» ձևով, իսկ «չ»-ի փոխարեն գրքը են սծում «փ»:


Բոլորգիրը ոճական կատարելության է հասնում ստանձնապես կիրիկիայի և Ղրիմի գրչության զորոջներում (Հոսովկա, Ակներ, Կաֆա, Սուրխաթ և այլն): Երբեմն բոլորգրով գրված այնքան զեղեցիկ համալափ տեսակեր են պատահում, որ ամենևին չի կարելի տարբերել տպագրից: Կիրիկիայի գրչության զորոջից հայանի են առանձին զեղագիր գրիչներ, որոնց մասին մեծ գովեստով են խոսում նրանց աշակերտները կամ լծակից ընկերները:

Բոլորգիր տեսակերում հիմնականում կատարվում է բառանշատում, թեև պատահում է, որ «ե»-ը շարունակում են միացնել նախորդ բառի հետ: Սկսում են գործածել բազմաթիվ կետագրական նշաններ, ինչպես նաև կարճ և երկար վանկի, սողադարձի նշաններ և այլն: Բոլորգիր տեսակում սկսում է առաջանալ մեծատառի և փոքրատառի տարբերությունը, Մեծատառով կամ զիստառով սկսում են գրել տեսաի սկզբի տառերը, երբեմն էլ՝ առանձին հատվածների սկզբնատառերը և այլն: Ուշագրության արժանի է այն, որ այդ ժամանակ ևս հատուկ անուններ որոշ տեսակերում շարունակվում են գրվել փոքրատառով: Վերնագրերը ընդգծելու համար գրում են կարճիք թանաքով կամ զարդանկարում:

Այս կառուցվածքային անհրաժեշտ է նշել, որ Գրիգոր Տաթևացին Գեւորդ Սիւնացու գրչության արվեստի մեկնության մեջ երեք տեսակ գիթադիր է նշում՝ «ծաղկի», «երկաթի» և «հասարակ»։ Ե՛րբեք են զիստագիր նախ ծաղկի, երկրորդ՝ երկաթի, երրորդ՝ հասարակ» (ՄԱՍ ձև. N 3587, էջ 238)։

Յրազ գրելու և տեղի խնայողության պահանջը հարկադրում է մարդկանց տառերը գրելու նոր և դարզ ձև մշակելու: Սակայն այժմ ևս հատուկ ուշադրություն է զարժվում զեղագրությանը: Մեզ է հասել կիրիկիայան շրջանից մի հետաքրքիր տեղեկություն, որը ցույց է տալիս այն ժամանակվա զեղագրության բարձր պահանջը, Այդ տեղեկությունը բերում է Ալիշանը: Տարածնցի մի հայ օրբորդ, Ալիմ անունով, որը հմուտ է եղել հայկական գրչությանը, զեղեցիկ ձևով գրում է հայերեն մի այբուբեն և հայտարարում, որ ով կարողանա իր նման զեղեցիկ գրել՝ նա իրավունք կունենա իր ձեռքը խնդրելու, երկու երի-

²⁶ Այլ մտղությունների մասնագրության մեջ են կան այդպիսի լեկնաբանվող տերմիններ, սրիկա՛յ՝ «զգալից», «եստիտից»:



Լևոն յարեալն ասացանքս աստե-
 կասանդե ալմի: յարեալն յարեա
 ճանն: զի ասի մի յարեալն յարեալ
 քանզ արարանս: Կոնի ալ յարեա
 ճանն յիստղանցարարանոց մինչև զգ
 ալ ուստիքն եղարողն: Դարձեալ
 աստ յարեալն ուրիշագլխու մեկնքն: ան
 սղանն, և անհաստ ուրիշուստ և աստ
 րուսն: և զի ևս զըսանյա և արեա
 կուն: ուսցին և մտադարեալն: յարեա
 ն զմեծ: յարեալն եղմունի յարեալն
 գունես: և Բիւրիստեալն: յարեա
 ճանն յարեալն յարեալն զարեալն
 և Բիւրիստեալն: արեալն յարեալն
 նս արար: վանտողն աստ յարեալն
 և: և զի զարեալն աստ յարեալն
 ևս սղանուստ: և անտեպնուս
 տեղ գիտելի: աստ յարեալն: յարե
 ալն արարուստն աստ: արեալն յարեա
 ճանն քեզ և սղանցն: յարեալն
 զի յարեալն կեանցն զարեալն արեալն
 յարեալն և ուր յարեալն եղմունի: և զարեա
 ճանն: Ժամեալն և սղանցն զի յարե
 ալն ևս հաստ աստ եղարողն: և յարե

Քոբրգիր 1278 թ. (ՄԱՄ ԱՆ. N 1328),

տասարդներ փորձում են իրենց բախար, գրում, բերում են, բայց օրիորդ չի
 հավանում, հայտարարելով, որ նրանց գիրը «Զի նմանիր պիրն Ալիթին» Ա-
 լիժը նորից հայտարարում է, որ ով կարողանա բերել աշտպիսի գիր, որ նման
 լինի իր գրին «ես կու լինի փեսայ Ալիթին»: Ենթադրի մի երիտասարդ շատ գե-

ղեցիկ գրում է հայկական տառերը և բերում Ալիթին: Օրիորդը նայում է երի-
 տասարդի գրին և հավանում հայտարարելով «...կու նմանի գիրն Ալիթին»²⁷:
 Բուրբուրն իշխող գրի տեսակ է մնում մինչև 16-րդ դարը ներառյալ,
 որից հետո աստիճանաբար ասպարեզը դիզում է նորագրին, լնայած 16—17-րդ
 դարերում ևս պատահում են բուրբուրն ձևագրեր:

Գ. ՆՈՏՐԳԻՐ ԵՎ ՇՂԱԳԻՐ

Նոտար բարձր ծագում է հունական νοτάριος կամ լատինական notarius
 բառից, որ ունեն «գրագիր», «գրվիր» իմաստը, իսկ նոտրգիր՝ «գրագրիճերի»,
 «գրիճերների» գիր: Այն համարվում է արագագիր գրություն և բոտ բառի իմաս-
 տի համապատասխան է սուսական «ЕКРОΠΙΣΤΕ»-ին: Գրի այս տեսակը նպաս-
 տակ էր գիւում, որքան կարելի է արագ գրել և քիչ տարածության վրա շատ
 տառեր տեղափոխել:

Նոտր բարձր մեզ հայտնի է զև 15-րդ դարից, Հակոբ Արմենցին իր հիշա-
 տակարաններից մեկում այդ բարձր գործ է անել հետևյալ նախադասության
 մեջ. «Ընթերցեալ տեսար և փափարմամբ նոտրեցար» (Հայկազ. բառ., II, էջ
 456): Սակայն նոտրգիրը որպես գրության իշխող տեսակ հանդես է գալիս մի-
 աջն 17—18-րդ դարերում: 1666 թվականին գրված մի հիշատակարանում
 նոտրգիրը հիշված է նոտրգիծ ձևով, ինչպես որ բուրբուրն՝ բուրբուրն:

Նոտրգիրը գրի իշխող տեսակ գտնելուց հետո ևս, ինչպես նկատեցիր,
 բուրբուրնը շարունակում է զործածվել: Այդ տեսակներից ուշագրավ է 18-րդ
 դարի մի գրի հիշատակարան, որ մասնացույց է արել Հ. Տաշյանը: Ղազար
 անունով մի գրիչ ընդօրինակած ձևագրի առաջին մասը գրել է բուրբուրն, իսկ
 երկրորդը՝ նոտրգիր և թողել հետևյալ հիշատակությունը. «Ես Ղազար արե-
 զայս բուրբուրնցի մինչև ի հոս, նոտր ուսայ՝ նոտրգրեցի»²⁸:

Նոտրգիրը հայկական գրի բուրբ տեսակների մեջ ամենից մանրի է, այն-
 բան մանր, որ որոշ տառեր կարծես կազմված լինեն միջակետներից՝ «ա»-ն,
 «ա»-ն, թվում է երկու կետից են, «ա»-ն և «ա»-ն՝ երեք, «բ»-ն այնքան է փոք-
 րանում, որ կորցնում է իր փաթեթը և սովորական «բ»-ի ձև անում՝ փոքրիկ ե-
 լունով, «ւ» տառը կորցնում է հորիզոնական կարճ սյունագծից և պարզ դիվի
 դասնում, «բ» տառը գրվում է ձուռ խաչի նման՝ «X», դիվիների փոքրացման
 հետևանքով գրեթե անկատարելի են դառնում «գ», «գ», «շ» և «ղ», «լ» և «շ» տա-
 ռերի տարբերությունները և այլն:

- 2. Աղբամուտչն
- 3. Մթացեայն
- 4. Շաղաւտն
- 5. Կամաւտն
- 6. Բաւականն
- 7. Հալթափեւոյն
- 8. Գիշակն
- 9. Լուսանեմն
- 10. Անաւտն
- 11. Լուսալիսայն
- 12. Փայլածուանն

Յերեկային ժամերը

- 1. Այգն
- 2. Սայգն
- 3. Զօրացեայն
- 4. Ճառագայթեայն
- 5. Շառալիզեայն
- 6. Երկրտանն
- 7. Շանթակայն
- 8. Հրակաթն
- 9. Հարթափեւոյն
- 10. Քաղանթեայն
- 11. Անուարն
- 12. Արփուղն²¹,

Միջին դարերում Հայաստանում սովորություն է եղել ժամը բաժանել 30 մասի, իսկ լուսնային մասը բաժանել հինգ մասի: Այդ երևում է Երեւակցու՝

¹⁸ Տե՛ս Գ. Աղաբալյան, Հին հայասր Հայոց, 1910, էջ 157—158:
¹⁹ Մաշտոցի անվան մատենադարանի Անուագրերում մեզ շնորհակց հայտարարել այս բնագրի օրեւ բնագրի հարցերը և ի՛նչ հետաքննել ունեցել այն: Տարակից օրեւ բնագրի մասնակի վերաբերյալ մեծ բանավեճեր են եղել միջին դարերում՝ կնիդիցական տոնիկի կապակցությամբ (տե՛ս Հ. Անաչյան, Չէլ և սրբաբանի շրագրքը, 1969, N 3, էջ 78—81): Երեւակցու ժամանակ օրվա սկիզբը համարվել է լուսարացու աչգոյն և պատկարգված են նրա ցերեկային և գիշերային ժամերը: Սակայն կան հայտնական տոմարական բնագրեր, ուր օրվա սկիզբն է համարվել գիշերվա սկիզբը:
²¹ Ա. Գ. Արամաճյան, Անահիտ Երեւակցու մատենադարությունը, էջ 113:

լուսնի պարբերաշրջաններում կատարած հաշվումներից: Նա որոշակի այդ մասին գրել է. «Ար արեգական ԽԳ (24) ժամ է ընդ տիւ և դիշերն, ... ժամ արեգական՝ Լ(30) մասն, իսկ լուսնին՝ Ե (5) մասն: Բայց մասն լուսնի մեծ է, քան արեգականն»²²:

Հեթանոսական հայկական տոմարը գործածությունից զուրս է հանվել, անշուշտ, քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական հանաչում գտնելուց հետո: Բայց ի՞նչ նկատի ունի Հովհաննես Խճաստանը, երբ գրում է. «Հայաստացիս Ի ձԺԲ (122) ամ Քրիստոսի արարտ առ Թուսկանն Հայկայա»²³: Նրա ակնարկը կարող է վերաբերել հայ հեթանոսական տոմարի և թվականի ինչ-որ փոփոխության և ոչ նրա զաղարկումանը:

Վաղ քրիստոնեական շրջանում եկեղեցին զեռ շուներ իր սեփական տոմարը. նա առաջնորդվում էր հրեական տոմարով: Այս դրությունը շարունակվեց մինչև 325 թվականը Նիկիայի տիեզերական ժողովը, որը, կոստանդնուս կայսրի հանձնարարությամբ, ժողովը որոշեց կազմել «քրիստոնեական տոմար»:

Նիկիայի ժողովից առաջ և հետո, առօրյա գործունեության համար քրիստոնեական տարբեր երկրներում նախ կազմվել էին 19-ամյա, իսկ հետո՝ 85-ամյա տոմարական զատկացանկեր: Այսպես շարունակվեց մինչև 353 թվականը, երբ տոմարագետ Անդրեաս Բյուզանդացին կազմեց երկու հարյուր տարիների զատկական ցանկ՝ հիմք բերունելով հուլյան անշարժ կոլվիդ տոմարը և դարադուրս վերջնելով Գրեկոկոնստանուսի թվականը, որի սկիզբն էր 284 թ. օգոստոսի 29-ը՝ Գրեկոկոնստանուսի զահակալության օրը:

Մասնակալության N 1999 ձևագրում վերջերս հայտնի դարձավ Անդրեաս Բյուզանդացու 200-ամյա զատկացանկի հայերեն թարգմանության փոքրիկ մի պատասխիկ, որը բացառիկ արժեք ունեցող թարգմանական հնազույն բնագրերից մեկն է:

Այդ բնագրից որոշակի երևաց, որ Անդրեասի երկուհարյուրամյա զատկացանկը սկսվել է 353 թվականից և վերջացել 552 թվականին²⁴:

²² «Անտիա Շրիտացու լուսնի պարբերաշրջանները, Երևան, 1962, էջ 100.

²³ Օգովել էնր Արիշանի «Հայկալո շրջան հոգովոր հոգովից (տե՛ս «Յուշիկը հայերենաց», Ը. Ա. էջ 90):

²⁴ Անդրեասի աշխատության պատասխիկում այդ մասին ասված է. «507 ամն գալուստան ախտանին ձերով [] Տիբուսի Փլիբատուի, և նև. կրոջ ամն շինատու Անդրոս քաղաքի, և Ի Գրեկոկոնստանուսի ԿԲ ամ. և Կիրոս քաղաքի Ուժ ամ, և Ի [Փ] 2. կրոջ Հիմառոց Կոստանդինի քաղաքի, որպոյ Կոստանդին և Ի Սե. ին դերտանին յետ զհահալան կարգել [] 10րդ դրվար ԺԷ. կրոջ լուսնի սուր զատկան ասր [ի]ն Գ. վերանենր այս թվականները: 353 ամն գալուստան Քրիստոսի—մեր ներկայումս գործածական թվականն է հայկական հաշվումով է, որից պետք է հանել մեկ կամ երկու ամիսից տարիներ, որով կոստանդ 352—353 թթ.:

«Նև շինատու Անդրոս քաղաքի»—այս անտիոքացոց թվականն է, որից պետք է հանել 48, կոստանդ 353 թ. (401—48—353):

«Գրեկոկոնստանուսի ԿԲ ամն»—Գրեկոկոնստանուսի զահակալել է 284 թվականին, ուստի նրա 69-րդ տարին կրկին 353-ը (68+284—353):

«Ի [Փ] 2. կրոջ Հիմառոց Կոստանդինի քաղաքի»—Կոստանդինը զահակալել է 327 թ., նրա 16-րդ տարին կրկին 353-ը (327+16—353):

«Կիրոս քաղաքի Ուժ ամն»—Խոսքը սելևկյան թվականի մասին է, որը ներկայ թվականի վերջնելու համար պետք է արժան թվականից հանել 311, կոստանդ 353 (084—311—353):

«Ան. ին դերտանին»—353 թվականին իրաք ինդիպոսին 11-ն է կղել:

Անդրեասի տոմարական այս պատասխիկը եկավ հիմնովին փոփոխու մեր պատկերացումները հայկական տոմարի սկզբնավորության և հայկական արժանուրի վերաբերյալ: Պարզվեց, որ հայկական քրիստոնեական տոմարը սկիզբ է առել ո՛չ թե 428 թվականին, ինչպես կարծում էին Արիշանը և ուրիշները, այլ՝ 353 թվականին: Պարզվեց նաև, որ հայկական քրիստոնեական տոմարի սկզբնավորության աղբյուրն տարում հայկական շարժական ամսանորը՝ համապարզի մեկը, զուգադրվել է ո՛չ թե օգոստոսի 11-ի հետ, այլ՝ օգոստոսի 29-ի:



Առաջագիծը 1999-ամյա զատկական ժամանակ:

Փազուսոս Բուզանդի հաղորդած տեղեկություններից մենք գիանք, որ ներսես կաթողիկոսի ջանքերով 356 թ. Աշտիշատում զամարված ժողովում սահմանվել են մի շարք նոր կարգեր, այդ թվում նաև՝ «Վարդեցան կարգ կաթողիկէ կեկեղեցւոյ... և բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն...»²⁵: Մեր կարծիքով, Փազուսոսի այս ակնարկը կարող է վերաբերվել նաև տոմարական ինդիքներին՝ առնելով ժամանակը սահմանելու: Քրիստոնեա Հայաստանի համար այդ անհրաժեշտ էր, եթե նկատի ունենանք, որ քրիստոնեությունը ընդունած ժողովուրդը տուներ պիտի նշեր: Անդրեասի տոմարն ընդունված էր քրիստոնեա աշխարհում, դրա հետ, անշուշտ, ծանոթ էր ներսես կաթողիկոսը, որը եղել էր Բյուզանդիայում և, ըստ Խորենացու վկայութեան, «գրարի-

«ԺԷ. կրոջ լուսնի սուր զատկան ասր [ի]ն Գ.—կոստի ունի զատկական լուսնի լուսը, որը ամսանորացման ժամը հայտնի է «ձեռ լուսն անուսով. 353 թ. զատկական լուսնի եղել է կրոջ ասր [ի]ն 4-ը. իսկ զատկիկ՝ ասր [ի]ն 11-ին (ՄԱՄ ձեռ. N 1973, ք. 251ա):

²⁵ Փազուսոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1923, էջ 86.

կարգութիւնն զոր ետես և Յունաց աշխարհին, մտնաւոզ ի Յաղատրեալ քաղաքին²⁶, ցանկանում էր այն քաղաքացիութիւնն սույ Հայաստանում:

Աշտարով է այն, որ Անդրեաս Բյուզանդացու քննարկում բերվում է գարնանային գիշերահամապարի ամառային շարժական և եգիպտական ու անտիրոջացոց անշարժ տոմարներով, Այնտեղ ասվում է. «Արդ՝ սկիզբն հասարակելոյ տուրնչեան և գիշերոյ ըստ թուոց եգիպտացոցն ի ԽԳ շորրորդ ամսոյն լինի, որ անուանեալ կոյի պնմնեղթի, որ դայ կշիտ ըստ թուոյն անդերթացոց ի ԽԵ. երրորդումն դուտարս ամսոյն, այսինքն՝ մեհեկանի»²⁷:

Գարնանային գիշերահամապար՝ մարտի 20-ը, անշարժ տոմարով իրոք համապատասխանում է եգիպտական պնմնեղթ ամսի 24-ին, իսկ հայկական շարժական տոմարով՝ մեհեկան ամիսը մարտի 21-ի հետ, կարող էր զուգակցել մեկ 264 թվականից ոչ շուտ և 283-ից ոչ ուշ: Գծախառնարք. քննարկում չի ասվում, թե մեհեկանի քանի՞ ան է եղել, որ կարելի լիներ շորս տարվա տարբերությամբ պարզել՝ թե ո՞ր թվականին է այդ տեղի ունեցել, Բուրդ զեպչեբում, քանի որ խոսքը Անդրեասի գառակացանի մասին է, սակայն հնարավոր է սեղադրել 353—383 թվականների միջև: Դժվարանում ենք ասել, թե Անդրեասի հայկական այդ բնագիրը ինչ գրով է գրված եղել, բայց կասկած չիկնէ չի կարող, որ այն կազմված է եղել հայ իրականութան մեջ օգտագործելու համար:

Անդրեասի այս դատակացանկով առաջնորդվող բուր ժողովուրդները, այդ թվում նաև հարևան վրացի և ազվան ժողովուրդները²⁸, հետևեցին հույան անշարժ տոմարին, բացի հայերից, որոնք շարունակեցին շարժականը: Հետևաբանց եղավ այն, որ հայկական տոմարական հաշվումները դուրս եկան անշարժ տոմարի հաշվումների զուգավորությունը:

Շարժական տոմարով առաջնորդվելու հետևանքով հայկական ամանորն, անշարժ տոմարի համեմատությամբ, ամեն շրտ տարին մեկ օրով հտ էր ընկնում, եթե սկզբում հայկական ամանորը օգոստոսի 29-ին էր, ապա շրտ տարի հետո իշնում էր օգոստոսի 28-ը և այլն: Այսպես, շրտ տարին մեկ օրով հտ մնալով, 19 օրերի նահանջումից հետո, կր տարին հասավ 428—431 թվականները, հայկական ամանորը օգոստոսի 28-ից իջել էր օգոստոսի 11-ը: Այդ, ի զկու, այն տարիներն էին, երբ մաշտոցյան դպրոցը գտնվում էր իր ծաղկման շրջանում. կատարում էին թարգմանություններ, գրում էին ինքնուրույն աշխատություններ:

Անդրեաս Բյուզանդացու տոմարը վերջացավ 532 թվականին: Պատրաստի տոմարական տոնացանկ չիկնելու հետևանքով, սկսեցին շշխոթել տօնք և ամենայն արհեստք տոմարականը²⁹, ինչպես գրում է Հակոբ Արմինցին: Այս շշխոթությունը, սակայն, միայն հայերի մոտ չէր, այլ բուրք քրիստոնյա ժողովուրդների: Շիտթե կարգավորելու համար 561 թվականին եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքում հրավիրվեց 36 հայտնի տոմարագետների ժողով՝ էսա Աղեքսանդրացու ղեկավարությամբ: Ժողովը կազմեց 532 տարիների տոմա-

²⁶ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 279:
²⁷ Ա. Գ. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները (տե՛ս «Բնագիտություն և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», հ. VI, Երևան, 1967, էջ 72):
²⁸ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Աղեքսանդան տոմարը (տե՛ս «Բանբեր Երեսնի համալսարանի», 1969 թ., № 1, էջ 174—175):
²⁹ Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մասնագրությունը, էջ 285:

րական մի աղյուսակ՝ նրա մեջ ամփոփելով արեգակնային 28 և լուսնային 19 պարբերաշրջանները, երկու պարբերաշրջանների բազմապատկելու Անդրեասի տոմարական այս աղյուսակի առաջին տարին սկսում էր 552 թվականի հուլիսի 11-ին: Հայ մասնագրության մեջ այն հայտնի է ՇԼԹ կամ ուղղակի «Երեքարյուրեակ» անունով: Այդ աղյուսակներով առաջնորդվեցին քրիստոնյա բուրք ժողովուրդները՝ քաջատուլյամբ բյուզանդացիներից, որոնք համար առանձին տոմար կազմեց Իրին անունով մի այլ տոմարագետ³⁰:

էսա Աղեքսանդրացու կազմած տոմարական ՇԼԹ աղյուսակները Հայաստանում պաշտոնական ընդունելություն են գտել 584 թվականին Դվինում հրավիրված ժողովում: Ժողովի հանձնարարությամբ հայ տոմարագետները, Աթնասա Տարոնացու ղեկավարությամբ, համաձայնեցրել են էսա Աղեքսանդրացու աղյուսակները հայկական շարժական տոմարի հետ³¹:

Հնատաղյան, սակայն, հայկական տոմարում բարդություններ են առաջացրել: Այն կարգավորելու նպատակով Անաստաս կաթողիկոսը (661—667) հանձնարարել է Անանիա Երրակացուն կազմել անշարժ տոմար: Երրակացին կատարել է կաթողիկոսի հանձնարարությունը, կազմել է իր տոմարը, սակայն մինչ այն կենդակացներ ազգային եկեղեցական ժողովի հաստատության, կաթողիկոսը մահացել է, և Երրակացու կազմած տոմարը պաշտոնապես չի հաստատվել: Այդ մասին պատմել Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Իսկ Անաստասայ Հայրապետին հոգացեալ վասն հայկական տոմարի, զի թերեա անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասլէ յօրինել, զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ յեղանակք ժամանակաց: Վասն որոյ է առ ինքն զկեսարիայ Անեցի կոչեալ, որ բաներուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զսնդրիին իր, Իսկ նորա ցան ի վերայ եղեալ և ըստ բուրք ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկական տօմարի. զի բարեձևագունից օմանց և զմերս կշաղատեալ՝ մի՞ կարօտացուք զայ ի զուգարությունը Հռովմայեցոց: Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք կարիսկոպոսաց զեղեպուն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանեւր»³²:

532 տարիների այս զտնկացանկի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ տոմարական մի կարևոր հարցի՝ հայկական մեծ թվականի սկզբնավորությունը: Թվականների սկզբնավորությունը սովորաբար կապում են պատմական կարևոր իրադարձությունների կամ անձնավորությունների հետ: Այսպես, քրիստոնեական թվականը՝ Քրիստոսի ծննդյան, մահմեղականը՝ Մուհամեդի, հռոմեականը՝ Հռոմի հիմնադրման և այլն: Ի՞նչ կարևոր իրադարձություն է տեղի ունեցել Հայաստանում 552 թվականին, որ անհրաժեշտ են համարել դարադրելու կազմել Հայագիտության մեջ այս մասին

³⁰ Իրինի և էսաի 532 տարիների աղյուսակների միջև շրտ տարիներում դատել տոների տարբերությունը օգտություն ունեի: Այդ տարբերությունը տեղիք է տվել քաղկեդոնական և հայագիտական ղեկավար անեցող ժողովուրդներին միջև մեծ վեճերի Իրինի գառակացանկի գառական այդ շրտ օրերը հայ մասնագրության մեջ հուզվել են «ժողովուրդի»:
³¹ Տե՛ս Մ. Օմեմալյան, Ազգապատմ., հ. Ա, Գոտտեղեցուպոլիս, 1912, էջ 572:
³² Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 92:

տարրեր կարծիքներ են հայտնվել³⁰։ 532 տարիների այս աղյուսակների հայտնաբերությունից հետո պարզվեց, որ հայկական մեծ կոչվող թվականի սկզբը նախորդությունը կապված է ՇԼՔ աղյուսակների հետ. նրա առաջին տարին սկիզբ է հայկական մեծ թվականի։

Երբևայնուհանդերձ ամսարի մի մասը հասել է մեզ և որոշ պատկերացում ամախա է, թե նա ամսարական ինչ սկզբունքով է առաջնորդվել։ Այդ ամսարը, պետք է ասել, կազմված է դիտական մեծ բարեխղճությամբ։ Փաստորեն նա է հիմք ծառայել հետագայում միջնադարյան հայ ամսարական մասնաճյուղային համար։ Երբևայնուհանդերձ ՇԼՔ աղյուսակում հայկական շարժական ամսարը համաձայնեցված է եղել հռոմեական անշարժի հետ. մի էջի վրա տրված է եղել հայկական շարժական ամսարական նվաճվումները, իսկ հարցող էջի վրա՝ հռոմեական անշարժը՝ ՇԼՔ-ի բոլոր տարիների համար³¹։ ՇԼՔ այնուամենայն, սակայն, Երբևայնուհանդերձ հաշվի չէր առնել մի կարևոր նրբություն, թե ի՞նչ պետք էր անել, երբ շարժական մեծ օրով առաջ շարժվելով, հայկական ամսարին հասնել մինչև այն կետը, երբ զարնանաժամբ, որի հետ կապված էին զատիկ հաշվումները, կրկնվելու։

Երբևայնուհանդերձ այս աղյուսակներով հայկական ամսարը հարթ ընթացավ մինչև 1003 թվականը, իսկ 1004 թվականին շրտական տարիների օրերի հաշվը հասավ այն կետին, որ զարնանաժամբ կրկնվեց։ 1001—1004 թվականներին, փաստորեն, ամեն մի տարում երկու զարնանաժամու եղավ, մեկը՝ դեկտեմբերի վերջին, իսկ մյուսը՝ հունվարի մեկին։ 1005 թվականից սկսած այլևս անհար էր տեսալի առաջնորդվել Երբևայնուհանդերձ աղյուսակով։ Խառնվել էին թվականները, վերադրվելները, լրանի լրումները, նահանգ տարիները, հարականները և այլն։ Միջնադարյան ամսարագետ Հակոբ Արմենցին պատասխանելով այս առթիվ իրեն տրված հարցին, գրել է. «Մանիր որդի, զի այս քի պատճառով հասարակածն եղև, զի հասարակածն յորժամ ի նաւասարդ եմուտ, զանխարար թիւ աւելի ի ներքս եմոյժ և ոչ դիտացեալ բազմաց, շփոթեաց դամենայն կանոնեայն առաջեց հարցն և յայնմ հետև ոչ բերև ուղիղ գիտականս, զեթներեակս, զվերադիրս և զլրմունս միով թուով յառաջացեալ գտանի բառ Հայումն, այսպես և զնահանջն ոչ ցուցանել յորում ամի և ինի, զի յորժամ շրեքպատկեն, զթուականս տարով մի յառաջ ցուցանել զնահանջն՝ վասն յաւելեալ թուոյ և չէ ամն նահանջի»³²։

Ահա այս փոփոխություններից հետո ամսարական հաշիվները խառնվեցին։ Ի՞նչպե՞ս հնարավոր էրն այն էր, որ հաշվի շառնվեր ՇԼՔ աղյուսակում հայկական ավելանում մեկ տարին։ Այս խառնակ դրույթունը շարունակվեց մինչև նոր ՇԼՔ-ի կազմումը։ Հայկական ամսարը հետագայում հիմնական բարեփոխության ենթարկեց Հովհաննես Իմաստասերը (Սարկալապար)։

Տոմարական բարեփոխությունը Իմաստասերը կատարել է 1116 թ., սակայն ամսարական իր հաշվումների սկիզբը սկսել է 1084 թ.՝ շարունակելով նախկին ՇԼՔ աղյուսակները։

Իմաստասերը, ամենից առաջ, հայկական շարժական ամսարը դարձրել է անշարժ, տարին ընդունել է 365 և մեկ քառորդ օր։ Չորս տարիների ընթացքում ավելացած մեկ օրը նա սահմանել է զենի ավելյաց ամսի վրա՝ նահանջ տարիներին ավելյաց 5 օրերը դարձնելով 6։

Հայկական ամսարն այդ թվականին հայկական շարժական ամսարով հասած է եղել փետրվարի 29-ին։ Թվում էր, թե Իմաստասերը հայկական ամսարին համար կամ հիմք պիտի վերցնել հռոմեական ամսարը՝ հունվարի մեկը և կամ մարտի ամսարը՝ սեպտեմբերի մեկը, սակայն նա շրջանցել է այդ և այլու բոլոր ամսադրերը և հայկական անշարժ ամսարը կարգել օգոստոսի 11-ը։

Հայոց ամսարի պատմության ուսումնասիրությանը զբաղվող շատերին է զարմանք պատճառել Իմաստասերի այդ վարժունքը. ինչո՞ւ է նա խախտել բոլոր տեսակի կանոնականությունը և այդ ամսաթիվն է վերցրել հիմք։ Օրոմանականը, շղթանկով այդ հարցի պատասխանը, գրել է. «...չենք դիտել թի՛նչ մեզով նավասարդի 1-ը փետրվարի 29-էն օգոստոսի 11 տարին»³³։

Այդ անորոշությունը կարելի էր պարզել վերին տարիներս։ Մասնաճյուղային ձևերում ձևափոխությունը հայտնաբերվեց Հովհաննես Իմաստասերի մի աշխատությունը, որ նա հանգամանորեն շարադրել է իր բարեփոխության սկզբունքները և պատասխանել այն հարցին, թե ինչու է նա օգոստոսը սահմանում հայկական նոր ամսարի սկիզբ³⁴։ Նա մատնացուցել է անուր հին հայկական մի շարք րեադրեր, որ զարնանային գիշերահավասարը մարտի 21-ը, բերվում է հայկական շարժական ու հունեական, ասորական, երբայական անշարժ ամսարներով և դանում, որ հին հայկական ամսարը եղել է օգոստոսի 11-ին, ուստի և ինքը հայկական ամսարը սահմանում է օգոստոսի 11-ը։ (Իրականում, հայկական շարժական ամսարով հայկական ամսարը եղել է 428—431 թվականներին, այսպես դրանից առաջ և հետո տարիները օգոստոսի 11-ին զուգահեռ ընթանալ չեն կարող)։

Հայկական ամսարը փետրվարի 29-ից օգոստոսի 11-ը փոխադրելու համար երկու հնարավոր միջոց կար. կամ Իմաստասերը կարող էր կարգիլ ամսարը փետրվարի 29-ից ետ առանել մինչև նախորդ ամսարի 1083 թվականի օգոստոսը՝ հաշվից զուրս թողնելով 202 օր և կամ փետրվարի 29-ից առաջ անցնել նույն ամսարի օգոստոսի 11-ը՝ ավելացնելով 164 օր։ Առաջին դեպքում նա ետ էր դրանում դեպի նախորդ թվականը, իսկ երկրորդ դեպքում մնում էր նույն թվականի մեջ։ Պարզվում է, որ Իմաստասերը դիմել է երկրորդ միջոցին՝ փետրվարի 29-ին ավելացրել է 528 օր և ամսարը հասցրել 1084 թ. օգոստոսի 11-ը։

Իմաստասերի 1084 թ. կազմած 532 տարիների աղյուսակները վերջացան 1616 թվականին, անհրաժեշտ էր կազմել 532 տարիների ամսարական նոր աղյուսակներ։ Այդ գործի նախաձեռնությունն իր վրա վերցրեց նոր Զուղայի ամսարագետներից մեկը՝ Ազարիա Զուղայեցին³⁵։

³⁰ Այս մասին տե՛ս Ն. Ալիևյան, Հայոց թվականի հաստատության մասնակի (շեանդիս ամսարայն), 1904, էջ 97—102, Գ. Խալաբյան, Հայոց թվականի հաստատության մասնակի ավելի (շեանդիս ամսարայն), 1904, էջ 156—157, Ն. Ալիևյան, Հայոց թվականի հաստատության մասնակի (շեանդիս ամսարայն) քննությունը պատասխան (շեանդիս ամսարայն), 1904, էջ 218—224)։

³¹ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Անտիկ Երբևայնուհանդերձ ամսարայն, էջ 262—292։

³² Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 295—296։

³³ Մ. Օրմանյան, Ազգագրատուն, հ. 1, էջ 1308։

³⁴ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 240—241։

³⁵ Ազրեղու Ս. Անասյան «Հայկական շարժական ամսարայնի մի պատմիկ, բառ որի Ազարիա Զուղայիս Քուլաչեղուս անվան հետ կապված ամսարական մի պատմիկ, բառ որի Ազարիա Զուղայիս իր ամսարը կազմած է եղել ո՛չ, թե՛ 1616 թվականին, այլ զրանից 65 տարի առաջ՝ 1551 թ. (էջ 1178—1180)։ Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ նրա Նզդիանը ամսարական հաշվը (էջ 1178—1180)։

Ի տարբերություն Իմաստասերի տոմարի, երբ հայկական տարվա ամսանորը սահմանված էր օգոստոսի 11-ին, նա տարբերվում սահմանեց մարտի 21-ը՝ գարնանային արևադարձի օրը, որով պաշտոնապես առաջնորդվում էին Պարսկաստանում:

Հին հայկական ամիսների այս փոփոխությունը, ինչպես երևում է, խորթ է եղել հայ իրականության համար, ընդունելություն չի գտել, ուստի Ջուղայեցիին հարկադրված է եղել կազմել հայկական ամիսների նոր անուններ՝ կազմված տարվա եղանակի, բնական պայմանների և բերքի հետ: Ազարիայի կազմած նոր ամիսները պարսկականի հետ հետևյալ զուգահեռությունն ունեն.

1. Տոգարբեր—մարտի 21-ից մինչև ապրիլի 19-ը,
2. Մաղկավեն—ապրիլի 20-ից մինչև մայիսի 19-ը,
3. Դետահոս—մայիսի 20-ից մինչև հունիսի 18-ը,
4. Պաղարբեր—հունիսի 19-ից մինչև հուլիսի 18-ը,
5. Ասատախ—հուլիսի 19-ից մինչև օգոստոսի 17-ը,
6. Գոնուրյուն—օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 16-ը,
7. Պողակիթ—սեպտեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 16-ը,
8. Տերևարափ—հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 15-ը,
9. Չյունաբեր—նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 15-ը,
10. Սառուցյալ—դեկտեմբերի 16-ից մինչև հունվարի 14-ը,
11. Հոգմառնուշ—հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը,
12. Չյունահալ—փետրվարի 14-ից մինչև մարտի 15-ը,
13. Մանիակ—մարտի 16-ից մինչև մարտի 20-ը³⁰,

Ազարիա Ջուղայեցին ևս հետևել է անշարժ տոմարի սկզբունքին. նա չի փոխել հին հայկական ամիսների 30-ական օրերի թիվը, ուստի պահպանելով հավելյալ 13-րդ ամիսը, այն զրել է նիհարան ամսի վերջը: Ասվորական տարիներին հավելյալ ամիսն ունենում էր 5 օր, իսկ նահանջ տարիներին՝ վեց օր:

Ազարիա Ջուղայեցու կազմած տոմարական աղյուսակները սերիք հանդիսացան հայկական մի այլ թվականի, որը հայտնի է Ազարիա Ջուղայեցու թվականն անունով, որի մասին խոսք կլինի իր տեղում:

Ազարիա Ջուղայեցու տոմարը և թվականը լայն օգտագործման մեջ չզորեցին Հայաստանում. այն գործածվել է միայն Պարսկաստանի և Հնդկաստանի հայկական գաղթօջախներում:

VII. ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆԲՆԵՐԸ

Ա. ԲՐԻՍՏԱՆԵԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արեղակնային և լուսնական տարիների զաղափարն առաջանալուց հետո, բնական է, պիտի առաջանար ժամանակի սխեմատիկ հաշվումը՝ ժամանակագրությունը: Ասանց թվերի և թվականների հնարավոր չէր ժամանակը չափել և անցյալի իրազարժությունները վերհիշել: Արդարացի է պատմահայր խորենացու այն դիտողությունը, թե՛ յ՛՛՛՛ էլ է պատմությունն ճշմարիտ առանց ժամանակագրության³¹:

Անհրաժեշտ է նկատել, որ հնում թվականների հաշվումները կատարվել են ոչ թե միայն հայտնի հանունությամբ, ինչպես այժմ, այլ թագավորների, փարավոնների և այլ բաղաբանական աշխարհի ընկնող անձնավորությունների գահակալության տարիներով: Այդ սկզբունքով են առաջնորդվել նաև հին հայկական մեր պատմիչները: Օբիեկտի, բառ խորենացու՝ հայոց խոսքով թագավորը զահ է բարձրացել պարսկական Որմիզ թագավորի երկրորդ տարին և Կաստանդին կայսեր ութերորդ տարին: Ըստ Կարյունի՝ Մահաի Պարթևը մահացել է Հազկերտ թագավորի հինգերորդ տարում: Ըստ Մոզեսի Կաղանկատավացու՝ Աղվանից Վաչագան թագավորը պարսկական բունապետության դեմ պայքարել է խորով թագավորի քանդորսերորդ և Հուստինիանոս կայսեր տասներորդորդ տարում և այլն:

Մեր ներկայումս գործածական թվականի սկզբնավորությունը, ինչպես հայտնի է, կապված է Քրիստոսի ավանդական ծննդյան հետ: Քանի որ ծննդյան ժամանակի մասին վաղ շրջանից հավաստի տեղեկություններ չեն պահպանվել, ուստի միջնադարյան քրիստոնյա տոմարագետներն աշխատել են յուրովի հաշվել այն: Գրա հետևանքով միջին դարերում առաջացել և գործածության մեջ են զրվել քրիստոնեական մի շարք թվականներ՝ հռոմեական, հուսնական, ասորական, հայկական և այլն, որոնք մի քանի տարով (առաջ ու ետ) տարբերվում են իրարից:

Թվականների մեջ եղած այս տարբերությունը ժամանակին անդրադարձել է Հովհաննես Իմաստասերը և հետևյալ բացատրությունը տվել. «Եւ քանի

³¹ Մ. Խորենացի, Գատմութիւն Հայոց, էջ 224:

վտաների գիտակ մեկը չէ: Այդ փոքրիկ բնագրում կատարել են տոմարական մի շարք անտարբերություններ: Ենթեր նրանցից մի քանիսը: Հուլիական 1551 թվականին հռոմեական տարեթիվը եղել է ոչ թե 57-ն (6003-ը), այլ՝ 584-ն (1303-ը): Եռյակների Լ-ին (30-ին) հայկական ամսաթիվը եղել է ոչ թե հրոտից Թ-ն (2-ը), այլ՝ տրիի 22-ը: 1551 թվականի արաբ զորք եղել է ոչ թե «Թա-ն», այլ՝ «Թա-ն»: 1551 թ. կնքանակիցուրը եղել է ոչ թե Աղանկատար-ը, այլ՝ «Թա-ն»: Մարտի 20-ին զինուստավասարը եղել է հայկական աղյուսակ ամսի ոչ թե «Թա-ն», այլ՝ «Թա-ն» և այլն: Այդ բնագրեր, մեր կարծիքով, գրված պետք է լինի 1616 թվականից հետո: Նրա գործածած ժայտ տարիք արտահայտությունը պետք է հասկանալ ո՛չ թե իր զրեղ տարին, այլ հայկական 1600 թվականը, որի հիման վրա նա քանակացել է ամարական վարժություններ կատարել: Ժամանակակից մտաբեր, մտածական տոմարագետը, պարզ է, ամարական նման կապիտ սխալներ չէր կարող թույլ տալ:

³⁰ Ազարիայի տոմարը տե՛ս ՄԱՄ ձև. N 7036, ք. 150բ—160ա, ՄԱՄ ձև. N 754, ք. 278—286:

բազումը յառաջնոց վարդապետաց անտի գրեցին ըստ իրարաբանչիւր դիպումս բնութեամբ ի կր տեւալ վասն ստուգելոյ ամացն անցելոց, սակայն անմիաբան հանգիսյին միմեանց... Զի որպէս արուեստ բժշկութեան ոչ ի սկզբանցն ճիշի ամենայն զիտացեալ եղև, այլ առ սակաւ սակաւ, նոյնպէս և շրջաբերութիւն արեգական և լուսնի առ սակաւ սակաւ զիտացել եղև...»¹

Ներկա թվականը հայ մատենագրութեան մեջ գործ է ածվել տարբեր անուններով՝ «Քիւ մարմնացելոյ բանիք», «Քրուական մարդեղութեան բանիք», «Ամ ձեւեղեան կենաբարի», «Ամ գայտաեան փրկիչ», «Քիւ կենաբարի յայտնութեան», «Քրուական Յիսուսի Բրիտանոս» և այլն²:

Պարզում է, որ հայ տոմարագետները սահմանել են Քրիստոսի ծննդոցյան «սեփական» թվական, որը սկիզբ է առնում ներկա թվականից երկու տարի առաջ, այլ խոսքով «սած» ըստ հայ տոմարագետների հաշվումների, Քրիստոսը երկու տարի շուտ է ծնվել, քան այդ սահմանել է Դիոնիսիոսը: Այդ հաշվումով, օրինակ՝ 1971-ին հայկական թվահաշվով եղել է 1973-ը³: Մատենագրութեան մեջ պահպանվել են որոշակի վկայություններ՝ քրիստոնեական հայկական թվականի առկայության և գործածության մասին:

Մաշտոցի անվան մատենադարանի № 7447 ձեռագիրը, որը «Ճաշոց գիրք» է, ունի հիշատակարան, ուր գրչութեան թվականի մասին հետևյալ տեղեկություն է տրվում. «Գրեցաւ յիշատակարանս ի թվաբերութիւնն ի ծննդնէն Քրիստոսի ըստ Հայոց հաշուի (ընդգծումը մերն է—Ա. Ա.) ԹՅՂ (1396), և ըստ Յունացի ԹՅՂ (1396), և ըստ Յունացի ԹՅՂ (1388), և ըստ Ասորացի ԹՅՁԹ (1381) և Հարեթական տոմարիս Հայոց՝ ՊԼԷ (837) ի վեւորտարի ամսոյ ի Թ (29) նահանջի ամի...»⁴:

Այս հիշատակարանում, ինչպես տեսնում ենք, զուգահեռ բերվում է քրիստոնեական թվականը չորս տարբեր տոմարական հաշվումներով՝ հռոմեական, հունական, ասորական և հայկական: Ըստ որում, որոշակի նշվում է ըստ Հայոց հաշուի, այսինքն՝ ըստ հայկական տոմարական հաշվումների Հիշատակարանում վկայակոչված քրիստոնեական թվականներից ներկայումս գործածվողը «Ֆրանցացին» է, որը եղել է 1388-ը: Այդ նույն տարին հայկական քրիստոնեական հաշվով եղել է 1390-ը՝ ավելի երկու տարի, հունական քրիստոնեական հաշվով եղել է 1396-ը՝ ավելի ութ տարի, ասորական քրիստոնեական հաշվով եղել է 1381-ը՝ պակաս յոթ տարի:

¹ Ա. Կ. Աբրահամյան, Հովհաննես Բժաշատների մատենագրությունը, էջ 223—224:
² Մեր ներկայումս գործածած թվանոցը՝ քրիստոնեական հռոմեական թվանոցն է, որը կազմել է Դիոնիսիոս Կրտսերը 525 թ.: Մինչև զարթոյմ քրիստոնեական ոչ բոլոր տոմարագետներն էն, որ ընդունել են Դիոնիսիոսի սահմանած այս թվանոցը: Այն ընդունելությունը չի գտել նաև Հայաստանում:
³ Բանբրանտ ան՝ Ա. Կ. Աբրահամյան, ներկա թվականի սկզբնաղբարությունը ըստ հայ տոմարագետների հաշվումների (ան՝ ՊՅՁ, 1970, № 3, էջ 95—103).
⁴ ԵՊ գրքի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմել է Ս. Խաչիկյանը, Երևան, 1930, էջ 575: (Այլուհետև շատացուց է արվելու ԵՊ գրքի հիշատակարաններու նկով):

Հայկական մեծ թվականի և քրիստոնեականի զուգահեռությունը գտնելու համար, ինչպես կտեսնենք հետո, անհրաժեշտ է դումարել 553, իսկ քրիստոնեական հռոմեականի զեպտում՝ 551: Այդ հաշվով, 837 հայկական մեծ թվականին 553 դումարելիս, ստանում ենք 1390 ըստ «Հայոց հաշուի», իսկ 551 դումարելիս, ստանում ենք 1388, ըստ «Ֆրանցաց հաշուի»: Ի՞նչ հիմք ունենք «Ֆրանցաց»-ը համարելու ներկայումս գործածվող թվականը: Դրանում զրոյվար չէ համոզվել, եթե նկատի ունենանք, որ ըստ հիշատակարանի տեղեկություն, տվյալ տարին եղել է նահանջ, իսկ տոմարագրական հաշվներին ստույգ հայտնի է, որ 1388 թվականին իբրց եղել է նահանջ տարի, հետևապես հիշատակարանում հիշված «Ֆրանցաց»-ը մեր ներկայումս գործածած թվականն է:

Մեղ է հասել Ղրիմում 1401 թվականին ընդօրինակված մի ուշագրավ ձեռագիր, որն այժմ Մատենադարանի անփականությունն է և գրանցված է 1925 թվահամարի տակ: Ընդօրինակող գրչին իր հիշատակարանում գրչության թվականի վերաբերյալ հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Կատարեցաւ երկրորդ կլիմաքս, այսինքն որ է Սանդուխտ գիրք, ձեռամբ մեզապարտ անձին Մարկոս գրի... Ի ծննդնէն Քրիստոսի՝ հազարերորդի շոքահարիբերորդի երրորդի (1403) Հայոց հաշուի (ընդգծումը մերն է—Ա. Ա.)... և ըստ պատճէն Յարեթական տոմարիս Հայոց ՊՄ (850), ստանուեր տարոյն՝ Առուսն, ի մայիս ամսոյ իՄ (21)»⁵:

Հիշատակարանից երևում է, որ ներկա թվականի 1401-ին հայկական քրիստոնեական թվականով եղել է 1403-ը՝ ավելի երկու տարի, ինչ վերաբերում է հիշատակարանում հիշված «Պատճէն տոմարիս Հայոց»-ին, ապա այդ հայկական մեծ թվականն է, որին 553 դումարելիս ստանում ենք քրիստոնեական հայկական թվականը, իսկ 551 դումարելիս՝ մեր ներկայումս գործածական թվականը⁶:

Քրիստոնեական թվականն առանձին հանդիպելիս պետք է հաշվի առնել մի նրբություն. միջնադարյան հայ մատենագրության մեջ մեկ-մեկ պատահում են դեպքեր, երբ իրադարձությունները հայ ունիթոս հեղինակների կամ գրիչների կողմից թվագրված են լինում քրիստոնեական հռոմեական տոմարական հաշվումներով, այսինքն՝ ներկայումս մեր գործածած թվականով: Այդ դեպքում հայկական և քրիստոնեական թվականների տարբերությունը լինում է 551: Այդ հիմնականում լինում է այն դեպքում, երբ թվագրող հեղինակները հայ ունիթոսներ են: Բերենք այդպիսի երկու օրինակ: Իտալից գրչին իր ընդօրինակած «Սուկեփորիկ»-ի հիշատակարանում հայտնում է, որ այն գրել է «Թ Թուականիս 229 (776), ի Քրիստոսէ ԹԳՃԻԷ (1327), ի Դոմինիկուսն և ի Յրանցիսկոսէ ՃԻԻ (125) տարի է»⁷: Այստեղ հայկական մեծ թվականի

⁵ ԵՊ գրքի հիշատակարաններ, հ. Ա, էջ 19:
⁶ Աբրահամյան թվականն այստեղ աղբարանելու թվահամար է, որը, ինչպես կտեսնենք քիչ հետո, համապատասխանում է հայկական մեծ և հայկական քրիստոնեական թվականներին:
⁷ «Տեւոպէ Անաղորց Վենետիկի», հ. Բ, էջ 629:

և քրիստոնեականի միջև տարբերությունը 553 չէ, այլ՝ 551. Հայկական մեծ թվականին՝ 776, գումարելով 551, ստանում ենք 1327, որը ճիշտ համապատասխանում է մատենացույց արված քրիստոնեական թվականին:

Սակիմանս գրիր Սերաստիայում ձեռագիր է ընդգրկում կել թիու յափանդան, որ է Արամ 8ՊԻԱ (6821), և քառ Հայկական թուականի ՉԿԲ (762), յամսեանն յուլիս ԺԸ (18), յատար շրբըշարթի, և տանուռէր՝ հոչին»:

Արարչության թվականն այստեղ բյուզանդական թվահաշվով է, որից անհրաժեշտ է լինում հանել ոչ թե 5510, այլ՝ 5508, իսկ վերջինս համապատասխանում է հռոմեականին՝ 1313-ին (6821—5508=1313)։ Հայկական 762 թվականին գումարելով 551, ստանում ենք 1313: Որ այստեղ գործ է ածված քրիստոնեական հռոմեական թվականը, այդ երևում է նաև տարվա տանուանրից, որը հանդիսացել է «հոչը»: Տոմարական անվիճելի հաշվումներով «հոչը»-ը տանուանր է եղել 1313 թվականին:

Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՄ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՁԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական մեծ թվականը մատենագրության մեջ սկսել է գործածվել 8-րդ դարից⁹:

Մեզ հասած ամենահին արձանագրությունը, որի մեջ գործ է ածված հայկական թվականը, Քալինի Մայր եկեղեցու ձախակողմյան սյան վրայի արձանագրությունն է՝ 783 թվականից, որ թողել է Ուխտատուրը: Այդ մասին խոսք եղել է առջևում:

Հայկական մեծ թվականը մատենագրության մեջ հիշվում է տարբեր անուններով՝ «Քառականութիւն Ասեանագան», «Քառականութիւն Թարգման», «Քառարեւորիւն Արամեան», «Քառարեւորիւն Հայոց տոմարիս», «Քառարեւորիւն, որ Տարբերան կոչի», «Քառական ետարվային» և այլն: Այս թվականը՝ «Հայկական մեծ թուական» է կոչվում տարբերելու համար հետագայում գործածվող «Հայկական փոքր» թվականից:

Հայկական թվականի սկիզբն է հանդիսացել 552 թ. հուլիսի 11-ը, որը օակայն փոխանցվել է հաջորդ տարին և վերջացել 553 թվականի հուլիսի 10-ին: Ուստի հայկական մեծ թվականով թվադրված տարեթիվը տեղադրվում է ներկայիս երկու տարիների մեջ, այդ պատճառով էլ վերձանելիս անհրաժեշտ է գումարել ինչպես 551, այնպես էլ՝ 552: Եթև իրադարձությունը տեղի է ունեցել հայկական շարձական նավասարդ ամսից առաջ, անհրաժեշտ է գումարել 552, իսկ եթև նավասարդ ամսից հետո է՝ պետք է գումարել 551: (Մեր խոսքը վերաբերվում է Հովհաննես Իմաստասերից առաջ գործածվող թվականներին): Գծբախտաբար, հայկական թվականները մատենագրության մեջ մեծ մասամբ հիշվում են ստանց ամսաթվերի, ուստի ճիշտ կլինի տրված տարեթիվը վերձանել երկու թվականով՝ 551 և 552 տարբերությամբ¹¹: Հայկական

և ներկայումս գործածվող ամիսների ու ամսաթվերի զուգարությունը պարզելու համար նպատակահարմար է դիմել հրապարակված զուգացանկերի¹²: Բերենք մի քանի օրինակ:

Հովհաննես Ավագիցի ժամանակագրության մեջ արեղակի խավարում է հիշվում հայկական 388 թվականի արև ամսի 15-ին. «Եղև խուար արեղականի քի արը ԺԵ (15) է Հայոց 32Ը (388) թվական»¹³: Հայոց 388 թվականի արև ամսի 15-ը անշարժ տոմարով հավասար է 939 թվականի հուլիսի 19-ին, իսկ այդ օրը աստղագիտական ճիշտ հաշվումներով իրապես եղել է խավարում¹⁴: Գեղբը տեղի է ունեցել նավասարդի մեկից հետո, իսկ վերջինս այդ տարում զուգարկում էր սպրիլի վեցին, ուստի անհրաժեշտ է լինում գումարել ոչ թե 552, այլ՝ 551:

Հովհաննես Ոսկերիանի «Գործ առարելոց»-ի մեկնությունը հունարենից հայերեն է թարգմանվել «Ճամի վեցհաղարերորդի հինգհարերորդի առաջներորդի արարածոց աշխարհի (6501), և ի հաղարերորդի երկամասուներորդի երկերորդի կենարարին մերոյ զալցստեանն (1077), և հարարվային թուոյ Հայկազանց հինգհարերորդի քսաներորդի հինգերորդի (525), ի թագարութեանն Միքայելի Դուկի»¹⁵: Չուգահեռ բերված հայկական և քրիստոնեական թվականների համեմատությունից երևում է, որ տվյալ թարգմանությունը կատարվել է նավասարդի մեկից առաջ (համապատասխանել է փետրվարի 3-ին), ուստի անհրաժեշտ է լինում գումարել ոչ թե 551, այլ՝ 552:

Տոմարական նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ հայկական մեծ թվականը սահմանելիս համապատասխանության մեջ է զրվել ոչ թե հռոմեական մեր ներկայումս գործածած քրիստոնեական թվականի հետ, այլ քրիստոնեական հայկականի:

Մեր մատենագրության մեջ տարեթիվերի մեծ մասը թվադրված է լինում հայկական մեծ թվականով, որը ներկա գործածական թվականին համապատասխանեցնելու համար սովորաբար գումարում ենք 551: Սակայն այդ հաշիվը խախտվում է, երբ բնագրերում հայկական թվականին զուգահեռ գործ է ածված լինում նաև հայկական քրիստոնեական թվականը. այդ դեպքում երկու թվականների տարբերությունը լինում է ոչ թե 551, այլ՝ 553:

Ստեփանոս Ասողիկը հայկական թվականի սկզբնավորությունն է համարում 553 թ. «Շողովի ամենայն ժամանակն ի ձեռնդնել Փրկչին մինչև ցեղովն Դուռն և թուական Հայոց ամբ ԶԵԳ (553)»¹⁶:

Ժամանակ ամսաթվի քանակն է զուգարկելն, որպեսզի կարելի լինի վերձանել որոշակի թվականով և ամսաթվով:

⁹ Վերջերս տոմարագիտական մի քանի աշխատությունների հավելվածներում հրատարակվեցին հայկական թվականների և ամսաթվերի ցանկեր՝ զուգացության մեջ գրված հռոմեականի հետ: Այդ զուգացանկերից ընդգրծարք մամոստարիական գիտությունների թեկնածու Հ. Բազույանի կազմածն է, որի մեջ հաշվի է առնված ոչ միայն թվականների զուգացությունը, այլև՝ ամսաթվերի (տե՛ս «Օրացույցի պատմություն», Երևան, 1970, էջ 314—434):

¹⁰ Հովհաննես Ավագիցի ժամանակագրությունը (տե՛ս «Մեր ժամանակագրություններ», կազմեց Վ. Ա. Լակոբյան, Տ. Բ. Երևան, 1956, էջ 25):

¹¹ Տե՛ս Հ. Ա. Բազույան, Օրացույցի պատմություն, էջ 487:

¹² Գ. Հովսեփյան, Քրիստոնեական և հայկական ամսագրաց, էջ 256:

¹³ «Մատեանսի Տարեեցույ Քառութիւն տրեկերական», ՍՊԲ., 1855, էջ 83:

⁹ Ք. Գուրգեն, Տուգակ հայերն ձեռագրաց Ս. Եղանի վանուց ի Սերաստիա (տե՛ս «Հանդես ամսագրաց», 1923, էջ 70):

¹⁰ Գրքերից առաջ հայկական թվականի գործածությունը մատենագրության մեջ հայտնի չէ, եթև հաշվեք մի քանի կեղծված թվականներ ունեցող հիշատակարաններ:

¹¹ Անց դեպքում, երբ թվականի հետ միասին հիշված է նաև հայկական ամսաթիվը, անհրաժեշտ է պարզել՝ թե՛ տվյալ տարվա հայկական ամսաթիվը՝ նավասարդի մեջ, երկրորդում գործածված է:

Հովհաննես Իմաստասերն իր «Պատճեն տումարի» աշխատության մեջ նշում է, որ Քրիստոսի ծննդից մինչև շաքաբայի Բաղդադի քաղաքի քաղաքացիների խաղաղության մասին և այդ առթիվ բերելով մի շարք թվական զուգահեռներ, այն թվագրել է. «Ե զայտաննէ տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՃԺԸ (1115)»¹⁷։ Ը. Բաղդադյանը Օպպիդեմիտի աղյուսակների հիման վրա պարզել է, որ արեղակի հիշյալ խաղաղումը տեղի է ունեցել 1113 թվականի մարտի 10-ին¹⁸։ Հովհաննես Իմաստասերի մոտ այդ խաղաղումը հիշված 1115 թվականի տակ, հասկանալի է, որ հայկական մեծ թվականի սկզբնավորությունը հայկական Բրիտաննականի 553-ից է հաշվված։

Քանի որ մենք ներկայումս առաջերորդում ենք ոչ թե բրիտաննական հայկական թվականով, այլ՝ բրիտաննական հռոմեականով, ուստի հայկական մեծ թվականը հայկական բրիտաննական թվականի հետ համապատասխանության մեջ դնելու համար հայկական բրիտաննական թվականից անհրաժեշտ է հանել երկու ավելի տարին։ Անհրաժեշտ է միաժամանակ նկատի ունենալ, որ հայկական բրիտաննական և հռոմեական բրիտաննական թվականների միջև գոյություն ունեցող երկու տարվա այս տարբերությունը հետագա դարերում աստիճանաբար հարթվում է. մեզանում սիրում են զործածել հռոմեականը, թեև մինչև 17-րդ դարը մեկ-մեկ պատահում են բրիտաննական հայկական թվականի զործածության փաստեր։

Գ. ԱՅԿԱԿԱՆ ՓՈՔՐ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Եթե հայկական մեծ թվականի սկզբնավորությունը կապված է եղել ՇԼԲ առաջին աղյուսակի հետ, ապա հայկական փոքր թվականի սկզբնավորությունը կապված է Հովհաննես Իմաստասերի կազմած երկրորդ ՇԼԲ աղյուսակների սկզբնավորության հետ։ Մատենադարանի մեջ այն հանդիպում է տարբեր անուններով՝ «Փոքր բուական», «Սարկապազայի բուական», «Մտուկ բուական», «Քուական նորոյ շրջանի» և այլ։

Առաջին ՇԼԲ աղյուսակները, որ սկսվել էին 552 թվականի հուլիսի 11-ին, 552 տարիների շրջան կառուցելով, վերջացել են 1083 թվականի փետրվարի 29-ին (նահանջ տարի)¹⁹։ Հովհաննես Իմաստասերը հայկական ամսանոր փետրվարի 29-ից տեղափոխել է օգոստոսի 11-ը՝ իր կազմած ՇԼԲ-ն սկսելով 1084 թվականից, Իմաստասերի ամսարով ներկա տարիների, ինչպես կարելի է նկատել, չէր ամփոփվում մի տարվա մեջ, այլ սկսելով օգոստոսի 11-ից, անցնում էր այդ տարվա դեկտեմբերը և շարունակվում մինչև հաջորդ տարվա օգոստոսի 10-ը։ Ահա այս նկատառումով են իր ՇԼԲ-ի առաջին տարին սկսել է ոչ թե 1084 թվականից, այլ՝ 1083-ից։ Ուստի՝ Հովհաննես Իմաստասերի փոքր կոչվող թվականը վերծանելիս պետք է նկատի ունենալ հետևյալը. եթե դեպքում տեղի է ունեցել օգոստոսի 11-ից առաջ, անհրաժեշտ է արված թվա-

կանին գումարել 1084, իսկ ԼԵԽ օգոստոսի 11-ից հետո՝ անհրաժեշտ է գումարել 1083։

Բերենք հայկական փոքր թվականով թվագրված մի բանի տարեթիվը և վերծանենք։

Ողչելի պատմությունը Կոշավանքում բնօրինակվել է «...ի թուրքերու թուրքանի վեցհարիւրերորդի և երկուց տասանց՝ եզակու միով առանկու, և բառ նորում շրջանիս միոյ յերկնեի և երկից տասանց և քսոց երկուց, և բառ ծննդան կենարարին և մերոյ աղապտութեան ի մահուանէ անձանութիւն... ՌՃԶԳ (1174)»²⁰։ Հայկական մեծ թվականը հավասար է՝ 621+551=1172-ի, Քրիստոնեական հայկական թվականը հավասար է՝ 1174-2=1172, Հայկական փոքր թվականը հավասար է՝ 88+1084=1172, Չուազիրն, սրեմն, զորված է 1172 թվականի առաջին կեսում, ուստի գումարում ենք ոչ թե 1083, այլ՝ 1084։

Ստեփանոս գրին իր բնօրինակած ձեռագիրն ավարտել է «...ի թուրքերու թեանս Ասրանդեան և Արեթական տումարի ՊԱ (801), և բառ նորում շրջանի ՄԿԹ (269) և ի զայտաննէ կենարարին ՌՅՄԴ (1354)»²¹։ Հայկական մեծ թվականը հավասար է՝ 801+551=1352-ի, Հայկական բրիտաննական թվականը՝ 269+1083=1352-ի, Այսպիսով, երեք թվականներն էլ համապատասխանում են իրար։ Չուազիրը զրված է տարվա երկրորդ կեսում, օգոստոսի 11-ից հետո, այդ պատճառով ավելացնում ենք 1083։

Մաշտոցի անվան մատենադարանի № 7547 ձեռագրի բնօրինակությունն ավարտված է «Յարեթական տումարի ի ՊԻԿ (824), և բառ նորում շրջանի ի ՄՂԱ (291), և ի զայտաննէ կենարարին ՌՅԷԷ (1377), և յեկից Ազումայ ի զախալէն ՅՊ (6800)»²²։ Հայկական մեծ թվականով ձեռագիրը զրված է՝ 824+551=1375-ին, բրիտաննական հայկական թվականով՝ 1377-2=1375-ին։ Արարչության թվականը Աղեքսանդրյանն է, ուստի պետք է հանել 5425՝ կլինի դարձյալ 1375 (6800-5425=1375)։ Հայկական փոքր թվականը հավասար է՝ 291+1084=1375, Չուազիրը զրված է օգոստոսի 11-ից առաջ, ուստի անհրաժեշտ է լինում գումարել ոչ թե 1083, այլ՝ 1084։

Ղազար գրիչը Գողթնի Սինեական անապատում «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից» աշխատությունը բնօրինակել է «... ի թուրքերութեան Յարեթական տումարի ՊԴԲ (834) և ի փոքր թուրքանութեան ՅԲ (302), ի Հոռմայեցոց ՌՃԼԸ (1138)»²³։ 834-ին գումարելով 551, ստանում ենք 1385։ Հռոմեական 1148-ին գումարելով 247, ստանում ենք 1385։ Քանի որ հայկական մեծ թվականից երևում է, որ հավասարություն ստանալու համար փոքր թվականին անհրաժեշտ է գումարել 1083, հետևապես ձեռագիրը զրվել է 1083 թ. օգոստոսի 11-ից հետո (302+1083=1385)։

Գ. ԱՂԱՐԻԱ ԶՈՒՂԱՅՅՅՈՒ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1616 թվականին ինչպես նշել ենք, վերջացավ Հովհաննես Իմաստասերի կազմած 532 տարիների ամսարական աղյուսակը, և անհրաժեշտություն ա-

¹⁷ Ա. Գ. Արամյան. Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 217.
¹⁸ Նույն ազգում, էջ 278.
¹⁹ Ը. Բաղդադյան. Յրացույցի պատմություն, էջ 78—79.
²⁰ Աղյուսակի վերջին տարին սկսվում էր 1083 թ. մարտի 1-ին և վերջանում փետրվարի 29-ին։

²¹ Գ. Հովսեփյան, Յիշատակարարը ձեռագրաց, էջ 410—411.
²² «ԹՊ գրքի հիշատակարաններ», էջ 399.
²³ Նույն ազգում, էջ 518.
²⁴ ՄԱՄ Ան. № 592, ք. 232ա։

առաջացավ կազմելու երրորդ 532 տարիների համար նոր աղյուսակի Այդ զոր-
 քը ձևանարկեց Աղարիա Ջուղայեցին. նա կազմեց ՇԼԹ նոր աղյուսակ այն
 տարրերով, որ ամանորը ընդունեց ոչ թե իմաստասերի հաստատած
 օգոստոսի 11-ը, այլ դարձանային զիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը²⁵.
 Աղարիա Ջուղայեցու մշակած տոմարը և նրա աղյուսակները սկիզբ դնեցին
 սացան մի նոր թվականության, որը հայ մասնագիտություն մեջ հայանի է
 «Աղարիայի թվական» կամ «Թափական նորում շրջանի» անուններով:

Աղարիայի թվականը մեր ներկային վերածելու համար, էթն մարտի
 21-ից հետո է, անհրաժեշտ է սրված թվականին դումարել 1615, իսկ նրա-
 նից առաջ՝ դումարել 1616: Վերձանները Աղարիայի դարազվտով թվագրված
 մի քանի տարեթվեր:

Նոր Ջուղայի Ս. Լուսավորիչ եկեղեցու դավթի մի տապանաքարի վրա
 կարգում ենք.

«Այս է տապան Փանոսի,
 Անմեղ մահկան հահատակի,
 Կրտսեր որդի հորամարի,
 Եկեղեցի տղայ թաղցր և բարի,
 Կակիծ եթող եղբարց սրտի,
 Փոքր թիւն ճէ-ի (107-ի),
 Նախայ ամսին մինն»²⁶.

Աղարիայի թվականի ձև-ն (107) հավասար է 1723-ի (107 + 1616 =
 = 1723), իսկ նախա ամսի մեկը՝ հունիսի 19-ին, ուստի դումարում ենք 1616:

Մետրոպ Սեթը (Սեթյանը) իր «Հայերի շնորհատանտան» անդրերն զրո-
 ված աշխատության մեջ բերում է Հնդկաստանի Ազրա թաղարի գերեզմանա-
 տանը գտնվող տապանաքարի հեռակալ արձանագրությունը (թարգմանում
 ենք անդրերեկից). «Այս է տապան Սամուելի, որդու Ջոհրար Բեկու Վախճա-
 նեալ ի 159 թուականին Աղարիայի»²⁷. Մետրոպ Սեթը Աղարիայի թվականին
 դումարել է 1615, նկատի ունենալով, անշուշտ, Սամուելի մահը մարտի 21-ից
 առաջ տեղի ունենալու փաստը:

Փիրզալմյանի հավաքած ձեռագրերի հիշատակարանների անտիպ ձե-
 ղովածով մեջ բերված է Աղարիա Ջուղայեցու թվականը պարունակող հե-
 տեղյալ հիշատակարանը. «Աւարտեցաւ ընդօրինակութիւնն ձեռագրիս ի թուա-
 բերական տումարի ՌՃՆ (1105) և ըստ նորում շրջանի ԽԱ (41), և ի գալտենն է
 կենարարին՝ ՌՈՅՁ (1656), և էլիցն Աղամայ ԻՁԱ (7081) ի հայրապետու-
 թեանն Յակոբայ»:

Հայկական մեծ թվականով ՌՃՆ-ն հավասար է 1656-ի (1105 + 551 =
 = 1656), արարչության թվականը հիշված է աղբյուրագրյան հաշվով, ուստի
 7081-ից պետք է հանենք 5425, կմնա՝ 1656, Ջուղայեցու ԽԱ թվականը հավա-
 սար է 41 + 1615 = 1656: Այսպիսով, ձեռագիրը զրգված է, անվիճելի, 1656
 թվականի մարտի 21-ից հետո:

²⁵ Աղարիայի թվականը լայն չափով չի օգտագործվել Հայաստանում:

²⁶ Հ. Տեր-Նովիցկանց, Պատմություն նոր Ջուղայու, հ. Ա, էջ 231:

²⁷ Mesrop Seth, Armentians in India, Calcutta, 1935, p. 127.

Նոր Ջուղան վերակառուցելու նպատակով թաղարի աչքի ընկնող 26 հայ
 խոջաներ համատեղ մի պայմանագիր են կնքել Աղարիայի 154 թվականին.
 «Գրվեցաւ թվին 154 նախայ 15»²⁸ - կարգում ենք դամանագրի վեր-
 ջում: Աղարիայի 154 թվականը հավասար է մեր ներկա թվականին 1770-ին
 (1616 + 154 = 1770), իսկ նախայ 15-ը՝ հուլիսի 3-ին:

1798 թվականին Կաղկաթյան սպված էֆիմերակի մեջ բերված է հոռ-
 մեական, հայկական մեծ, արարչության, հիշրայի և Աղարիայի թվականների
 զուգահեռ մի ցանկ, ուր առաջին սյունակում ներկա թվականի 1752-ը համա-
 ձայնեցված է Աղարայի 136-ին, հիշրայի 1165-ին, հայկական մեծ թվականի
 1201-ին և հրեից թվականի 5512-ին²⁹, Աղարիայի 136 թվականը հավասար է
 136 + 1616 = 1752, Հայկական մեծ թվականը հավասար է՝ 1201 + 551 = 1752,
 Հիշրայի 1165 թվականը հավասար է դարձյալ 1752-ի:

Նոր Ջուղայի ձեռագրերից մեկում հանդիպում ենք այսպիսի մի հիշատա-
 կագրության. «Թիւն մեծ ՌՃԱ (1722), փոքր թիւն ճէ (107) Երհան ժԸ (18)
 աղանն եկի Ասպահան, պատերազմեցաւ մինչի վեց ամիս և կէս, որ ի քառու-
 կերպան հարցի կիրակէին եմուս ի թաղարի և թախտ նստաւ, այսինքն՝ շա՛
 Մահմուդ»³⁰. Ըստ այս հիշատակագրության, շա՛ Մահմուդը գահակալել է
 հայկական մեծ թվականի 1171-ին, որը ներկա թվականով կլինի 1722-ին, Ա-
 զարիայի թվականով կլինի 107-ին, որը ներկա թվականով կլինի դարձյալ
 1722՝ 1615 դումարումով: Ներհան ամսի 18-ը հավասար է մարտի 25-ին, դար-
 նանամուսից հետո, ուստի 1616 դումարելու փոխարեն դումարում է 1615:

Նոր Ջուղայի հայկական ձեռագրական ձեռագրում մեջ գտնվող N 216
 ձեռագրում Հարությունը նրեցի թողած հիշատակարանից երևում է, որ նա ձե-
 ազրի ընդօրինակությունը ավարտել է. «Ի Թուականին Հայոց ՌԿԱ (1061),
 փոքր թվականին ՂԷ (97) դամայ ամսի ժէ. ունն (17)՝ նոյեմբերի Ա (1)» (թ.
 450ա)³¹:

Հայկական մեծ թվականի 1161-ը ներկա թվականով հավասար է 1712-ի
 (1161 + 551 = 1712), Աղարիայի թվականով 97-ը դարձյալ հավասար է 1712-ի՝
 1615-ի դումարումով (97 + 1615 = 1712), Ինչ վերաբերում է ամսավիճ, ապա
 նոյեմբերի 17-ին, իրոք եղել է դամա ամսի մեկը:

Մաշտոցի անվան մատենադարանի N 4515 ձեռագիրը զրգված է. «Ի Թուա-
 բերական տումարի ՌՃՆ (1105) և ըստ նորում շրջանի՝ ԽԱ (41) և ի գալտենն,
 կենարարին ՌՈՅՁ (1656) և յիլիցն Աղամայ ԻՁԱ (7081), ի հայրապետու-
 թեանն սեանն Յակոբայ» (թ. 466): «Եկենարարի» թվականը՝ ներկա թվականին
 է՝ 1656 + Հայկական թվականը մեծն է, որին դումարելով 551, ունենում ենք
 1656 (1105 + 551 = 1656); Արարչության թվականը՝ աղբյուրագրյանն է, որից
 անհրաժեշտ է հանել 5425. 7081-ից հանելով 5425, ստանում ենք 1656, Հի-
 շատակարանի Հակոբ կաթողիկոսը՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսն է, որը դար-
 ձակալել է 1655—1680 թվականներին: «Նորում շրջան»³¹ ասելով հիշատակա-
 գրից նկատի է ունեցել Աղարիայի թվականը. 41-ին դումարելով 1615 (և ոչ

²⁸ Մ. Տեր-Նովիցկանց, Պատմություն նոր Ջուղայու, հ. Ա, էջ 314:

²⁹ «Գրուած, որ կոչի էֆիմերակ», Կաղկաթ, 1798:

³⁰ Ս. Ա. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց նոր Ջուղայի ամենափրկելի վանքի,
 Վիեննա, 1970, էջ 748:

³¹ Օգտվել ենք Տեր-Ավետիսյանի ձեռագրաց ցուցակից:

³² Արմ. Սիրմեան, Մաշք ցուցակ հայերեն ձեռագրաց նորագույն ժամանակ հայաստանի,
 հ. Ա, էջ 33:

1616, նկատի ունենալով, որ մարտի 21-ից հետո է), ունենում ենք 1656 (1615+41=1656):

Սյուրմեյանի «Եմիրոպայի մասնավորներու առաջին հատորում նկարագրված № 20 ձևադրի մեջ Հակոբ քահանան թողել է հետևյալ հիշատակագրութիւնը. «Գրկեցաւ զիրս թվ[ի]ն ՌՁԹ (1132), փորթ թվ[ի]ն ԿԸ (68 դամայ ամսոյն Ա(1)): Հայկական թվականը հավասար է 1683-ի (1132+551=1683, Փորթ թվականը հավասար է 68+1615=1683-ի (1615 է դամարիւմ, որովհետև մարտի 21-ից հետո է):

Հովհաննես զրիւ Շարստանյանի թղթած մի հիշատակագրութիւնից երևում է, որ նա ծնվել է. «Թվին փրկի ՌՁԹ (1710) թ. օգոստոսի 25-ին, թվին Հայոց ՌՃԾԹ (1159), փորթ թվին ՂԵ (95), նագար Ը (8), որ զիր տարուն էր Ճ... պատկեր օրն ուրբաթ լուս շարաթ»²²: Հայկական մեծ թվականին դամարելով 551, ստանում ենք 1710 (1159+551=1710), որը համապատասխանում է հիշված «փրկական» թվականին: «Փորթ թվականը» Ագարիայի թվականն է, որին անհրաժեշտ է դամարել 1615, ստանում ենք 1710 (95+1615=1710): 1710 թվականին տարեգիրը, իրոր, կղել է «ԵՃ» տարր 0գոստոսի 25-ը համապատասխանում է նագար ամսի 8-ին: Այդ օրը սակայն կղել է «Ը» թի ուրբաթ լուս շարաթ, այլ՝ հինգշաբթի լուս ուրբաթ:

Ագարիայի ամսաթվերի վերծանութիւն գործը զյուրացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում բերել հայկական մեծ, Ագարիայի և ներկայումս գործածական թվականների համեմատական ախտապի:

Համեմատական ախտապի հայոց մեծ, հռոմեական և Ագարիայի ամսաթվերի

| Համարացի սրբապատ գամար | Տարեկան սեպտեմբերի սրբապատ | Ստանդարտ հայկական թվական | Ստանդարտ հայկական թվական | Ստանդարտ հայկական թվական | Ստանդարտ հայկական թվական | Ստանդարտ հայկական թվական | Ստանդարտ հայկական թվական |
|------------------------|----------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 11 24 | 1 10 24 | 1 10 24 | 1 9 24 | 1 9 24 | 1 8 24 | 1 8 24 | 1 8 24 |
| 2 12 25 | 2 11 25 | 2 11 25 | 2 10 25 | 2 10 25 | 2 9 25 | 2 9 25 | 2 9 25 |
| 3 13 26 | 3 12 26 | 3 12 26 | 3 11 26 | 3 11 26 | 3 10 26 | 3 10 26 | 3 10 26 |
| 4 14 27 | 4 13 27 | 4 13 27 | 4 12 27 | 4 12 27 | 4 11 27 | 4 11 27 | 4 11 27 |
| 5 15 28 | 5 14 28 | 5 14 28 | 5 13 28 | 5 13 28 | 5 12 28 | 5 12 28 | 5 12 28 |
| 6 16 29 | 6 15 29 | 6 15 29 | 6 14 29 | 6 14 29 | 6 13 29 | 6 13 29 | 6 13 29 |
| 7 17 30 | 7 16 30 | 7 16 30 | 7 15 30 | 7 15 30 | 7 14 30 | 7 14 30 | 7 14 30 |
| 8 18 1 | 8 17 1 | 8 17 1 | 8 16 1 | 8 16 1 | 8 15 1 | 8 15 1 | 8 15 1 |
| 9 19 2 | 9 18 2 | 9 18 2 | 9 17 2 | 9 17 2 | 9 16 2 | 9 16 2 | 9 16 2 |
| 10 20 3 | 10 19 3 | 10 19 3 | 10 18 3 | 10 18 3 | 10 17 3 | 10 17 3 | 10 17 3 |
| 11 21 4 | 11 20 4 | 11 20 4 | 11 19 4 | 11 19 4 | 11 18 4 | 11 18 4 | 11 18 4 |
| 12 22 5 | 12 21 5 | 12 21 5 | 12 20 5 | 12 20 5 | 12 19 5 | 12 19 5 | 12 19 5 |
| 13 23 6 | 13 22 6 | 13 22 6 | 13 21 6 | 13 21 6 | 13 20 6 | 13 20 6 | 13 20 6 |
| 14 24 7 | 14 23 7 | 14 23 7 | 14 22 7 | 14 22 7 | 14 21 7 | 14 21 7 | 14 21 7 |
| 15 25 8 | 15 24 8 | 15 24 8 | 15 23 8 | 15 23 8 | 15 22 8 | 15 22 8 | 15 22 8 |
| 16 26 9 | 16 25 9 | 16 25 9 | 16 24 9 | 16 24 9 | 16 23 9 | 16 23 9 | 16 23 9 |
| 17 27 10 | 17 26 10 | 17 26 10 | 17 25 10 | 17 25 10 | 17 24 10 | 17 24 10 | 17 24 10 |

²² ՄԱՄ ԱՆ. N 335 p. 262 p.

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|----------|----------|----------|----------|----------|----------|
| 18 28 11 | 18 27 11 | 18 27 11 | 18 26 11 | 18 26 11 | 18 25 11 |
| 19 29 12 | 19 28 12 | 19 28 12 | 19 27 12 | 19 27 12 | 19 26 12 |
| 20 30 13 | 20 29 13 | 20 29 13 | 20 28 13 | 20 28 13 | 20 27 13 |
| 21 31 14 | 21 30 14 | 21 30 14 | 21 29 14 | 21 29 14 | 21 28 14 |
| | | 22 31 15 | 22 30 15 | 22 30 15 | 22 29 15 |
| | | | | 23 31 16 | 23 30 16 |
| | | | | | 24 31 17 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|----------|----------|----------|----------|----------|----------|
| 1 7 24 | 1 9 24 | 1 8 19 | 1 8 19 | 1 7 19 | 1 7 19 |
| 2 8 25 | 2 10 25 | 2 9 20 | 2 9 20 | 2 8 20 | 2 8 20 |
| 3 9 26 | 3 11 26 | 3 10 21 | 3 10 21 | 3 9 21 | 3 9 21 |
| 4 10 27 | 4 12 27 | 4 11 22 | 4 11 22 | 4 10 22 | 4 10 22 |
| 5 11 28 | 5 13 28 | 5 12 23 | 5 12 23 | 5 11 23 | 5 11 23 |
| 6 12 29 | 6 14 29 | 6 13 24 | 6 13 24 | 6 12 24 | 6 12 24 |
| 7 13 30 | 7 15 30 | 7 14 25 | 7 14 25 | 7 13 25 | 7 13 25 |
| 8 14 1 | 8 16 1 | 8 15 26 | 8 15 26 | 8 14 26 | 8 14 26 |
| 9 15 2 | 9 17 2 | 9 16 27 | 9 16 27 | 9 15 27 | 9 15 27 |
| 10 16 3 | 10 18 3 | 10 17 28 | 10 17 28 | 10 16 28 | 10 16 28 |
| 11 17 4 | 11 19 4 | 11 18 29 | 11 18 29 | 11 17 29 | 11 17 29 |
| 12 18 5 | 12 20 5 | 12 19 30 | 12 19 30 | 12 18 30 | 12 18 30 |
| 13 19 6 | 13 21 6 | 13 20 1 | 13 20 1 | 13 19 1 | 13 19 1 |
| 14 20 7 | 14 22 7 | 14 21 2 | 14 21 2 | 14 20 2 | 14 20 2 |
| 15 21 8 | 15 23 8 | 15 22 3 | 15 22 3 | 15 21 3 | 15 21 3 |
| 16 22 9 | 16 24 9 | 16 23 4 | 16 23 4 | 16 22 4 | 16 22 4 |
| 17 23 10 | 17 25 10 | 17 24 5 | 17 24 5 | 17 23 5 | 17 23 5 |
| 18 24 11 | 18 26 11 | 18 25 6 | 18 25 6 | 18 24 6 | 18 24 6 |
| 19 25 12 | 19 27 12 | 19 26 7 | 19 26 7 | 19 25 7 | 19 25 7 |

Table with 6 columns and 10 rows of numbers, representing a calendar or date conversion table.

Ե. ՄԻԱԶԱՏՄԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿՎԻՐԱՎԱՆ ՃՇՏՈՒՄԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿՈՐԾՈՒՄ

Աղերեսս Քյուզանդացու կազմած երկուհարյուրամյա տոնական ցանկը վերջանալուց հետո, ինչպես ասել ենք, Աղերեսանդրիա քաղաքում 36 դիտնա- կաններ, էաս Աղերեսանդրացու դիտնություններ, կազմեցին 532 տարիների տոնացանկը Այդ նույն ժամանակ Կոստանդնուպոլսում Իրիոն Քյուզանդացի ա- նուետով մեկը կազմեց 532 տարիների մի այլ տոնացանկ, որը նման լինելով Աղերեսանդրիայում կազմածին, ուներ նաև մի փոքրիկ տարբերություն. 532 տարվա ընթացքում կար շորս տարի, երբ զատիկը սահմանված էր տարբեր օրերում. այդ տարիներին Իրիոն Քյուզանդացու տոնացանկում զատիկը սահ- մանված էր ապրիլի 6-ին, իսկ էաս Աղերեսանդրացու տոնացանկում՝ ապրիլի 13-ին, այսինքն՝ մեկ շաբաթ հետո: Ծարբերությունը առաջացել էր այն պատ- ճառով, որ Իրիոն Աղերեսանդրացու մոտ նախազատական լուսնի լրումը փո- խանակ կիրակի առափոյան հաշվելու, ընկնում էր շաբաթ երեկոյան: Քանի որ հայերը, որպես միաբնակ զավանսության քրիստոնյաներ, հետևում էին էաս Աղերեսանդրացու տոնացանկին, ուստի, նրանց համոզմամբ, Իրիոն Քյուզան- դացու զատիկ ժամանակի որոշումը սխալ էր: Այդ էր պատճառը, որ նրանք այդ զատիկն անվանել են «ծառզատիկ», այսինքն՝ «ծուռ զատիկ»: Խոսքը, իհարկև, 532 տարիների ընթացքում շորս անգամ պատահող զատական ու- բերի վերլուծումների մասին է:

Որոշակի հայտնի է, որ ծառզատիկներ եղել են հետևյալ թվականներին. 665, 750, 1007, 1102, 1197, 1292, 1539, 1634, 1729, 1824: (Մենք այստեղ վերցրել ենք 532 տարիների ոչ թե մեկ, այլ երկու և կեն պարբերաշրջանների): Փոազատիկները լինում են պարբերաշրջանի առաջին մասում՝ 95 տարիների իրարից հետո տեղադրված մեջ, որից հետո 247 տարիների ընթացքում ծառ- զատիկներ չեն լինում:

Տոմարական այդ աննշան տարբերությունը միշին զարբերում մեծ կրքեր

է բորբոքել և բուսն վեճների տեղիք ավել: Քանի որ հայերը, որպես աղերեսա- նդրյան տոնացանկին հետևողներ, գործուն մասնակցություն են ունեցել վե- ճերին, ուստի հայ մասնակցիներին իրենց պատմությունների և ժամանա- կագրությունների մեջ հաճախ են անդրադարձնում ծառզատիկներին: Չուղա- տիկները մեծ մասամբ հիշվում են ժամանակագրական ընդհանուր ֆունդ վրա՝ զուգահեռ տարվող պատմական իրադարձությունների կապակցությամբ, ուստի նրանք մեծ շահով օգնում են պարզելու այս կամ այն հեղինակի որդեգրած ժամանակագրական սկզբունքը՝ մեկ կամ երկու տարի առաջ ու ետ հաշվումով: Այդ նկատի ունենալով, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել ծառզատի- կի հիշատակությունների մի քանի փաստերի վրա և ուղղել որոշ անախրոնիզմ- ներ³²:

Ձմեռաթի ձևագրաց ցուցակում հրատարակված է 17-րդ դարի մի հեղինա- կի կազմած ծառզատիկների ցանկ, որի մեջ կան մի քանի սխալներ: Բերենք այդ ցանկը.

- «Հայոց թվականին Ժ (561) էր՝ պատառնաց Իրիոն զատիկն: Եւ ժամանակ էանց եղև ՃՁ (667)՝ պատառումն զատիկի: ՄԱ (752)՝ պատառումն զատիկի: ՆեԱԱ (992)՝ մուրեցյան Յույնք զզատիկն: ՇԱԱ (1082)՝ մուրեցյան Յույնք զզատիկն: ՇԱ (1101)՝ լույս երուսաղէմ ոչ վանեցաւ յաւուր շաբաթս, այլ՝ կիրա- կէի: Թ (9) ժամն ծառզատիկ արարին ամենայն ազգ, հայր և ասորիք ուղիղ կան:

- ՈեՁ (1197)՝ խանգարումն զատիկի: ՈՆԹ (1210)՝ պատառումն զատիկի: ԶԺԷ (1268)՝ տաս ազգ մուրեցյան զզատիկն: ՉԱԸ (1289)՝ մուրեցյան Յույնք զզատիկն: ՊեՁ (1397)՝ մուրեցյան Յույնք զզատիկն: ԶՁԸ (1539)՝ մուրեցյան Յույնք զզատիկն: ԻՁԳ (1634)՝ մուրեցյան Յույնք զզատիկն³⁴:

Ցանկում սխալներ են թույլ տրված հետևյալ թվականներում. ծառզատի- կը եղել է ո՛չ թե 752-ին, այլ՝ 750-ին, ո՛չ թե 992-ին, այլ՝ 1007-ին, ո՛չ թե 1082-ին, այլ՝ 1097-ին, ո՛չ թե 1101-ին, այլ՝ 1102-ին, ո՛չ թե 1268-ին, այլ՝ 1292-ին, ո՛չ թե 1289-ին, այլ՝ 1292-ին: Ինչ վերաբերում է 1210 և 1397 թվու- կանների տակ հիշված ծառզատիկներին, ապա այդ բացառաւայտ թյուրիմացու- թյուն է, որովհետև հիշյալ թվականներին և նրանց մտրիկ տարիներին ծառ- զատիկներ չեն եղել:

Ը. Տաշյանի կազմած Վրեննայի Մխիթարյանների ձևագրաց ցուցակում հրատարակված է № 417 ձևագրի պարունակած մի ժամանակագրություն, ո- րի մեջ ծառզատիկ է հիշված 1291 թվականին. «Թվին Չե (1291) մուրեցյան Յույնք և արարին ծառզատիկ, և յանըմ ժամանակին ի Կիլիկի երկիրն թագաւոր Հայոց են լուսլ մեր Հայոց ազգս երկու են բաժաներ՝ կէսը ընդ Յունաց են

³² Վերերս ծառզատիկներին նվիրված երկու հոդված լույս տեսավ Մ. Գրիգորյան, Նշյուտ Մաշտոցի անգլոս մատենագրութեան № 8550 ձևագրի պատճառների թվականի (տե՛ս «Հանգեց ածերեսս», 1967, էջ 323—326)։Ա. Կ. Սանջյան «Craziatki. Erroneous easter—a source of greco-armenian religious controversy». «Studia Caucasica» պարբերականի 1966 թ., № 2-ում։
³⁴ «Ցուցակ ձևագրաց Ձմեռաթի», էջ 172—173:

հետևիք և կհար ուղիղ են կացեր³⁵, Այդ ծնագատիկը, սակայն, եղել է ո՛չ թե 1291 թվականին, այլ 1292-ին:

Բ. Գուշակյանի կազմած Սերաստիայի ձեռագրերի ցուցակում հրատարակված մի հիշատակարանում ծնագատիկի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդվում. «Մուղաթտիկ որ կատինն՝ շաք տեսեր, հանս տեսաք թ. ՋՁԸ (1529)... սպրիլի 2 (6) հոռոմն զատիկ արաւ, թէ լրա կլնէ, շէր էլեր... սպրիլի ժԳ (13) ելաւ Հայոց ազգին»³⁶:

Իրականում այդ ծնագատիկը եղել է ո՛չ թե 1529 թ., այլ՝ 1539 թ.: Գուշակյանն, անշուշտ, շփոթել է հիշատակարանում զործ ամած «ձ» տառը «Ծ»-ի հետ:

Վ. Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրություններ» երկրորդ հատորում «Այս է թվական տակաց» վերնագրով ժամանակագրության շեշ ծնագատիկ է հիշված 1281 թ. «Թվին 2ժէ (1268) շարժ եղև յերզնկան, ի յօր կիրակէին՝ ժեմ (15 000) մարդ մեռաւ եւ ի սոյն ամի մուրեցան ժ (10) աղբ քրիստենա զատիկն»³⁷:

Իրականում այդ ծնագատիկը եղել է ո՛չ թե 1268 թվականին, այլ՝ 1289 թվականին:

Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրություններ» նույն հատորում «Ժամանակագիր է» խորագիր տնցող տարեգրության մեջ ծնագատիկ է հիշված 1291 թ.: Այնտեղ ասված է. «Ե թվին 2և (1291) ժ(10) աղբ քրիստոնէրն ծնցան ի սուրբ զատիկն, բայց Հայք և Ասորիք ուղևղ կացին: Եւ կաթողիկոսն ալըր Ստեփանոս և թագաւոր Հայոց Հեթում ընդ Յոյք արարին զատիկ յապրիլի 2 (6). և պատճառն էր այս, զի բազում հնարիք շանային զի միարանութիւն լիցի ընդ Յոյք և ոչ կարացին: Բայց ի Կեսարիոյ մինչև յարևելք ուղևղ արարին զգատիկն յապրիլի ժԳ (13)»³⁸:

Իրականում, ինչպես սակ ենք վերևում, ծնագատիկը եղել է 1292 թվականին:

Սամուել Անեցու, Մատթիոս Ուռհայեցու և միջնադարյան այլ հեղինակների մոտ կան թվագրված ծնագատիկներ մի շարք սխալներ, որոնց վրա կանգ են առել Մ. Օրմանյանը, Մ. Գրիգորյանը, Ա. Կ. Սանջյանը, որոնց անհրաժեշտ չենք համարում անդրադառնալ: Ձեռագրական ցուցակներում ևս նկատվում են նման անխորտիզմներ: Թվականների նկատվող որոշ շեղումների պատճառը հաճախ առաջանում է հայկական թվականի՝ ներկա թվականի հետ ունեցած զուգավորության անհամապատասխան լինելուց, ոչ բոլոր զեպրում էր, ինչպես սակ ենք, անհրաժեշտ է լինում դումարել 551, երբևմն պետք է լինում դումարել 550, երբևմն՝ 552, նույնիսկ՝ 553:

2. ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Արարչության» թվական ասելով նկատ է առնվում մեր երկրի սկզբնազորությունը՝ միջնադարյան տոմարագետների հաշվումներով: Սահմանվել է

³⁵ «Տուցակ ձեռագրաց Վիեննայի», էջ 871.
³⁶ «Տուցակ ձեռագրաց Սերաստիայի», էջ 35.
³⁷ «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 264.
³⁸ Նույն տեղում, էջ 149:

արարչության քաննից ավելի իրարից տարբերվող և ժամանակավորեց թվականներ: Բերեք նրանցից մի քանիսը՝ հաշվելով մինչև մեր թվականության սկիզբը³⁹:

- 3760—Հիւլև Ռարբու (հրեական)
- 4103—Հովսեփ Փլարիոսի
- 5026—Ասորական
- 5091—Եննանիոսի
- 5198—Յոթնասնից և եվսեբիոս Կեսարացու
- 5208—Կայսերական
- 5276—5277—Մովսես Սյունեցու
- 5281—Երակացու
- 5280—Աթանասի
- 5287—Գրիգոր Ասորու
- 5423—Աղեքսանդրյան
- 5492—5493—Անտիոքի
- 5500—Աֆրիկանոսի և Անանիոս Աղեքսանդրացու
- 5508—5509—Հոռոմական
- 5515—Հիպոդոզիոսի
- 5624—Կղեմես Աղեքսանդրացու
- 5680—Իրոն Բյուզանդացու
- 5967—5969—Հյուսիսիոսի:

Այս թվականներից հայ մատենագրության մեջ զործ են ամվել հիմնականում չորսը՝ յոթնասնից, կայսերականը, աղեքսանդրյանը, Երակացուները:

1. Արարչության յոթնասնից թվականի վերծանությունը

Այս թվականը յոթնասնից է կոչվում այն պատճառով, որ այն սահմանել են Աստվածաշնչի յոթնասնից կոչվող խմբագրության թարգմանիչ տոմարագետները: Այս թվականն օգտագործող հայ տոմարագետները Աղամից մինչև Քրիստոս հաշվում են 5198 տարի: Հակոբ Արիմեցին, Քովմա Մեծփնցու հասննարարությանը կազմած «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ, բննարկելով մի շարք դարաշրջանների սկզբնազորությունն ու տևողությունը, գալիս է այն կորակացության, որ արարչությունից մինչև Քրիստոս տևել է ԲՃՂԸ (5198) տարի⁴⁰: Պետք է սակայն նկատի ունենալ, որ հայ տոմարագետների հաշվումները հիմնված են քրիստոնեական հայկական թվականի հիման վրա, ուստի տրված արարչության թվականը ներկայումս զործածական թվականին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է 5198-ից բացի, նրանից հանել ավելի երկու տարի: Եթե զեպր տեղի է ունեցել ավելի թվականի սեպտեմբերից հետո⁴¹, անհրաժեշտ է լինում հանել երեք տարի: Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 129 ձեռագիրն ընդորինակված է. «...լիցն Ազամայ ի դրախտն մինչև առ մեզ հազարաց վեցից և

³⁹ Ներկա ժամանակագրությունը վերցրված է Մ. Զամչյանի «Պատմութիւն Հայոցի» երրորդ գրքի հավելվածից («Ժամանակագրութիւն», էջ 3—4):
⁴⁰ ՄԱԹ. Ան. № 2180, Բ. 342բ.
⁴¹ Յարարչության թվականի ամանորը հաշվվում է սեպտեմբերի մեկից:

չորից հարիսից, Երեսուն յանկեայ ամաթ (6430): Իսկ ի ծագմանը բանինն աստուծոյ հաղարի միոյ և երկուց հարիսից, Երեսուն և երկու (1232) յանկեայ ամթոյ: Եւ հայկազեան տումարիս վեց հարիսից և թմանասուն և ինն (679) ամաց»⁴², Չեռագիրը գրված է արարչութեան 6430-ին, որից հանելով 5198, ստանում ենք 1232, որից հանելով ավելի 2 տարին, ստանում ենք 1230, վերջինս համապատասխանում է հայկական թվականին՝ 679+551=1230, Հիշատակարանի քրիստոնեական թվականը հայկական թվաճաշվով է նրանից հանելով 2 թիվը, դարձյալ ստանում են 1230:

Աստվածատուր վարդապետի թողած նամակից երևում է, որ նա նրուսողն անաբնորդ է հրավիրվել «...յամի 2 Թ. երրորդի, ութ ձ. երրորդի քառասներորդի և վեցերորդ (6846) արարածոց ի սկզբանէ աշխարհի և Թ. երրորդ 2ձ. որդ և և. երրորդ է. երրորդի (1647) մարգանայուն Աստուծոյ և փրկութեան աշխարհի, և Թ. որդ 2. որդ 2. որդ չորրորդի (1094) արեթական տումարի և հայկազեան թուականի բազմեցար ի գահոյս աստուածադարդ և աստեղիւշնոր՝ սուրբ Բառնոյս...»⁴³, 6946-ից հանելով 5198, ստանում ենք 1648, որից հանելով ավելի դր երեք տարի (քանի որ սեպտեմբերի 1-ից առաջ է), ունենում ենք 1645 թվականը, եմ այդ համապատասխանում է հայկական թվականին (1094+7551=1645): Քրիստոնեական թվականը հայկական հաշվումով է, ուստի նրանից հանելով ավելիք երկուսը, ունենում ենք 1645 (1647-2=1645): Այս հաշվով, Աստվածատուրը գահակալել է 1645 թ.:

Վենետիկի Միսիթարյանների մատենադարանի մի ձեռագրում «Պատմոս Սահմանաց ցրոց» աշխատության թարգմանության թվականն է հիշված. «Ցեւանելոյն Աղամայ ի գրախտն մինչ ի յարատումն ցրոցս էր թիւ ժամանակի 367 (6504), զի յիւանելոյն Աղամայ մինչ ի Քրիստոս էր ԲՃՂԸ (5198) և 6 ծննդնէն Քրիստոսի մեծՉ (1316) ամ. իսկ թվ. մեծ Հայոց էր 2949 (763)»⁴⁴, Եթե այստեղ ուղղելու լինենք գրական մի սխալ՝ 367-ն՝ 368-ի ձևով, ապա բոլոր թվականները կհամապատասխանեն իրար. արարչության թվականը հավասար է 1314-ի (6514-5198=1316), որից հանելով ավելի 2-ը, կունենանք 1314: Այս համապատասխանում է հայկական մեծ թվականին՝ 2949-ին (763+551=1314): Կկատի ունենալով, որ հիշված քրիստոնեական թվականը հայկական հաշվով է և պիտի հանենք 2 միավոր, այն ևս կհամապատասխանի արարչության յոթանասնից թվականին (1316-2=1314):

Օճանեն Թմարցիցի գրիչը Արարության նահանգի Սերկիկի գյուղում ընդօրինակած «Տմանականի» ավարտման թվականն է համարում «...ի թուարեթութեան Հայկազեան տումարի ՊՂԱ (891) և կենարարին փրկիչն մերոյ Յիսուսի Քրիստոսի Թեոֆ (1444), և յիւանելոյն Աղամայ ի գրախտն ՅՈՒԹ (6642)»⁴⁵, Չեռագիրը գրված է արարչության թվականն է 1444 (6642-5198=1444), որից հանելով ավելի 2-ը, կստանանք 1442, Այս համապատասխանում է հայկական թվականին (891+551=1442): Հիշատակարանում զուգահեռ հիշվածք քրիստոնեական հայկական թվականն է, ուստի նրանից պետք է հանել 2 միավոր (1444-2=1442):

2. Արարչության կայսերական (բյուզանդական) թվականի վերածնությունը

Արարչության այս թվականը կայսերական է կոչվում, որովհետև գործածվել է Բյուզանդիայի կայսրության մեջ և նրա հարևան մի քանի երկրներում: Այն հիշվում է նաև Արարչության Կոստանդնուպոլիսի թվական, Տարեմուսն սկսում է սեպտեմբերի 1-ից: Այս դարադիտով թվագրված տարեթվերը մեր ներկա թվականին վերածելու համար անհրաժեշտ է տրված թվականից հանել 5508: Այս թվականը Զ-րդ դարից գործածական էր Բյուզանդիայում, իսկ այսպ օգտագործվել է Թուսաստանում⁴⁶:

Սուլթանի կնիզեցական պատմությունը և Սեղբեստրոսի վարքը Փիլոն Տիրակացին թարգմանել է. «Յամի վեցհազարերորդի երկերերորդի չորրորդի կենցաղում անցարեք որդէս ունի ժամանակագրութիւն սուրբ Սովի սառց կիկեզցի տիեզերական մաշարադարին Կոստանդնուպոլիսի»⁴⁷: Ըստ վերը բերված հաշվի, 6204 թվականից հանելով 5508, ստանում ենք 696 թվականը: Դիոնիսիոս Արիոպագացու «Յաղագս կենցեցական և երկնային բահանայութեան» աշխատությունը Մտեփանոս Սյունեցին թարգմանել է. «Ի վեցհազարերորդի երկերիերորդի քաներորդի ամի արարածոց աշխարհի... յերկերորդ ամի թագարութեան Փիլիպոսի»⁴⁸: Արարչության 6220 թվականից հանելով 5508, ստանում ենք 712: Փիլիպոսի երկրորդ տարին սակայն կոչվել է 711 թվականը:

Սերաստիայի Ս. Նշան վանքի N 2 ձեռագիրն ընդօրինակված է. «...ի թուս յախտեկես, որ է Աղամայ ՅՊԻԱ (6821). և ըստ հայկական թուականի 24Ի (762) յամսեանն յուլիս ժԼ (18) յաւոր չորերջարաթի և տանուտըն իտլոն»⁴⁹, Հայկական 762 թվականին դրսևորվով 551, ստանում ենք 1313 (762+551=1313), Արարչության թվականը՝ կայսերական թվականն է, որից հանելով 5508, ստանում ենք 1313 (6821-5508=1313): 1313 թվականին տանուտըն իրապես «Եռոյ»-ն է կոչել: Իսկ 1313 թ. հուլիսի 18-ին կոչվել է չորերջարաթի:

3. Արարչության աղբյուրային թվականի վերածնությունը

Այս թվականն աղբյուրային է կոչվում այնտեղ սահմանված լինելու պատճառով, այն կոչվում է նաև «Հիեթադիսիայի» և կամ «Հեսայան» թվական, Կկատի ունենալով, որ նրա կարգընդերից մեկն է հանդիսացել Հեղհարյուրյան տումարական աղյուսակը նախաձեռնող Էսա Աղբյուրագրոսին: Արարչության աղբյուրային դարադիտով թվագրված տարեթվերը մեր ներկա թվականին վերածելու համար անհրաժեշտ է տրված թվականից հանել 5423, իսկ քրիստոնեական հայկականը գտնելու համար՝ 5425:

⁴⁵ Գործածությունից դուրս հանվել 1700 թ. Պետրոս Մեծի հրովարտակով և նրա փոխարեն օգտագործվեց ներկա թվականը (տե՛ս Մ. Կ. Черепнин, Русская полсорофия, М., 1937, էջ 23-24):

⁴⁷ Կ. Յովսեփան, Յիշատակարանք Անադոլաց, Անիլիտա, 1951, էջ 50:

⁴⁸ Նույն տեղում, էջ 54:

⁴⁹ Թ. Գուլակեան, Տուցակ հայերն Անադոլաց Ս. Նշանի վանոց ի Սերաստիայ, էջ 5:

⁴² «Վենետիկի Անադոլաց ցուցակ», հ. Ա, էջ 572:
⁴³ «Տուցակ Անադոլաց նրուսողն», հ. Բ, էջ 131:
⁴⁴ Կ. Արիսան, Հայագրատում, էջ 525:
⁴⁵ «Եթե դարի հայերն Անադոլերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 231:

Վենետիկի Մխիթարյանների № 207 «Ճառերիտեր»-ը գրված է «...յնյանն-
լոյն Աղամայ ի փառակենցազ գրախաչէն ամբ ԶՌԷՃԿՁ (6766)»⁵⁰, ըս ծննդնը
կենարարին մերոյ ամբ ՌԳՃՆԳ (1343)⁵¹, 6766 թվականից հանելով 5425,
ստանում ենք 1341 թվականը։ Քրիստոնեական թվականը հայկական թվա-
հաշվով է, նրանից հանելով երկու տարիները, դարձյալ ստանում ենք 1341
(1343—2=1341), ընդու թվականներն էլ իրար համապատասխանում են. ձե-
ռագիրը գրված է 1341 թվականին։

Բրիտանական թանգարանի հայկական քամին № 19 ձեռագիրը գրված է.
«...յ Աղամայ մինչև ցայաբ ամբ 3ԶԿԷ (6967), իսկ հայկազեան թվականին ԶՂԱ
(991) և Ղոռմայնցոց մեծ թվականին ՌՄՂԳ (1294), և շրջանն, որ է փոքր թվա-
կան՝ ՄԼ (230) ի լերկիրս Բշնունեաց, որ այժմ նյաթ ապե»⁵², Այս հիշատա-
կարանն անզվերին թարգմանությամբ հրատարակել է հայագետ Յ. Քոնիքերը,
որը, սակայն, թվականները չի վերծանել, կարծիքով, թե ազավաղված են, Ի-
րականում, այստեղ ոչ մի ազավաղում գոյություն չունի։ Արարչության թվա-
կանը՝ աղբյուրանդրյան է, որից հանելով 5425, կունենանք 1542 (6967—5425=
=1542)։ Հայկական մեծ թվականը հավասար է 1542-ի (991+551=1542),
Հռոմեական մեծ թվականը հավասար է 1542-ի (1294+248=1542), Հռոմեա-
կան փոքր թվականով ևս հավասար է 1542 (230+532+532+248=1542)։
Բոլոր թվականներն էլ, ինչպես տեսնում ենք, համապատասխանում են իրար.
ձեռագիրը, անվիճելի, գրված է 1542 թվականին։

4. Արարչության Երրակացու թվականի վերծանությունը

Երրակացու հաշվումներով Արարչության սկզբից մինչև Քրիստոսի ծնուն-
դը նդել է 5281, իսկ քրիստոնեական հայկական թվականով՝ 5279 տարի։ Ա-
րարչության Երրակացու թվականը ներկա թվականին վերածելու համար նրա-
նից պետք է հանել 5281,

Քաղցես գրիր Կաֆայում «Հարանց վարքի» ընդօրինակությունն ավար-
տել է՝ «...յ Աղամայ 89ԺԱ (6711) ամի ըստ Անանիա վարդապետին Երրա-
կայնու, և ի ծննդննէ կենարարի փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌնԼԲ
(1432)... և թվին Հայոց ըստ արեթական տօմարի ՊԼԹ (879)»⁵³, Հայկական
մեծ թվականով ձեռագիրն ընդօրինակված է 879-ին, որին դումարելով 551,
ստանում ենք 1430 թվականը, Հիշված քրիստոնեական 1432 թվականը հայ-
կական թվահաշվով է, որից հանելով ավելի երկու տարի՝ ստանում ենք 1430,
Արարչության Երրակացու 6711-ից հանելով 5281, ստանում ենք դարձյալ
1430 (6711—5281=1430)։ Այսպիսով, երեք թվականներն իրար համամաշ-
ն են. ձեռագիրը գրված է 1430 թ.։

Է. ՈՂԻՄՊԵՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ողիմպիական թվականը հունական է և կապված է իազդերի հետ. հին
հույները սովորություն ունեին շոր տարին մեկ հավաքովի Ողիմպիա լեռան
ստորոտը մրցութան, այդ անունով էլ կոչվել է թվականը։ Առաջին ողիմպիա-
կոց տեղի է ունեցել 776 թվականի հուլիսի մեկին մ. թ. ա.։ Ողիմպիաից թվա-
կանով թվաքանիս տարեթվից բացի նշվում է նաև՝ թե նրա շոր տարիներից
որի ժամանակ է տեղի ունեցել տվյալ իրադարձությունը։

Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրության» մեջ, որը մեզ է հասել հա-
յերեն թարգմանությամբ, սելևկյանների դեմ պարթևների տարած հաղթանա-
կի թվական է հիշատակված 132 ողիմպիաից երրորդ տարին մ. թ. ա.⁵⁴, 131-ը
բազմապատկելով շորով, ստանում ենք 524, որին դումարելով երեք տարի-
ները ստանում ենք 527, 776-ից հանելով 527-ը, ստանում ենք 249։ Քանի որ
ընդունված է, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել հուլիսի 1-ից առաջ,
ուստի այն պետք է հաշվել 250-ին մ. թ. ա.։

Հովհաննես Իմաստասերն իր ժամանակ տեղի ունեցած արեգակի խա-
վարման թվական է հիշել «ՆԶԳ (473) ողիմպիադի տասջին տարին»։ 472-ը
բազմապատկում ենք շորով, ստանում ենք 1888, նրան դումարում ենք մեկ
տարին, ստանում ենք 1889, որից հանելով 776, ստանում ենք 1113։ Ըստ Հով-
հաննես Իմաստասերի տեղեկության, այդ խավարումը տեղի է ունեցել նա-
վասարդի 27-ին, որը շարժական տոմարով հավասար է մարտի 19-ին։ Աստ-
ղագիտական անվիճելի տվյալներով հայտնի է, որ 1113 թվականի մարտի
19-ին իրար տեղի է ունեցել արեգակի խավարումը⁵⁵։

Հայ ժամանագրության մեջ պատահում է, որ ողիմպիադան ընդունում
են ընդհանրապես իբրև շոր թվանշան՝ առանց կապելու ողիմպիական թվա-
կանի հետ։ Այսպես, օրինակ, Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն նա-
հանգին Սիրական» աշխատության ավարտման թվական է հիշում «ՃԶԶ (186)
ողիմպիադին և յերկրորդ ամիսն, որը նդել է 1297 թ.։ Այստեղ սողումպիադը»⁵⁶
պատմիչը դործ է ամեն ուղղակի շորի նշանակությամբ, որին անհրաժեշտ է
դումարել հայկական 551 թվականը, կունենանք 1297 (186×4+2+551=
1297)։

Ը. ՀՈՒՄԵԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մատենագրության մեջ դործ են ամփել նաև հռոմեական մեծ ու փոքր
թվականները։ Այս թվականները հռոմեական են կոչվում, որովհետև նրանց
սկզբնավորությունը կապում են Հռոմ քաղաքի ավանդական հիմնադրման
հետ։ Հիշատակարաններում այս թվականը երբեմն կոչվում է նաև «Հռոմեական
թվահաշիվ» անունով, անշուշտ, հռոմեական հասկանալու իմաստով։ Ըստ որոշ
տոմարագետների հաշվումների, Հռոմը հիմնադրվել է 753 թվականին մ. թ.
ա.։ Մեր թվականության 247-ին լրացավ առաջին հազարամյակը և 248 թվա-
կանին նոր հազարամյակի սկիզբը գրվեց։

⁵² Տե՛ս «Եւանձի Պատփիկայ Կեսարացոյ ժամանակաց երկամանայ, հրատ. Մ. Անդ-
բեանց, Վենետիկ, 1818, էջ 232։

⁵⁴ Տե՛ս Ն. Ս. Բաղլյան, Օրացույթի պատմություն, էջ 492։

⁵⁵ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիրական, Քիօն, 1910, էջ 807։

⁵⁰ «Յուրակ Անագրաց Վենետիկի», հ. Բ, էջ 174։

⁵¹ F. C. Conybeare, A Catalogue of the atmenian manuscripts in the British Mu-
seum, London, 1913, p. 34.

⁵² «Յուրակ Անագրաց Օրացույթի», հ. 9, էջ 110։

Հոռոմեական թվականը մեր ներկա թվականին վերածելու համար, եթև նազմասարգից առաջ է, անհրաժեշտ է ավելացնել 247, իսկ եթև նազմասարգից հետո է, պետք է դումարել 248:

Ստեփանոս Ասողիկի պատմութեան շարադրանքը վերջացել է. «...բայ Յունաց թուականին ի Փիլիպպոս կայսերէ՛ ամբ 207 (757), և բայ հայերն շալոյ թուականիս մերոյ՛ ամբ 453 (453)»⁵⁶: Հայկական 453-ին դումարելով 551, ստանում ենք 1004 թվականը: Հոռոմեական 757-ին դումարելով 247, ստանում ենք զարձայ 1004 թվականը: Այսպիսով, Ասողիկի իր պատմութեանը նախաբանը է 1004 թվականին:

Ներսես Շնորհալուց զավանորանական մի երկում գրված է.

«Ի թիւ եօթանց տանց հարիւրոց,
Կատարեցաւ բանս հաւատոց:
Ի վնց հարիւր թուական Հայոց,
Յինքն հարեւր շորք Հոռոմոց»⁵⁷:

Այնպատկերով գրված է հայկական թվականի 600-ին (600 + 551 = 1151): Հոռոմեական 904-ը նախասար է 1151-ի (904 + 247 = 1151), երկու թվականներն էլ համապատասխանում են իրար:

Հոռոմեական փոքր թվականը կազմված է մեծ թվականից՝ վրան ավելացրած 532 բուրդի շրջանը, այսինքն՝ 780: Վերծանութեան ժամանակ պետք է նկատի ունենալ, որ եթև իրացածութեան տեղի է ունեցել նազմասարգի մեկից առաջ, պետք է դումարել 779, իսկ եթև հետո է՝ 780:

Մխիթար Գոշի «Գառաստանաբիրքը» գրվել է «...ի թուականութեանս Հայոց ՈՒՄ (633) և շրջանին երթալոյ ի բաց մԱ (101) որ կոչի փոքր, իսկ Հոռոմին նն (405)»⁵⁸: Ձեռագրի գրութեան հայկական 633 թվականը հազմասար է 1184-ի (633 + 551 = 1184): Հայկական փոքր թվականով 101-ը հազմասար է զարձայ 1184-ի (101 + 1083 = 1184): Հոռոմեական թվականներից այստեղ հիշված է փոքրը՝ 405 + 779 = 1184-ի, փոքր թվականը հազմասար կլինի 1184-ի:

Մասնագրաբան Մ 5602 ձեռագրիցը պարունակում է Օրբելյանների ապրտամարտութեան մասին անշափ արժեքավոր Քորալքեցու հիշատակարանը, որ գրված է «...ամի Ուորդի եման առ քսանի (627) թուարեութեանս Հայկական քրոնիկոնիս, իսկ նորոյ շրջանի իննսնի և շորսից և (94) ի կենարարին մերոյ ձեռգեկնէ հազար և հարիւր եմանասուն և ինն (1179) ամացն շՔր-բազալոյթիւնը: Իսկ Հոռոմին շրջանի երեք հարիւր իննսուն և ութ (398) էին թուանգալութիւն ամաց»⁵⁹: Ձեռագիրը գրված է հայկական մեծ թվականի

627 + 551 = 1178, հայկական փոքր թվականի՝ 94 + 1084 = 1178, հոռոմեական փոքր թվականի՝ 398 + 780 = 1178: Ինչ վերաբերում է թրիստոնեական 1179 թվականին, այս ան 552 դումարելու հաշվով է: Պետք է նկատի ունենալ, որ մինչև 1320 թ. հայկական և թրիստոնեական թվականի տարբերությունը կարող էր լինել ինչպես 551, այնպես և՛ 552. վերջինս, երբ զեղբոր տեղի է ունեցել հայկական ամանորից առաջ, իսկ 551, երբ՝ ամանորից հետո է:

Ակաց. Շ. Օրբելու «Գիտան հայ վիճագրութեան» I հատորում Անիի Մայր տաճարի արձանագրութեան մեջ կառուցման ժամանակի մասին սոված է.

«Ի . ՆՄ : Ք[ՈՒՄ] ԱՅՅՈՑ ՄԹՔ Ք[ՈՒՄ] ՀՈՐԹՈՑ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԱՄՍԱԿԱՍ
ԵՒ ՀՈՐԹՈՐ ՏԻՆ ՍԱՐԴՍԻ ԱՅՅՈՑ ԿԱՌԱՂԿԱՍԻ ԵՒ Ի ՄԵՆՔԱՆ ՔԱՅԱՌՈՐԹՅԱՆ
ԳԱԿԱՆ ԱՅՅՈՑ ԵՒ ՎՐԱՆ ՇԱՀՆԵԱՅ ԵՍ ԿԱՏԱՐԱՆԹԷ ԱՅՅՈՑ ԹԱԿՈՐԷ, ԳՈՒՍՐ ՎԱ-
ՍԱԿ ՍԻՆԵՍԱՍ ԹԱԿԱՌԻ ՏՈՂԻՄՈՒԹԻՒՆ ԱՅ... ԵՄԵՆԻ ԶՍԻՐ ԿԱՌԱՂԿԱԿ...
Ի ՎԵՑԹԱՆ ԵՒ Դ: ԱՄԱՆ ԱԿԱՐԱ ԹԹԹ: ԱՄԻ ՄԱՐԿԱՆԱՍ ԱՄՍԱԿ ԲԱՄԻ :ՉԹԹ: ԱՄԻ
ՀԱՄԱՆԱՍ Ի ՔՐԻՍՏՈՍ ԱՅՅՈՑ...»⁶⁰:

Հրապարակված այս բնագրում նկատվում է թվանշանների երեք սխալ. «Ի ՆՄ, Ք[ՈՒՄ]» պետք է ուղղել «ՆՄ», վերջին «Ք»-ն թուական բառի առաջին տարր է, այլ թվականի վերջին միավոր թվանշանը (ճիշտ վերծանել է Ալիշանը, Եիր. 67): Հոռոմեական թվականը՝ «ՄԹՔ» արձանագրութեան մեջ սխալ է, պետք է լինի «ՄԻՔ»: Եվ վերջում լուսավորչի թվականը «ՉԹԹ» պետք է լինի ՉԹԹ (ճիշտ վերծանել է Ալիշանը, Եիր. 67): Այս ուղղումները կատարելուց հետո արձանագրութեան թվականները վերծանվում են:

Արարչութեան թվականը աղբյուրային զարահաշվով է, որից անհրաժեշտ է հանել 5423. 6433-ից հանելով 5423, ստանում ենք 1010, սրանից պետք էլ զուրահանել ավելիքը երկու տարիները:

Հայկական թվականն ուղղված ձևով 459 է, որին դումարելով 551, ստանում ենք 1010 (459 + 551 = 1010):

Քրիստոնեական թվականը՝ ԹԹԹ (1012), հոռոմեական հաշվով է, որից հանելով ավելիքը 2 տարին, ստանում ենք 1010:

Հոռոմեական թվականն ուղղված ձևով ՄԻՔ (229), դումարում ենք 781 (մեկ տարի ավելումով՝ կապված ամանորի հետ), ունենում ենք զարձայ 1010 (781 + 229 = 1010):

Եվ վերջապես, լուսավորչի թվականը 299 հաշվով է, որին դումարելով 711-ը, ունենում ենք 1010 թվականը:

Այսպիսով, անվիճելի պարզվում է, որ Անիի Մայր տաճարը կառուցված է 1010 թվականին⁶¹:

Ք. ՎՐԱՆ ՔՐՈՆԿՈՆՆ

Հայերեն թարգմանական զրականութեան մեջ մեկ-մեկ հանդիպում է վրացական մեծ ու փոքր երեքիկոն թվականների գործածություն: Վրաց թրոնիկոնի մեծ թվականը (այսպես կոչված 13-րդ շրջանը) ներկա թվականի վերածնու համար անհրաժեշտ է դումարել 780⁶²: Այսպես, քրոնիկո-

⁵⁶ Ստեփանոսի Ասողիկան Պատմութեան տիեզերական, ՍՊԲ., 1885, էջ 285:
⁵⁷ Պետկե Շնորհալու, Բանք չափա, Վենետիկ, 1830, էջ 223—224:
⁵⁸ 2ՊՄ Անու. Մ 3602, թ. 270ր (հմմտ. «Մխիթարայ Գոշի Գառաստանաբիրք Հայոց», Տրատ. Վ. Բատտանեացի, Վաղորչագատ, 1880, էջ 70):
⁵⁹ ՄԱՄ Անու. Մ 5602, թ. 265 ր: Այս արժեքավոր հիշատակարանը առաջին անգամ հրատարակել է Գ. Հովսեփյանը «Տիշտակարանը» ձեռագրացի մեջ 1951 թ.: Հաջորդ տարին այն հրատարակել է Վ. Հակոբյանը՝ ծանոթ շիկիով Հովսեփյանի հրատարակութեան հետ (տե՛ս Վ. Հակոբյան, Գաղիք Քորալքեցու հիշատակարանը՝ ազգայնական «Եւրպ. ՍՍՀ ԳԱ Տեղեկագրի» 1952 թ., Մ 3-ում, էջ 113—121): Այդ հիշատակարանին անընդհանրելի ենք նաև մեյք «Հայ գրի և գրութեան պատմութեան» մեջ, էջ 256:

⁶⁰ «Գիտան հայ վիճագրութեան», Անի քաղաք, կազմեց Չ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 35:
⁶¹ Այս հիշատակարանի մասին տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանը ձեռագրաց, էջ 505:
⁶² Քրոնիկոնի ձագման, աղբյուրների ու գործածութեան հանգամանակից քննութեան տե՛ս Գ. Հովսեփյան, Մատենադարանի հրատարակչության կողմից, Երևան, 1966, էջ 325—335:
9—1196

ևի 343 թվականին Դավիթ Վերաշինող թագավորը օգնեց հայերին ազատագրելու Անի քաղաքը և կոտորեց Ալի-Ասլանի զորամասերին⁶³։ Գեպը տեղի է ունեցել 1123 թվականին. բրոնիկոնի 343-ին գումարելով 780, ստանում ենք 1123,

Գեորգին վերջին Անին բրոնիկոնի 380 թվականին և ձերբակալեց Սալգուիսին։ Դեպը ներկա թվականով տեղի է ունեցել 1160-ին (380+780=1160)։

Վրաց բրոնիկոնի փոքր թվականը (14-րդ շրջանը) ներկա թվականի վերածելու համար անհրաժեշտ է գումարել 1312։ Այն կազմված է նախկին 780 թվականի վրա գումարած 532 պարբերաշրջանը։

Եւս Իսմայիլի որդի շահ Քահանազը թագավորեց բրոնիկոնի 190-ին⁶⁴։ Բրոնիկոնի փոքր թվականով 190-ը հավասար է 1502-ի (190+1312=1502)։ Սուլթան Մուրադը Երևանը գրավեց բրոնիկոնի փոքր թվականի 325-ին⁶⁵։ Բրոնիկոնի փոքր թվականը գտնելու համար արված թվականին գումարելով 1312, ստանում ենք 1637։

Ժ. ՀՈՐԵՆԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հորելյանն ընդգրկում է հիսուն տարվա մի շրջան և հայ մատենագրության մեջ գործ է ածվել գլխավորապես տոմարական աշխատություններում ու ծածկագիր հիշատակարաններում։

Մտփանոս գրիչը Տեղրանակերտում իր ընդօրինակած ձեռագրի թվակալեր հաղորդել է հիշատակարանի հետևյալ քառյակում.

Եթազրեցաւ գիրս սորա
Ի թվականիս մեր Հայկազնեայ,
Քսան և մեկ յորելենայ
Նւ ութ թիւ յաւել վերա⁶⁶։

Հորելյանն ընդունելով հիսուն տարվա շրջան, ձեռագիրը գրված կլինի 1609 թվականին (21×50+8+551=1609)։

Քորոս գրիչը Կարինում ընդօրինակած ձեռագրի թվականի մասին հետևյալ տեղեկություն է հաղորդում.

Այս հրաշգան մեծի տառիս,
Քեզ երանի թէ հանդիպիս...
Հազար, հարիւր, յորելենիս,
Տասն և հինգ թիւ այլ ի նոյն յոռիս⁶⁷։

Վերածելովու է. 1000+100+50+15+551=1716։

Փարիզի Ազգային մատենադարանի հայկական բաժնի № 61 ձեռագիրը գրված է եռասյակ կաֆայեցու կոչմից.

Ե՛ թուականութեանս հայկազուն սեռի
և յարեթական տումարի,
քսան և երկու յորելենի

⁶³ Տե՛ս Լ. Մելիսեր-Քելի, Վրաց արքայազնները Հայաստանի և հայերի մասին, Շ. Բ. Կ. րևան, 1946, էջ 37։

⁶⁴ Տե՛ս Եռլեյն տեղում, էջ 110։

⁶⁵ Տե՛ս Եռլեյն տեղում, էջ 113—114։

⁶⁶ ՄԱՄ ձեռ. № 9041, Բ. 125ա։

⁶⁷ ՄԱՄ ձեռ. № 8159, Բ. 157բ։

Նւ միակ եւթն և տասնեկէ⁶⁸։

Քսաներկու հորելյանը հավասար է 1100-ի, նրան գումարելով 17 և հայկական թվականը, կունենանք 1668 թվականը (50×22+17+551=1668)։

Անթիլիասի կաթողիկոսարանի № 10 ձեռագրի թվականն է՝

Ե՛ թուականիս Հայոց բասն յորելենի,
Նւ հարեւորդի, հեղակ հեղի,
Քիւ Արամանս թովանդակի⁶⁹։

Քսան հորելյանը հավասար է 1000-ի, նրա վրա ավելացրած 100 և «հրեղակ հեղի» ու հայկական թվականը՝ 551, ընդհանուրը կլինի 1676։

ԺԱ. ԻՆԴԿԻՏԻՈՒԻ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինդիկտոն է կոչվել 15 տարվա շրջանը։ Այն սկսել է գործածվել 313 թվականից. առաջին ինդիկտոնը եղել է 313—328 թվականներին, երկրորդը՝ 328—342 և այսպես 15 տարի հաջորդաբար շարունակվել։ Ինդիկտոնը մեր մատենագրության մեջ օգտագործելիս հիշվում է նաև, թե քանիերորդ ինդիկտոնն է՝ սկսած 313 թվականից, և ինդիկտոնի բանիերորդ տարին է։

Մատենադարանի № 906 ձեռագրի ընդօրինակման ժամանակի մասին հիշատակարանում ասված է. «Գրեցաւ աստուածագիծ պատգամս այս ի թուականիս Հայոց, յարում ՆՂԵ էր, ի խնդիրստինն Հոռոմոց յերեքասաններորդ ամին, ի թագաւորութեանն Մոնամախոս կայսեր, իսկ մեր յուսուտութեանս եւթն հարիւր և քառասուն և չորս»⁷⁰։ Չեռագրիցը գրվել է 1046 թվականին, հայկական թվականով 495+551=1046-ին։ 1046 թվականին իրոր եղել է ինդիկտոնի 13-րդ տարին (1046—313=733; 15, մեացրողը կլինի 13)։ Այդ թվականը համընկել է Կոստանդին Մոնամախի զահակալության տարիներին (նա զահակալել է 1042—1053 թթ.)։ Լուսավորչի թվականն էլ այստեղ հիշու կարող է լինել, և թե հաշվելու լինենք 302 թվականից։

Ինդիկտոնը տասնհինգ տարիներ շրջանի համար շատ է օգտագործվել, ինչպես նշեցինք, հայկական հիշատակարաններում և ծածկագիր թվականներին մեջ։

ԺԲ. ԳԻՌԿԵՆՏԻԱՆՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գիռկենտիանոսի էրան կամ թվականությունը կապված է հոռոմեական կայսեր զահակալության առաջին տարվա հետ, որը տեղի է ունեցել 284 թվականի օգոստոսի 29-ին։ Եթե թվագրված իրադրությունը տեղի է ունեցել օգոստոսի 29-ից առաջ, արված թվականին գումարում ենք 283, իսկ եթե տեղի է ունեցել օգոստոսի 29-ից հետո՝ 284։

Հովհաննես Իմաստասերը վերնում առկոչված 1113 թվականի մարտի 19-ի խալաթման զուգահեռ թվականների մեջ հիշել է. «Գիռկենտիանոսէ՛ ՊՂ (830)

⁶⁸ F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, p. 30.

⁶⁹ Անթիլիասի ձեռ. № 10, Բ. 122ա։

⁷⁰ Գ. Լուսեֆյան, Տիշատակարանք ձեռագրաց, էջ 230։

ամ»։ Տրված 830 թվականին դամարելով 283, ստանում ենք 1113, որը և իր-
վին համապատասխանում է արեգակի խափարման համար կատարված մյուս
բոլոր հաշվումներին։

ԺԳ. ՍԵԼԵԿԿՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մատենագրության մեջ սակավազակ ոգտագործված է սելեկյան թվա-
կանությունը, որի սկզբնավորությունը կապում են Սելեկիա քաղաքի հիմնա-
դրումն հետ (312 թվականի հոկտեմբերի 1), եթե թվականը թվազրված է
հոկտեմբերի 1-ից առաջ, արվածից հանում ենք 312, իսկ եթե հոկտեմբերի
1-ից հետո է՝ 311։

Վերևում հիշված արեգակի խափարումը տեղի է ունեցել սելեկյան 1425
թվականին, 1425 թվականից հանելով 312, ստանում ենք 1113 թվականը, որը
գարձյալ համապատասխանում է կատարած մյուս հաշվումներին։

**ԺԿ. ԲԵՍԵՐՍՏՈՆԻ, ԽՂՈՍԻ, ՏԳՈՆԻ ԵՎ ՆՈՆՈՍ ԿՈՉՎՈՂ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հայ տոմարական գրականության մեջ և հիշատակարանների ծածկագրի-
քում բնութհատոնն ոգտագործվում է 5 տարվա շրջանի համար, ազոնը՝ 10-ի,
իդոսը՝ 8-ի և նոնոսը՝ 5-ի։

Նրուսաղմի Ս. Հակոբյանց մատենագրանի № 1119 ձեռագրի գրել Ար-
թուսը կուղղուամ Ավագ Գաղատացու համար ընդօրինակած ձեռագրի հիշա-
տակարանում գրույթյան թվականի մասին հետևյալ տեղեկությունն է հաղոր-
դում. «Յամի երեսներորդի, առաջներորդի յարեկանի և ընդիկատնի երկրորդի
[ը]՝⁷¹ բնսքիստոնի և միոյ զիմպիաթի թուարբութեան ժամանակի մարդե-
զութեան փրկչի, նաև բոս համարոյ յարեթազին տումարի հարիւր քսան և
հինգ ինզոսի ութներորդ նոնոսի, երեք յարարարդեալ ամի եղև սկիզբն և
աւարտուն գրե»⁷²։

Փրկչի մարդեզության, այսինքն՝ ներկա թվականը վերծանվում է. 31 հո-
բլյանը հավասար է 1550-ի (31×50=1550), նրան գումարած երկու ինդիկ-
սոնն՝ 30 (15×2=30), գումարած դարձյալ 2 բնսքիստոն, այսինքն՝ 10
(5×2=10) և գումարած մեկ ողիմպիազ՝ 4, Գումարը ստանում ենք 1594
(1550+30+10+4=1594)։

Հայկական թվականը վերծանվում է. 125 իդոսը հավասար է 1000-ի
(125×8=1000), նրան գումարած 8 նոնոս, այսինքն՝ 40 (8×5=40), գումա-
րած ևս 3 («յնքեր յարարարդեալ») և հայկական թվականի տարբերությունը՝
551, ստանում ենք դարձյալ 1594 (1000+40+3+551=1594)։

Այսպիսով, պարզվում է, որ Արթուս գրիչն իր ձեռագիրը գրել և վերջա-
րել է 1594 թ.։

Ն. Աղոնցը իր «Дионисий Фракийский»-ում հրատարակել է վենետիկի
Սխիթարյանների № 990 ձեռագիր քերականության հիշատակարանը, ուր գրու-

⁷¹ Գղարյանի հրատարակության մեջ «Ե» բայց է թողված, որն, առնչւոյ, գրական և կամ
ուղղագրական սխալ է։

⁷² «Յույցակ ձեռագրաց նրուսաղմի», հ. Գ, էջ 182.

թյան թվականի մասին հետևյալն է ասված. «Յամի երեսներորդի երկրորդ
երրորդի յարեկանի միոյ բնսքիստոնի մին զիմպիազի թուարբութեան ժա-
մանակի մարդեզութեան փրկչի, նայ և բոս համարոյ յարեթազին տումարի
հարիւր քսան և ութ (исправлено сверху) երեսուն և երկու» ինզոսի երկրոր-
դին ամի եղև սկիզբն և յաւարտուն գրի, որ է սումար և բերական հետ երկու-
րին ի մի տեղ և մի կապ, յամտան հայոց ահկի, ազոնի միոյ նոնոսի, յեր-
բայեցոց յամտին թամուզի, ինզոսի, միոյ ողիմպիազի հոսմայեցոց յամ-
տանն յուլին առաջնունն աւուր շրթի ժամի (20)»⁷³։

Աղոնցը զմիարացել է վերծանել թվականը և թողել է հետևյալ ծանոթա-
գրությունը. «Չեռուզորում կա Հակոբ գրչի հիշատակարանը՝ թվականի ցուցու-
մով, բայց, գծրախտարար, այդ ցուցումն այնքան անհարկ է և անհասկա-
նալի, որ թվականի հարցը մնում է մեծ կասկածանքի տակ»⁷⁴։

Մեկ հայտնի տոմարական հաշվումների հիման վրա փորձենք վերծանել
այս հիշատակարանի թվականները։ Չեռուզորի գրչության տարեթիվը ներկա
թվականով 32 հորեկյան է, մեկ բնսքիստոն և մեկ ողիմպիազ՝ 32 հորեկյա-
նը հավասար է 1600-ի (32×50=1600), նրան գումարած մեկ բնսքիստոն, որը
հավասար է 5-ի, և մեկ ողիմպիազ, որը հավասար է 4-ի, գումարը հավասար
է 1609-ի (1600+4+5=1609), Հայկական թվականով 132 իդոս է (հիշան
ուղղվածն է), նրան գումարած երկրորդ տարին, իդոսը 8 է, 132 իդոսը հա-
վասար է 1056-ի (132×8=1056), նրան գումարած հայկական թվականի
տարբերությունը՝ 551, և երկու տարեթիվը («երկրորդ ամին»), դարձյալ ունե-
նում ենք 1609 (1056+551+4=1609)։

Կարևոր է այստեղ սմասթվերի և շարաթվա օրվա հիշատակությունները,
որոնք հնարավորություն են տալիս ստույգելու մեր վերծանության ճշտությու-
նը։ Հիշված է երեք ժողովրդի ամսաթիվով՝ հայկական, երբայական և հունեա-
կան, Հայկական ահկի ամսի մեկ ազոնն է և մեկ նոնոսին, ազոնը՝ 10 թվա-
նշան է, իսկ նոնոսը՝ 5, ուրեմն եղել է ահկի 15-ին, Նբրայական թամուզ ամսի
մեկ իդոսին է, այսինքն՝ 8-ին և մեկ ողիմպիազին՝ 4-ին, ուրեմն՝ երբայական
թամուզ ամսի 12-ին է եղել⁷⁵, Հունեակացի պարզ է ասված՝ «յուլի առաջ-
նունն», այսինքն՝ յուլիսի մեկին։ Անշարժ տոմարով հուլիսի մեկը համապա-
տասխանում է թամուզ ամսի 12-ին, Հայկական ահկի ամսի 15-ը շարժական
տոմարով դարձյալ համապատասխանում է հուլիսի 1-ին։ Տոմարական ան-
վիճելի հաշվումով 1609 թվականի հուլիսի մեկին իբրև եղել է շարաթ օր։ Այս-
պիսով, պարզվում է, որ վենետիկի № 990 ձեռագիրը գրված է 1609 թ. հուլիս
ամսի 1-ին, երկույան ժամի 8-ին։

Հակոբ գրիչը իր բնգործական ձեռագրի գրչության տարեթիվ հայտնի է
հիշատակարանում հետևյալ հաշվումով. «Յամի երեսներորդի և երկրորդի յո-
րեկանի, երկու նոնոսի և միոյ զիմպիաթի թուարբութեան ժամանակի մար-
դեզութեան փրկչի, նայև բոս համարո յարեթազին տումարի, հարիւր քսան և
հինգ ինզոսի, երեք ընդիքրոնոնի և շորս նահանջի եղև սկիզբն և յաւարտունն

⁷³ Н. Адони, Дионисий Фракийский и армянские толкователи, стр. XXIV.

⁷⁴ Նույն տեղում, էջ XXIV.

⁷⁵ Տե՛ս Հովհաննես Բժտատաների «ժամանակագրութեան» («Հովհաննես Բժտատաների մատենա-
գրությունը», էջ 170)։

գրի ծանց կաւ Հայոց ամսոյն արաց ի մէկ ինգոսի, հոռմայնցոյ յամսոյն մարտի հինգ նոնսի, երբայնցոյ յամսոյն նիսանի միոյ ողիմպիաթիս⁷⁶:

Բ. Կլուկեսրայան հրատարակել է գրի այս հիշատակարանը և շկարողանալով վերծանել, ձևագրի գրչութեան թղթի վրայ տնտրել:

Չնայգիրը ներկա թվականով գրված է 32 հորելյանը հավասար է 1600-ի (32×50=1600), նրան զումարած 2 նոնոս⁷⁷ (2×5=10), մեկ շղիմպիաթս, այսինքն՝ 4, զումարը ստացվում է 1614 (1600+10+4=1614):

Հայկական մեծ թվականով ձևագրի գրված է 125 իգոսը հավասար է 1000-ի (125×8=1000), նրան զումարած երեք ինգիկոսին՝ 45 (15×3=45) և չորս նահանջ 16 (նահանջը 4 տարի է, 4×4=16) և հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1612 (1000+45+16+551=1612): Հիշատակարանում քրիստոնեական թվականը հայկական հաշվումով է, որից անհրաժեշտ է հանել ավելի երկու տարիները, կունենանք դարձյալ 1612: Այսպիսով, Անկուրիայի № 121 ձևագրի գրչութեան թվականն է 1612:

Ինչ վերաբերում է ամսաթվերին, այդ նրանք համապատասխանում են իրար. Հայոց արաց ամսի իգոսը՝ 8-ը, շարժական տոմարով համապատասխանում է հռոմեական մարտ ամսի հինգ նոնսին, այսինքն՝ 25-ին, որը համապատասխանում է երբայկական նիսան ամսի մեկ ողիմպիաթին, այսինքն՝ 4-ին:

ՃԵ. ՀԻՋՐԱՅԻ ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԵՐ

Հիջրայի թվականը մահմեդական թվականն է: Նրա զարգացումը համարվում է 622 թվականի հուլիսի 16-ը՝ Մուսայնի տոմարով, երբ անդի է ունեցել Մուհամմեդի փախուստը Մեքքայից Մեդինա: Հիջրայի թվականը հիմնված է լուսնական տարվա վրա, այն բաղկացած է 12 ամիսներից՝ Չաշրդական 29 և 30 օրերով: Ին տարին ունենում է 354 օր, իսկ նահանջը՝ 355, լուսնական տարին արեգակնային տարուց պակաս է մոտ 11 1/4 օր, ուստի մոտ 33 տարիների ընթացքում մի տարով նա անաչ է անցնում արեգակնային տարուց: Հիջրայի թվականը մեր ներկա թվականին վերածելու համար գոյություն ունի երկու եղանակ՝ պարզ և բարդ: Պարզ եղանակով վերածնությունը մասնակի ճնարար է մեկ տարվա շեղում՝ կազմված տարեմուտի հետ:

Պարզ եղանակով վերածնությունը մասնակի տրված թվականը բաժանում ենք 33-ի՝ իմանալու համար, թե քանի նահանջ տարիներ են կուտակվել տրված թվականի մեջ: Ստացած նահանջ տարիների թիվը հանում ենք տրված թվականից և այն վերածում արեգակնային տարու Այնուհետև ստացած թվականին զումարում ենք 622, որովհետև այդ թվականից է սկիզբ առնում հիջրայի թվականը:

Փորձենք վերծանել հիջրայի 1201 թվականը՝ պարզելու համար, թե այն մեր ներկա թվականի րանիսին է եղել:

- 1. 1201:33=36+1=37 (մնացորդի դեպքում անհրաժեշտ է լինում մեկ միավոր ավելացնել);
- 2. 1201-37=1164;
- 3. 1164+622=1786:

⁷⁶ Բ. Կլուկեսրայան, Ցուցակ Առաջաց Անկուրիոյ Կարմիր վանոց և շրջակայից, էջ 404-405:

Հիջրայի բարդ, բայց ավելի ճիշտ թվականը որոշելու համար կազմված է վեց աղյուսակ⁷⁷: Առաջինում տրվում է լուսնական օրերի թիվը՝ հաջորդական երեսուն տարիների համար: Երկրորդ սյունակում տրվում է տարիների օրերի թիվը՝ մեկ տարուց մինչև 30 տարի: Երրորդ սյունակում տրվում է ամիսների օրերի թիվը՝ առաջին ամսից մինչև 12-րդ ամիսը: Չորրորդ սյունակում տրվում է արեգակնային տարվա օրերը գարեբով՝ 600 թվականից սկսած մինչև 2000 թվականը: Հինգերորդ սյունակում տրվում է արեգակնային օրերի թիվը տարիներով՝ սկսած 4 տարուց մինչև 36 տարին: Նվ վերջապես, վեցերորդ սյունակում տրվում է ամիսների օրերը չորս տարիների համար:

Ա. ԼՈՍՏԱՅԻՆ ԵՐԵՆՈՄԱՅ ԳԻԿԼԵՐԻ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ (Սկսած 6-րդ դարի վերջին օրից)

| | | | |
|------------|------------|-------------|--|
| 0—8232 | | | |
| 30—18863 | 510—188959 | 990—359055 | |
| 60—29494 | 540—199590 | 1020—369686 | |
| 90—40125 | 570—210221 | 1050—380317 | |
| 120—50756 | 600—220852 | 1080—390948 | |
| 150—61387 | 630—231483 | 1110—401579 | |
| 180—72018 | 660—242114 | 1140—412210 | |
| 210—82649 | 690—252745 | 1170—422841 | |
| 240—93280 | 720—263376 | 1200—433472 | |
| 270—103911 | 750—274007 | 1230—444103 | |
| 300—114542 | 780—284638 | 1260—454734 | |
| 330—125173 | 810—295269 | 1290—465365 | |
| 360—135804 | 840—305900 | 1320—475996 | |
| 390—146435 | 870—316531 | 1350—486627 | |
| 420—157066 | 900—327162 | 1380—497258 | |
| 450—167697 | 930—337793 | 1410—507889 | |
| 480—178328 | 960—348424 | 1440—518520 | |
| | | 1470—529151 | |
| | | 1500—539782 | |

Բ. ԼՈՍՏԱՅԻՆ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ 30 ԳԻԿԼԻ յՈՒՄԱՖԱՆԵՅՈՒՐ ՏԱՐՎԱ ՍԿՂՈՒՄ

| | | | | |
|--------|---------|---------|---------|----------|
| 1—0 | 8—2481 | 15—4361 | 22—7442 | 29—9922 |
| 2—354 | 9—2835 | 16—5315 | 23—7796 | 30—10277 |
| 3—709 | 10—3189 | 17—5670 | 24—8150 | |
| 4—1063 | 11—3544 | 18—6024 | 25—8505 | |
| 5—1417 | 12—3898 | 19—6379 | 26—8859 | |
| 6—1772 | 13—4252 | 20—6733 | 27—9214 | |
| 7—2126 | 14—4607 | 21—7087 | 28—9568 | |

⁷⁷ ՏՃ՝ Բ. Վ. Կլուկեսրայան, Современные календари стран Ближнего и Среднего Востока, М., 1964 г., էջ 119—120:

Գ. Ամիսների առաջին օրերի քիվը ըստ լուսնային տամարի

| | | | | | |
|--------------|---------------|----------------|---------------|-----------------|------------------|
| Մահարամ 0 | Մաֆար 30 | Ռարի I 59 | Ռարի II 89 | Ջուսազ I 118 | Ջուսազ II 148 |
| Ռաֆար 177 | Շրտբան 207 | Ռամազան 236 | Շափալ 2 6 | Ջուսազան 295 | Ջուլիսիտ 325 |

Գ. Օրերի քիվը դարեով (6-րդ դարից մինչև 22-րդ դարի սկիզբը)

| | | | |
|-------|--------|-------|--------|
| 600— | 0 | 1400— | 292200 |
| 700— | 36525 | 1500— | 328725 |
| 800— | 73050 | 1600— | 365240 |
| 900— | 109575 | 1700— | 401764 |
| 1000— | 146100 | 1800— | 438288 |
| 1100— | 182625 | 1900— | 474812 |
| 1200— | 219150 | 2000— | 511337 |
| 1300— | 255675 | | |

Ե. Օրերի քիվը ըստ ֆունայականների սկզբնավորության

| | | | | | |
|-----|-------|-----|-------|-----|-------|
| 4— | 1461 | 36— | 13149 | 68— | 24837 |
| 8— | 2922 | 40— | 14610 | 72— | 26298 |
| 12— | 4383 | 44— | 16071 | 76— | 27739 |
| 16— | 5844 | 48— | 17532 | 80— | 29200 |
| 20— | 7305 | 52— | 18993 | 84— | 30681 |
| 24— | 8766 | 56— | 20454 | 88— | 32142 |
| 28— | 10227 | 60— | 21915 | 92— | 33603 |
| 32— | 11688 | 64— | 23376 | 96— | 35064 |

Զ. Օրերի քիվը ըստ յուրաքանչյուր ամսվա սկզբնավորության

| | | | | | | | | | | | | |
|---|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| 0 | 0 | 31 | 60 | 91 | 121 | 152 | 182 | 213 | 244 | 274 | 305 | 335 |
| 1 | 366 | 397 | 425 | 456 | 486 | 517 | 547 | 578 | 609 | 639 | 670 | 700 |
| 2 | 731 | 762 | 790 | 821 | 851 | 882 | 912 | 943 | 974 | 1004 | 1035 | 1065 |
| 3 | 1096 | 1127 | 1155 | 1186 | 1216 | 1247 | 1277 | 1308 | 1339 | 1369 | 1400 | 1430 |

Փորձենք վերծանել հիշրայի 782 թվականի ուսմազան ամսի 19-ը, կր Քաղազում տեղի է ունեցել երկրաշարժ:

Առաջին աղյուսակից վերցնում ենք մեր թվականին մոտիկ տարիքի վր՝ 780-ը, որն ունի 284638 օր:

Երկրորդ սյունակով պարզում ենք, որ մնացած երկու տարին հաշված է 354 օր:

Երրորդ սյունակով պարզում ենք, որ տարին մինչև ուսմազան ամսին ունեցել է 236 օր: Երկրորդ միասին գումարելով՝ 284638 + 354 + 236 + 19 ստանում ենք 285247: Ուրեմն՝ հիշրայի 782 թվականի ուսմազան ամսի 19-ը

բաղկացած է այդքան օրերից: Այդ հաշվումը կատարելուց հետո ստացած օրերը բաշխում ենք արեգակնային տարիների վրա:

Չորրորդ աղյուսակով 1300 տարին ունի 255 675 օր: Այդ թիվը հանելով հիշրայի թվականի օրերից, ստանում ենք 29 572 (284638—255 675 = 29 572), Մնացած 80 տարին հավասար կլինի 29 220 օրվան, մնացորդը կսա 352 օր: Հետևապես 782 թվականի ուսմազան ամսի 19-ը Լոկն է 1380 թվականի դեկտեմբերի 17-ը:

Մասնեղաբանի փոստկրյա կոշիկը նշանավոր ձևադիրը գրված է. «Յամի թույլ Հայկազանց ՆԼԸ (438) և ըստ թույլ Հոսոմի ՉԽԲ (742), իսմայելական բունակալութեան 32Ք (379)»: Հայկական 438-ին գումարելով 551, ստանում ենք 989, Հոսոմեական 742-ին գումարելով 247, ստանում ենք 989, Հիշրայի թվականով 379-ը վերծանելով է. հիշրայի 379 թվականից կվերցնենք 360 տարին առաջին աղյուսակով, որը հավասար է 135 804 օրերի, մնացած 19 տարին հավասար է Երկրորդ սյունակով 6 379 օրերի, երկուսը միասին կանի 142 183 օր: Արեգակնային տարվա 900 տարին ունի 109 575 օր, որը հանելով 142 183-ից, ունենում ենք մնացորդ 32 608 օր: 88 տարին հինգերորդ աղյուսակով հավասար է 32142 օրերի, մնացորդը կլինի 466 օր, որը հավասար կլինի մեկ տարի չորս ամսի: Այսպիսով, փոստկրյա ավետարանում է զուգահեռ բերված հայկական և հոսոմեական թվականներին: Այսպիսով, հիշված երեք զուգահեռ թվականների համեմատական սուտղումներից պարզվում է, որ փոստկրյա ավետարանը գրված է 989 թ.:

Առաջին հայ տպագրիչներից մեկի՝ Հովհաննես Տերզյանու, Երուսաղեմի պատրիարքին ուղարկած նամակի թվական է նշված «Հայոց մեծաց ՌԼԲ (1032)... և մահմեդական ՋՂ (990) թվական»:

| | |
|----------------------------------|------------------|
| Հիշրայի 990 թվականը հավասար է | 359055 օրվա: |
| Արեգակնային 1500 տարիները հանած՝ | 328 725 օր |
| | կմնա՝ 30 330 օր: |
| Արեգակնային 80 տարիների համար՝ | 29 220 օր |
| 3 տարվա համար՝ | 1 096 օր |
| | կմնա՝ 14 օր: |

Հետևապես, 1500 + 80 + 3 = 1583 թվականին: Այդ համապատասխանում է «Հայոց մեծացին»՝ 1583 (1032 + 551 = 1583):

Այսինքն քարտանային կառուցման առթիվ մեզ է հասել երկու շինարարական արձանագրություն, որոնցից մեկը արարերեն է, իսկ մյուսը՝ հայերեն: Արարական արձանագրության մեջ կառուցման թվական է հիշված հիշրայի 727 թվականը, իսկ հայկականում՝ մեծ թվականով 781-ը⁷⁶, Հիշրայի 727 թվականը հավասար է 1326—1327 թթ. (հիշրայի տվյալ տարին սկսվել է նոյեմբերի 27-ին, ավարտվել 1327 թ. նոյեմբերի 17-ին), իսկ հայկական ներկայիս թվականով կլինի 1331—1332 թթ. (հայկական տարին սկսվել է 1331 թ. դեկտեմբերի 29-ին և վերջացել 1332 թ. դեկտեմբերի 27-ին): Երկու թվականներին մեջ հինգ տարիների տարբերություն կա: Գծվար է սասել, թե նշված թվա-

⁷⁶ Ափրան, Միսական, էջ 164:

Գ. Ամբաների առաջին օրերի թիվը ըստ յուսնային տամարի

| | | | | | |
|---------------|----------------|-----------------|---------------|-------------------|--------------------|
| Մասնաթիվ 0 | Մասնաթիվ 30 | Ռարի 1 59 | Ռարի 11 89 | Ջուսնացա 1 118 | Ջուսնացա 11 148 |
| Ռաջար 177 | Երաբան 207 | Ռամսայան 236 | Շավալ 2 6 | Ջուսնացա 295 | Ջուսնացա 325 |

Գ. Օրերի թիվը դարեւով (6-րդ դարից մինչև 22-րդ դարի սկիզբը)

| | | | |
|-------|--------|-------|--------|
| 600— | 0 | 1400— | 292200 |
| 700— | 36525 | 1500— | 328725 |
| 800— | 73050 | 1600— | 365240 |
| 900— | 109575 | 1700— | 401764 |
| 1000— | 146100 | 1800— | 438288 |
| 1100— | 182625 | 1900— | 474812 |
| 1200— | 219150 | 2000— | 511337 |
| 1300— | 255675 | | |

Ե. Օրերի թիվը ըստ քառամյակների սկզբնավորության

| | | | | | |
|-----|-------|-----|-------|-----|-------|
| 4— | 1461 | 36— | 13149 | 68— | 24837 |
| 8— | 2922 | 40— | 14610 | 72— | 26298 |
| 12— | 4383 | 44— | 16071 | 76— | 27759 |
| 16— | 5844 | 48— | 17532 | 80— | 29220 |
| 20— | 7305 | 52— | 18993 | 84— | 30681 |
| 24— | 8766 | 56— | 20454 | 88— | 32142 |
| 28— | 10227 | 60— | 21915 | 92— | 33603 |
| 32— | 11688 | 64— | 23376 | 96— | 35064 |

Զ. Օրերի թիվը ըստ յուրաքանչյուր ամսվա սկզբնավորության

| | | | | | | | | | | | | |
|---|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| 0 | 0 | 31 | 60 | 91 | 121 | 152 | 182 | 213 | 244 | 274 | 305 | 335 |
| 1 | 366 | 397 | 425 | 456 | 486 | 517 | 547 | 578 | 609 | 639 | 670 | 700 |
| 2 | 731 | 762 | 790 | 821 | 851 | 882 | 912 | 943 | 974 | 1004 | 1035 | 1065 |
| 3 | 1096 | 1127 | 1155 | 1186 | 1216 | 1247 | 1277 | 1308 | 1339 | 1369 | 1400 | 1430 |

Փորձենք վերծանել հիշարարի 782 թվականի ուսմազան ամսի 19-ը, երբ Բաղդադում տեղի է ունեցել երկրաշարժը:

Առաջին աղյուսակից վերցնում ենք մեր թվականին մտտիկ տարեթիվը՝ 780-ը, որն ունի 284638 օր:

Երկրորդ սլունակով պարզում ենք, որ մնացած երկու տարին հաշված է 354 օր:

Երրորդ սլունակով պարզում ենք, որ տարին մինչև ուսմազան ամսին ունեցել է 236 օր: Երբեք միտսին գումարելով՝ 284638+354+236+19 ստանում ենք 285247: Ուրեմն՝ հիշարարի 782 թվականի ուսմազան ամսի 19-ը

բաղկացած է այդքան օրերից: Այդ հաշվումը կատարելուց հետո ստացած օրերը բաշխում ենք արեգակնային տարիների վրա:

Չորրորդ աղյուսակով 1300 տարին ունի 255 675 օր: Այդ թիվը հանելով հիշարարի թվականի օրերից, ստանում ենք 29 572 (2846388—255 675 = 29 572): Մնացած 80 տարին հավասար կլինի 29 220 օրվան, մնացորդը կլի 352 օր: Հետևապես 782 թվականի ուսմազան ամսի 19-ը եղել է 1380 թվականի դեկտեմբերի 17-ը:

Մատենադարանի փղօսկրյա կոչվող նշանավոր ձեռագիրը գրված է «Յամի թուոյ Հայկազանց ՆՆՐ (438) և ըստ թուոյ Հոռոմի ՉևՐ (742), յիմասելական բունակալութեան 32Թ (379)»: Հայկական 438-ին գումարելով 551, ստանում ենք 989, Հոռոմեական 742-ին գումարելով 247, ստանում ենք 989: Հիշարարի թվականով 379-ը վերծանվում է հիշարարի 379 թվականից կվերցնենք 360 տարին առաջին աղյուսակով, որը հավասար է 135 804 օրերի, մնացած 19 տարին հավասար է երկրորդ սլունակով 6 379 օրերի, երկուսը միասին կանի 142 183 օր: Արեգակնային տարվա 900 տարին ունի 109 575 օր, որը հանելով 142 183-ից, ունենում ենք մնացորդ 32 608 օր: 88 տարին հիշարարի աղյուսակով հավասար է 32142 օրերի, մնացորդը կլինի 466 օր, որը հավասար կլինի մեկ տարի չորս ամսի: Այսպիսով փղօսկրյա ավետարանը գրված է 900+88+1=989: Հիշարարի այդ թվականը համապատասխանում է զուգահեռ բերված հայկական և հոռոմեական թվականներին: Այսպիսով, հիշված երեք զուգահեռ թվականների համեմատական ստուգումներից պարզվում է, որ փղօսկրյա ավետարանը գրված է 989 թ.:

Առաջին հայ տպագրիչներից մեկի՝ Հովհաննես Տերզյանցու Երուսաղեմի պատրիարքին ուղարկած նամակի թվական է նշված «Տալոց մեծաց ՌՆՐ (1032)... և մասնեղական ՋՂ (990) թվական»:

Հիշարարի 990 թվականը հավասար է 359055 օրվա: Արեգակնային 1500 տարիները հանած՝ 328 725 օր

կմնա՝ 30 330 օր:

Արեգակնային 80 տարիների համար՝ 29 220 օր

3 տարվա համար՝ 1 096 օր

կմնա՝ 14 օր:

Հետևապես, 1500+80+3=1583 թվականին: Այդ համապատասխանում է «Տալոց մեծացին» 1583 (1032+551=1583):

Սևիմի քարավանատան կառուցման առթիվ մեզ է հասել երկու շինարարական արձանագրություն, որոնցից մեկը արարերեն է, իսկ մյուսը՝ հայերեն: Արարական արձանագրության մեջ կառուցման թվական է հիշված հիշարարի 727 թվականը, իսկ հայկականում՝ մեծ թվականով 781-ը⁷⁸: Հիշարարի 727 թվականը հավասար է 1326—1327 թթ. (հիշարարի տվյալ տարին սկսվել է նոյեմբերի 27-ին, ավարտվել 1327 թ. նոյեմբերի 17-ին), իսկ հայկական ներկա թվականով կլինի 1331—1332 թթ. (հայկական տարին սկսվել է 1331 թ. դեկտեմբերի 29-ին և վերջացել 1332 թ. դեկտեմբերի 27-ին): Երկու թվականներին մեջ հիշված տարիների տարբերություն կա: Դժվար է ասել, թե նշված թվա-

⁷⁸ Ավյան, Սիսական, էջ 164:

կաններին մեկնումներ սխալ է, մնում է կարծել, որ արարերեն արձանագրու-
թյունը հինգ տարի առաջ է գրված, քան հայկականը:

ժԶ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՏՈՄԱՐԸ

Հայ մատենագրության մեջ հուլյան և գրիգորյան տոմարները հաճախ
անվանում են հին ու նոր տոմար: Հուլյան տոմարը, ինչպես ասել ենք, կապ-
ված է կղզի Հուլիոս Կեսարի անվան հետ: Այդ տոմարով արեգակնային տար-
վա տևողությունն ընդունված էր կտր թվով 365 1/4 օր: Արեգակնային տար-
վա այդ տևողությունը, սակայն, այնքան էլ ճիշտ չէ. աստղագիտական ճիշտ
հաշվումներով այն պահան է 11 րոպե 14 վայրկյան, որը 128 տարիների ըն-
թացքում կտր թվով մի օր է կազմում: Ահա այդ պատճառով քրիստոնեական
թվականության սկզբից մինչև 16-րդ դարի ութսունական թվականները հուլ-
յան տարին փաստորեն արեգակնային տարուց ետ էր մնացել մոտ 10 օրով¹⁹:

Ստեղծված տոմարական խառնաշփոթությունը կարգավորելու նպատա-
կով, Գրիգորիոս 13-րդ պապը (1502—1585) տոմարի մեջ կատարեց բարե-
փոխություն՝ ետ մնացած օրերի վրա ավելացրեց 10 օր: Նա 1582 թվականի
հոկտեմբերի 5-ը հաջվելով հոկտեմբերի 15, դարնանամուտը մարտի 11-ից
վերադարձրեց մարտի 21-ը:

1582—1700՝ 10 օր

1700—1800՝ 11 օր

1800—1900՝ 12 օր

1900—2100՝ 13 օր:

Գրիգորիոսի տոմարական այս բարեփոխությունն ընդունվեց և գործադր-
վեց Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, Փորթուգալիայում և կաթո-
լիկ այլ երկրներում:

Հայ մատենագրության մեջ առաջնորդվում են հուլյան տոմարով: Բայց
մեկ-մեկ պատահում է, երբ հայ կաթոլիկներն սկսած XVII դարից գործ են
ածում գրիգորյան տոմար²⁰:

* * *

Ցանկանալով դյուրացնել ուսումնասիրողների զորքը՝ հայ մատենագրու-
թյան մեջ հանդիպած տոմարական հաշվումները կատարելիս, անհրաժեշտ
համարեցինք կազմել տոմարական ստորև բերված ափսոսալը: Առաջին շար-
քը ներկայիս թվականն է, երկրորդը՝ հայկական ամսնորքը, երրորդը՝ «Տա-
բազիր»-ը, չորրորդը՝ «Վերագիր»-ը, հինգերորդը՝ «Յոթներեակ»-ը, վեցերոր-
դը՝ «Ասեկզիրը», յոթերորդը՝ «Տանուտեր»-ը, ութերորդը՝ «Ջատիկը»:

¹⁹ Նման շեղումը քրիստոնեական եկեղեցու համար անթույլատրելի էր, քանի որ նրկիայի
աթեղիքական ժողովում սահմանված էր, որ դատինք չի կարելի ասել մտք մտի 21-ից ա-
ռաջ, իսկ այս խախտելու հետևանքով զստիկը տեղափոխվել էր սահմանված ժամանակից 10
օր առաջ: Հիմնովին փոխվել էր նրկիայի ժողովի սահմանած կարգը, իսկ զրա հետ նաև՝ տոմա-
րական մյուս բոլոր հաշվումները՝ վերադրելով, յոթներեակը, սեկզիրը և այլն «Ասեկզիրը»:
Ինչ-
պես ծագածնիվ ասելին են կղզի, վեր է անված եղել տարեմեկ գրիգ:

²⁰ Գրիգորիոսի տոմարը 1629 թ. հոկտեմբերի 12-ին ընդունվել էր Սոմաթիայի կաթոլիկներին:
«Տոմար Երեմիայի Երեմիայի Երեմիայի Երեմիայի Երեմիայի Երեմիայի Երեմիայի Երեմիայի Երեմիայի Երեմիայի»

| Ներկա թվականը | Հայկական տոմարը | Տարե- դիրը | Վերացիրը (Ն.Ս.Մ.) | Ետերեակ- ակը | Սեկզիրը | Տանուտեքը | Ջատիկը |
|------------------|--------------------|---------------|----------------------|-----------------|---------|-----------|--------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1084 | փետր. 29 | խ | 11 | ար | 2 | ձուկ | 31/III |
| 1085 | փետր. 28 | վ | 22 | դ | 3 | խոյ | 20/IV |
| 1086 | — | կ | 3 | դ | 4 | ցուլ | 5/IV |
| 1087 | — | է | 14 | ե | 5 | եկալ | 28/III |
| 1088 | — | չոյ | 25 | դէ | 6 | խեցք | 16/IV |
| 1089 | փետր. 27 | խ | 6 | ա | 7 | սույծ | 1/IV |
| 1090 | — | ա | 17 | բ | 8 | կոյս | 21/IV |
| 1091 | — | շ | 28 | դ | 9 | կշե | 13/IV |
| 1092 | — | քէ | 9 | դե | 10 | կրեճ | 28/III |
| 1093 | փետր. 26 | ջ | 20 | դ | 11 | սոցք | 17/IV |
| 1094 | — | զ | 1 | է | 12 | սոյծ | 9/IV |
| 1095 | — | դ | 12 | ա | 13 | ջրես | 25/III |
| 1096 | — | ռ | 23 | բզ | 14 | ձուկ | 13/IV |
| 1097 | փետր. 25 | կ | 4 | դ | 15 | խոյ | 5/IV |
| 1098 | — | է | 15 | ե | 16 | ցուլ | 28/III |
| 1099 | — | ժ | 26 | դ | 17 | եկալ | 10/IV |
| 1100 | — | լե | 7 | էա | 18 | խեցք | 1/IV |
| 1101 | փետր. 24 | ա | 18 | բ | 19 | սոյծ | 21/IV |
| 1102 | — | դ | 0 | դ | 1 | կոյս | 13/IV |
| 1103 | — | ը | 11 | դ | 2 | կշե | 29/III |
| 1104 | — | ջո | 22 | եզ | 3 | կրեճ | 17/IV |
| 1105 | փետր. 23 | զ | 3 | է | 4 | սոցք | 9/IV |
| 1106 | — | դ | 14 | ա | 5 | սոյծ | 25/III |
| 1107 | — | ա | 25 | բ | 6 | ջրես | 14/IV |
| 1108 | — | կզ | 6 | դզ | 7 | ձուկ | 5/IV |
| 1109 | փետր. 22 | փ | 17 | ե | 8 | խոյ | 25/IV |
| 1110 | — | մ | 28 | դ | 9 | ցուլ | 10/IV |
| 1111 | — | լ | 9 | է | 10 | եկալ | 2/IV |
| 1112 | — | բա | 20 | ար | 11 | խեցք | 21/IV |
| 1113 | փետր. 21 | հ | 1 | դ | 12 | սոյծ | 6/IV |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|------|----------|----|----|----|----|------|--------|
| 1114 | — | ը | 12 | զ | 13 | կոյս | 29/III |
| 1115 | — | ս | 23 | ե | 14 | կշեռ | 18/IV |
| 1116 | — | խ | 4 | զէ | 15 | կրթն | 2/IV |
| 1117 | փետր. 20 | ք | 15 | ա | 16 | աղեզ | 25/III |
| 1118 | — | ս | 26 | բ | 17 | այծ | 14/IV |
| 1119 | — | թ | 7 | դ | 18 | ջրնս | 30/III |
| 1120 | — | սա | 18 | դե | 19 | ձուկ | 18/IV |
| 1121 | փետր. 19 | ժ | 0 | դ | 1 | խոյ | 10/IV |
| 1122 | — | ե | 11 | է | 2 | ցուլ | 20/III |
| 1123 | — | չ | 22 | ա | 3 | եկամ | 15/IV |
| 1124 | — | ձ | 3 | բզ | 4 | խեցզ | 6/IV |
Մագաղաթը պապիրոսի համեմատությամբ մեծ առավելությունն ունի. այն շուտ չի փշանում, հեշտամուր է դրել Երկու երեսի վրա, ցանկացած ժամանակ կարելի է այն լվանալ և նորից գրել և, վերջապես, չի բարձրում գիրք կաղնվելու: Հնում մագաղաթը պատրաստել են տնային և վայրի կենդանիների մորթիներից՝ դառան, ուլաբի, այժի, հորթի, նապաստակի և ուլի:

Հայաստանում, մաշտոցյան գրերը ստեղծելուց հետո, հիմնական գործածականացն դրանյութը մագաղաթն է հանդիսացել: Ըստ որում, մագաղաթը

հիմնականում պատրաստվել է տեղում: Այդ մասին հավաստի տեղեկություններ կան ձեռագրերի հիշատակարաններում: Այսպես, Հովհաննես Որոտնեցին 1355 թվականին իր ընդօրինակած ձեռագրի շափածո հիշատակարանում հայտնում է, որ ինքն է պատրաստել իր գրած ձեռագրի մագաղաթը.

«Յո[վ]հան[ն]ի[և]» աշխարհու Մխակէից,
Գաւառս Արտունէից,
Չմագաղաթս ձեռամբ իմս բազկից
Շինեցի նիւթ պիտոռից»:

Որոտնեցին այս արձևատը սովորեցրել է և իր աշակերտներին: Այդ առթիվ ուշագրավ է Գրիգոր Տաթևացու հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Զմագաղաթս նոյն ինքն մեծ վարդապետն (եկատի ունի Յովհաննէս Որոտնեցուն— Ա. Ա.) իւր ձեռօքն գործեաց (այսինքն՝ պատրաստեց— Ա. Ա.) և մեզ ուսուց զսոյն արուեստ»:

Գրություն խոշոր կենտրոններում գոյություն են ունեցել մագաղաթ պատրաստելու հատուկ արհեստանոցներ՝ Գլաձոր, Տաթև, Հոսմկլա և այլն:

Ձեռագրերում մագաղաթ պատրաստելու եղանակի մասին պահպանվել են հատուկ ցուցմունքներ: Այսպես, Մատենադարանի № 1849 ձեռագրում հետևյալն է առաջարկվում մագաղաթ պատրաստելու համար (քննում ենք քարզմանաբար). «Վերցրու որեւէ կենդանու մորթի՝ ուլի, վայրի ուլաբի, տնային ուլաբի, ձիու մորտկի, նապաստակի, այժուլի, հորթի մորթիին և այլն, նրա մազոտ երեսին բերի լավ մազած ու ջրի մեջ բացած կիր շաղախ: Եթե մագաղաթը հաստ է, կրի շաղախը խիտ արա, իսկ եթե բարակ է ջրալի: Երբ նա հասին, այսինքն՝ աշ տանի, մտաղբը բերի մորթու վրայից, մաքուր վրա և պարանով ձգված կապիք արևի տակ, որ շորտես: Ապա վերցրու բերիլը և բերիք մաի կողմն այնքան, որ միտն ամբողջապես մաքրվի և հարթ էրես դառնա: Չորանալուց հետո բերիք նաև մազի կողմը: Այնուհետև մագաղաթին քսելու համար վերցրու ձվի սպիտակուցը և սպիտակ կտավատը, խառնիր իրար, քաղ էրեք օր մեա, մինչև որ կտավատը մեղրի նման ծոր տա, այսպիսի մագաղաթին և բերիլով բերիլ»:

Մեծ ծավալ ունեցող ձեռագրերի համար օգտագործում էին և խոշոր կզյուրավոր անասունների կաշի: Հայտնի է, որ Մուշի մեծադիր Տոնականը՝ № 7729, որը գրվել է 1202 թվականին և իր ծավալով մեղ հասած ամենամեծ ձեռագիրն է Մատենադարանի հավաքածուի մեջ, մեծությամբ՝ 70,5×55,3սմ, պատրաստված է ավելի քան 600 օրթիկ կաշվից: Համախ պատասխում են այնպիսի մեծածավալ ձեռագրերի, որոնց մագաղաթ հայթայիելու համար հարկավոր է եղել օգտագործել ուլաբի մի ամբողջ հոտ:

1 Տե՛ս Լուսինյան, Գրի գրագրությունը, Երևան, 1955, էջ 80.

2 Տե՛ս Հ. Տաշչան, Անկարի մի հայ ճեպարանի մերս, էջ 96—98.

3 Ըստ հունական մի աղանղություն, Պերգամի Ամեննիսոս Արևորդ թագավորը (197—159 թթ.) ցանկացել է այնպիսի մատենագրության ստեղծել, որն ավելի հարուստ լինի, քան Ազգեստեղծիչին նշանավոր մատենագրաներ: Այդ նրա իմացել է Ազգեստեղծիչի Պարզմենա թագավորը, չի ցանկացել իր առաջնությունը դիզել նրան, սակայն արգելել է պապիրոսի արտահանությունը Երկրից: Պերգամի թագավորին այդ կարգությունից զուրս է հանել կրասու ստեղծ մի գիտնական, որը հետևել է մագաղաթին նման Պերգամում հայտնաբերված մագաղաթին շատ շուտապես ստեղծվել է ամենուր և նրա ստեղծող էլ կղզվել է օպերգամենտ:

4 Աշխարհում հայտնի է նաև մի ձեռագիր, որը գրված է մարզիանց մաշից պատրաստած մագաղաթի վրա, այդ ձեռագրի այժմ Լոնդոնի Բրիտանական թանգարանի սեփականություն է.

5 Եժուցակի Մայր ամրո Ա. Էլմիանին նոր ստացած ձեռագրերի (եղչմանին), 1852 թ., № 2, էջ 53):

6 Վ. Մովսեսյան, Քորտս աղբար, հ. Բ, էջ 327.

7 ՄԱԱ ձեռ., № 1849, Բ. 156ր:

8 Այս ձեռագրի մասին հանդամտություն տե՛ս Ա. Մարտիայան, Երբ և որտե՞ղ է գրվել Մշո Տոնական ճարտարից (ԵՊՄՍՅԻ Մատենագրանի), № 9, էջ 137—142):

9 Չպետք է անյան պատկերաբանի, որ մագաղաթ պատրաստելու համար բշում բերում էին ուլաբի հողը և մորթում: Մատենակի ընթացում համարում էին մորթիները և մշտում էին ուլաբի հողը և մորթում: Մատենակի ընթացում համարում էին մորթիները և մշտում էին ուլաբի հողը, հետո սովորություն է կղել, որ համապատյուց ուստի գային, էրք մասաղ է անում, և զնայ, հետո սովորություն է կղել, որ համապատյուց ուստի գային, էրք մասաղ է անում, մորթի պարտավոր է հաննել վտեղին: Վաները համարում էին մորթիները ոչ թե վաների

Շուտով, սակայն, մագազաթին փոխարինելու է գալիս թուղթը, որի զոր-
 ծածուկները նույնպես հին է: Հայտնի է, որ շինացիները մետաքսից և
 բամբուկից թուղթ էին պատրաստում զենու առաջին դարում մեր թվականու-
 թյուններից առաջ¹⁰, Մերձավոր Արևելքում թղթի գործածությունը սկսում է 7-
 9-րդ դարերում: Այստեղ թուղթը պատրաստում էին բամբուկից: Ռուս գիտ-
 նական Ե. Կարսկու կարծիքով, թղթի գործածությունը Ռուսաստան է մուտք
 գործել արևելքից¹¹:

Մեղ հասած հայկական հնագույն թղթի ձևագիրը 981 թվականին է գրված
 (N 2679): Ավելի ուշ՝ 12—13-րդ դարերում, Հայաստանում թուղթն սկսում է
 ասպարեզից դուրս մղել մագազաթին: Սակայն ուշ միջնադարում ևս մեկ-մեկ
 մագազաթի վրա գրում են ձևագրեր՝ մեծ մասամբ կրոնական-կանոնական
 բովանդակությամբ:

Հայաստանում օգտագործվող թուղթը երկար ժամանակ բերվում էր
 դրսից: Արևելքում թղթի պատրաստման հայտնի կենտրոններն էին Քավրիզը
 և Դամասկոսը: Ավելի ուշ թուղթն սկսեց ներմուծվել Եվրոպայից՝ որը կոչ-
 վում էր «փրանգի թուղթ»:

Գրիչներն իրենց հիշատակարաններում երբեմն հայտնում են, թե որտե-
 ղից են ձեռք բերել իրենց օգտագործած թուղթը: Այսպես, Մատթեոս Մանուզն
 գրելը 1417 թ. գրած հիշատակարանում հայտնում է, որ ձեռագրի պատվիրա-
 տու Մանվել քահանան Երուսաղեմից վերադառնալիս թուղթը զնել է Դամաս-
 կոսից¹²: Տեղեկություններից նրանում է, որ Դամասկոսի թուղթը, Քավրիզի
 կամ Էվրոպական թղթի համեմատությամբ, ավելի որակավ է եղել: Օրինակ՝
 Մարկոս գրիչը խնդրում է իր սխալների և դրի «խոշորոտ» լինելու համար
 անմեղադիր լինել, որովհետև քարտեզս (իմա՝ թուղթը—Ա. Ա.) փառանդի
 էր¹³: Այստեղ «փառանդի» ասելով նկատի ունի Էվրոպական թուղթը: Հակոբ
 Արիմեցին իր հիշատակարաններից մեկում հայտնում է, որ ձեռք է, չի կա-
 րողանում «Դմշխի», այսինքն՝ Դամասկոսի թուղթ ճարել, ուստի և հարկա-
 ղըրված է «Թավրիզի» թղթի վրա գրել, որը, սակայն, հաստ է և ծավալը
 փոքր:

Գնված թուղթը տեղափոխությունների ժամանակ ծածկվում էր, ուստի և
 անհրաժեշտ էր ի նորո կտելու Պետր է նեթադրել, որ այդ բավական աշխա-
 տատար գործ է եղել, որովհետև գրիչները հաճախ են հիշում թուղթ կոկողնե-
 րին: Թովմա Մանուկեցին 1410 թ. գրած ձեռագրում խնդրում է հիշել իր եղ-
 րորը՝ Հովհաննես քահանային, որը քարզում աշխատութեամբ, երթևեկու-
 թեամբ՝ ճարել է թուղթը և քրտնաչան «աշխատութեամբ կոկեաց դաս»¹⁴.
 Հակոբ գրիչը 1386 թվականին գրած հիշատակարանում խնդրում է հիշել եր

հանելու համար, այլ՝ մագազաթ պատրաստելու: Հայտնի են զեպրեր, երբ հավատացյալների
 իրենք էին համարում մորթիներ և նվիրում գրություն պահանքին: Երուսաղեմի պատրիարքա-
 րանի մի ձեռագրից նրանում է, որ հավատացյալ մեկը 124 մորթի է նվիրել վանքին՝ մագազաթ
 պատրաստելու համար (տե՛ս «Ճեղքակ ձեռագրաց Երուսաղեմի», հ. Գ, էջ 92):

¹⁰ «Թերթը մը թղթն պատմություն» (տե՛ս «Թագմուղյա», 1874, էջ 292—298):

¹¹ Տե՛ս Ե. Փ. Կարսկի, Словянская кирнлоская палеография, էջ 97:

¹² ՄԱՄ ձև. N 8689, Բ. 88ա:

¹³ ՄԱՄ ձև. N 1925, Բ. 220ր:


¹⁴ ՄԱՄ ձև. N 2065, Բ. 390ր:

կու աշակերտներին՝ Կարապետին և Միքայիլին, որոնք թուղթը կոկելու և առ-
 դատելու վրա մեծ ջանք էին թափել¹⁵:

Թուղթ կոկելու համար պոլոթյուն է ունեցել հատուկ գործիք, որը կոչվել
 է ըզրի կոկիչ: Սիմեոն գրիչը Ավաղ վանքում, 1439 թվականին ընդօրինա-
 կած ձեռագիրն ընդմիջելով, գրանցել է փոքրիկ հիշատակագրությամբ այն
 մասին, որ կոկիչի սրությունը պատճառով թուղթը փշաքրել է. «Ո՛վ նըրայր,
 անմեղադիր լեր, դի կակիչն սուր էր՝ դթուղթն աներեսց»¹⁶:

Թղթի գործածությունը Հայաստանում տարածվելուց հետո, ըստ երե-
 վույթին, սկսել են այն նաև տեղում պատրաստել: Հայտնի է, որ Սիմեոն
 նրևանցի կամբուզիսը էշմիածնում 1776 թվականին թղթի հատուկ գործարան
 հիմնեց և իր արտադրած թուղթն օգտագործեց տպագրության մեջ¹⁷:


Գրչության ժամանակ օգտագործված գրեական պիտույքներից ցանկը
 շատ մեծ չէ: Նրանց մասին արեւելուոր նյութեր պարունակում են հայկական
 մանրանկարները: Սովորություն է եղել ավետարաններում նկարել շորս ա-
 վետարանիչներին՝ գրեական պիտույքների հետ միասին, Ուստի այդ նկար-
 ներում մեկ-մեկ կարելի է տեսնել գրեական այն պիտույքները, որոնք գործ
 են անվել գրչության ժամանակ: Այս տեսակետից ուշագրավ է Մատենադա-
 րանի N 7643 ձեռագիրը՝ գրված նրզկայում 1338 թ., ուր ծաղկող Հովհան-



ձեռիչ



թղթի կոկիչ



մկրաս



անդուկ

¹⁵ ՄԱՄ ձև. N 5707, Բ. 485ր:

¹⁶ «Ճեղքակ ձեռագրաց վիճակի», էջ 90:

¹⁷ Տե՛ս Հ. Աբրահամյան, Թղթի գործարան Հայաստանում (տե՛ս «Մատենադարանի
 գիտական նյութերի ժողովածու», N 1, էջ 61—72):

նաև աշխատանքներն մտա ոչ միայն նկարել է զընկալան պիտույքները, այլև գրել է նրանց յուրաքանչյուրի անունը: Եկարժամ և անուններով ներկայացված են Լաճուքը, կոկիչը, գրիչը, զանակը, կաղամարը, զընկալան պիտույքների աղկը, նրա խափը և մկաթը: Գրենական մյուս պիտույքներից այլ արշուրներից մեզ հայտնի են նաև կաղկիքը, աղաղաչարը և ներկելի ամանները:



խուփ

Նախ քան հիշելու պիտույքների և նրանց օգտագործման շուրջ առանձին-առանձին խոսելը, մի քանի խոսք ասենք թոնաքի մասին: Թանաքը հայ մասնագործության մեջ կոչվել է մեղան, որն, անշուշտ, փոխառություն է հունական μέλις բառի՝ սեռազեղ նշանակությամբ: Միզանում գործ են ածվել նրկու տեսակի թանաք բուսական ու թմբիական, և նրկուսն էլ՝ բարձր որակի: Նրանք նրկար զարների բնթացքում պահպանել են իրենց գույնը¹⁸: Փիչ կարելի է հանդիպել այնպիսի ձևազարների, որոնք խունացած լինեն:

Քուրը գրիչները չէ, որ դիտելին թանաք պատրաստելու գաղտնիքը: Եստ զեպքում նրանք դիտում էին թանաք պատրաստող մասնագետին: Կարապետը խնդրում է հիշել նրախառնվող Թունա Կաֆայեցուն այն քանի համար, որ «...զկարմիր և զսև թանաքն յամենայն ժամ պատրաստեաց»¹⁹:

Հայկական ձևազարներում բացի սև մեղանից, գործ են ածել կարմիր, կանաչ, կապույտ և այլ գույների բարձրորակ ներկեր, որոնք նույնպես չեն խունացել և հիստցունք են պատճառում դիտողին: Կարմիր թանաքն օգտագործվել է զվազվորպեսզն զարդագործության մեջ և խորագրերում²⁰, Առօրյա զրուցության մեջ կարմիր մեղանով են զրել կաթնղինանները և թագավորները: «Թագաւորք կարմիր մեղանով զընն զգիր» — գրում է ներսես Ետրճալին:

Թանաքը, ինչպես և մյուս բոլոր ներկերը, պատրաստվել են անզում: Այս մասին բազմաթիվ հիշատակություններ կան ձևազարներում²¹:

«Գիրք արհեստից» աշխատությունը և ալքիմիական բովանդակությամբ ժողովածուները պարունակում են զանազան տեսակի թանաքներ պատրաստելու զեղատոմսեր: Բնրենք նրանցից մեկը, որը վերաբերում է սև թանաք պատրաստելուն և շատ հետաքրքրական է. «Առ զքթոր (30) զրամ և կօկ Գ (3) լիտր ջրով մինչ կէս մնայ, ապա առ ի կրակին ի վայր և թող որ պղզի կէս մի, և ապա խառնել լինքն կարմիր արշապայ այնչափ, որ զջուրն աղիկ սեւացնէ և ապա առ ամեն լիտր ջրի Ա (1) զրամ սամղ արապի, որ է սամնիկ

¹⁸ Կարմիր ներկերից համալիրաճային հույակ է ունեցել որդան կարմիր ներկը, որը Հայաստանից արտահանվող կարևոր ապրանքներից մեկն է հանդիսացել և հայտնի է կղզի սևուկական ներկու անունով:

¹⁹ ՄԱԲ Աճ. № 8173, Բ. 340ա:

²⁰ Մեր իրականության մեջ հայտնի է մի ձևագիր, որ կարմիր գույնի համար օգտագործվել է մարզու արշունը: Ը. Սոխյանի կազմած ձևագրաց ցուցակում, մի ձևագրի նկարագրության մեջ, կարմիր գույնի մասին նշված է. «Կարմիր գրերը արշունով զրուած են» (տճ՝ Ը. Սոխյան, Տուրակ հայերեն ձևագրաց մասնագործանեն Միխայելանց ի Վիննա, էջ 76):

²¹ ՄԱԲ Աճ. № 8172, Բ. 340ա:

կռչ, խառնել, միաբորել և դիր յաման և պահել, երբ պիտենա ի բուն տարը²²: Նշված ժողովածուն պարունակում է այլ և այլ գույնի ու տեսակի թանաքներ պատրաստելու բազմաթիվ այլ խրատներ:

Մեզ է հասել 18-րդ դարի ականավոր հայ առևտրական գործիչներից մեկի՝ Եղիա Կարենցու «Գիրք արհեստից» աշխատությունը՝ գրված 1720 թվականին: Այստեղ կան սակու, արծաթի մշակման և զանազան տեսակի թանաքներ պատրաստելու և զործածելու մասին հատուկ ցուցումներ: Կաղանագրության համար պատրաստվող թանաքի մասին ասված է (բերում ենք թարգմանաբար). «Վերցրու, նաշագիր և լցրու ջրի մեջ թող լուծվի. այդ ջրով գրի թղթի վրա: Զորանալիս բունիք մեղմ կրակի վրա. լավ տարանալուց հետո գիրը կուանա, և դու կկարգաս»²³, Մի այլ անզում, որը վերնագրված է. «Վասն զաղա զընչու՝ ո՛ր ոչ կարգայ, նա հանձնարարում է. «Վերցրու ստոթ լեղին և խառնիր ջրի հետ. այս զրով ինչ որ գրես թղթի վրա՝ անհետանում է: Իսկ երբ ցանկանում ես կարգայ, այս զրով գրու թղթի վրա, թրքի ջրում, դիր կըրևա: Բայց թուղթը ջրի մեջ ձգելիս նրկար չըպահես, այլ թիչ թող ջրի մեջ, և թրջվելուց պես անմիջապես հանիր»²⁴:

Թանաքը պահվում էր հատուկ ամանի մեջ, որը կոչվում էր կաղամար. կաղամարը լինում էր մեռաղից, ապակուց, փայտից կամ թրծված կավից: Հնում սովան կաղամար է կոչվել ոչ միայն թանաքամանը, այլև այն տուփը, որի մեջ դնում էին թանաքամանը և գրիչները: Միջին դարերում նոստրեները այդ զրատուփերը ամրացնում էին զստիներին և ալոպես շրջում:

Դիվիում 1938 թ. հայանաբերվել է մի կաղամար՝ արձանագրությամբ: Այն սևի մեղան լցնելու նրբ Փոսիկ, որոնցից երկուսի մեջ մնացել են կարմիր և կապույտ ներկերի հետքեր²⁵: Ենթադրում են, որ 7-րդ դարի սկզբի գործ է, թեև այդ ենթադրությունը մեզ անհավանական է թվում, որովհետև արձանագրության մեջ կան անցյալի շրջանի նրկաթագրի ու վազ բուրբրի գործածություններ:



Դիվիում գտնված կաղամար՝ երեք գույնի թանաքի համար փակվելներով:

²² Ա. Խ. Հուրպուլյան, ներկերը և թանաքները Հին հայկական ձևագրերում, Երևան, 1941, էջ 18—19:

²³ ԳԱՓՔՅ, фонд сношения России с Арменией, Г. 24, գործ № 5, էջ 12:

²⁴ Նույն անզում, էջ 213—215:

²⁵ Տե՛ս Ա. Խ. Բայանբաջան, Դիվին Ելութական մշակույթը 4—8-րդ դարերում, Երևան, 1970, էջ 24, 34:

Շախոր անունով մի գրիչ Սպահանում 1654 թվականին գրենական պիտույքների մասին գրած շատ հետաքրքիր առղում կաղամարին նվիրել է հետևյալ բառչափեր.

«Եւ արդ ասեմ անօթ գրիս,
նախ և յառաջ կաղամարիս,
Որ յինքն ունի սև թանաքիս,
նա կու գրէ որչափ կամիս»²⁶:



Հնում ձեռագիր գրելու համար որպես գրիչ օգտագործում էին երկաթե ձողիկները: Ոմանք ենթադրում են, որ այդ ձողիկներով գրելու պատճառով է, որ հին հայկական գրերը կոչվել են երկաթագիր: Անհավանական չէ, որ հայերը գրչի այս տեսակը ծառանգած լինեն հեթանոսներից, որոնք իրենց գրությունները մետաղյա գրչաձողիկով էին փորագրում կավե աղյուսների վրա: Հնում ոչ միայն հայերը, այլև Արևելյի շատ ռոգովորդներ երկաթե գրիչներ էին գործածում («Բրնյ գրչա երկաթեաւ» — Յոր, ԺԹ, 24):

Միջին դարերում երկաթե գրիչներին փոխարինում են եղեգնյա գրիչները, որոնք հունարեն կոչվում էին κλιμαξος այստեղից էլ՝ դալամ բարս: Պրոզդի «Շաղկապք աստուածաբանականների» մեջ հանդիպում ենք այսպիսի մի գործվածքի. «Պատճառ զմի գրոյ՝ գրողն, իսկ պատճառակից գրչի՝ եղեգն»: Ավելի ուշ գրչության ժամանակ սկսում են գործ անել նաև սաղի փետրի գրիչներ, որոնցով, ինչպես երևում է, շատ գրել չէր կարելի, որովհետև շուտ-շուտ նորոգում էին մայրերը: Հետագա դարերում սկսում են պատրաստել գրիչ-ինքնաշունչներ, որոնք որչափովի վրա, ծայրից թիչ վերև, ունեցել են թանաքի համար ուռուցիկ գնդիկներ: Այստեղից գանդաղ հոսել է թանաքը և հարկ չի եղել թափախանալ նման կառուցվածք ունեցող գրիչները ընդունված է կռել «ղեղիկավոր գրիչներ»²⁷: Գնդիկավոր գրչի հնագույն նկարը հանդիպում է 1166 թ Հռոմկալում գրված ավետարանում. Մատթեոս ավետարանչի մոտ սեղանի վրա երևում է չորս գնդիկավոր գրիչ²⁸: Նույնը հանդիպում է Մատենադարանի № 1568 ձեռագրում (ընթացիկապես Սիկալույում 1173 թ.). ծաղկաբարբ նկարել է Գրիգոր Նորակացուն՝ ձեռքին գնդիկավոր գրիչ: Վայց Չորի նորավանդում 1292 թվականին գրած մի ձեռագրում, որի մանրանկարին է նշանավոր Մամիկը, նկարված է Պրոխորը՝ ձեռքին գնդիկավոր ինքնաշունչ²⁹:

Ուշագույով է Հովհաննես գրչի 1435 թվականին գրած հիշատակարանում ինքնահասին աված գովեստը. «Զուսու գծագրիկս զՅովհաննէս բաղաբարցիս յիշման արժանի արբարք, ո՞վ սուրբ գրոց աշակերտեալ անձինք, որ յայս տետրակի Զ (900) գիր ի Ա (1) անգամ թափախելոյն գրեցի...»³⁰, նույն ձեռագրի մի այլ էջում թողած հիշատակագրության մեջ գրիչ Մտեփանեսը նշում է, որ ինքը մի անգամ թանաք վերցնելով 700 տառանիչ է գրել: Վերջում թանաքը կաթել է, և գրիչը անխտում է. «Բայց կաթաւ թանաքն, թէ չէ այլ կու գրէի»³¹:

²⁶ «Տոցազ ձեռագրաց էջմածնի» (տե՛ս «Էջմածնի», 1950 թ., № 7—8-րդ, էջ 86);
²⁷ Ասողիկ Պետրոսյան, Գրենական գործիք՝ գնդիկավոր գրչի մասին («Թանաքի մասունկ», 1940 թ., էջ 313—315);
²⁸ ՄԱՄ ձեռ. № 1747, Բ. 7ր;
²⁹ Նույն տեղում, ձեռ. № 2849, Բ. 245ր;
³⁰ ՄԱՄ ձեռ. № 1380, Բ. 229ր (Հւմ. Ա. Պետրոսյան, էջ 315);
³¹ Նույն տեղում, Բ. 229ր:

Շախոր գրչի վկայակոչված առղում գրչի մասին կարգում ենք.



«Երկրորդ՝ ասեմ վասն գրչիս,
Դու մամլմամ է՞ր կու հանդիս,
Մատուես իմ սակոր ե[ն] և միս,
Միջ գրեցի՞ դայրացաւ հոգիս»³²:


Գրիչները սովորաբար իրենց մոտ պահում էին սուր զմեղիներ՝ գրչի ծայրերը սրելու համար: Գրանք կոչվում էին գրչատաղներ: Մատենադարանի № 212 ձեռագրում նկարված է ավետարանիչը՝ գրչի ծայրը սրելիս: Գրչատաղն օգտագործվում էր նաև յիսյաներ բերելու համար: Այդ նկատի առնելով է, որ Շախոր գրիչը նշված առղում գրչատաղի անունից խնդրում է սուր պահել և այլ նպատակի համար չօգտագործել այն.

«Երրորդ՝ ասեմ գրչատաղիս,
Որ կու հանել սխալ գրիս,
Եւ գրչատաղն ասէ ի ին՝
Թէ որ գիս սուր մեալ կամիս,
Մի՛ առաքեր դի յայլ տեղիս,
Որ այլ զաս կոտոր[եմ] կամ միս»³³:



Ձեռագրերը ստղում էին առղաշարով: Այդ գործիքը երկու էջի մեծությամբ մի շրջանակ էր, որի աչ և ձախ կողմերում, հավասար հեռավորության վրա, կային անցքեր, որտեղից ձգվում էին աղբի բարակ լարեր³⁴. Տողիս ժամանակ մաղաղաթը թիչ թացացնում էին և առղաշարը սեղմում վրան. առղաշարի լարերը հավասար հեռուքի վրա թողնում մաղաղաթի վրա:

Ուշ միջնադարում երբ գրանյութը, հիմնականում, թուղթն է դառնում, սկսում են առղաշարով միայն նշումներ անել և քանոնով գծել, քանի որ թուղթը չի մեջ գցելու զեղբում կարող է փչանալ: Տողաշարին շուտով փոխարինում են փարտավարը և քանոնը: Փարտավարը էլի մեծությամբ մի շրջանակ էր, որով սահմանագծում էին բնագրերի չորս բուրբը:



³² էջմածնի ձեռ. № 16 Բ. 350ա (տե՛ս «Էջմածնի», հուլ.-օգոստ., էջ 86);
³³ Նույն տեղում;
³⁴ Գ. Ավետյան, Շալոց գիրքը և աղագրության արվեստը, Երևան, 1946, էջ 14:

Փարտավարով և սողաշարով աշխատելիս, ի զեպ, սողները գծում էին ոչ
բև մատիտով կամ գրչով, այլ երկաթե կամ ոսկրե սուր գործիքով, Այդ գծում-
ների հետքերը էջերի վրա կարելի է տեսնել սակայմ այժմ: Հակոբ գրիչը քանո-
ւելիս և փարտավարին նվիրել է երկուական սող:




«Հինգերորդ՝ ասեմ քանսնիս,
Որ անմարտութեան օրինակիս:
Վեցերորդ՝ փարտավարիս,
Որ կու քաշէ պարիսպ գրիս»⁵⁵:

Հակոբ գրիչը հիշում է նաև փարկալ անունով մի գործիք, որ կարկիկն
պարկերեն անունն է: Հայ գրչության մեջ կարկիկն օգտագործվել է շատ
վաղուց: Այդ մասին հիշատակություն ունի Անանիա Շիրակացին: Տոմար-
ական բովանդակությամբ ձևապարբերում հանդիպում են բազմաթիվ բոլո-
րակներ, որոնք գծված են կարկիկով և երևում են նրա սուր ծայրի թռ-
զած հետքերը: Ուշագրավ է, որ փարկալը օգտագործվել է նաև սողաշարի
լսիկները որոշելու համար: Հակոբ գրիչը հիշել է հենց այդ կապակցությամբ:

«Ութերորդ՝ վասն փարկալիս,
Որ շինող է նա սողաշարիս»⁵⁶:

Եվ վերջապես, գրենական պիտույքներից էին սաղաֆնեեր՝ խեցիից
օլատրաստված փորթիկ ամանիկներ, որոնց մեջ գունավոր թանաք էին լցնում:
Հակոբ գրիչը սաղաֆնեերին նվիրել է հետևյալ քառյակը:

«Չորրորդ՝ ասեմ սաղաֆնեերին՝
Միեն զնչիւ, միեն զրմիս.
Մորսմ գրեն զլուս քանիս,
Նա կու խնդա[յ] սիրտս ու հոգիս»⁵⁷:



Ներկայություններ նախապես ստուգելու համար օգտագործվել է մարմարի
տախտակը: Խոչատուր գրչի 1499 թ. գրած հիշատակությունից երևում է, որ
նա չի կարողացել հարել մարմար և նրա փոխարեն օգտագործել է տանձնու:
տախտակը:

«Մարմարս տանձի փայտ էր,
Կոկիչս՝ խոպի ամաս)մն էր,
Եւ գրիչս շեմաբծան էր,
Թղթի գիեր խիտս թանկ էր»⁵⁸:

⁵⁵ Էջմիածնի ձև, № 16, ք. 350ա (տե՛ս Էջմիածին, 1950 թ., հուլ.-օգոստ., էջ 88):
Պատահում է, որ քանոնը հիշված է լինում «Ճարտավար անունով, որը, անշուշտ, փոխառու-
թյուն է արաբերենից:
⁵⁶ Էջմիածնի նշվ. ձևագիր, ք. 350ա:
⁵⁷ Խոչի տեղում:
⁵⁸ «Ե՛ն դարի հիշատակարաններ», հ. 9, էջ 289:

Հին դարերում, սեղանից բացի, սովորական է եղել պնակիտ տախտակի
գործածությունը:

Չնագրերում ավետարանիչներին նկարում են նստած վիճակում՝ պնա-
կիտ-տախտակները զրված ծնկներին: Քառակուսի տախտակի երկու անկյու-
նից նոսնակյունի ձևով կապված է լինում պարան, որն ամրացվում է առաս-
տապից: Գրելիս այդ շարժուն սեղաններին տալիս էին համապատասխան թե-
քություն. նրանք ունեին այն ատավելությունը, որ կարելի էր թեթև ցանկա-
ցած ուղղությամբ: Տախտակն տեսնում էր հատուկ հարմարանք՝ վրան դրած
թերթն ամրացնելու համար⁵⁹:

Չնագրի պատրաստումը փաստորեն կողմկախվ աշխատանքի արդյունք
էր. մեկը անգրում էր գրանյութը, մյուսը՝ գրում, երրորդը՝ մանրանկարում, չոր-
րորդը՝ համեմատում բնագրի հետ և ուղղում բաց թողած սխալները, մեկ ու-
րիշը թուղթն էր կոկում, մյուսը՝ թանաք պատրաստում, հաջորդը կազմում էր,
դարբինը կազմի կոճակն էր պատրաստում և այլն: Հիշատակարաններում սո-
վորաբար հիշվում էին ձևագրի վրա աշխատող բոլոր մարդկանց անունները:
Իհարկե, պատահում է, որ այս ամբողջ աշխատանքը կատարում էր և մի
անձնավորություն, բայց ձևագրերի մեծ մասը ընդհանրապես համատեղ աշ-
խատանքի արդյունք է եղել:

Գրչության բոլոր մեծ գյուղոցներում պահվում էին հատուկ կազմարար-
ներ: Կազմարարի պարտականությունն էր համարակալված պրակներն իրար
մոտ բերել, ստանձնել և ամրացնել կազմին:

Կազմը, սովորաբար, պատրաստում էին տախտակից և վրան կաշի քա-
շում: Չնագրի երկու երեսներին նրանք դասնական զարդարանքներ էին դա-
շում անշուտով, Կազմի ներսից, երկու կողմերում, փակելուց էին կտորներ՝
մետաբոնից, շալից և կաավից⁶⁰: Այդ կտորները արվեստի պատմության հա-
մար ունեն մեծ արժեք, որովհետև նրանց նկատելի մասը նկարաչարդված է
լինում և կամ ասեղնազործված: Չէ՞ որ միշին դարերում գործածված կտոր
մեկ հասել է միայն ձևագրերի կազմերի մեջ, իսկ հողի տակ եղածը փոխել է:
Եթե ձևագրերի կազմողները այլ անձնավորություններ էին, ապա նը-
բանց անուններն անպայման հիշվում են հիշատակարաններում, Կազմարար
Մատթեոսը Մատենադարանի № 148 ձևագրում թողած հիշատակարանում
խնդրում է հիշել իրեն՝ «տերևաթմափ և անպտուղ զկազմող սորա զՄատթեոս»: Թորոս
գրիչը 1318 թվականին գրած հիշատակարանում խնդրում է հիշել
Սահակ բահանային, որը բախապից է եղել իրեն Կիպրոս կղզում և կազմել
ձևագիրը⁶¹: Այսպիսի հիշատակարաններ շատ կարելի է բերել:

⁵⁹ Այս շարժուն տախտակները ամրացվում էին առաստաղի՝ երդիկի մոտիկ, որպեսզի
լույս լինի Սահակն այդ ուներ այն անհարմարությունը, որ երդիկից ոչ միայն լույս էր թա-
փանցում, այլև անձրև, Անհիմն չէ նորապսոս գրչի գոնդառու. «Մ՛հ, ո՛հ, զայս ոչինչ տունս,
զինչ լերդի կու անկանի՝ թո՛ք ի գիրս և սպակակե՛ս (սնուցակ Մայր արժու Ս. Էջմիածնի նոր
ստացած ձևագրերի, Էջմիածին, 1950 թ., հուլիս-օգոստոս, էջ 88):
⁶⁰ Տարբեր ժամանակների այդ կտորների նմուշները հրատարակեց Լ. Ա. Գուրեովն
1953 թ., «Армянская пабоіка» վերնագրով:
19—1196

Գրչության զարդաների կարևոր գործերից մեկն է եղել քայքայված ձեռագրերի նորոգումը, կազմահան եղածները նորից կազմելը: Հայ գրասեր շրջանում այն կարծիքն է գոյություն ունեցել, որ քայքայված ձեռագրի նորոգումը մեծագույն բարեբարություն է: XVII դարի աշխի ընկնող տաղերգուներից մեկը՝ Վարդան Բաղիշեցին, իր թողած մի հիշատակագրություն մեջ գրում է, որ 30—40 ձեռագիր նորոգելը, քայքայված մասերը վերականգնելը ամեն է, քան ղեկնղեցիս շինելն»⁴²: Քայքայված ձեռագրերի վերականգնման ուղղությունը բացառիկ մեծ գործ է կատարել Բաղիշի գրչության դպրոցը: Միայն XVII դարում, Վարդան Բաղիշեցու ուսուցչապետության շրջանում, նշանավոր ծաղկաբար և կազմարար Սահակ Վանեցին կազմել է ավելի քան 30 ձեռագիր⁴³:

Հայ գրիչների մոտ սովորություն է եղել հիշել ոչ միայն ձեռագրի գրչության վրա աշխատողներին՝ ընդօրինակողներին, մանրանկարիչներին, այլև բոլոր նրանց, ովքեր որոշ նպատակ են բերել: Մատենադարանի № 4613 ձեռագրերի գրիչը ըմբերցողներից խնդրում է հիշել Հեթումին, որի գուտարը «երեսաղշապկացու կտան»: Նույն գրիչը խնդրում է հիշել նաև Աֆինդ անունով երկաթագործին «որ աշխատեցաւ ի փակ և կռակ գրոցս»: Կաշեպատ տախտակն կազմի մեջ գրված սովորածավալ ձեռագիրը հավաք պահելու համար պատրաստել էին տալիս ամրացնելու կռճակները, որոնք կտրվում էին ճարմանգ:

⁴¹ ՄԱՄ ձեռ. № 242, ք. 392ա.
⁴² ՄԱՄ ձեռ. № 2748, ք. 358բ (ՏՃՄ. Վ. Հակոբյան, Մանր մասնակագրություններ, XIII—XVIII օր., հ. II, Երևան, 1956, էջ 386).
⁴³ Կ. Աֆինյան, Բաղիշի դպրոցը, Վեննա, 1952, էջ 243:

XVI. ԱՂԱՏՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՂԱՎԱՂԱՍՄՆԵՐ

Վաղ շրջանի հայ մատենագիրների երկերը, ինչպես տակ ենք, մեզ չեն հասել իրենց ինքնագիր օրինակներով, այլ՝ հետագա ընդօրինակություններով: Ձեռագրերը ձեռքից-ձեռք ընդօրինակելու ժամանակ գրիչները թույլ են ավել բազմաթիվ սխալներ և ազնատումներ, որոնք հաճախ լուրջ զիջարություններ են ստեղծում ուսումնասիրող բնագրի օգտագործման և արձևագրման խնդրում: Նկատված է, որ այդ ազնատումները և աղավաղումները, հիմնականում, լինում են հինգ կարգի. 1) բացահայտ կեղծիքներ, 2) խմբագրական և օրբագրական կարգի նպատակային փոփոխություններ, 3) ընդմիջարկություններ, 4) բնագրական կրճատումներ և 5) գրչական սխալներ:

Բացահայտ կեղծիքներ կատարվում են երկու դեպքում. կեղծվում են ձեռագրերի գրչության ժամանակը և գրչի անունը: Այդ կարգի մի քանի փաստեր են հայտնի: Բանասիրական բուն վիճարանության տեղիք է ավել նրասաղծի Ս. Հակոբյանց մատենադարանի մի ավետարանի գրչության տարեթիվը, որը, եթե հավատալու լինենք հիշատակարանում մատենացույց արած թվականին, գրված պետք է լինի 602 թվականին: Այնտեղ տված է. «Հյց թուական ՍԱ. ՉՃԲ. գրեցաւ յԱւ Ի յաւուրս Մուշեղի: Գրիչդըր երկցէ»¹: Առաջին ՄԱ (51) թվականը, հայկական մեծ թվականն է, որին 551 դամարելով, ստանում ենք 602 (51 + 551 = 602), որը և համապատասխանում է ներկայիս ՉՃԲ (602) թվականին: Ձեռագրի հնագրական ուղղորդ քննությունը պարզել է, որ այդ թվականները կեղծված են: ձեռագիրը 10-րդ դարից առաջ գրված լինել չի կարող:

Կեղծված թվականով մի այլ ձեռագիր գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում: Նրանում Սարգիս գրիչը թողել է հետևյալ հիշատակարանը. «Ես Սարգիս անարժան քահանայ գրեցի զսուրբ աւետարանս ՆՓԾ (415) թուականիս թագաւորելոյ Ի վերայ մեր տեանս մերոյ Յիսուսի Չրիստոսի»²: Այսպիսով, եթե հավատալու լինենք այդ թվականին, ապա ձեռագիրը պետք է համարենք Մաշտոցի մամանակի գրվածը: Իրականում թվականը թույլ է և կամ կեղծված, ինչպես նշված է հիշատակարանի հրատարակիչ Բ. Սարգիսյանի կողմից:

Թվականները կեղծելու պատճառը մեծ մասամբ այն է, որ նրանց անբերը ցանկանում են իրենց ձեռագրերին հետևյալ տայ, սակայն ծանոթ չեն հնագրությունը և թվականների գործածության պատմությանը, որը և մատնում է նրանց:

¹ «Հանդես անտերաթ», 1901, էջ 32—35 (ՏՃՄ. Գ. Հակոբյան, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 169).
² «Ծոցակ ձեռագրաց Վենետիկի», հ. Բ, էջ 1248:

Քավական նկատելի թիվ են կազմում ձեռագրի գրչի և ստացողների առնուհետև կերտումները, ձեռագրերի հիշատակարաններում շեշտվ են գրիչների անունները և իրենց գրել նրանց տեղը Ռրբմն այդ կատարվել է անբնուստն ընդհանր, որ նոր գրված անվան տակ կարելի է լինում կարգով շեշտվածը, Այս պարագայի թիվագրմամբ է, որ գրիչներն իրենց հիշատակարաններում անեծք են գրել այն մարդկանց հասցեին, ովքեր համարձակվում են կտրել ձեռագրերը հիշատակարաններ կամ շեշտվ գրիչների անունները: Բրիտանական թանգարանի սեփականությունն հանդիսացող հայկական մի ձեռագրի հիշատակագիր անիծում է. «...ինչ մարդ որ յիշատակարանս կտրել և ճնճել կամի, անուն նորս ի գրոյն կենաց ճնճեալ լինի»⁶:

Մրտապղծի Ս. Հակոբյանց մատենագրանի № 154 ձեռագրի գրիչ Հովհաննեսը 1310 թ. գրած հիշատակարանում ցավով է նշում ձեռագրի նախկին գրչի անունը շեշտելու տեղը սովորության մասին. «Գիտեք եզրարար, զի է սովորություն ումանց, որ վերջին ժառանգաւորք գրոցն զառաջոյն զանուն կու շեշտն և դիրեանցն կու գրեն. և շար է սովորութիւնս այս: Ազալան մի՛ գործել զշարք զայդ մեծ. ապա թէ արժան է գրելոյ, զրեսցէ զիր անունն յա՛րսն տեղոջ, և զառաջնոյն մի՛ շեշտել անուն կամ գիր: Եւ որ որ յայս յանգնի և շեշտի ինքն շեշտի ր կենաց գրոյն՝ ո՛րք և իցել՝ եթէ մեծ որ և կամ փոքր»⁷:

Պետք է նկատել ունեւայ, որ 7—8-րդ դարերում, երբ գրիտառնական եկեղեցին Հայաստանում ստեղծեց իր կանոնական գրվածքները և, իր ժամանակի տեսակետով, վերանայեց գոյություն ունեցող գրականությունը և գրաբնութիւնը ենթարկեց ու սղատում» կատարեց, գրաբնույնական այդ սղատումներն ժամանակ որոշ աշխատություններ կրճատվել են անճանաչելի ստորիանի, իսկ որոշ աշխատություններ՝ խմբագրվել: Տեղեկություններ կան, որ այդ մտայնութիւնական հետեանքով ուշնայվել են հին հայկական մի շարք արժեքավոր աշխատություններ⁸:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ միջին դարերում ամենից շատ փոփոխում, խմբագրում, բնագրի վրա ավելացնում կամ պակասեցնում էին հիմնականում պատմագրական և մեկնողական գրականությունը: Կանոնական համարվող աշխատությունների փոփոխությունը խստիվ արգելվել է: Վերջիններիս մեջ սխալ կատարելը համարվել է անենքելի, ուստի գրիչներն ամեն կերպ աշխատել են ավելի զգուշ ընդօրինակել, իսկ ընդօրինակությունը վերջնականաբար հետո, համեմատել նախագաղափար օրինակի հետ: Ընդօրինակած բնագիրը նախագաղափարի հետ համեմատելու այդ աշխատանքը հայ մատենագրության մեջ ուշ զարերում կոչվել է «գաղղիլ»:

⁶ F. C. Conybeare, *նշվ. աշխ.*, էջ 153:

⁷ Ա. Միրզևան, Տուգակ Առաջաց Երտազգի, էջ 324:

⁸ Չեռարերում մեծ-մեկ պատահում են ազնագորական համարված և արգելված գրականության կամ նրանց հեղինակների ցանկեր: Այսպես, Մատենագրանի № 1869 ձեռագիրը, որն ընդօրինակված է Անդրեաս գրչի կողմից 1555 թ., պարունակում է արգելված գրականության հետևյալ ցանկը. «Այս են անտարք մՁ (16) սուս արցոն, որ կհիւղ են ի հերձուածդ անորցն, և ոչ յուզգափտա ստորոցն, իմանայք, որ է այս: Ազամայ կամին, ճիւն արճութիւնս, Փեփկանն, Գորտասան, կերպուտան, Գորտուն, Պետրոսի տեսին, Գիտեմն, Աստուածամենք պատմութիւն, Աքրտուն, Փարճանացիք, Մանկութիւն անուն, Լուսաւորչին տեսին, վեճարքլիկ մասունան, Գրիգորի և Բարսեղի Տարցմունքն, Սխալալ մեկութիւն անտարանի: Եւ որ հաստայի նոցա՛ր՝ նոցոյն (ՄԱՄ Ան. № 1869, ք. 321ա, հմմ. 2. Առաջաց, նշվ. աշխ., էջ XXXIX):

Համեմատության աշխատանքներում գրիչներին հաճախ օգնության են դալիս իրենց զուակից բնկերները: Այդ մասին կան մի շարք հիշատակություններ: Այսպես, Հովհաննես գրիչը Սարգիս Շուրճաւու «Անկնութիւն կաթողիկէից թղթաց» աշխատության 1413 թ. ընդօրինակության առթիվ թողած հիշատակարանում խնդրում է հիշել զաստկալ Մատթնոս կուսակոտն քահանային «որ զգիրքս զըրդեան և ազնական կող մեզ բազում անգամ»⁹: Գրիգոր Ճաթնացին իր ձեռագրի վրա աշխատող և վաստակ ունեցող մարդկանց շարքում հիշում է նաև ձեռագրի բուղղիչին¹⁰:

«Եւ համորէն վասթակողաց,
 Ի սրբազիրս աշխատողաց,
 Որք անաջին և ի վերջին
 Ի կենաց զիրն արճանացին:
 Ախոյ՛ մտօք ընթերցողաց,
 Եւ բարեսէր բնկերողաց,
 Եւ զօրինակն շնորհողաց
 Եւ ուղղիչն սխալանաց»¹¹:

Մահակ անունով ստորի մի գրիչ 1274 թ. ընդօրինակել է «շին կատարանը»: Ընդօրինակած այդ բնագրում սպողել են մի շարք սխալներ, ուստի հանձնարարվել է Կոստանդին անունով մեկին զօրդելու» այն: Վերջինս կատարել է այդ աշխատանքը և թողել հետևյալ հիշատակագրությունը. «Այ՛ ստուածարեալ մանկունք վերին Սիոնի, որք ազալիք ի սմանէ՛ բաղամեծ ստացողի սորա... մեզաց թողութիւն հայնցեցէք ի տեսանէ և սխալանացս որ ի սմա անճեղազիր լերուք, զի գրողն աստի էր և յոյ՛ միւր էր գրել և անչար՝ մար: Ես ըստ կարի իմում համարձակեաց ուղղել զսա ի ստույլ արիւնակ է խիտս յիշու կրեցի յուղղել սորա, զի կարի սխալ էր, որոյէս և տեսանէք»¹²:

Որոշ գրիչներ, բնագրերի ընդօրինակություններն անթերի տեսնելու ցանկությունով, այնքան են խստապահուց գտնվել, որ ձեռագրի ընդօրինակությունը նախագաղափարի հետ համեմատել են ոչ թե մեկ, այլ՝ մի բանի անգամ: Այսպես, Գարապետ օրիշն իր թողած հիշատակարանում գրում է. «Այ՛ իշխեսցէ որ ի հոգոյն սրբոյ սգիտարար բան թիրել և կամ զգրեալսն շատուցիլ յարիւնակէս, որպէս և ես, որ թէլպէս և գիրս յոյ՛՛ անարուէստ է, այլ գրանն ուղղեցի կրկին և երեքիկին»¹³:

Համայն է պատահում, որ գրիչներն, բնթերցողների վստահությունը շահետ համար, անհրաժեշտ են համարում նշել, որ ձեռագիրն իրենք ընդօրինակել են «բնութի» և ժառույճ օրինակից: Այսպես, Հովհաննես գրիչը 1331 թվականին ընդօրինակած «Ճաշոցին» հիշատակարանում նշում է. «Գրեցի անարժան ձեռաք իմովը յընդիր և ի ստույլ արիւնակէ, կենար տառապանար և բազում պանդխտութիւնս»¹⁴:

Վենետիկի Մխիթարյանների մատենագրանի № 298 ձեռագրի գրիչը իր

⁹ «Են գարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 157:
¹⁰ Նույն տեղում, էջ 73:
¹¹ Տուգակ Առաջաց Երտազգի, հ. Բ, էջ 270:
¹² Տուգակ Առաջաց Վենետիկ, հ. Ա, էջ 266:
¹³ Առ. Միրզևան, Տուգակ Առաջաց Երտազգի, էջ 325:

ընդօրինակած ձևազերքն արժեքավորելու համար անհրաժեշտ է համարում մինչև, որ նու արտազրկած է մի ձևազերքից, որը «ստուգելու և սրբազրեելու էր ինքն Քրիստոսի կամօղբիկոս Աղթամարցիին բազում աշխատութեամբ ի սխալ յարկինակէ»¹¹:

Պատահում է, որ գրչութեան սաստիկագույն մեծ հմտություն ու պատրաստություն չունեցող գրիչները, ստանալովովք իրապես չափազանց հմտոր, ստանալով նկատում են նախազգալիորակ՝ տղի առ տղի և ստանց որևէ շեղումների վերաբերողը բնագրեր: Մասիննու Ապուլենիցիին 1785 թ. տասնյոթ ընդօրինակել է «Սաղմոսագրքի» մեկնությունը և իր թողած հիշատակարանում խնդրել ընթերցողներին անմեղազոր լինել սխալների համար, «Վասն զի անաղիշեակ գրչուս իմ արհեստի բերողանութեան և այլց, յերկիղջ կործնեց սխալանաց, գրեալ եմ զերկուս և զերեք հեղինակ սորին, նայելով ի վերայ նոցա զգրեալան ի նոսա, իսկ նկարագիրս և զտպան առաւ գրեցի, և ոչ զրազարձութիւն արարի, այլ միայն և կեզնցին տիպն նկարեցի և ծրեցի»¹²:

1243 թ. Սահ ազգային-եկեղեցական ժողովը հասուն օրոշում է կայացրել, որ կրօնական-կանոնական գրողանութեան ընդօրինակությունը հանձնարարել միայն գիտուն մարդկանց: Այդ որոշման ժԼ կանոնում ասված է, «նու հրամայել է կոփարկույան զտարբ գրես գրել արուեստաւորաց, և գիտեց ի վկայութեամբ կատարելոց»¹³:

Ինչպես արդեն նշեցինք, միջնադարյան բնագրերը երբեմն նպատակային ընթացումների կամ հավելումների են ենթարկվել, որը չի կարելի նույնացնել սովորական աղծառում-աղջավազումների հետ: Օրինակ վարքաբանական երկերի հայտնաբերումը իմբարտություն կազմելու համար անհրաժեշտ է եղել համառոտի ընդարձակը, իսկ երբեմն էլ գրիչ-խմբագիրների սվայն երկի այս կամ այն հասվածք անհարկ է վկայել, ուստի անհրաժեշտաբար միջամտել են:

Այսպես, ուղ գարերում Կարյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը կրճատել և ստեղծել են Գորյունի բնագրի համառոտ արարերակ, որը բուն-սիրություն մեջ հայտնի է «Սուտ Կորին» անունով: Երբակացու «Աշխարհացոյց»-ի բնագիրը կրճատվել և կազմվել է նրա համառոտ կամ «Աղվեսգրքի» կոչվող բնագրի, որը զգալի չափով պակասավոր է, զան «Ընդարձակ»-ում: Նույն Երբակացու «Տրեգիդիոգրություն» բնագիրը կրճատվել է, երանից կազմվել է համառոտը՝ Պատկանյանի հրատարակությունը, որը զգալի չափով սաղմոսավոր է մեղ հասած բնագրակ բնագրերից:

Ուշագրավ է Երբակացու «Տրեգիդիոգրություն» կրճատումներից մեկը, որը ցուցանակական է կրճատում կատարող հեղինակի միտումները նկատելու ասանակիցներից: Երբակացին խոսում է բազմակիս բախատույնիցների առաջ քաշած այն կարծիքի մասին, որ իրը երկխոսները ծնվում են առանձին աստղերի ատակ, որի հիման վրա կարելի է և զուգակելի թե սվայն երկխոս հարուստ է լինելու, թե տղբատ, շար է լինելու, թե բարի և այլն: Այս առթիվ Երբակացին շատ սրամտա տրամաբանում է. եթե փոքրիկ անմեղ երկխոսի մեջ ասված

¹¹ «Տաղակ Անագրաց հենարկի», Կ. Ա. չ. 1090:

¹² «Տաղակ Անագրաց Գրոսագրի», Կ. Գ. չ. 12 13:

¹³ Չ. Լովենիյան, ՆյուՅորք և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, տրաբ Բ, Նյու-Յորք, 1943, էջ 12:

նախապես շարվելու է դեռ, ինչու՞ են սպա դատարակում երկխոսին, քանի որ դատարակությունն անկարող է փոխել երկխոսի «ստուգածատուր յատկությունը»: Նրան երկխոսի շարվելու բնածին է, շարունակում է նա, ինչու՞ են սպա դատավորները պատժում շարվելու անողներին, քանի որ շարվելու բնածին է, եմ վերջացան, եթե անմեղ փոքրիկ երկխոսի մեջ ասված ի սկզբանե շարվելու է դեռ, այն զեպում շար է լինել ասովածը: Քրիստոսյան ընդօրինակողը Երբակացու՝ սաստուն շար անվանելու այս հասվածք համարել է անպատշաճ և կրճատման է ենթարկել:

Որոշ բնագրերի ընդօրինակման ժամանակ գրիչներն ըստ իրենց նախ-սիրություն որոշ բառեր և հատվածներ են ավելացնում լուսագրերում կամ ձևագրի բացատրություն: Այդ նախատեղի չէ, մասնավոր, երբ կարելի է տարբերել նախնական բնագիրը լուսանցագրությունից: Բայց նրանք այլ բնույթ են ստանում, երբ արտազրկում, ձուլվում են բնագրի հետ, և նշվում են նոր ավելացվածների հետքերը: Բնկերը նման աղծառումներից երկու օրինակ: Ըստ «Աշխարհացոյցի» հնագույն ընդօրինակություն, Գերսանյայի արևելյան ասմանը տարածվում է մինչև «ցՄարմատացուց լերինս և ցՄանուր զետ»¹⁴: «Աշխարհացոյցի» ուղ գարերի ընդօրինակողներից մեկը, ցանկանալով բացատրել Մանուր զետի նոր անունը, իր կողմից ավելացրել է. «Մանուր զետ, որ է Յագու ուսաց»¹⁵: Այդ ավելացումը կարող էր կատարվել 13—14-րդ դարերից հետո, երբ ուսուական ծառագ զետը ծանոթ էր հայկական շրջաններում, Յագուս կարելի էր շփոթել այդ անվան հետ: «Աշխարհացոյցի» մեջ Մարմատացում հիշվում է Ներսեսնա թերակողի. «Եւ ունի Մարմատագ... քրիստոսնէից զՄուսուն ցամաք կղզի...»¹⁶: Նոր ժամանակների ընդօրինակողներից մեկը ցանկացել է բացատրել, թե որն է Ներսեսնա և նշված բնագրի վրա ավելացրել է «Քիրոսն» երկն. որ է ցամաք կղզի»¹⁷: Պարզ է, որ եթե մենք չունենայինք «Աշխարհացոյցի» հին ձևագրեր, հարկադրված պետք է լինեինք նրա հեղինակի անդաշարծիլ մինչև 13—14-րդ դարերը:

Բնագրերի վրա հավելումներ կատարել սովորական է եղել առանձնապես տարեգրություններում: Այս զեպում գրիչներն իրենց բավական ազատ են զգացել: Դրա ապացույց մեղ տալիս է Սամուել Անեցու «Հաւարժութիւն» ի դրոց պատմագրաց» աշխատությունը, երբ այդ բնագրի հնագույն ընդօրինակությունը (օրինակ 1176 թ. ձևագրից) համեմատության մեջ ենք դնում ուղ գարերում կատարված ընդօրինակությունների հետ, պարզվում է, որ ուղ գարերում Անեցու ժամանակագրության վրա ավելացված հատվածներն իրենց ծավալով ընդ գիշում հեղինակի բնագրին: Այդ ավելացումները, իհարկե, արժեքավոր են, քանի որ զրկում են ժամանակակից և ակնաստես անձնավորությունների կողմից: Բայց իրողություն է, որ ավելացած այդ հատվածները, ձուլվելով նախկին բնագրի հետ, ակամա աղծառել են այն:

Բնագրային աղվադումների և գրական սխալների շարքում ամենից մեծ թիվ կազմում են ու այնքան դիտավորյալ կատարված փոփոխությունները, որքան նախկին բնագրերի անուշադիր վերածությունը և սխալ ընդօրինակու-

¹⁴ ՄԽԲ Ան. N 1583, թ. 148բ:

¹⁵ «Աշխարհացոյցի» Saint-Martin-ի հրատարակություն, էջ 336:

¹⁶ ՄԽԲ Ան. N 1583, թ. 148ա:

¹⁷ «Աշխարհացոյցի» կշված հրատարակություն, էջ 335:

Քյուրը Այդ բնույթի բնագրային ազավազումները և գրչական սխալները բացահայտելու և ճշգրտելու տեսանկյունից ուսուցողական մեծ արժեք ունեն ներշնակավոր բանասեր Նորայր Բյուզանդացու երկու աշխատությունները՝ «Հայկական բառարանություն» և «Նախնիքը» (վերջինս անտիպ է)։ Վաստակաշատ գիտնականը այդ աշխատություններում ուղղել է 5—17-րդ դարերի հայ մասնագրություն մեջ սպրդած հարյուրավոր սխալներ։

«Նախնիք» աշխատության առաջաբանում նա անհրաժեշտ է համարել ընթերցողին ծանոթացնել իր աշխատանքային լարբարատրիայի հետ. «Երբոր կտեսնեի,— գրում է նա,— թե հեղինակը կհիշատակե մասնավոր բան մը, դոր չէի կրնար մեկնել իր գործերու միջոցով, թե իր մտածումը հակասական կամ անհեթեթ կրնար ինձի, թե իր ոճը համամայն չէր իր ապրած դարուն քերականության և բառարանին, կանց կառնեի և կհարցնեի...»։ Բյուզանդացին այնուհետև թվարկել է իր հարցումները՝ ամփոփելով նրանք քսան կետերի մեջ։

1. Հեղինակն արդյոք ուրիշ աղբյուրից չի՞ օգտվել, և այդ աղբյուրը չի՞ կարող օգնել ուղղելու նկատվող սխալը։
2. Միալավոր բարձր հատուկ անուն չի՞ եղել, որը հրատարակիչը հասարակ է կարծել։
3. Հակառակը, այն հասարակ անուն չի՞ եղել, որը հատուկ է կարծել։
4. Աղավաղումը կետագրության սխալանքի հետևանքով չի՞ առաջացել։
5. Ուշ շրջանում ձևագրի լուսանցքում և կամ բացատում զրված ընդմիջարկություն չէ՞, որը նոր արտագրողը բնագրի մեջ է մտցրել։
6. Մի գլխի վերջը չի՞ միացված հաջորդ գլխի հետ։
7. Մի գլխի սկիզբը չի՞ խառնված տվյալ գլխի տակ շարագրված բնագրի հետ։
8. Պակաս բառի կամ տառի մոռացություն չկա՞ արդյոք։
9. Չկա՞ արդյոք էջերի նախաաջություն։
10. Հնդգործնակող գրիչը տառերի շփոթություն թույլ չի՞ տվել։
11. Նույն բառերի շփոթություն թույլ չի՞ տվել։
12. Սխալ ըմբռնումով կրճատումներ չկա՞ն։
13. Չկա՞ն իրար միացված երկու կամ երեք բառեր։
14. Ամբողջական բառը չի՞ անդամահատած մասերի։
15. Բառի մի մասը չի՞ միացված առաջին կամ հաջորդ բառերին։
16. Բառի առաջին տառը չի՞ կրկնված նախորդ բառի վերջում։
17. Չանց չի՞ առնված սկզբի տառը, որն առաջին բառի վերջին տառն է։
18. Վանկը չի՞ կրկնված հարևան բառերի մեջ։
19. Վանկը չի՞ հապավված նույնածախ վանկի մեջ։
20. Բառի վանկերի կամ տառերի տեղափոխություններ չկա՞ն¹⁵։

Գրչական սխալների մի մասն առաջացել է հին բնագրերի ոչ ճիշտ բանաձևատման հետևանքով. մաշտոցյան երկաթագիրը, ինչպես հայտնի է, չուներ բառանջատում, և ուշ միջնադարում կարագրության ժամանակ գրիչներին ոչ բոլոր զնայրում է հաջողվում այդ աստարել անխալ։ Գծվոր է լինում բանաձևատմում մանավանդ այն դեպքում, երբ խուսնացած մագաղաթի կամ թղթի

վրա գունատված տառերը վատ են երևում։ Անհիմն չէ ներսնս գրիչը, երբ իր ընդօրինակած ձևագրի հիշատակաբանում խնդրում է անմեղադիր լինել նկատվող սխալների նկատմամբ, որովհետև նա արտագրել է այնպիսի մի ձևագրից, որի գրիչն լիզած էր¹⁶։ Հորդանան անունով ուրիշ մի գրիչ գանձատվում է, որ իր արտագրած ձևագրիը՝ «Աերինակս եղծած է, փոտել մագաղաթ է, և ոչ կարևը վերծանել»¹⁷։

Թերեք ոչ ճիշտ բառանջատման հետևանքով առաջացած սխալների մի քանի օրինակ։

«Ո՛ր է ծննդեան անվոփոխ անունն» (Փիրոն, Ցաղադս յառաջինամտութեան, Ա, էջ 40)։ Բյուզանդացին առաջարկել է ուղղել. «Ուր է ծննդեան անվոփոխ անունն»¹⁸։

«Ժակ շեօհհատուր Հոդուն լցեալ գնս, գիտութեանն էր աղբիւրացեալ զամենայն լսելացն ցուլս սկանչացն և սրտին ևրկրին» (Փ. Բուզ., Գ, ԺԲ, էջ 30)։ Ն. Բյուզանդացին առաջարկել է ուղղել շլսլսլացն ցնցուլս¹⁹։

«Չի առ քաղաքօք ևրկրութեք և տա ամենայն նահանգան նոցունց քաղաքաց՝ անցանէր Ողոնսս գետ քաղում յորդութեամբ չուց իւրոց» (Նու., Պատմութիւն, Ե, Ա, էջ 322)։ Ն. Բյուզանդացին առաջարկել է ուղղել շանցանէր, Ողոնսս գետ²⁰։

Գրչական սխալների զգալի մասն առաջացել է նմանաձև տառերի շփոթությունից հետևանքով։

Նրկաթագիր բնագրերում երբեմն շփոթվում են հետևյալ տառանիշերը.

| | | |
|-----|-----|-----|
| Գ—Գ | Ի—Ի | Մ—Մ |
| Ը—Ը | Ի—Ի | Յ—Յ |
| Է—Է | Մ—Մ | Ք—Ք |

Բյուրգիր բնագրերում շփոթվում են հետևյալ տառանիշերը.

| | | |
|-----|-----|------|
| ա—ա | ե—է | տ—ու |
| դ—դ | ժ—ժ | բ—բ |
| զ—զ | գ—գ | ս—ս |

Նոտրգիր բնագրերում շփոթվում են հետևյալ տառերը.

| | | |
|------|-----|-----|
| ա—ու | դ—դ | զ—զ |
| ե—է | ս—ս | վ—լ |
| խ—խ | յ—յ | շ—շ |

Որպես նմուշ բերենք գրչական սխալներից մի քանիսը.
S—Մ-ի աղավաղում.

«Ի տոծկէ և ի մթխկաց կերակրին ի խնամոցն աստուծոյ՝ մինչ ի դառնայ ձնոզացն» (Վարդան, Միկնութիւն սազմասացն)։ Բյուզանդացին ուղղել է «ձնոծակէ»²¹։

Ց—Ց-ի աղավաղում.
 «Թէ՛ ընդէր, վասն զի քաղզէացոց և յԱսորեստաննաց մատենից ցան-

¹⁵ Տե՛ս Գ. Մանուկյան, Հայ նշանավոր բանասերի մի անտիպ աշխատությունը (ԵՊրակաճ թղթ, 1969 թ., սցեսոսի 22)։
¹⁶ Տե՛ս «Վենետիկի ձևագրաց ցուցակ», հ. Ա, էջ 150։
¹⁷ Նույն տեղը, էջ 162։
¹⁸ Ն. Բյուզանդացի, Հայկական բառարանություն, Գ, Պոլիս, 1830, էջ 24։
¹⁹ Նույն տեղը, էջ 30։
²⁰ Նույն տեղը, էջ 31։
²¹ Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 13։

կազոյն են մեր իբր ի յունականէն կամեցար մեր ցուցանել» (Խորենացի, Ա, Բ)։ Ե. Բլուզանդացին առաջարկել է ուղղել «յանկկազոյն»²⁵։

Կ—Հ-ի և Ս—Մ-ի աղավաղում.

«Բնկ բարեացարարտիս յանկարծակաւ կենացն ամենեցուն լինէր...» (Կորին, Գ. Ճնտղլյան հրատ., 920-րդ տող)։ Հրատարակիչն ուղղել է «յանկարծանաս»²⁶։

Ա—Ե-ի աղավաղում.

«Ասորիբ... ունի ...վայրս ընդարձակս և բարխս» (Աշխարհացոյց)։

Ուղղում է «բնրբխս»²⁷։

Ի—Բ-ի աղավաղում.

«Իկ Գաւորս, ի մտի եղեալ էր շրջեցուցանել զբրիտոսադիր կարգացե պատճառութիւն» (Կորին, Ճնտղլյանի հրատ., 115-րդ տող)։ Հրատարակիչն ուղղում է «շիշուցանել»²⁸։

Ի—Ռ-ի աղավաղում.

«Եւ ի սոցա ի հարաւոյ աշխարհ մի առ Անձանօթ երկրաւ, յորում է գազան ինչ՝ կանացի ունելով զլալս զծնուս» («Աշխարհացոյց», էջ 599)։ Ուղղում է «կանացի ունել ձնուս»²⁹։

Ա—ՈՒ-ի աղավաղում.

«Ապա յետ այսորիկ դար Գանուն ոմն զամապետ սպարաիրացն զնզին մանուէլէանս զորացն» (Ք. Քուզ., Ե, Ա, էջ 243)։ Ե. Բլուզանդացին առաջարկում է ուղղել «զամապետ»՝ զորատետի նշանակութիւնը»³⁰։

Գ—Դ-ի աղավաղում.

«Բըւ և Փլինգոնիս. ամենայն թագաւորաց հովիտ եղեալ պտրթեն Արասշէս» (Խորենացի, Բ, ԺԳ)։ Պէտք է ուղղել Փլինգոնիս (երկրորդ դարի պատմիչ է, Լյուդացի՝ Տրայլալ քաղաքից)³¹։

Սյալ բռնանշատուը կամ գրչական մի տառի սխալը հաճախ պատճառ է դառնում ոչ միայն մի բառի, այլ սովալ բառն օգտագործած ամբողջ նախադասութեան աղավաղման և միանգամայն այլ բովանդակութիւն ստանում։ Բերննք այդ կարգի մի քանի օրինակ

«...շեթըօցն աստուծոյ մերոյ, մերձաւոր կենակից փալլէր, եւ զի բոտ ընկնչոց առ ի մէնջ հարքն ի կափաւումն դարձնան» (Կորին, Ճնտղլյանի հրատ., 924-րդ տող)։ Հրատարակիչն ուղղում է «ի կատարումն»։ Պարզ է, որ նրկաթղթի Տ և Փ-ն իբրբ հետ շփոթվել չէին կարող, այստեղ աղավաղվել են բոլորգիր տ և փ տառերը։

«Եւ այս է շարտիւն եղեալ յորդի կայսերն Երակղի՝ ի յանցս մեծս, որում անուն էր Արալարիկոս որ և խոխոտունեաց զսիրտն հարն և խրամասեաց զճրաշալի անձն...» (Սերետ, էջ 103, տ. 14—22)։ Գ. Արքայրյանն ա-

²⁵ Նշված աշխատութեանը, 21.
²⁶ Կորին, Վարք Մշտնոցի, Երուսաղէմ, 1930, էջ 70—73.
²⁷ Ա. Գ. Աբրահամյան, Խորենացու գերագրուղ «Աշխարհացոյցի» հնդիակի հարցի շուրջը, էջ 42.
²⁸ Գ. Ճնտղլյան, Ելմ. աշխ., էջ 9.
²⁹ Ա. Գ. Աբրահամյան, Խորենացու գերագրուղ «Աշխարհացոյցի» հնդիակի հարցի շուրջը, Երևան, 1940, էջ 45.
³⁰ Ե. Բլուզանդացի, Ելմ. աշխ., էջ 9.
³¹ Գ. Ճնտղլյան, Ելմ. աշխ., էջ 73.

ռաջարկում է խոխոտունեաց ուղղել խոխոտնեաց³²։ Այստեղ ևս աղավաղումը պետք է կատարված լինի բոլորգիր հիման վրա։

Մաշտոցի անվան մասնագրութան N 3722 ձեռագրի հիշատակարանում գրչութեան տարեթիվը արված է շորս զուգահեռ թվականներով՝ քրիստոնեական, արարչութեան, քրիստոնեական հայկական և հայկական մեծ թվականով. «Արդ, վերաւորանալ եղև այս ի թուարթութեանս բառ յարեթական տուարին հընդետաան յորեննիս յունիալ ետակի թուով, և ի յնյաննիւլ նախասնեղծին ի վայելչութեան վայրն և ծաղկալարը բորաստանէն մինչև ցտյն ամ յարարարդին միահամուռ միանգամայն ամբ իբրև 20 և 2 յունիալ քոտակի թուով։ Եւ ի կենարար յայանութենէն աստուծոյ բանի մինչև ցտյն ամ շարամանեալ պարթական ամբ իբրև 03 և 2, յորում և թուականս Հայոց 20Գ էր»³³։ Ըստ այս հիշատակարանի, ձեռագիրը գրված է քրիստոնեական համեմական թվականի 1304-ին (753+551=1304)։ Քրիստոնեական հայկական հաշվով 1306-ին, որից հանելով մեղ ծանօթ ավելցիք երկու տարիները, ստանում ենք 1304։ Արարչութեան թվականը՝ յոթանասնեց կողմով թվականն է, որից անհրաժեշտ է հանել 5200, 6704 թվականից հանելով 5200, ստանում ենք 1504, երկու հարյուր տարվա տարբերություն։ Պարզվում է 20 և 2 թվանշանի մեջ տեղի է ունեցել աղավաղում. 2-ի փոխարեն պետք լինի 7։ Ըստ որում, անկասկած աղավաղված է բոլորգիր շ տառը շ-ի հետ։ Քիչ չեն պատահում նաև ստանձնի տառերի մտացումքումք բացթողումները, որոնք հեռանկարով նախադասութեանը բոլորովին այլ իմաստ և ստանում։ Բերննք մի քանի օրինակ

Արևոսը խոստանում է նկարագրել եզամն և զաւուրս հինգ թագաւորացն» — (էջ 2)։ Բնագրում սխալ է սպղղել. դժվար է նկատել, որ նախնական բնագրում եղել է «...զամն և զաւուրս հին թագաւորացն»³⁴։

Նույն հեղինակի մտա կարգում ենք. «Ապա սալ. Եւ զամ ի Կարնոյ քաղաք և եկալը դու առ իս։ Եւ զամ առ ձեզ օգնութիւն հազիս» (էջ 141, տ. 8—11)։ Անողք բյուզանդական կայսրը է՝ ուղղված Քնադրոս Ռշտունուն։ Եսարց կորով օգնութեան մասին է Գ. Արքայրյանը համոզեցուցիչ ձևով առաջարկում է բերված նախադասութեան մեջ «Հոպոն»-ն ուղղել «Հն» (70 000) ոգի» ձևով, այսինքն՝ խոստանում է օգնել 70000 հոգով³⁵։

Շույց տալու համար, թէ գրչական նման սխալները տարբորագրական ինչքան մեծ աղավաղումների տեղիք կարող են տալ, ուզում ենք մասնացոյց անել մի սխալ, որ բանասիրական մեծ վեճերի առարկա է դարձել։ Շիրակացու «Աշխարհացոյցի» նոր բնագրի նախնական մեջ գրիները նրա հեղինակ էն համարում Առվեստ Խորենացու և նրա անունը դնում վերնագրում։ «Աշխարհացոյցի» ձեռագրերի ուսմասնախորհրդից հայանի է, որ 17-րդ դարից առաջ բնագրի նակված ոչ մի ձեռագրում չկա Խորենացու անունը. հետագային բնագրի նակությունները մեղ հանդիպում են առանց վերնագրի։ Հետագայում նրա խորագիրը դարձնում են բնագրի սկզբի առաջին երեք բառերը՝

³² Տե՛ս Գ. Վ. Արքայրյան, «Մերնոթ պատմությունը և անանտի տեղեմանը, Երևան, 1965, էջ 173.
³³ ՄԱՄ Ան. N 2722, Բ. 356բ—357ա (ՀՄՄ. ԹԳ գրքի հիշատակարաններ, էջ 24).
³⁴ Գ. Արքայրյան, Ելմ. աշխ., էջ 41, 139.
³⁵ Ելմ. տեղ. էջ 195.

«Տաղագս աշխարհագրութեան ստոյգ»։ 17-րդ դարից հետո դրան ավելացնում են *Խորենացու անունը*։ *Վերնագիրը դառնում է*։ «Տաղագս աշխարհագրութեան ստոյգ Մովսիսի Խորենացույ»։ Անուշադիր գրիչներից մեկի մեղքով այս վերնագրում բաց է թողնվում «ստոյգ» բառի վերջին «գ» տառը, որի հետեանքով վերնագիրը բոլորովին այլ իմաստ է ստանում։ «Տաղագս աշխարհագրութեան ստոյ Մովսիսի Խորենացույ»։ Եվ ահա եղև են հայագետներ, որոնք այս նոր վերնագրի հիման վրա ստեղծել են մի ամբողջ տեսություն, որ իբր թե գոյություն է ունեցել երկու Խորենացի՝ ստույգ Խորենացի և սուտ Խորենացի, և «Աշխարհացոյցի» վերնագրում է իշխված Խորենացին այդ սուտ Խորենացին է։

Հայագիտության մեջ պակաս վեճեր չեն եղել Կորյունի մի արտահայտությունից շուրջ։ Խոսելով Մաշտոցի Վրաստան կատարած առաքելությունից, վրաց արքայի ստեղծման և հովիվներ կարգելու ստուգապատում եղելությունների մասին, Կորյունն ավելացնում է. «...որոց և իմ անարժանիս եղևայ ի կարգ եպիսկոպոսութեան...»։ Շատ լրջմիտ հայագետներ այստեղից եզրակացրել են, թե Կորյունը վրացի կամ վրաստանցի է եղել։ Մինչդեռ տակավին դարակազմակերպիչ և Բյուզանդացի կառահի էր բնորոշված արտահայտության ազգազգայած ինքնը և առաջարկել նոր ընթերցում՝ «գրամ արժանիս»³⁵։ Հետագայում Քաղ. Ավդալբեկյանը, սույն իրավացի սրբագրությունը կազմեա ունենալով, առաջարկեց կարդալ «գրամանս արժանիս», որը բոս էություն իմաստով նույնական է³⁷։ Դրանով իսկ կանխվեց ազգավաղման հետևանքով առաջացած անականությունը։

Քննարկին ազնատումներ են տեղի ունեցել նաև ձևագրերի կազմելու ժամանակ։ Գրիչները սովորաբար ձևագրերը գրում են պրակներով և, կազմարարին օգնելու նպատակով, պրակների սկզբից և վերջից դնում նրանց համարները։ Մեկ-մեկ պատահում են անուշադիր կազմարարներ, որոնք շփոթում են պրակների համարները և նուրառաջ կազմում։ Քերթների խառնաշփոթություններ են պատահում նաև հին, քայքայված ձևագրերի կազմման ժամանակ։ Բավական է, որ քայքայված ձևագրի որոշ էջեր սխալ տեղադրված լինեն (իսկ խուճացած էջերի տեղադրությունն այնքան էլ հեշտ չէ) և հետագայում այդ ձևագրերն ընդօրինակվի՝ բնագրի լուրջ սղծատման տեղիք է տալիս։

³⁵ Ն. Բյուզանդացի, Կորյուն վարդապետ և երրիս թարգմանությունը, Տփղիս, 1900, էջ 385—386։

³⁷ Քաղ. Ավդալբեկյան, Հայագրական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 136։

XVII. ԱՎԲԵՐ ԵՆ ԳԻՐԶՆԵՐԸ ԵՎ ԽՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՆ ՆՐԱՆԻ ԱՆՈՒՍՏԷՒ


Միջին դարերում եղել են գրություններ գրադոզ և նրա մեջ մասնագիտացած հատուկ անձինք, որոնք կոչվել են «գրիչներ»։ «Գրիչ» ասելով մենք այժմ հասկանում ենք ծայր կամ գրակիրը ծայրի հետ միասին, իսկ հնում այն ուներ բարձրակից այլ նշանակություն։ «Գրիչ» ասելով նկատի ունենի այն անձնավորությունը, որը ձևագրեր է ընդօրինակում։ Գրիչներն իրենք իրենց գրառումների մեջ անվանում են «գծող», «ծրող», «մրող» և այլ նվաստացուցիչ անուններով։

Գրիչները ձևագրեր ընդօրինակելուց բացի, կատարել են շնորհակալ մի այլ գործ էս. նրանք իրենց ընդօրինակած ձևագրերի բացատրելու կամ տեքստերի վերջում թողել են գրառումներ և հաղորդել անչափ արժեքավոր պատմական տեղեկություններ ձևագրի արտագրության հանդամարների, գրության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական իրադարձությունների և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Այդ տեղեկությունները անզուհուսանելի պատմական աղբյուրներ են, որովհետև գրված են իրադարձությունների ակնատես, ակնաշարտ անձնավորությունների կողմից։ Նրանք երբեմն գրի են անում և այնքան անմիջական և ճշմարտացի, որ դրանց միջոցով ծանոթանում ենք ոչ միայն գրած ժամանակաշրջանի իրադարձություններին, այլև մեզինք հարյուրամյակ, իսկ երբեմն նաև հազարից ավելի տարիներ առաջ ապրած մարդկանց ներքնաշխարհին՝ նրանց հույզերին, զգացմունքներին ու երազանքներին։ Գրիչների այդ գրառումները կոչվում են հիշատակարաններ և հիշատակագրություններ (եթև գրիչն անմիջապես իր կողմից է կատարել գրառումը՝ կոչվում է հիշատակարան, իսկ եթև ուշ շրջանում ուրիշ մեկն է գրել՝ հիշատակագրություն)։

Հիշատակարանների և հիշատակագրությունների որոշ մասը հրատարակված է ձևագրացուցակներում, իսկ առանձին մի ժողովածու հրատարակել է Ղ. Փիրդալեմյանը։ Նոր ժամանակներում հիշատակարանների հավաքման և հրատարակման գործում շնորհակալ նախաձեռնություն ցուցաբերեցին Գ. Հովսեփյանը և Լ. Խաչիկյանը։ 1951 թ. Անթիլիասում լույս տեսավ Գ. Հովսեփյանի կազմած հիշատակարանների ժողովածուի առաջին հատորը՝ ընդգրկելով սկզբից մինչև 13-րդ դարի կեսը, իսկ ահադ. Լ. Խաչիկյանը հրատարակեց 14—15-րդ դարերի հիշատակարանները՝ ըստ սովոր հատորով Մակհան աշխատանքը սպասված չէ։ Հազարավոր հիշատակարաններ զեռ սպասում են իրենց ուսումնասիրողներին և հրատարակելիներին։

Տպագրության բացակայության պայմաններում գրիչներն աշխատի շնորհակալ գործ են կատարել ինչպես նոր երկեր ստեղծելու, այնպես էլ բնագրեր

արտազրկու և նրանք կորստից փրկելու գործում: Հաստատապես կարելի է
ասել, որ եթե շինեն միջնադարյան գրիչները, ապա Հայոց հին մասնա-
գրությունից փշրանքներ կհասնեն մեզ:



IX դ. գրչության նմուշ ՄԱՄ-ի № 9465 ձեռագրից:

Միջին դարերում գրչության են ունեցել գրչության հատուկ դպրոցներ,
որոնց շուրջն են համախմբված եղել գրիչները: Հայագիտության համար խիստ
կարևոր հարց է գրչության օջախների ուսումնասիրությունը: Մենք նկատի ու-
նենք ոչ միայն նրանց տեղագրությունը պարզելը, գործունեության ժամանա-
կը որոշելն ու բանասիրական նման այլ հարցեր, այլ նաև գրչության զարոց-

ները որպես ստեղծագործական օջախներ՝ իրենց զրչական ավանդույթնե-
րով, ներքին կյանքով և հայ մշակույթի ասպարեզում իրենց խաղացած դե-
րով ու խնդիրներով: Առաջագրված հարցերից շատերը ժամանակին ուսում-
նասիրվել են Հ. Ոսկյանի, Ն. Ավինյանի կողմից¹, թեև կատարելիք ևս թիշ
չէ: Այդ դպրոցների շարքում եղել են այնպիսիները, որոնք կոչվել են նույնիսկ
համալսարան, սերկերոց Աթենքը, ամալսարազար իմաստությանն և այլն,
ինչպես, օրինակ Գլաձորը:

Միջնադարյան հայ գրիչների համեստությունը երբևէ հասնում է ծայ-
րահեղություն. պատահում են դեպքեր, երբ հարյուրավոր էջերից բաղկացած
ձեռագրերի ընդօրինակությունը վերջացնելուց հետո, գրիչը խուսափում է հա-
զրդեղու իր անունը և կամ հիշում է նվաստացուցիչ մակդիրներով, իրեն ան-
վանելով փանաք, ապրկար, եղկելի, թերավարժ, անարվեստ, սգազուն, ծուլ,
փինաս, մատնազեղ, շրին, սխալդիր, սուտանուն, արմար, փծուն, արույ, ա-
զեխացի, յիմար, ապրկար, յոտի, թարմատար և այլն: Պատկերացնելու
համար, թե ինչպիսի ինքնանվագատացման էին հասնում գրիչները միջնադար-
յան իրականության մեջ, ավելորդ չեն համարում բերել Բաղդասար գրիչ
1617 թ. հիշատակարանից մի հատված. «Եւ արզ՝ ևս անպտուղս ի բա-
րեաց, մեղատարս յարգարաց, անկատարս ի կատարելաց, մեղանշականս յան-
մեղաց, անկարգս ի կարգատարաց, անսուրբս ի սրբոց, շարս ի բարեաց, չի-
մարս յիմաստնոց, անմիտս ի մտատարաց, անբանս ի բանականաց, անա-
բունտս ի յարունտատարաց, անխելնիս ի զրչաց, տղտս ի գիտնտարաց,
տունկս դունտանան, բարունակս ապականաբերս, Քանանուս դասակս և ոչ
ծուղայի, բազմամեղ և սուտանուն երէց Բաղդասար գրիչ...»²:

Մտևոթանում են ձեռագրի հետ. հարյուրավոր թերթից բաղկացած ձեռա-
գիր է գրել, նրա յուրաքանչյուր տառը ոչ թե գրել, այլ գծադրել, նկարել է,
չունի գրեթե ոչ մի սխալ, ոչ մի ջնշում և այնպիսի բազմատարուն ու խնամքով
աշխատանքից հետո իրեն անվանում է ծուլ, անարվեստ, սխալագիր...

Գրիչները մեծ մասամբ հասակ տառած, տարեց մարդիկ են եղել, բայց
մեկ-մեկ պատահում են նաև երիտասարդներ, նույնիսկ՝ պատանի գրիչներ:
Հայանի է, որ Քոխաթում գրված գեղեցիկ գրչության մի ձեռագրի ընդօր-
նակորը 12 տարեկան պատանի է Ե...դեռևս ԺԲ (12) ամաց զոլով... գրեալ
եղև սա ի քաղաքն Քոխաթա—կարդում ենք պատանու հիշատակարանում:
Պատահում են նաև գրչուհիներ: Մաշտոցի անվան մտանուդարանի ձեռագր-
րիցից մեզ հայանի են տասնյակ գրչուհիների անուններ՝ Հեղինե, Եուզանիկ,
Եղիաբեթ, Մարիամ, Մարգարիտ, Բարսիտ, Պայծաս և ուրիշներ:

Գրչության օջախներում վարպետ գրիչների մոտ սովորում էին և նրանց
օգնում երիտասարդ մարդիկ, որոնք կոչվում են «գրոց աշակերտներ»: Նրանք
սկզբում օգնում էին գրչին թուղթը կոկելիս, ձեռագրի էջերը սուղատելիս և
նման մանր այլ գործերում, իսկ հետո, երբ վարժվում են, սկսում են ձեռա-
գրեր գրել, մանրանկարել, կազմել և այլն: «Գրոց աշակերտները» մեծ և

¹ Մենք նկատի ունենք Ն. Ավինյանի «Մարտիկի գրոցը» ուղագրով աշխատությունը,
Հ. Ոսկյանի Բարձր Հայրի, Գուգարցի, Կարինի, Վասպուրական-Վանի, Տարսիի, Աբրահամյանի
և այլ գրչության օջախների նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները:

² Արտ. Սիմեոնյան, Մարց ցուցակի հայերեն ձեռագրոց Երուսաղիմ սուլտան Պատարհ համարում
հեռու, Հ. 1, Փարիզ, 1950, էջ 27:

յախտագիտութիւնք են հիշում իրենց ուսուցիչներին. նրանց համարում են «հետգոր հայր» և հիշում «մարմնաւոր հօր» կոչքին. «Յիշուաչքր գճողոր հայրն մեր և զմարմնաւոր հայրն»³:

Ուսուցիչները, ինչպես երևում է, խտտապահանջ են դրած իրենց աշակերտներին նկատմամբ, անհրաժեշտութիւն ղեկգրած անգամ ձեռնի են: Հակոբ գրիչը 1450 թ. դրած հիշատակարանում խոստովանում է, որ իր աշակերտը վայր է գցել գրչութիւն տախտակը, որի համար ինքը ձեռն է նրան, և աշակերտը մորմոքելով խնդրել է իրեն. «Մի հարկաներ զիս, զորքի եմ և անմը-խիթար»⁴: Իսկ ուրիշ մեկը, ավելի նոր շրջանում (18-րդ դ.), ղեռացել է վանք սովորելու. բայտ երևույթին լավ չի սովորել, այդ պատճառով էլ նրան ձեռն է և, ստրկորը Փալախայի մեջ գրել, Երեսխան փակել է վանքից, իսկ ինչ որ մեկըն աչք առիթով գրել է ծագրական բանաստեղծութիւն, որի ամեն մի տունը վերջանում է հետևյալ քառյակով.

«Ըս եմ փորքիկ երեխայ, երեխայ,
Ջուտերս ետին Փալախայ,
Վտան այն ելեալ ես փախայ
Վա՛յ ինձի»⁵:

Երկարատև, ծանր աշխատանքը գրիչները սիրով են կատարում: Քիչ է պատահում, որ գրիչները ձանձրանան, զոգոհեն գրչութիւն աշխատանքի ծանրութիւնից: Միայն մի դեպք է հայտնի, երբ հիշատակագիրը ստուշելու աշխատանքի մեծութիւնը նկատի ունենալով, գրել է.

«Ո՛հ, կազ իշովս մինչև լե՛րք հասից յաւարտ որոցս»⁶:

Ձեռագրերի հետ գրած ունեցող մասնագետը չի կարող պատկանելով շվեքարերովի ղեկի գրիչները, որոնք մեծագույն խանդաղատանքով, նրազի ազոտ, գեղույն լույսի տակ, ամիսներ, երբեմն տարիներ են աշխատել մի ձեռագրի վրա, համբերութիւնք ու խնամքով գրել և ավարտել իրենց ձեռագրերը: Ահա՛ ինչ է գրում հայ բողմերախտ գրիչներից մեկը՝ Մխիթար Անեցիին.

«(Հ)ասրաթ ունիմ ի յիմ սրտիս,
Միշտ տազնապիմ վասն այս բանիս,
Որ մինչ հոգիս էի մարմնինս
Ես տեսանեմ զթամամ զբրիս»⁷:

Գրիչների և ընդհանրապես հայ մատենագիրների առաջին խնդիրն է եղել գրել և ընդգործնակել աշխատի բնագրեր, որոնք օգտակար են, որոնք հասարակական արժեք են ներկայացնում: Անհաստանի Կամենից քաղաքի բանաստեղծ գործիչներից մեկը թողել է ուշագրավ հիշատակագրութիւն, ուր գրիչը համեմատութիւն մեջ է գրված մեկուրի հետ. մեղուն ծագիկներինց համարում է մեղոր

հայրը, սակայն նույն ծագից հայր է համարում նաև օճը, որից թույն է պատրաստում:

«Ձհիթ ծագիկանց մեղուաց կերչի
Սժէ և օճ շարաթիւն,
Այլ երկոցունց ալլատեսակ
Բաշխէ զնիթ ալլագուն.
Մեղուն ձեռալ զմեղր յօրինէ,
Գոգ աշխարհի սրիկն,
Բայց օճն ձեռալ նիթէ զթոյն
Ամենեցուն խորչիլ»⁸:

Եզրուկացութիւնն այն է, որ գրիչը պարտավոր է բազմապիսի նյութերից ընդգործնակել այն, որը օգտակար է:

Գրիչների մեծ մասը, որքան էլ նրանք ղեկցիկ գրելու լինեն, սովորութիւն ունեն ընթերցողից ներդաստութիւն խնդրել գրի մեծութիւն և կամ անհաջող գրչութիւն համար: Այսպես, 12-րդ դարի Կիլիկիայի ալքի ընկնող քերական Ստեփանոս Գույներիցանցը իր ընդգործնակած ձեռագիրը չի հավանում, գտնում է, որ «եռշոր և մացառոտ գծի ձաբոտանցի», ուստի ընթերցողների ներդաստութիւնն է հայցում: Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի մի ձեռագրի գրիչ հիշատակարանում ընթերցողներից խնդրում է բարի ողորմիտով հիշել իրեն և անմեղադիր լինել գրչութիւն խոշորութիւն համար, քանի որ «այնչափ էր կար մեր»⁹, այսինքն՝ այսքան էր մեր կարողութիւնը:

Նույն մատենագրարանի գրչագրերից մեկ ուրիշի գրիչը խնդրում է անմեղադիր լինել վատ գրչութիւն համար, քանի որ իր շնորհն այդպես է, Իրեն արդարացնելու համար նա օրինակ է բերում չուհիակին. մարդ կա մետարս է գործում, գրում է նա, և մարդ էլ կա՛ շայ կար:

Գրիչներից շատերը աշխատել են նյութական խեղճութիւն մեջ: Կան զործութիւն գտած այն արտահայտութիւնը, թե մեր գրիչները աշխատել են «մի նշխարք հացով», «մի կում ջրով» ստեղծվել է գրիչների աշխատանքային պայմանները նկատի ունենալով:

Ահա ձեզ բարերոցի մի գրչի թողի հիշատակագրութիւնը. «Ձվարդան աղբառս յիշես ո՞ տէր իմ, և անմեղադիր լեր... Այսօր բորբոսած հաց եմ կերել և ջրհորի կրաշուր խմել և գրել յերուսաղէմս բազում վշտով»¹¹, Ջմառի սեփականութիւնը հանդիսացող 1414 թվականի ընդգործնակութիւնն անուղբ գրիչը՝ Հովսեփը, ընթերցողներին հետևյալն է խնդրում. «Ո՛ր աղաչեմ անմեղադիր լերուք խոշորութեան, զի ցամաք կորեկ հաց կերայ և դրեցի, անմեղադիր լիքս»¹², Գրիչն իր այդ խնդրանքը կրկնել է նույն ձեռագրի այլ էջում ևս. «Աւրս պահէ էր և հացն ցամաք կորեկ, աղաչեմ անմեղադիր լեր»¹³:

Անկուրիայի Կարմիր վանքի նկատարիցից մեկի գրիչը աղբառութիւն մասին հետևյալ հիշատակագրութիւնն է թողել.

«Կերայ զդառնինն, զի ոչ էր լնդի, բան զաղբառութիւն,

³ ՄԱՄ Ան. Մ 843, Թ. 25ա:
⁴ Շուքիկ Անուգրաց Երուսաղէմի, Մ 1629, էջ 156—157:
⁵ ՄԱՄ Մ 8213, Թ. 32բ—32ա:
⁶ ՄԱՄ Ան. Մ 46, Թ. 138ա:
⁷ «Թամամ գրիս»՝ գրի ավարտելը, Անուգրի վերջացնելը:
Հիշատակարաններից մեկում հետո գրիչը համեմատած է վարձ նավաբերի հետ. ինչպես նավաբերն աշխատում է վարդաբերին տեսել և հասցնել նավն իր նշանակված հանգրվանը, «եռիտէս և գրչին» ի յետին գիճն», այսինքն՝ մինչև Անուգրի ավարտը (ՄԱՄ Ան. Մ 4429, Թ. 148բ):

⁸ ՄԱՄ Ան. Մ 3965, Թ. 87բ:
⁹ Շուքիկ Անուգրաց Երուսաղէմի, հ. Գ, էջ 277:
¹⁰ Նույն անգում, էջ 216:
¹¹ Ան. Սիւրմեան, Շուքիկ Անուգրաց Երուսաղէմի, էջ 283:
¹² Մ. Քելչյան, Շուքիկ Անուգրաց Երուսաղէմի, էջ 48:
¹³ Նույն անգում, էջ 49:

Շակոփա բարձի զաղն, զի ոչ էր ծանր, քան զաղքատութիւնս¹⁴։
 «Գուանիւն»-ը *Lactuca virosa* բույսն է, որ սարսափելի դառն է։ Գրչի համոզմունքն այն է, որ աղքատությունը այդ դառնիճից էլ ավելի դառն, ավելի լինի և։ Ղ. Ալիշանը հրատարակել է մի հիշատակարան, ուր գրելը վերջնականապես է. «Ջի հիլիս» պակաս, քան արա՛ւեր և իմ պիտոյրս՝ ուշինչ, բայց միայն ցամաք հացս¹⁵։

Խեղճություն մեզ է գտնվել իր ժամանակի խոշոր հեղինակություն հանդիսացող այնուխի աննավորություն, ինչպիսին նախի Նչեցին է։ Գլածորի դպրոցի բարունակներ իր ընդօրինակած ձևագրերից մեկում գանգատվում է, որ ձևագիրը գրել է աղքատ սեղանով. «...գրեցի զսա աղքատ և շքատր սեղանով զճառայակիցսն կերակրելով...»¹⁶։

Պողոս գրիչը ձևագիրն ընդօրինակել է թշնամու կողմից իր այդպիսի բնակավայրը շրջապատման մեջ գտնված ժամանակ և կարոտ «մի զգալ» կաթ ու մածուխ Իսկ Սիմեոն գրիչը (Նկեղյաց գավառից) 1493 թվականին գրած հիշատակարանում հետևյալ զանգամու ունի իր պատվիրատուից. «Գրոցս անէր օր մի զմեզ մէկ հացիւ լիչինցս»¹⁷։

Մեզ է հասել մի հետաքրքիր բողոք-հիշատակարան, որ գրել է Գրիգոր Ախալցխացի գրիչը Հերմոնի վանքի միաբանությունից զին՝ իր նկատմամբ ցուցաբերած անարդարացակամության համար։ «Եւ ամէն խոց ունէին, ու նա՛ ոչ, ու ամէն հաց ունէին ու նա ոչ, ու զվանքս հացն վերայ իրեանցն բաժանեցին օր ինձ ոչ ավին, թէ նայ դարիպ է, նրայ բաժին մի անէր։ Եւ ամէն մեծն, սպասատր ունէին ու նա ոչ, ու ամէն սիրելի ունէին, որ հաց ու թաց կու բերէին ու ինձ ոչ, ու ամէն կու երթէին ի վարդապետի խոցն, ուտէին և խմէին, ու նա ոչ, ու վարդապետն զամէն մարդու քաղցը դիտենէր ու զիմն ոչ, ու զամէն մարդ միաբանքն մին մին տանէր ի խոցն ու կերակրէր ու զիս ոչ, ու զանէն մարդու զո՛հ ու զանգատ հարցանէր ու զիմն ոչ, ու զամէն մարդ միխթարէր ու զիս ոչ, ու նա... նստեալ էի կու գրէի սոված ու քաղցած ու զին ոչ։ Տեսեաին զիսն մին զիրն (այսինքն՝ մեկ անգամ—Ա. Ա.) Գ(3) օր հաց չկերայ ու նա ուղեցի ոչ։ Մի զիրն եկու օր անօթի կացի ու ուղեցի՛ նա հաց ավին ոչ։ Եւ մին օր մինչև իրիկուն անսովի կացի... ու մենակ մինչ յիրիկուն, զիր կու գրէի...»¹⁸։

Միջնադարյան հայ գրիչների այդպիսի պայմաններն ամփոփ պատկերված են Գլածորի շնորհալի գրիչներից մեկի՝ Մխիթարի շափածու հիշատակարանում, զետեղված իմաստասիրական բովանդակություն ունեցող մի սովորականագրի վերջում.

«Տես թէ քանի աշխատեցայ
 եւ Մխիթար գրիչ սորա.
 Թուղթս անկող ու գրիչ չկայ,
 Աւուրբըս ցուրտ ու պարզկա».

¹⁴ Ք. Այսովնույան, Եզ. աշխատություն, էջ 426։
¹⁵ Ղ. Ալիշան, Միտում, էջ 104։
¹⁶ ՄԱՄ ձեռ. N 5566, Թ. 356 ր. «Մատակցիցս անէով նա նկատի ունի իր աշակերտներին։
¹⁷ «Տեղացի ձևագրաց վիճանագիր», էջ 49—50։
¹⁸ Ք. Շեղերիի անվան Անիկոբայի հարաբան, ձևագրերի բաժնի Հայկական Համալսարանի N 31, Թ. 390—390ր. (ՏՃՄ. «ԵՊ. ԵՊ. հիշատակարաններ», Հ. Ա, էջ 657—658)։

Չարտախ բարձր ու կրակ չկայ.
 Գուներս¹⁹ չար ու սպաս չկայ.
 Եւ այս Գլածորն ո՛վ գտնեալս.
 Ես յո՛ժ նեղած և ճար չկայ...»²⁰։

Հակոբ գրիչը 1491 թ. թողած շափածու հիշատակարանում նկարագրում է իր հոգեկան ծանր վիճակը՝ մահացած եղբոր որբերի համար.

«Ջննդ աղանձ, հայր իմ դիմած,
 Անմեղաղիր լիք սխալանաց,
 Ձի իմ կըրայրն յիսն է գնաց,
 Էր շնորհալից՝ և տնուշասաց.
 Որբերն խիտ են շխարած,
 Իրեանց կտորչ հայրն է մեռած,
 Մէկն է որբիկ ու գլխիբաց,
 Մեկն տկո՛ղ՝ մարտինն բաց,
 Նոքա կարտա ամէն բարեաց,
 Տխուր նստին և զեզերած։
 Փորս և ազիքս է զայլարած,
 Էլ ճար չունիմ, քան տեր աստուած...»²¹։

Մոզովուրդը, պետք է ասել, հաճախ հոգատարությունը է շրջապատել բազմաշխատ գրիչներին, հատկապես նրանց, որ տան-տեղ չեն ունեցել, կիսոգթիվով չեն ունեցել և տեղից-տեղ թափառելով՝ պատվերով ձևագրեր են գրել։ Հիշատակագրություններում պատահում են գրատուներ, որ խառնվում է գրչին ցույց տալով հոգաբարձության մասին. Քովմա գրիչը 1393 թ. ընդօրինակած «Մատուց»-ի հիշատակարանում իր զո՛հունակությունն է հայտնել բարերար Ասամից, որը՝

«Բերել խաղող մեծ կողովով,
 Գինի բերել մեծ տկերով,
 Քաթա բերել անունն՝ խոնդով»²²։

Խառատոր գրիչն օրհնում է Ջուռալիթին այն բանի համար, որ նա «...մին քարեղեն մածուկ և երկու հաց երեք, որ կերպք և գրեցար»²³։ Նույն ձևագրի մի այլ էջում գրիչը արեւշատություն է մաղթում կանեթին, որը ճմրուտ է բերել՝ հացը վրան, Հակոբ գրիչը ողորմիս է առլիս Խերխաթունի հոգուն, որ նա «մեկ սպին երեք և չիք, որ կերանք...»²⁴։

Գրիչների հիշատակարաններում բազմաթիվ զանգատներ կան աշխատանքի ծանր պայմանների մասին. նրանք զանգատվում են աննպաստ բազմաթիվ իրադրությունից, դրանցով լատությունից, ճրար-լույսի պակասությունից, բնակարանների մոլթ և նեղ լինելուց և այլն։ Գլածորի գրիչ Մկրտիչը զանգատվում է, որ գրչության վայրը բացօթյա է եղել, որի հետև-

¹⁹ «Գուներս», այսինքն՝ շոր հացի փշրանքները։
²⁰ Ղ. Ալիշան, Հայապատմ., էջ 526։
²¹ ՄԱՄ ձեռ. N 5438, Թ. 243ր. (ՏՃՄ. «ԵՊ. ԵՊ. հիշատակարաններ», Հ. Գ, էջ 175)։
²² Ղ. Փրզգլեման, Նոտարք շնորհ. Գ. Պայր, էջ 4։
²³ ՄԱՄ ԳՊ Արևելագիտության ինստիտուտի լենինգրադի բաժանմունք, հայկական հավաքածու, ԻՅԱՊ Ե-7։
²⁴ «ԵՊ. ԵՊ. հիշատակարաններ», Հ. Գ, էջ 415։ (Ձևագրեր նրուսպեմի Ս. Հակոբյանց մատենագրութի սեփականությունն է և գրանցված է N 1622-ի տակ)։

մանրով թանաքը անվերջ թանձրացել է («ամձնայր»), իսկ շրջապատը՝ օղմը- կոտ, որի հետևանքով ինքը սխալներ է թույլ տվել («...աղմուկ գրուցաց լու- լով լինելը մերձ իմ, յորմէ սխալելիս—գրում է նա)²⁵։ Սերունդի մի գրիչ խրճղ- բում է անմեղադիր լինել, գրի խոշորության համար, քանի որ աչքերը վատ են տեսնում, նեղվում է ծիսից, բրից և կաթիլից, ինքն է վառում թուփերը և դրում ձեռագիրը. «...վերացեալ մարմնով, կտրացեալ աչքով՝ ի ծիւն, ի բբն, ի կաթիլիլն. շոջ մարդ ևմ, զթոնիրն ևմ վառեր, երեք շալոյ զփայտն գնէր, կարս մեր այս է»²⁶։ Կարապետ գրիչը գանգատվում է իր սան ևրդիկից, որից անբձև է թափվում.

«Ո՛հ, ո՛հ, գայս ոչինչ աունս.
Զինչ յերգէն կու անկանի՝
Թո՛ի ի գիրս և ապականի»²⁷։

Հովհաննես գրիչը գանգատվում է լվից. «Այլ լուն խիտ գամամթ կու տար, զի բազում էր խուցս, զի այլ մտրդ չկայր ի ներս և ամենին փոխան գիս կերան»²⁸։

Գրիչները, մեծ մասամբ, գրել են խուցերում, ճրագի լույսի տակ, ուստի և հաճախ կարելի է լսել նրանց գանգատը ճրագլույսի վատության մասին։ Մեֆիլ Օհանյանը 1663 թվականին գրած իր մի սուանավոր հիշատակարանում հե- տեկյալ գանգատն ունի ճրագի մթության և թղթի վատորակության մասին։

«Ի հագար հարիր ևրով թվին,
Պանգատ ունիմ ճրագի մթին,
Այլ և յնտոյ այս խամ թղթին,
Որ չի երթար յեա իմ սրտին...
Աշուերս է րաց, լուսոյ պակաս,
Գրիչը չըթթար հեա շար տողին,
Որն է կաղ և որն է կոր,
Թանաք աղղի ի մէջ թղթին»²⁹։

Մխիթարի գրիչը 1428 թվականին գրած իր հիշատակարանում հայտնում է. «Եթէ յոճ շնտիր քեզ գիրս, նա պատճառն այն է եղբար, որ ձիթի տակն էր և ճրագնուս պակաս»³⁰։

Սերունդի Մխիթար Անեցին 1338 թ. գրած չափածո հիշատակարանում գանգատվում է հիվանդության, ձեռքերը զոզալու, թանաքի թանձրության, ճաննների շատության և այլ անպատեհությունների համար.

«Մեծ վտանգի կամ յայս նեղուս,
Զի խիտս յաղթնց ցաւն մարմնոյս:
Եւ ի ձեռացս ի զոզալուս,
Այլ շեմ կարել տալ շատ գրոյս:
Ուս առաւել ի յայլ շողուս,
Ո՛ր ի թանաքի թանձրանալուս,
Եւ մանաւանդ ի յայս քնուս,
Զար հասարակ մրափելուս,

Եւ յանիծակ այս ճանձերուս,
Ի սեավատաակ ախլին կնեղանուս,
Որ միշտ նստին ի վերս գրուս,
Մրձեն զթանաքն գրերուս:
Կնինեմ ի սիրտ այս ուրնուս
Զգիտեմ թն ի՛նչ անեմ նզովմնուս...»³¹։

Առում գրիչը խնդրում է ներողամիտ լինել բաց թողած սխալների համար. որովհետեւ ամեն էր, ցուրտ և «...ձեռիկս կու մըսուր ի գրելն»³², մինչդեռ Թու- մա գրիչը (1409 թ.) գանգատվում է թղթի վատության համար («Ասա՛խ ա- տապանացս. բաղձանքս նեղ է դեռ, և թուղթս վատ»)։ Մուրն է եղել նաև գրի- րնակարանը և անձրև զախի տանիքը կաթիլ է «Ասա՛խ, որ մութ է և շեմ տես- նել, հոգիս կու կունէ, ո՞նց դրեմ, և կաթիլս՞ աւելի»³³։

Զարիտս Վաչոցճորցի գրիչը ընթերցողի ներողամտությունն է խնդրում գրության անհաջող լինելու համար և այդ բացատրում է նրանով, որ նա մանկաբույժ կարել է իր մասր, որից շատ արյուն է գնացել և հալիվ է ինքր կարողացել այդպես գրել. «Թողու՛թիւն արարէք ս՛վ կըրարք, մատս մանկա- ղուժ կարել ի,—ասում է նա,—հենչևսր կարացի գրել, փառք աստուծոյ Ա(՞) ոչխարի արին գնաց»³⁴։

Մերացած, աչքերը վատասեռ գրիչները գործ են ասել ակնոցներ։ Այդ մասին տեղեկություն ունենք 14-րդ դարից։ Հովհաննես գրիչը 1317 թ. Կիւ- րոսի կաշույնի գրություն օջախում քնդորինակած ձեռագրի հիշատակարա- նում հայտնում է, որ իր աչքի լույսը նվազել էր, կարողացել է հայթայթել «աչքի ապակի», որն օֆեական է եղել իրեն և որի մասին հիացմունքով է խո- սում։ Եվ նա խորհուրդ է տվել. «Եւ զի յաչաց լուսոյ նուսզնուլ էի րոտ մարմ- նոյ որպէս և հորոյ, և գո՛ի հայթայթելի աշրպակի, որ ալեղական եղև րնական վատելոյն, զոր հիացման արժան է զտողցն, որ են ֆուսեզ, և ալնիս աւարտեցի զդիրս։ Եւ մանկանս որ որ ի լուսոյ պակասեալ է և պատահէ ապա- կոյն, յոյժ ձեռնտու լինի նմա ի կարգուլ և ի գրել, զոր տեսաք յայտնի ի րա- դում, և ի փորձի և անձամբ կատարեցար»³⁵։ Չունդ գրիչը ներսու լամբրո- նացու աշխատությունը 1402 թ. արտադրել է «Յտար աչոք»³⁶, այսինքն՝ «լ-

²⁵ Հիշատակարանի վերջում Մխիթար Անեցին գիտում է իր աչքերին, նրանցից լույս խոցում, որովազդ կարողանա գրերին շար տալ և պըրության ետվը։ անվտաս հասցնել հաե պըրվան (հ.մ.ժ. ԵԺԳ գարի հայ. ձև. հիշատ., էջ 312)։

«Այլ էրր կու սոսս իմ աչքս լուս,
Որ ես այլ շար տամ գրերուս:
Նզար, մեզ մի գե՛զ գրերուս.
Այս ստասպեալ՝ ո՞ ոգորմերուս,
Ինչ հուցաւ տարք մարմնուս
Չկուլու ցաւեք յայտնի ձերուս:
Ծ՛ի, թէ լինէր հար այս կուտս,
Որ հասներ յեք ի ձովտս,
Որ ես տեսնեմ քնեքք գրուս...» (ՄԱՄ Աճ. Ո 4429, թ. 247ր)։

²⁶ «Տուցակ Անուարաց Վենեթիկի», հ. Բ, էջ 846։
²⁷ Նույն տեղում։
²⁸ ՄԱՄ Աճ. Ո 6268, թ. 333ա։
²⁹ «Տուցակ Անուարաց Երուսաղէմի, հ. Գ, էջ 227։
³⁰ Ս. Տեր-Ավետիսյան, Կոր Զուգարի Անուարաց ցուցակը, էջ 1242 (հ.մ.ժ. ԵԺԳ գարի հի- շատակարաններ, հ. Բ, էջ 26—27)։

²⁵ ՄԱՄ Աճ. Ո 6558, թ. 628ր (հ.մ.ժ. ԵԺԳ գարի հիշատակարաններ, էջ 7)։
²⁶ Ս. Արապյան, Տուցակ Անուարաց Վասպուրականի, էջ 749։
²⁷ «Տուցակ Անուարաց Էջմիածնի (տե՛ս «Էջմիածին», 1950 թ., Ձ 11—12, էջ 85)։
²⁸ «Տուցակ Անուարաց Էջմիածնի» (տե՛ս «Էջմիածին», 1951 թ., Ձ 10, էջ 83)։
²⁹ ՄԱՄ Աճ. Ո 5623, թ. 224ր։
³⁰ ՄԱՄ Աճ. Ո 6050, թ. 82ա։

նոցով՝ նույնը և Հակոբ գրիչը. «Վասննայ էր աչքս, եղի աչք, և բազում աշխատանար գրեցի վասն փափարանաց սրտես»²⁷:

Գրիչները բացարձակ սիրով են կապված եղել իրենց արվեստի հետ: Այդ տեսակետից ուշադրով է Գրիգոր Խառարատացու թողած փորձիկ մի հիշատակությունը. «Վա՛յ ի գլխի ցաւէս, թէ որպէ՛ս նեղիմ, բայց փափարումն բանիս կու յաղթէս»²⁸:

Հարց է առաջանում, ի՞նչն է եղել գրիչներին այդպիսի մղում խթանողը, ի՞նչ հեռանկարով են ձեռնարկել նրանք այդպիսի մի ծանր ու շարքաշ աշխատանք: Այդ հարցի պատասխանը մասամբ տալիս է Բասիլ գրիչը 1288 թ. գրած շափածո մի հիշատակարանում.

«Վերծանու, թեևն հեռեկի՝
Նա գրչութեան սէրն ստիպի:
Փանրաբ շրջոյր զի վարձէի՝
Մասամբս բանի՝ ես գրէի...»²⁹:

Այսինքն՝ փող չունիլ, որ ուրիշին գրել տայի, և ինքս էի գրում: Մակայն գրելու միջոցին գրիչը տարակուսանքի մեջ է ընկնում, թե ի՞նչ օգուտ ունի ինքր. չէ՞ որ մահանալու է, և ձեռագիրը ուրիշին է մնալու:

«էր գոր անձամբ ես գրէի,
էր գոր այլոց գրել տայի:
Ճաշօ միջոցի անձն իմ կոծի
ես, վարանի յամենայնի՝
Թէ զի՛նչ աւօրուտ ինձ յայտ ջանի,
Թէ ընթեռնուլ ինձ ոչ լինի...» (թ. 128ա):

Իսկ չարունակությունը մեզ հեղինակը հասարկում է ինքն իրեն հեռանալով խորհրդածույթյամբ.

«Ձի թէ այս ոչ գոյր առաջի՝
Կարծես սակաւ գիր գոյր յերկրի,
Որպէս և ես վարանելի:
Աւաղ թէ ընդվայր շանս իմ լինի:
Նւ զամենայն, որ զայս խորհի,
Մակաւ տանի հոգը այս գործի,
Այդ ըստ յուսոյն որ կայ առաջի
Միշտ յաւժարեալ զիրս որ ստացի...:
Մի յոյս միայն զերկուս թողի,
Թէ եկեւոց վայել լինի»³⁰:

Ընդօրինակած ձեռագրերի նկատմամբ գրիչների ցուցաբերած նախանձախնայությունը և ջանակուտ հոգածությունը պատկերացնելու առումով ուշա-

²⁷ Նույն տեղում:
²⁸ ՄԱՄ ԱՌ. N 217, Բ. 224.
²⁹ ՄԱՄ ԱՌ. N 1418, Բ. 127ր-128ա.
³⁰ Հիշատակարանի վերջում գրիչը դիմում է գալիս սերնդին հեռույ վերջաբանով.
«Քոյի բզտաս ցակայի՝
Ձկնի եկեւոց վայել բորի
Ով աղաւթի յիշել պարտի
Չտառադեալս այրի հոգի» (թ. 128ա):

գրավ է Անկյուրիայի երբեմնի հավաքածուի սեփականություն հանդիսացող N 35 ձեռագրի գրիչ Հովհաննեսի հետևյալ կտակ-բառույկը.

«Մեանկերեալ ի սպիտակէն, թո՛ղ մնացել այդ գրչուում,
Իսկ առ վաղի մասննագիրդ, ցա՛ւ թէ բնաւ յոյս մնաց:
Ես չդիտեմ³¹, ո՛վ ընթերցցի զըրեւոյս մնացուում,
Ես մեռանիմ, այս անշուշտ է, յաւէտ մնայ իմ գրուում»³²:

Գրիչների մոտ լիովին արմատացած է եղել այն համոզումը, որ անցավոր աշխարհում իրենք մահկանացու են, մահանալու են, սակայն իրենց թափած վաստակը չի կորչելու, այն մնալու է իրեն թրաքի հիշատակ՝ եկող սերունդին³³, ձեռագրերի էջերի վրա հասնալի կարելի է այդ բնույթի գրառումներն կարդալ.

«Ձեռքս փախ հող դառնայ
Գրեալ գիրս յիշատակ մնայ»:

Կամ՝
«Ձեռս երթայ, դառնայ ի հող,
Գիրս մնայ յիշատակողոյ»:

Գրիչ Աստվածատունն այդ գաղփարն արտահայտել է ավելի ընդարձակորեն.

«Ո՛ր գիր որ մնաս,
Ո՛ր ձեռ որ հողանաս,
Ո՛ր եղբայր որ կարդաս,
Ո՛ր թէ գործս շտառանաս.
Աղաչիմ, աղաչիմ,
Հանիպողաց պաղատեմ,
Մեղաք մածեալ և սեւերս եմ,
Գծողիս աստուած ողորմի խնդրեմ»³⁴:

Գրիչների մեծ մասի համար գրչության արվեստը մասնագիտություն է եղել: Գրչատուփը և կազմարը կոզրից կախած գրիչները գնացել են տեղից տեղ, ուր աշխատանք է կանչել իրենց: Այդ աշխատանքով են ապահովել իրենց օրվա ապրուստը՝ մինչև խոր ծերություն: Այդ կարգի գրիչներից նշանավոր է Հովհաննես Մանկասարենցը, որի գրչական արդարանքները մասին հիշատակարան է թողել իր աշակերտ Չարսրիան (1505 թ.): Հովհաննես Մանկասարենցը, գրում է նա. «2Թ (72) տարի՝ ամառն և ձմեռն, գրչերն ու ցերեկ ի գրել եկաց: Որ գրեալ եղև ձեռամբ նորա Խ(40) Այսմատուրք և Տարգիրք, իսկ փոքր գիրք՝ Տեար և Աղօթամատուց, Շարականոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձատետր՝ Մ—Կ (50—60), և այլ աւելի, և Աւետարանս՝ ԼԲ(32): Եւ զայս Յոհան զուխս (այսինքն՝ աւետարանի, նկատի ունենալով Հովհաննես Ավետարանիչը—Ա. Ա.) [գրեաց] ի ծերութեան ժամանակին, որ այր

³¹ Այս բառույկի երրորդ տողի «ես չդիտեմ» տպագրված է «ես չդիտեմ» և չորրորդ տողի «ես մեռանիմ» տպագրված է «ես մեռանիմ», ուղղումը կատարել ենք մենք՝ եկեղիվ իմաստար:

³² «Յուցակ Անուարաց Անկիրոյոյ», էջ 138:
³³ «Տեարտուր լինալ, Ան ընթերցի,
Եւ բարով վայելի ի ներում միջի,
Գուք բազում ժամանակ արքեր յերկրի,
Եւ սիրով ընթեռնուր ի մէջ աշխարհի» (ՄԱՄ ԱՌ. N 2706, Բ. 676ա):
³⁴ «Յուցակ Անուարաց Ղալաթիոյ», էջ 350:

չէր հայիկ և ձևորն կու դողայր, բազում շարձարանօր հագին կարաց ատարուել, և այլ չկարաց գրիչ բռնել մինչ ի վախճանն, որ հանդեսու ի Փրիստոս 22 (86) ամաց»⁴⁵։ Փաստորեն Հովհաննես Մանկատարենցը 72 տարիների ընթացքում ընդգրկնակել է այնքան ձևագիրք, որ նրանցից կարելի էր մի ամբողջ գրագրան կազմել։

Մանկատարենցի ուղիով է ընթացել Սարգիս Ընկուզագոմցի գրիչը։ Նրա թողած հիշատակարաններից ևս երևում է, որ ողջ կյանքում գրչությանը է զբաղվել. «Վա՛յ, որ ձեռս կու դողայ, ու ազգի ազգի կիրս կու ախրեմ, ի՛նչ ասնեմ, որ ծեր եմ ու աչքս վատասես է, ե(40) տարի է, որ գիր կու գրեմ, թողութիւն արարէր»⁴⁶։

Սարգիսն այդ նույն տարին գրել է մի այլ ձևագիր և թողել սրտատուչ հիշատակարան՝ իր զուտամած լինելու, աչքերը վատ տեսնելու, ձևոքերը գողալու և գրչամասը շորացած լինելու մասին. «Բայց գիտեմք—գրում է նա,— որ պիտի բազում պակասութիւն կայ և անթիւ, թէպէտ որ շատ կայ՝ մեր կարն այդ շափոդ էր, ձեռս կու դողայր և աչքս բնաւ չէր տեսնուլ, գրիչ ասան շորացած էր, միջին մատամբս ծրեցար... Ո՛հ տէրդ իմ, հիմալ եմ (42) տարի է, որ մեր բանս այս է, ապա այսոր նման անդէպ չէր եղեալ, խիտս կու ամալեմ ի ձեզնի, թողութիւն արարէր»⁴⁷։

Մասննագրանի մեկ այլ ձևագրից երևում է, որ Սարգիս գրիչը գեռ երկու տարի ևս շարունակել է գրչությունը, ձևագիր է ընդգրկնակել, բայց՝ մեծ զովաբությամբ. «Գրեցաւ վերջը գրոս յաւուր համարձմանս, շատ և անհուն դանտութիւնս—գրում է նա և հայտնում, որ իր գրչամասը շորացել է, գրչութիւնը իր սրտով չի եղել. «ե՛ր (42) տարի է, որ կու աշխատիմ, բանս իմ [սր]տովս չէ, մերն ալզլաի [էր]»⁴⁸։

Վատասկաշատ գրիչներից է Գրիգոր Մասնցին։ 1662 թ. թողած նրա հիշատակարանից երևում է, որ գրչությամբ զբաղվել է 15 տարեկան հասակից և շարունակել մինչև 45 տարեկան։ Երեսուն տարիների գրչության շահատանրի ընթացքում նա գրել է 20 Եարականոց, երեք Հայսմավուրբ և այլ գրքեր, որ «համար չիկա»⁴⁹։

Վարդան գրիչը «Ճաշոց» գրքի ընդգրկնակման առթիվ 1377 թ. գրած հիշատակարանում ընթերցողից խնդրում է անմեղադիր լինել ձևագրի գրչության անհաջողության համար «...գի ծեր էի և աչքս չի տեսնուլ և միտքս և ամենայն սպայարանս բզկ է, բայց անանգնցայ և գրեցի»⁵⁰։

Պատկերացնելու համար, թե ինչպիսի սիրով են կապված եղել գրիչներն իրենց գործին և ինչ խանդաղատանք են օտանել գրչագրության հանդեպ, պետք է կարգալ Սիմեոն գրչի 1439 թ. թողած հիշատակագրությունը. «Ո՞վ կըթայր

⁴⁵ ՄԱՄ ԱՆ. N 5256, Թ. 291ր—292ա (ՀՃԺ. ԵԾԹ գրքի հիշատակարաններ, Հ. Ա, էջ 587)։

⁴⁶ ՄԱՄ ԱՆ. N 4308, Թ. 100ա (ՀՃԺ. ԵԾԹ գրքի հիշատակարաններ, Հ. Ա, էջ 184)։

⁴⁷ ՄԱՄ ԱՆ. N 4107, Թ. 503 (ՀՃԺ. ԵԾԹ գրքի հիշատակարաններ, Հ. Ա, էջ 245)։

⁴⁸ ՄԱՄ ԱՆ. N 8423, Թ. 171ա (ՀՃԺ. ԵԾԹ գրքի հիշատակարաններ, Հ. Ա, էջ 297)։

Նույն ձևագրում նրա ապակերտ Հունան գրիչ հիշատակագրությունից երևում է, որ ուսուցչին չի Հաջողվել ամբարել ձևագրի ընդգրկնակությունը. 22 պատկից Հնոս նա վարչ է գրել գրիչը, և ձևագրի մյուս մասերը ընդգրկնակել և ավարտել է ինքը՝ Հունանը։

⁴⁹ ՏՈՅՅԻԿԻ Անադրաց Անկերիտոյ, էջ 221։

⁵⁰ Արս. Սիմոնյան, Տոյցակ Անադրաց նրտազգէմ, էջ 139։

թողութիւն հացեցէր... մին աչքս կու ցաւր, նա խրեցի և մին աչքովն գրեցի խիտս աշխատանար»⁵¹։

Գրիչները հաճախակի դանդաղավում են պանդխտությունից։ Նրանք պանդխտության են գիմել երկու պատճառով. բռնագաղթի ժամանակ ըլվել են օտարություն և կամ՝ աշխատանք չարելու համար տեղափոխվել շատ թե ինչ բարեկեցիկ վիճակում գտնվող զարթալայրեր։ Պանդխտ գրիչների հիշատակարաններում հուզիչ խոսքեր են արձանագրված զարիբության մասին։ Ներսես գրիչը 1318 թ. գրած հիշատակարանում պատմում է, թե ինչպես դուրս գալով իր հայրենի գավառից՝ տարաշխարհիկ շրջել է՝ բաժանված հարսզատանից⁵²։ Գրիգոր գրիչը 1335 թ. շափածո հիշատակարանում ցավով է նշում իր թափանեկ վիճակը.

«Բայց թէ կամիս հարցող լինել,
Չեմ լայս տեղեացս ևս բնական,
Այլ և ատարք սահմանացս
Եւ անբնակ մուրբական,
Չունիմ դազարք ի մի սեղի
Ոչ մի ատար հանդատարան»⁵³։

Գրիգոր Ախալցխացին իրեն գործատու է համարում, որ զարիբ է և խորհուրդ է տալիս ամենրին զարիբության զգնալ. «Աստուծոյ համար, ով որ զարիպութիւն չի գեացել, թող այլ չերթայ...»⁵⁴։

Մխիթար գրիչը 1570 թ. գրած հիշատակարանում հայտնում է, որ ձեռագիր գրել է ծաղկել է տառապանքով, որովհետև գտնվում է զարիբության մեջ՝ օտարների զոհերից⁵⁵։

Ղարիբության մեջ գտնվող գրիչները հաճախ են կրկնում այն գառն իրողությունը, որ «Ղարիպի հացը լեզի է, իսկ շուրբ՝ արլուն», ինչպես միջնադարյան սղբասացն է գրել.

«Ղարիպին հացն է լեզի, որ ճաշակէ,
Դանն ու լեզի խառն արտաստուար շուրն որ բմով,
Թէ զարն տան նուչ ու շարքար, որ ճաշակէ,
Երբ հառաչէ՛ նա սրբուն արին կաթէ...»⁵⁶։

Ստեփանոս գրիչը 1632 թ. գրած հիշատակարանում ցավովի է համարում «զարիպի» վիճակը. Ո՛հ, ո՞հ, զարիպի հայն, թէ ինչ գառն և լեզի է հայն զարիպին։ Եվ անիծում է. «...ով որ զազրատն կամ զզարիպին ասէ՝ անճառ լոյստին զբրկեցի»⁵⁷։ Ավելի սրտատուչ է Մկրտիչ Լեհացու արտահայտած վիշաղ պանդխտության մասին. «Բայց անմեղադիր լիութք տղւոյանաց և խոչորութեան գրիք, բանզի զանօրնութիւնս իմ ևս ինձնի զիտեմ, որ կիսնն ի վեր խոչորացուցի գզիրն. այլ ոչ իմ կամու, բանիս տեսնկութիւն, օտարութիւն և պանդխտութիւն եւեղեցուց զիս, վասն այդ պատճառին համար շտապեցին զգիրն և խոչոր-

⁵¹ «Տոյցակ Անադրաց Վիեննայի», էջ 50։
⁵² ՄԱՄ ԱՆ. N 256, Թ. 251ր (ՀՃԺ. ԵԾԹ գրքի հիշատակարաններ, էջ 143)։
⁵³ ՄԱՄ ԱՆ. N 2776, Թ. 263ա (ՀՃԺ. ԵԾԹ գրքի հիշատակարաններ, էջ 269)։
⁵⁴ ԵԾԹ գրքի հիշատակարաններ, Հ. Ա, էջ 658։
⁵⁵ «Տոյցակ Անադրաց Վիեննայի», էջ 855։
⁵⁶ ՄԱՄ ԱՆ. N 8295, Թ. 242ա—247ա։
⁵⁷ «Ձևագրաց ցուցակ Վասպուրականի», էջ 39։

բացուցի, զի միայր իմ ցնորհալ էր ի նեղութենէ և ի խեղճութենէ և ի դիտոյ ծնօղացոս, քնտանեաց և հայրենեաց: Քանզի դուք լաւ գիտէք, սիրելի հայրք իմ և եղբայրք, որ պանդխտութիւն ծանր և դիժարցաւ է, որպէս առ թէ՛ Լաւ և անկախել ի ձեռս բարբարոսաց, քան թէ յօտաբռնեան և ի պանդխտութեան կեալու եւ իմատուն իրկար ասէ. Թարծի բնա մի ազի յուսս և ոչ էր ծանր, քան զպաշտութիւն և զանանկութիւն: Եւ զարձեալ միտս ևս՝ Թարծի արձնի բնա մի յուսս և ոչ անեսայ ծանր և դժար, քան զգարեպութիւն և զպանդխտութիւն»⁵⁴:

Հայ գրիչները գրել, սանդղատործել են նաև բաղաբարկան ծանր պայմաններում: Հիշատակարաններում հաճախ կարելի է կարգալ նրանց դանդառները ժամանակի զանոնությունների և դաժանությունների մասին:

Թերթիլով հարչուրավոր ձեռագրեր, երբեմն զգում ենք, թի հիշատակարաններից դալիս է լացի ձայն, ուրախություն՝ խիստ հազվադեպ նրանք իրենց ժամանակը համարում են դարը, նեղ, անձուկ, անհանգիստ, տխուր, անբարի, լար, դժնշատ, վշտանալու, դանաշուռ, ստոնաշուռ, խաղարարմամ և այլն: Երբեմն տեղի են ունեցել այնպիսի ծանր իրադարձություններ, որ ցնցել են զրի հոգեկան ներաշխարհը: Ահա ձեզ կիրական Աղբակեցի գրիչը, որն այնքան ուժեղ է ազդել ժամանակի զանոնություններից և շարունակություններից, որ ձեռքը զողացել է գրելիս.

«Գրեցաւ ձեռամբ մեղապարտիս,
 Եւ ի ձմերուս ժամանակիս.
 Մի մեղազրէք ինձ՝ գրողիս,
 Վասն խոշոր և սխալ գրիս,
 Չի զողութեամբ արն էր սրտիս...
 Չի անէ և զողըն պատար զիս,
 Զեռս զողար ի վեր[ալ] թղթիս»⁵⁵:

Գրիչը բնագրից 5 թերթ բաց է թողել այն պատճառարանովեամբ, թէ աս՛ում վախ չը, թուղթ չէր ճարվում, և ամեն ժամ մա՛տ կար:

Պատկերացնելու համար, թե ինչպիսի աննկարագրելի ծանր պայմաններում են գրել, սանդղատործել մեր գրիչները, ստորև բաղվածքներ կվիայանկո՛ւնք իրենց իսկ հիշատակարաններից՝ ժամանակի քաղաքական ծանր պայմանների, սրածուրբայն մասին, որին ենթարկվել են նաև գրիչները: Հովհաննես զրի հիշատակարանից երևում է, որ նա այնպես է ահաբեկված եղել Ռուսաւորդաշի՝ Երզնկայում 1338 թվականին կատարված անօրինակ վալարագություններից, որ ի վիճակի չի եղել շարունակել ձեռագրի քնդորինակությունը⁵⁶: Մատենադարանի № 862 ձեռագրում հիշատակագիրը ստեղծում է նկարագրել Յահան Շահի Հայաստանում կատարած վալարագությունները: 1441 թ. նա Հայաստանում սրախողտող է տեսնում հինգ հազար հոգի: Շատ մանուկների, պատմում է հիշատակագիրը, խուճ էին մայրերի ձեռքից և քարի խփելով սպանում, շատ անմեղ երեխաների մերկացնում էին և սրով խոցոտում: Երեխան ճշում էր, աղաղակում, իսկ վալարագները ծիծաղում էին և ասում. «Ահա ձայն, որ ի չիրեսանց բե՛նշտէն կու գայ», իսկ երեխայի մայրն այդ տեսնե-

⁵⁴ Առտ. Արեւմտեան, Տուշակ ձեռագրաց Երուսաղէմի, էջ 122:
⁵⁵ ՄԱԿ ԱՆ. № 4211, Բ. 141ա (հմմ. «ԺԳ ցարի հիշատակարաններ», էջ 305):
⁵⁶ ՄԱԿ ԱՆ. № 7643, Բ. 314ա (հմմ. «ԺԳ ցարի հիշատակարաններ», էջ 305):

լով աղեխարչ մորմորում էր և լալիս, ոչ մի օգնություն չկար: Շատ կանայք, երեխաները գրկած, իրենց նեւում էին քարածայրից⁵⁷:

Բայտիկ անունով կին պատվիրատուի թողած մի շափածո հիշատակարանից երևում է, որ երկրում սանդղծված է եղել այնպիսի կոշմարային դրություն, որ հայրերն իրենց սրդիներին էին ուրացել.

«Յուվհարիբին կատարեցի,
 Ի զոտն և ի նեղ ժամանակի.
 Որ հալածին բազում չնրկի.
 Ոմանք մնացի(ն ի) մէջ թփի.
 Ոմանք կերակուրք ելան գալիի.
 Սովով անցան շատ մին ոտի.
 Հարք ուրացան դիրանց որդի,
 Ամ իմ կամք չէր, որ Լս ծաղկի...»⁵⁸:

Ըստ Մշո Առաքելոց վանքի «Ճառերտիր»-ի մեջ 1488 թվականին թողած մի հիշատակագրության, երբ Շահ Սեֆին վերցնում է Շամախին, այնտեղ բռնկված բրիտանոնյա և մահմեդական բնակչության ամբողջությամբ սրի է բաշտում: Նա զազանբար սպանում է նաև մանկահասակ երեխաներին՝ անկարագրելի տանջանքով. «...վճար տղայքն ժողովեալ առ ինքն և դիզեալ ի վերայ միմեանց հինգ և վեց, և ինքն ի վերուստ նիզակաւ անցուցունէր մինչև ի ներքին տղայն և վերացուցեալ նիզակաւ կանգնէր, և աղայքն աղիլողորմն թակահալին տախք և ձեռքք ի ծայրս նիզակացն, և նա ծայր հարկանէր որախութեամբ և ասէր. Այս է ճշմարիտ զաղայն (այսինքն պատիք) — Ա. Ա.»⁵⁹: Այսպիսի ցնցող իրադարձություն տեսնող զրի ուղեղը, բնական է, չէր կարող չգալթել և զուր չհասնել նրան բնականոն վիճակից: Գրիչոր ելալեցին իր շափածո հիշատակարանում, մանրամասն նկարագրելով թշնամու՛ւ: Հայաստանում կատարած վալարագությունները, ամփոփում է հետևյալ սողերով.

«Տապալեցին ՚ւ յատակեցին,
 Անխալարար խոցոտեցին,
 Զարքս սրբոյ հարակ տըլին,
 Եւ ըզկանալսն գերեցին.
 Չոմանս զզոլաքն քերթէին,
 Եւնդերձ հերուրն խըղէին,
 Զայլոց ըզուշուն արգիլուէին,
 Եւ հեղձամահս խեղզէին.
 Որպէս ոչխարքս մարթէին,
 Փոկս ի թիկանցքն հանէին.
 Զկէտքս հրբով խորովէին
 Եւ ձեռներովքն ցրծային»⁶⁰:

Տեսնելու համար, թե ինչպիսի զանոնությամբ են բնուանել մեր վատարախտ գրիչները ժամանակի քաղաքական խճղճությունները և ինչպիսի

⁵⁷ ՄԱԿ ԱՆ. № 862, Բ. 301բ (հմմ. «ԺԳ ցարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 514):
⁵⁸ «ԺԳ ցարի հիշատակարաններ», էջ 308:
⁵⁹ «Տուշակ ձեռագրաց Վեհաթիք», հ. Բ, էջ 1160:
⁶⁰ ՄԱԿ ԱՆ. № 5798, Բ. 212ա (հմմ. «ԺԳ ցարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 274):

դոյունն գրեով արձանադրել այն իրենց հիշատակարաններում, պետք է կարգապ Անդրոնաս Եմզողացի գրելը 1598 թ. գրած հիշատակարանի հետևյալ տողերը. «Եթե սղայ կամ խոշորագիր, կամ անխորժ մտաց ձեռքը գտցի ի սմա, անմեղագիր լերուք... զի ի մէջ դառնութեան զրեցի զսայ, այնպիսի դասն և զտնոր տանգանոր... երբեմն արածիք, և երբեմն հառաչէի, էր որ երբեմն լալի, և էր որ որբայի ըստ անձուժ ընտիվեամբն իմոյ: Արդ, զի՛նչ էրկարեցցից ազգի ազգի տառապանացս, որ ունէի... Բազում վշտոք հասայ ի վերջ գրեաս»⁶⁵:

Իսրայելի գրիչը, թշնամու՝ Հայաստանում կատարած հարստահարութիւնները պատմելուց հետո, եզրակացնում է. «...զերեցքն, Թալանեցիքն, որ հայր զորդի կանչէր, իսկ մայր՝ զդուտարն, վայ և եղուկ ազգես Հայոց: Ի թիվս Հայոց Ռեթ (1580), երանի մեռելին, վայ կենդանորն»⁶⁶:

Հայկական ձեռագրական ժողովածուներում բազմական թիվ են կազմում այն զրչագրերը, որոնք գրվել են մի քանի տեղ. սկսել է ձեռագիրը գրել, հանկարծ հարձակվել է թշնամին, փախել է ժողովուրդը, նրա հետ նաև գրիչը և շարունակել ընթացիկապես լրջունը նոր վայրում:

Հովհաննես Որոտանցու աշակերտներից Հակոբ գրիչը 1386 թվականին գրած հիշատակարանում պատմում է, թե ինչպես ինքը ձեռագիրը գրել սկսել է Որոտանում, ուր նա գտնվելու է եղել Որոտանցու 60 աշակերտների հետ միասին, թշնամին հարձակվել է Որոտանի վրա, և իրենք հարկադրված են եղել փախչել ու երբ որ տարի շարունակ թափառել Հայաստանի զանազան դավառներում, և նա իր ձեռագիրը գրել, ավարտել է թափառումների ճահայաբնին. «Եւ ես ծանրարեռն մարմնով—գրում է նա,—զմեղով և զօրեւնակ, զգրիչն և զթանաք ի յուս իմ բարձեւը, ի հետ զնայի, կարգայի, և որչափ ժամանակի՝ զսուրբ մատենաւ գրել, բազում նեղութեամբ և շարչարանօք, զի ուր սկսաւ, տեղ ոչ կառ զկատարումն»⁶⁷:

Ներսես Ամասիացի գրիչը զժողով է 1480 թ. իր ընթացիկապես ձեռագրից և ընթացողների ներողամտութիւնն է խնդրում, որովհետև «...ի մէջ դառնութեան զրեցի զսա, զի բռնութեամբ և ակամս ի յԱմասիոս գեղը բերին ի Կոստանդնուպոլսակ, և ես լալով և բազում հառաչանաք գրեցի զսա...»⁶⁸:

Գրչի թափառիկ վիճակը պատկերացնելու տեսակետից ուշագրավ է վայոց Չորի մի գրչի թողած հիշատակագրութիւնը. գրիչն իր ձեռագիրը սկսել է գրել վայոց Չորի Փանձաթաղ գյուղում, թշնամին հետապնդել է նրան: Նա փախել է Չորավանք և, ինչպես ինքն է ասում, «Փաղչելով գմազերեցաք»⁶⁹: Այնտեղից եկել է Կիւրաք կոչվող վայրը, այստեղ էլ, ստեղծելով, հետապնդել է թշնամին, և ինքը ձեռագրի օրինակը վերցրած փախել է Ի մեծ զժվարութեամբ տարբեր վայրերում ավարտել ընդզրինակումը:

Թումա Մինասենց գրիչը 1425 թ. Աղթամարում գրած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ բռնաւոր Արանդարը հարձակվել է Ոստանի և նրա

⁶⁵ ՄԱՍ Աճ. N 1869, Թ. 293ա.

⁶⁶ ՄԱՍ Աճ. N 4173, Թ. 95ա.

⁶⁷ ՄԱՍ Աճ. N 5707, Թ. 48Բ (Նժժ. ԵՊԻ գրքի հիշատակարաններ, էջ 560):

⁶⁸ «Յոցակ ձեռագրաց Նորազգիւն», Կ. III, էջ 251:

⁶⁹ Գ. Հովսեփյան, Պատմութեան..., էջ 98:

հարեան շրջանների վրա և սկսել կոտորածը: «Եւ բնակիչք աշխարհիս մերկ և բոկ և սովալրուկ տարաշարհիկ եղեալք փախուստի են գիմն»⁷⁰:

Մարգիս Երզնկացի գրիչը 1446 թ. գրած հիշատակարանում խնդրում է անմեղագիր լինելի գրի խոշորութեան և թույլ աված սխալների համար, որովհետև «...լաւ և ի փախ էար... և մարդիկ երկիրս ամենեքեան յօտար երկիր վտարեցան, և երկիրս մեաց անբնակ»⁷¹:

Սուսակալի վիճակում է գտնվել հայ ժողովուրդը մասնավորապես Լանկ-Թեմուրի վայրագութիւնների շրջանում: Ժամանակակից գրիչներն արդեն են լաց լինում ավերածութիւն, կոտորած և գերեզմարութիւն Արարայեա գրիչը 1389 թ. Աղթամարում գրած «Ճառարեւոյթ»-ի հիշատակարանում իր ապրած ժամանակն անվանում է «սասակալիք», իսկ Լանկ-Թեմուրին համեմատում է Գողգամիսի և «վայրենաբարո նարոյալասարի» հետ: Նա պատմում է, որ Լանկ-Թեմուրի զորքերը մտնելիս նման ցրվում են Հայաստանում և սկսում իրենց վայրագութիւնները. «...Քանզիկն, քարայտակէկն, փորէկն, փոս հասանէկն, կոպէկն, կանսէկն, զամաց հաղարաց շինուած՝ միարեա անհեղ կորուսանէկն... Անդ էր տեսնել զլաց ձնալաց, զաղես դաւակացն, զգալարումն զիմացն, զղեղանայ երեսացն, զկուսղումն ձայնից... Ասա՛ղ ժամուն, ոմն ալրինաթաթա զիսզոր թաւալը ի մէջ արեան ծովուն, ոմն կիսակտոր զլուսն ի յանձնէն զուր խնդրէր և ի ծարաւոս անղէն մեռանէր, ոմն անհեղ զլուսն ի վայր և արեան աղբիւրն ի բերանոյն կուսէր: Ո՛հ ձայնին, ո՛հ աւաղին, ո՛հ կակծոյն արտասուագին... Յաղեցան զապար, ձանձրացան թշուոք, տարակուսեցան զայլը՝ թէ զուժ ուտէին միս...»⁷²:

Թումա Բարեղեցի գրիչը 1403 թ. հիշատակարանում հայտնում է, որ Լանկ-Թեմուրի սրածուրբութիւնից թեև ոմանք փախուժ թաքնվում էին այրերում, ձերպերում, սակայն նրանց էլ ազատում չկար, որովհետև սովից, տոբից և ծարավից էին մահանում, իսկ ոմանք թշնամու ահից և երկուտից «զինքեանս» բարավժ առնէին»⁷³:

Գրիչոր Խալիպեցի իր շափածո հիշատակարանում պատմում է, որ Լանկ-Թեմուրի զորքերը 26 օր շրջապատել են Վանը և վերցրել: Բնակչութեանը սկսել են բարածայոց ցած նետեր: Բարածայոի տակ ստեղծվել է մտաղեկ այնպիսի բարձրութեամբ, որ վերին ընկնողներն, այլևս չէին մահանում»⁷⁴:

Իրենց շրջապատում այս ամենք տեսնող գրիչները, հասկանալի է, չէին կարող հոգեկան խորք ցնցումներ չապրել, չէին կարող հանգիստ շարունակել իրենց սիրած գրագիտերը: Մատաղաց գրիչը 1469 թ. գրած հիշատակարանում պատմում է, որ ինքը, Հասան Ալիի զաղանութիւններից տարափախար, թերաւաք ձեռագիրը վերցնում է հետը և փախչում: «Եւ մեր առեւել զլիրքս,— գրում է նա,— փախեաք ի տեղէ տեղ, և յամենայն ժամ փախուստ և սասանումն զայլ և հասանել ի վերայ...»⁷⁵:

Կարապետ գրիչը 1634 թ. ընդօրինակած «Յակեփորիկ»-ի հիշատակարանում հայտնում է, որ Ռուստամ խանը երբ հարձակվել է Վանի վրա, ինքը՝

⁷⁰ ՄԱՍ Աճ. N 5542, Թ. 238ա (Նժժ. ԵՊԻ գրքի հիշատակարաններ, Կ. Ա, էջ 326):

⁷¹ Գ. Փրեզյան, Նոտարք Հայոց, էջ 151:

⁷² «Արարատ», 1911, էջ 760—763:

⁷³ ՄԱՍ Աճ. N 5222, Թ. 24Բ (Նժժ. ԵՊԻ գրքի հիշատակարաններ, էջ 21):

⁷⁴ ՄԱՍ Աճ. N 5798 (Նժժ. ԵՊԻ գրքի հիշատակարաններ, Կ. Ա, էջ 282):

⁷⁵ ՄԱՍ Աճ. N 4515, էջ 198 (Նժժ. ԵՊԻ գրքի հիշատակարաններ, Կ. Բ, էջ 283):

գրիչը, թարգմաձ է և զեղ, բայց հետո ... կեկալ գտին զիս և զականջս կարեցին, և խիստ վաճեցալ և տկարութիւն շատ բաշեցի»⁷⁶:

Գրիչներից մեկը հայտնում է, որ եկեի ինքը հրեղեն լեզու անդամ ունեւեա, չի կարող նկարագրել այն շարձարարներից, այն դուրս բաժանել, որ զի՛հանկվել է բմպել Արարատյան նահանգի քնակչութիւնը⁷⁷: Իսկ մի ուրիշը՝ Սոսիենկա գրիչը, անդրադառնալով իր ապրած «դուրս և անբարի» ժամանակին, որը ծանր է համարում, նախընտրում է լսել, քան թե գրել: ... ոչ կարեն գրով արկանել, բայց միայն լսել...⁷⁸:

Գրիչներն իրենց հիշատակարաններում վրդովմունքով են խոսում նաև ժամանակի ծանր հարկապահանջութիւն մասին: Սարկիսովաց գրիչը պատմում է, որ 1310 թ., Ղարապազի խանի տիրապետութեան շրջանում, հայ մտղովրդի համար այնքան ծանր վիճակ էր ստեղծվել, որ մարդիկ հարկ վճարելու համար ստիպված են եղել իրենց երեխաները վաճառել: «Բայց զազէտ և զողբ արարեալուանց ո՛ պատմեսցէ,— գրում է նա,— զի ի խիտ և յանճարին հարկապահանջութենէ ծախեալի վիսին ուստերք և զուտերք աշխարհիս մեր, և բազում զեղք և վաճորայք՝ աւեր և անհանդուր...»⁷⁹:

Մի ձեռագրի հիշատակագիր հայտնում է, որ սուլթանը երեք տարվա հարկը մեկ տարում վերցրեց և ավերեց երկիրը: Գրիչը փրկութիւն ձար շղթանելով, անհիտում է սուլթանին. «Աստուած իր ումբն (կլանքը)— Ա. Ա.) կարճ անէլ»⁸⁰:

1307 թ. հիշատակագիր Դանիել գրիչը գահադափում է Հուլատ խանից, որը քրիստոնյաների վրա ծանր հարկ է դրել և կարգադրել է որպես նախատիրքի նշան մարդկանց ուսիրին սե կտալով կարել, որպեսզի տեսնողներն ճանաչեն, որ քրիստոնյա է և անարդեն⁸¹:

Ստեփան Չմշկաժագրից, 1476 թ. ընդօրինակած «Տաղարանում», խոսելով Ուլուն Հասանի հարկապահանջութեան մասին, ցավով նշում է.

«Հարկապահանջն յամէն տեղի
Քաշէ ձեռէ զազգրս Արամի,
Երևորէ արծաթ ՚ բնտիր ոսկի,
Յոյնն որ լուսի փող սղոյնձի
Կապտտ նշան էր քրիստոնեաց,
Զի քածանին յանօրինաց,
Զմեռեալն թ ցած տանել ասաց,
Զտանելով շափել զվիզս մանկանց...»⁸²:

Վարդան Արենկցու «Պատմութեան» 1307 թ. ընդօրինակութիւն հիշատակագրի տեղեկութիւնից երևում է, որ Հուլատն, որին նա անվանում է «ստտոնայի արքանեակ», կարգադրել է «Իննը նշան խայտառակութեան քրիս-

⁷⁶ Առ. Սիւրմեան, Տուցակ ձեռագրաց Երուսաղէմ, էջ 92:

⁷⁷ Տէ՛ս «Տուցակ ձեռագրաց Վեներիկի», հ. 1, էջ 443:

⁷⁸ Առ. Սիւրմեան, Տուցակ ձեռագրաց Երուսաղէմ, էջ 115:

⁷⁹ ՄԱՄ Ան. N 300, Թ. 311բ (հմ. «Թ՛ գարի հիշատակարաններ», էջ 66):

⁸⁰ ՄԱՄ Ան. N 3072, Թ. 80բ:

⁸¹ ՄԱՄ Ան. N 4351, Թ. 272բ—273ա (հմ. «Թ՛ գարի հիշատակարաններ», էջ 47):

⁸² Բ. Կյուլեանյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկի, էջ 69:

տանկից և հարկ անուլ բոս մարդաթուի ե(40) արծաթ մինչ և Ժ (10)՝ բոս կարի»⁸³:

Հովհաննես Խրիստիանի 1661 թ. «Շարականց»-ի հիշատակարանում անդրադառնալով Մուհամմեդ Խոնդարի տիրապետութեան ժամանակ ժողովրդից գանձվող հարկերի մասին, հայտնում է, որ հարկերը շատ են ծանրացել, եկեի սուսը գանձում էին հարյուր կամ երկու հարյուր դրամ, ապա այժմ այլևս հարյուր չեն հիշում և ոչ էլ՝ հազարը, այլ 10 քիսա, 5 քիսա, որի հետևանքով ժողովուրդը գտնվում է վշտի և ստառակացու մեջ⁸⁴:

Ժողովրդի, այդ թվում նաև գրիչների համար ստեղծված քաղցրացկան ծանր պայմանների պատկերացման տեսանկյունից տեղին է Կյուրեղ գրիչի (17-րդ դ.) իր պատմիչատուին արած դիտողութիւնն այն կապակցութեամբ, որ վերջինս պահանջել է որի՛նց շքեղ ձեռագիր գրել՝ «Թ՛վ պատուական սրբազան ուսումնասէր... ի ժամանակի ձմերան ծաղիկ վարճ փնտրիս...»⁸⁵:

Միջին դարերում ժողովրդին զժրախտութիւն պատճառող մեծադուրս արձակիւրքներից մեկը համաճարակն է եղել, որին հայ մատենագիրները հիշում են «ճատարածամ» անունով: Համաճարակը երբեմն ամառացրել է մարդշատ գլուխը, փակել շատ տների դռներ՝ անմխիթար վշտի մեջ թողնելով կենդանի հարազատներին: Թե ինչ աճուկի վնաս է հասցրել այն ժողովրդին, կարելի է պատկերացնել 1549 թ. գրած հիշատակագրին հետևյալ տողերից. «Ի Թուսակահիս Սոյանց ԶՂԸ (1549) ամի,— գրում է գրիչը,— որում նոն մահտարածած աշխարհիս Հայոց, և շատ սուս տներեցաւ, և շատ սպարանք անտըր մնաց՝ զեհով (այսինքն՝ հոտով—Ա. Ա.) ոչխար մնաց, շատ գութան խափանաւ, քանի՛՜ հայր առանց որդի մնացին, քանի՛՜ մայր առանց զստեր և եղբոր մնաց... հնց որ կալոյ ժամանակն [եղև], սողայ չկայր, որ զկամն սըշք»⁸⁶:

Գրիգոր գրիչը խոսելով 1431 թ. Ամիգում տեղի ունեցող մահտարածամի մասին, հայտնում է, որ անկարելի է նկարագրել այն ողբը, կսկիծը և հառաչանքը, որ լսվում էր ժողովրդից՝ իրենց կորցրած հարազատների համար. «...այց ամենեցուն [եղև] յաղբերս արտասուաց, յամենայն ուրիս ողբ հառաչանաց և յամենայն տուն կոծս տարակուսանաց, լալումն որբոց և աղաղակայն ալրեաց, կըսկիծ ծնորք և մաղկատումն մանկամեռ մարց, յամենայն լեզվ վայ և յամենայն բերանոյ սպաշառանք»⁸⁷: Ըստ նրա տեղեկութիւն, միայն Ամիգում մահտարածամից մահացել է 6000 հոգի, շահված քաղաքի մասի գլուխները և ավանները, որոնցից շատերը անմարդարեակ են դարձած եղել այն աստիճանի, որ, բոս գրչի տեղեկութիւն, անասունների տիրութիւն անող շկար և նրանց «յամայն շըշէին»:

Մեզ է հասել Տիմրիզի ներքուս անունով մի գրչի մահտարածամի մասին գրած հիշատակարանը, որից երևում է, որ նա ձեռագիրն ընդօրինակել է դիակների մեջ, մահվան սարսափի տակ. «Արդ, աղաչում չմեղաբարել սխալանաց... քանզի տեսանէլս զբազում դիակուն մարդկան մեռալս առաջի մեր և ցնղէր միտս իմ իբրև զվայրապանաց զազան և հաղի ստ իս ժողո-

⁸³ ՄԱՄ Ան. N 3074, Թ. 50բ (հմ. «Թ՛ գարի հիշատակարաններ», էջ 46):

⁸⁴ «Տուցակ ձեռագրաց Երուսաղէմ», հ. 9, էջ 275:

⁸⁵ ՄԱՄ Ան. N 4355, Թ. 488բ:

⁸⁶ ՄԱՄ Ան. N 3222, Թ. 1ա:

⁸⁷ ՄԱՄ Ան. N 6430, Թ. 301ա (հմ. «Թ՛ գարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 404):

վի ի յերկիրդ մահուն, եթէ ոչ ժամանէի յաւարտումն տառիս, քանզի առ մէջ այլ եհաս ի ցաւոց տարածամ մահունն, այլ ներողութեամբ աստուծոյ զերթարք⁸⁵։ Գրիչը հանգամանորեն նկարագրել է մահտարածամի ասուննահաստկոթիւնները։ Առաջինը, ասում է, այն էր, որ երկար է տեսն՝ տարի և երեք ամիս, երկրորդը՝ մարմնի վրա խոց է դուրս եկել և լավացել, անցել են օրեր, կրկին խոց է դուրս եկել, և մարդը մահացել է, երրորդը՝ մահտարածամը ում տունը որ մտել է, բոլոր անեցիկներին քնաչինջ է արել և չորբորգը՝ ցավը իրեն իմացնել չի տվել և մարդը մահացել է։

Գրիչներն իրենց մտտիկ հարազատներին կորցրած օրերին անգամ, արցունքն աչքերին, շարունակել են ձեռագրերը ընդօրինակել և հուզիչ հիշատակագրութիւններ թողնել։ Ահա թե նրանցից մեկը ինչպէս է արասահայտում իր վիշտը. «...միշտ շմորեալ էր այս (չփոթված էր—Ա. Ա.), արտաբուստ ի զեղբունքն (այսինքն՝ ներկերի հետ—Ա. Ա.) կու խառնէր ի զեղոց կսկծու, ոյ աստուած փոխեցաւ երեք տղայ, որ նման էին սուկոյ և մարգարտի։ Այս շնմ խասակն յարտասուաց. առ՝ զեղկերոյս, որ զօրն ի բուն ձեռն ի ձեռտիս հայնմ յեփրատէս, ահ հանեմ հողոյս»⁸⁶։

Մահտարածամից պակաս վնաս չի պատճառել երկրաշարժը, որի ասուննին զեպերի նկարագրութիւնը հանդիպում ենք հիշատակարաններում։ Ղուլօղի նրզնկացի գրիչը երկրաշարժի փլատակների տակ թաղելով մահացած մորն ու տղային, իր խեղճութունը ողորմ է հետևյալ քառյակում.

«Սո Ղուլօղի նրզնկացի
Քնկ ի եղբր խնլ մի գրեմ,
Գու ես եղբր խեղճ ու զերի,
Հողն ևս զրնլ մայր ու տղան»⁸⁷։

Բնական մի շարք արհաւիրքների մասին հետաքրքրի շարժածո հիշատակարան ունի 1713 թ. Երևանում զրված ձեռագիրը.

«Ե թի հազար հարիր վաթսուն,
Երկու անկ ի հետ ի նոյն,
Եկաւ մարտիս բազում անհուն
Ի քաղաքն Երևանուն։

Մածկեալ ողև երես օղոյն,
Եհեղ երկնից իբրև զձին,
Թառա իշա մէջ արտեղուն,
Սկսաւ օւռել իբրև զշուն։

Մահն եկաւ ի նոյն տարին,
Հաւասարեաց ամէն տեղոյն,
Խիտս կոտորեաց մար ու մեծոյն
Փառս տածուք ի աստուծոյն։

Սովն եկաւ ի նոյն տարին,
Սանն շահի եղաւ դարին,

Սովն փարոցն (ծածկնց) դաշտ ոյ սարին,
Աստուած փրկէ եկող տարին։

Սովն եկաւ ի նոյն տարին,
Հաց ոչ դարման յախր արին,
Խոտ շմաց քեաւ ի սարին,
էլ շտեսնենք Նսպա տարին»⁸⁸։

Մատենագարտն Ն 34 ձեռագրում մահամասն նկարագրված է 1673 թ. հունիսին տեղի ունեցած երկրաշարժը։ Ըստ անգլեկոթիւնների, երկրաշարժը Երևանում սկսվել է հունիսի 4-ին։ Շարժի սաստկութիւնից քարտորանց են եղել քաղաքի շէնքերը, բերրը և քաղաքի պարիսպները։ Նկատի ունենալով, որ այդ հիշատակարանը բացառիկ արժեք ունի մեր մայրաքաղաքի պատմութեան համար, անհրաժեշտ ենք համարում հրատարակել այստեղ ամբողջութիւնը։

